

803.198.1

Ն. ԱՐԲԱՏԵԱՆ

S. Arbatyan

ԲԱՆԱՍԻՐԻ ՅՈՒՆԱԳԻՐԸ

Ա.

555
1
11/81075



1937

ՊԵՂՐՈՒԹ



Տպ. "ԱՐԱՀ", Ա. Բախտիկեան Փեյլուր

ԲԱՆԱՍՔԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

Ես յոյս չունիմ, որ կարենամ յօրինել այն զիրքը մեր
լեզուի մասին, որ մտադիր էի: Տարիներս անցած են,
մտառական երկարաւել նիզը յոգնութիւն է բերած եւ
նին ու օսար լեզուների անազան ծանօթութիւնս կա-
սեցնում է վստահութիւնս: Բայց այդ տեղի կառուցման
համար տարիների ընթացքին ես տաշած եմ բարեր եւ
հաւաքած եմ ատաղձ, որոնց լեզուն ե'ս միայն կարող
եմ հասկանալ: Դրանք կարող են պիտանի լինել հետա-
զայ կառուցողներին, ուստի որուեցի գրի առնել մտա-
ծութերս եւ յոյս ընծայել հատուածաբար: Պիտի խնդրեմ
երանց, որ առիր կ'ունենան օգտագործելու այս բարերն
ու ատաղձը՝ չմոռանան յիշատակել հաւաքողին:

1. ՏԵՍՈՒԹԻՒՆ ԶՈՅԼ ԲԱՂԱՁԱՅՆԵՐԻ

Ուշադիր քննելով մեր հին, միջնադարեան և նոր
դրական լեզուն, ինչպէս նաև մեր բարբառները, ես
արած եմ մի քանի դիտողութիւններ, որ ընդհանրա-
ցընելով՝ յօրինած եմ տեսական ուրուագծեր: Այսպէս՝
տեսնելով թէ մեր հին գրութեան մէջ մեր այսօրուան
օ ձայնը արտայայտած են երկու գրով — աւ՝ ես են-
թաղրած եմ, որ դասական շրջանին մեր հայրերը չեն
ունեցած 0 հնչիւնը, հետեւապէս այդ հնչիւնը ձեւա-
ցած է Ե դարից յետոյ և որոշապէս պարտադրած է
իրան ժԲ. դարում, երբ մեզանում մտած է օ զիրը:
Այսպիսով այսօրուան օ-ն, որ մի պարզ ձայն է՝ տաս-
նըհինգ դար առաջ եղած է երկրարբառ՝ աւ: Այստե-
ղից պարզ է, որ 1. օ-ն հոլովոյթի արդիւնք է. և
ուրեմն 2. որ բարդ երկրարբառը կարող է դառնալ
պարզ ձայնաւոր: Այնու հետեւ ես հարց եմ տուած.

A 11/075

արգեօք միմիայն օ ձա՞յնն է, որ արդիւնք է հոլովոյթի: Իր օրինակը բաւական է, որ ասենք թէ ձայները հոլովոյթի ենթակայ են: Այս ընդհանրացումը պարտազրում է սակայն հետազօտել մնացած ձայնաւորները, տեսնելու համար թէ՝ չկա՞ն ուրիշները, որ նոյնպէս ժամանակի ընթացքին ծագած լինեն, և որոշել նոր ձայների ծագման պայմանները: Այս աշխատանքը կատարած եմ տարիներ առաջ և արդիւնքը՝ իր համառօտ ուրուագիծ՝ հրատարակած եմ Հանդէս Ամսօրեայ ուսումնաթերթի մէջ: 1) Այդ ուրուագիծի մէջ ես մատնանշած եմ հիմնական երեւոյթները, առանց մանրամասնութեանց իջնելու և տուած եմ հոլովոյթի գլխաւոր տարագները, առանց չեղումներին նայելու: Եմ տեսութիւնը հիմնաւորած եմ մի քանի ցայտուն օրինակներով, առանց սպասելու բովանդակ նիւթը:

Իմ տեսութիւնը համաձայն չէ հնդեւրապական լեզուագիտութեան: Նրա համար օ և և ձայներն օրինակ՝ հիմնական են և կազմում են համեմատութեանց հիմք ու եզր, մինչդեռ ես կարծում եմ նրանք հետեւանք են պարզ ձայների ձուլման: Բայց հնդեւրոպական լեզուագիտութեան մշակած տեսողութիւնը մարդկային իմացութեան վերջին խօսքը չէ և ընդհանրապէս գիտութեան մէջ չկայ և չի կարող լինել յարատելիքին, բայց մանաւանդ վերջնական խօսք, քանի դեռ մարդկութիւնն աճում է անընդհատ և նոր սերունդները իրերի բնումով նոր զիրքերի վրայ կանգնելով՝ նոր տեսակէտից են նայում կեանքին ու աշխարհին: Մեր պարտքն է անմիջաբար և յարատե-

1) Տես հ. ա. 1930 թ. Սպած եւ չֆացած ձայնաւորներ. էջ 182-195. նոյն 1930 թ. Հնչաբանական դիտութիւններ՝ 273-291. եւ շարունակութիւնը Հ. Ա. 1931, էջ 352-359, 518-527, Հ. Ա. 1932, էջ 298-310, 433-446.

շփում ունենալ կենսական վաստերի հետ, որոնց շարաքին են պատկանում լեզուական հին ու նոր երեւոյթները, և մեր դիտողութիւններն ու կոահումներն արածանադրել։ Հաւանականն այդ կոահումներից կը համարուի «վերջին խօսք», մինչև երեւան նոր և աւելի հաւանական «վերջին խօսքեր»։ Աննախառաջար իմացութեան համար վաստերի ստուգութիւնը և զատումների ճշտութիւնը բաւական են ինքնին։ Գիտութեան համար կուռքեր գոյութիւն չունին և պէտք չէ որ ունենան։ Ինչ որ համոզիչ է՝ ընդունելի է։ Ճշմարտութեան չափանիշը իր համոզական կարողութեան մէջ է։ Ինձ թւում է, որ տեսութիւններս համոզական են և նրանք կարող են հաստատուիլ, լրացուիլ կամ մերժուիլ. դրանից ես չեմ տուժի, իսկ ճշմարտութիւնը կը շահի։ Այս համոզումով է, որ զրի եմ առնում զիատողութիւններս ու կոահումներս, որ եթէ չընդունուին իսկ՝ գոյնէ առիթ կը տան հերքումի, հետեւապէս նոյն խնդիրները վերացնելու, ինչ որ ինքնին մեծ շահ է մեր լեզուի ճանաչման համար։

Զայնաւորների տեսութիւնս ուրուազծելուց յետոյւ ես հիմա անցնում եմ բանաձեւելու իմ տեսութիւնը մեր ձոյլ բազաձայների մասին։ Նրանց շարքում ես նկատած եմ ձայներ, որ իմ կարծիքով նոյնպէս հոլովոյթի արդիւնք են, հետեւապէս ծագած են ժամանակի ընթացքին և սաւացած են այսօրուան արժէքն ու կերպարանքը։

8

Մեր միջնադարեան ռամկօրէնի մէջ հանդիպում ենք մի քանի բառերի, ինչպէս պացիսուն, արցունի, որոնց դասական ձեւն է պատասխանի, արտասուլ։ Այս բառերը մենք հանդիպում ենք ժԴ դարի հեղինակների գործերում, հետեւապէս հին են և աւելի հին կարող

են համարուել, եթէ նկատի ունենանք, որ նրանք գոյութիւն ունէին զրի առնուելուց առաջ: 1) Արդէն վաղուց՝ նոխ Յ. Կարստ, ապա՝ Հ. Աճառեան ընդունած են թէ այդ բառերից ձայնը արդիւնք է և ս և ձայների ձուլման: 2)

Սյորանանք այս երեւոյթի քննութեան մէջ: Մենք տեսնում ենք, որ դասական պատասխանի և արտասուք բառերի ընդած վանկերը, կորցնելով իրենց միջն եղած ա ձայնաւորը՝ եղերական և ս և ձայներն իրար մօտ գալով՝ ձուլուած են և տուած են զ, որով այդ բառերը դարձած են պացիսուն և արցունք: Բարբառաների մէջ կենդանի է այս հոլովոյթի միջին փուլը, ուր տաս վանկի ձայնաւորը թէև սղած է, բայց գեռ չի չքացած և «արտասուք» բառը Մշեցին հնչում է «արդառունք», իսկ Սալմաստեցին՝ «արտառունք» 3): Բայց այս բառերի սւ և դս ձայների միջն արտաքիրում են մի թեթև ը և այդ թեթև ը-ն է, որ արգելում է այդ ձայներին ձուլուի իրար և զ դառնալու Մինչդեռ այն տեղերը, ուր այդ թեթև ը-ը չքացած է՝ ձուլումը կտտարեալ է. այսպէս է գաւառական արցուել բառը,

1) «Եւ նա (որդի Մանտակի) լրենի երեսօն ասէ. «Դու նայ մարդ ես եւ մեք հոռոռ իշխանք. ի՞նչ պաշխուն տաս մեր բագաւորին, որ կու դատես զիոռում մարդ»: Յայնծամ բարկացաւ պարոն Թորոս եւ ասէ. «Եւ դուք որ զայր հօգոր եւ զօծեալ բագաւոր սպանիք՝ ի՞նչ պաշխուն տայք հայոց ազգիս»: Ամբատէ Սպարապետի պատմութիւն. 1856, էջ 77:

2) Dr. Josef Karst. Historische Grammatik des Kilikisch-Armenischen, 1901. էջ 105. Հ. Աճառեան. — Արմատական բառարան, ՀՏԲ. Ա, էջ 767-70 արտօն բառի տակ:

3) Հ. Աճառեան, Արմաթ. բառ. Ա, է. 770,

որ ծագում է «արտասուել» բայի ամփոփման հետեւանքով, արտասուել՝ արտսուել՝ արցուել; Կարող ենք ուրեմն որոշապէս ասել, որ այս զէպքում զ ձայնի գոյացման պայմանը ձայնաւորի չքացումն է: Նրա սղումը բաւական չէ. նա պէտք է չքանայ, որ եղերական և ս ձայներն իրար մօտենան ու ձուլուին քիմիապէս, տալով մի նոր ձայն, որ ո՛չ ս է, ո՛չ ս, այլ նրանց ձուլուածքը, ինչպէս ջուրը, որ ո՛չ H₂ է, ոչ 0, այլ մի նոր մարմին, որ նրանց ձուլումի արդիւնքն է:

Մենք տեսանք, որ մեր օրինակների մէջ չքացող ձայնաւորը ա էր: Արդեօք այս հանգամանքը մի արժեք ունի^o զ ձայնի ծագման համար. այսինքն՝ եթէ այդ ձայնաւորը ո՛չ թէ ա լինէր, այլ օրինակ՝ ի կամ ու և չքանար ա-ի պէս, այն ժամանակ ց-ն և ս-ն նորից չէի^oն մօտենայ իրար և նորից չէի^oն ձուլուի և զ դառնայ: Պարզ է՝ կարծում եմ, որ այստեղ նշանակութիւն չունի ձայնաւորի երանգը. կարեւորը ո՛չ թէ ձայնաւորի երանդն է, այլ նրա չքացումը: Մենք չպիտենք օրինակ թէ ո՞ր մի ձայնաւորն է սղած կամ չքացած մեր կրտսեր բառի ս ձայների միջև, բայց այդ հանգամանքն արգելք չէ, որ ս և ս ձայներն իրար ձուլուին և մենք այդ բառն ունենանք նաև կրցիր ձեւով: 1) Այսպէս ուրեմն կարող ենք վստահօրէն ասել, թէ ամէն անգամ երբ ս և ս ձայներն իրար ձուլուած նն՝ տուած են զ, անկախ այն հանգամանքից թէ այդ երկու ձայների միջև ո՞ր մի ձայնաւորն է չքացած: Սա նշանակում է թէ՝ լինէր վանկը տաս, տիս կամ տուս, բաւական է, որ նրանց ձայնաւորը չքանար և եղերական և ս ձայներն իրար մօտ գալով ձուլուէին, որ մենք տեսնէինք զ ձայնի ծագումը:

1) Հ. Անառեան, Արմաս. բառ. հատ. Դ. 1485.

Այսպիսով մենք գտանք ց ձայնի ծագման երկու հիմնական պայմաններ. 1. և ս ձայների միջև պէտք չէ ձայնաւոր լինի. 2. և ս պէտք է իրար հետ ձուլուին:

Տեսնենք հիմա թէ բառի շնչար գեր ունի՞ այս ձուլման մէջ: Մեր բառերն արեւելեան հայերն արտաբերում են իրք պատա՛սխան, արտա՛սունք, շնչարով միջին ձայնաւորը: Գիտենք, թէ շնչառած ձայնաւորը չի սղում. հետեւապէս պացիսուն և արցունիք բառերը այնպիսի միջավայրի մէջ են կազմուած, որ այդ բառերի միջին ձայնաւորը չէր շնչառում, այլ արտաբերում էր պա՛տասխա՞ն կամ պա՛տասխա՞ն, 1) այսինքն՝ միջին ձայնաւորն անշնչտ թողնելով՝ լրիւ շնչառում էր ձայնաւորներից առաջինը կամ երրորդը և թերի շնչառով արտաբերում էր նոյնպէս առաջինը կամ երրորդը: Սրեւելեան բարբառներից Արցախինք, որ բառի շնչառ պահած է միջին ձայնաւորի վրայ՝ առաջին ձայնաւորը սղած է և արտաբերում է պըտա՛սխան, թրսա՛սունիք, որով պարզ է թէ իր առաջին ձայնաւորը անշնչա է եղած, երկրորդը լիաշեշտ, ինչպէս որ է նաև այսօր, և երրորդը թէե անշնչտ, բայց տոկուն ձայնաւոր է: Կարող ենք ուրեմն ց-ի ծագման երրորդ պայմանը բառնաձեւել այսպէս. ց-ն ծագում է այնպիսի վանկերից, որոնց եղերական ձայներն են ս և որոնց միջև ձայնաւորն անշնչտ լինելով՝ նախ սղած և ատա՝ չքացած է և եղերական ձայներն իրար ձուլուած են:

Մեր գասական երկու բառը հիմա արոհենք այսօրուան կարգով. — պա-տաս-խան, ար-տա-սուք: Մենք տեսնում ենք, որ առաջին բառի ընդգծած վան.

1) Այս՝ նեանք ցոյց է տալիս տեսի լրիւ զարկը: Իսկ բուքք՝ տեսի թերի զարկը, որ կոչում է երկրողական տես, հակադրութեամբ առաջնի, որ զիսաւոր տես է կոչում:

Կը վիակ է, իսկ երկրորդ բառի տա վանկը բաց է և
նա գառնում է տաս, առնելով յաջորդ վանկի ս-ն: Կա-
րող ենք ուրեմն ասել, որ ց ձայնի ծագման համար
անհրաժեշտ է, որ գոյանայ եղերական և ու ձայնե-
րով մի խումբ, նրա մէջ եղած ձայնաւորը չքանայ և
եղերական ձայները ձուլուին: Այդ խումբը անկա՞խ
վանկ է թէ կազմուած է փոխ առած ձայնով՝ նշանա-
կութիւն չունի ց-ի ծագման համար:

Մինչև այստեղ մենք գուրս չեկանք մեր ընտրած
քառերի սահմանից և աշխատեցինք որոշել այն պայ-
մանները, որ ծնունդ են տուած ց ձայնին մեր միջ-
նաղարեան մի քանի քառերի մէջ: Մենք տեսանք, որ
այդ քառերի մէջ ց-ն քաղազիր է: Բայց ի՞նչ է հայոց
լեզուի ց ձայնի ներքին բնոյթը: Այս մասին որոշ է
գիտութեան կարծիքը: Մեծանուն Ա. Մէյէ ասում է
թէ «ց-ն և չ-ն քաղաձայների մի խումբ են միշտ» և
իրենց ծագումը հնդեւրոպական նախալեզուի ձայներին
չի հասնում, այսինքն այդ ենթազրեալ լեզուի մէջ
չկար մի ձայն, որի ձեւափոխութիւնը կամ կշիռը
լիներ մեր ց-ն: Նա ուրիշ նախնական ձայների մի
խումբ է: 1) Մենք տեսանք թէ միջնաղարեան մեր
քառերի մէջ ց-ն և ու ձայների մի ձուլուածք է:
Այսպէս է ց-ն հայոց լեզուի մէջ:

Իսկ ի՞նչ է ց-ն հնդեւրոպական լեզուների մէջ
առհասարակ Սրա պատախանը տալիս է փորձառա-
կան ձայնաբանութիւնը, ուր ո՛չ թէ հետազօտողի սը-
խալական ականջն է, որ տարրորոշում է ձայները, այլ
անվրէպ ձայնազիր մեքենան: Փորձը ցոյց է տալիս,
որ մեքենայի նիշած ց և չ ձայները, երբ գլանի ըն-
թացքը շրջում ենք՝ հնչում են իրը տա և տե, որով

1) A. Meillet. Esquisse d'une grammaire comparée de l'Arménien classique 1903. Էջ 17, § 14, III.

պարզ է թէ ց-ն և չ-ն պարզ ձայներ չեն, այլ ձոյլ ձայներ են, երկու բաղաձայների խմբաւորում՝ իրար յարմարած։ 1) Ուրեմն այն կարծիքը, որ յայտնում է Ա. Մէյէ մեր ց-ի և չ-ի մասին՝ հիմնուելով իր հնչական համեմատութեանց վրայ, ձայնագիր մեքենան հաստատում է ո՛չ միայն մեր ց-ի և չ-ի, այլ և առաջարարակ մարդկային լեզուի ց-երի և չ-երի մասին։ Այսպէս ուրեմն մեր ց-ն որ և է նախնական պարզ ձայնի տարատեսակ արտարերութիւն չէ, որ յատուկ է միայն հայ բերանին, այլ և ս ձայների ձուլուածք է, ինչպէս հաստատում են ձայնագիր մեքենան և մեր դասական բառերի միջնադարեան կերպարանքը։

Մինչև այստեղ մենք գնացինք գիտութեան հետ ուն առ ոսն։ Ես հիմա հարց եմ տալիս. արգեօք ց ձայնը մեր միջնադարեան բառերի մէջ առաջին անգամ ժԴ դարի մէջ է երեւցած, թէ՞ դրանից առաջ։ Անշուշտ դրանից առաջ, քանի որ այդ բառերն առնուած են խօսուն բարբառից և ոչ թէ հնարուած են։ Եւ յետոյ՝ պէտք է այդ բառերը լինէի՞ն, որ զրի առնուէին։ Այդ բառերն եղած են ժԴ դարից առաջ։ բայց ե՞րբ են կազմուած, քանի՞ դար առաջ։ Ոչ ոք կարող է որոշապէս ասել։ Մի բան որոշ է սակայն, հայերէն մի բարբառ ժԴ դարից առաջ ունակութիւն է ունեցած անշեշտ վանկի ձայնաւորը կորցնելու և եղերական և ս ձայներն իրար ձուլելով՝ ց կազմելու։ Հիմա ես տալիս եմ երկրորդ հարցում։ արգեօք ձայներ ձուլու այդ ունակութիւնը նո՞ր էր սկսած թէ հին ունակութիւն էր այդ բարբառի համար։ Պացիուն և արցունիք բառերը վերջի՞նն են, որ և ս ձայները ձուլելով յօրինած են ց, թէ՞ դրանք առաջին նմուշ։

1) Տես M. Grammont. *Traité de phonétique.*
1933, էջ 105-108 եւ այլուր։

Ներն նն: Եւ յետոյ. արդեօք Կիլիկեան բարբառը
միա՞կն էր, որ ունէր այդ ունակութիւնը, թէ՞ այդ
յատկութիւնն ունէին և մեր միւս բարբառները, ինչ-
պէս ունեցած են շատ օտար լեզուներ, որ իրենց ձայ-
նաշարի մէջ ց ունեն: Եւ աւելի ընդհանրացնելով հար-
ցումս ևս ասում եմ, արդեօք բովանդակ հայոց լեզուի
յատկութիւնը չէ՞ և և ձայներն իրար ձույել և ց
կազմել, երբ նրանք անընդմիջաբար դալիս են իրար
մօտ. որ նշանակում է. արդեօք մեր լեզուի բոլոր
ցերը մի ժամանակ սև խումբ չե՞ն եղած, իսկ աւելի
հին ժամանակ՝ լիահնչուն անշեշտ վանկեր, որոնց
ձայնաւորները չքացած են և եղերական և և ձայ-
ներն իրար ձուլուելով՝ տուած են ց:

Անգիճելի է, որ պացխուն և արցունք բառերի մէջ
ցերը նախնական չեն, այլ հետագայ հոլովոյթի ար-
դիւնք են: Դրա ապացոյցը պատասխանի և արտառունք
նախնական ձեւերն են, որ մեզ աւանդած է գառտկան
լեզուն և մնում են շատ բարբառներում առանց միջի
ձայնաւորը չքացնելու և ցեր կազմելու: Եթէ չինէին
պատասխանի և արտառունք բառերը՝ մենք ո՞ր տեղից
կարող էինք իմանալ թէ պացխուն և արցունք բառնրի
ցն վաղեմի տաս լիաձայն վանկի եղերական ձայների
ձուլումից է ծագում: Այն հանգամանքը, որ մեր ց
ունեցող անհամար բառերի նախաւոր ձեւերը չունինք՝
բաւարար հիմք է պնդելու, որ մեր ց ձայնն ընդհան-
րապէս հին ձուլումի արդիւնք չէ: Անկասկած ո՞չ:
Մեր լեզուի բարբառներից մէկը՝ կիլիկեանը — ձուլած
է սև խումբը և տուած է ց: Ո՞չ մէկ հիմք կայ կար-
ծելու, որ ձուլման այդ ունակութիւնը չեն ունեցած և
մեր միւս բարբառները: Մենք իրաւունք ունինք են-
թագրելու, որ բովանդակ հայոց լեզուն ունեցած է
այդ ունակութիւնը և եթէ դասական լեզուն մեզ չի
տալիս պացխուն և արցունք՝ զրտ պատճառն այն է,

որ նա պահած է տաս վանկի ձայնաւորը. եթէ չքաց-
նէր այդ ձայնաւորը՝ նա՛ նոյնպէս կը ձուլէր և և
եղերական ձայները և կը տար ց, որովհետեւ ինչպէս
տեսանք՝ ց-ն առաջ է գտիս ա՛յն ժամանակ, երբ և և
ս ձայներն անընդմիջաբար դառնում են կից և ձուլում
են իրար, Մենք տեսանք, որ ձայնագիրը հաստատում
է թէ բոլոր ցերը բաղադիր ձայներ են, հետեւապէս
և և ձայներ ձուլելու ունակութիւնը մարդկային
լեզուին յատուկ է, ուրեմն ենթադրելի է նաև մե՛ր
լեզուի համար: Հ. Վ. Հացունու կազմած գուգազրու-
թեանց մեծարժէք ցանկի մէջ մենք չենք հանդիպում
ս գուգազրութեանց: 1) Այս հանդամանքն անուղղակի
ապացոյց չէ, որ մեր լեզուի բոլոր ս գուգազրու-
թիւնները զրական շրջանից շա՞տ դարեր առաջ արդէն
ձուլուած ու դարձած էին ց:

Տեսանք, որ ց-ն նախնական ձայն չէ « նա պատ-
մական հոլովոյթի արդիւնք է: Տեսանք, որ նա բա-
ղադիր ձայն է և և ս ձայների ձուլման հետեւանք
է: Պարզ է, որ և և ս աւելի հին ձայներ են, քան
ց-ն, քանի որ վերջինը կարող էր ծագել, երբ առա-
ջինները կային արդէն, ինչպէս թթուածնից և ջրա-

1) Տես. Հ. Վ. Հացունի. Ռւղագրութիւն եւ առո-
գանութիւն հայերենի. 1933. էջ 367, եւ էջ 216, ուր
բերուած է երեք բառ. կրտսեր, որ ինչպէս տեսանք՝ ու-
նինք եւ կցեց ձեւով. տառսպարել, որ արտաքերում ենք
պատըսպարել, որով ը-ը արգելք է դառնում կցման ու
ձուլման, եւ աղքատափրութիւն, ուր լեզուական գիտակ-
ցութեան համար դեռ շատ որոշ են բաղադրիչ մասեր՝
աղքատ եւ սիրութիւն, ուստի արտաքերում են անջատ,
հետեւապէս ա եւ « անընդմիջաբար չեն զալիս իրար մօտ
եւ ձուլման պայման չի սեղծւում:

ծընից առաջ ջուր չէր կարող գոյութիւն ունենալ։
Եղած է ուրեմն մի ժամանակ, երբ ց-ն գոյութիւն
չունէր։ Քանի որ այսպէս է՝ մենք կարող ենք ուրեմն
լուծելով ց ձայնը իր բաղադրիչ տարրերի՝ վերականգ-
նել բառերի ա'յն ձեւը, երբ նրանք ց չունէին և լեզ-
ուի այն վիճակը, երբ ց-ն դեռ եւս չէր կազմուած։
Քանի որ ց-ն երկու ձայնի ձուլուածք է և քանի որ
այդպէս են բոլոր ց-երը թէ՛ մեր և թէ՛ օտար լեզու-
ների մէջ, ուրեմն ց-ի լուծումով նախնական վիճակի
վերականգնումը կարելի է փորձել և մնացած լեզու-
ների համար, որով մեր աշխատանքի մեթուրը կիրար-
կելի է և այլուր։ Մեր պացիսուն և արցունե բառերի
ց-երի ծագման պարագաները, ց-ի բաղադրի տարրերի
բնոյթը, որ պարզում են այդ օրինակները, և փորձ-
նական ձայնաբանութեան տուած արդիւնքը, որ զու-
գանեռ է պատմական իրողութեան՝ մեզ իրաւունք են
տալիս հետազօտութեան այս նոր եղանակը կիրարկե-
լու։ Վերացական դատողութիւնը, պատմական իրա-
կանութիւնը և մեքենական փորձը իրար ստուգում են
և հաստատում։ Փորձենք ու տեսնենք թէ ի՞նչ ար-
դիւնքի կը հասնինք։

Առնենք օրինակ մեր հաց՝ բառը, որ մի ց ունի
և որի շեշտը իր միակ ձայնաւորի վրան է։ Մեր վար-
կածով այդ բառի ց-ն պիտի ծագած լինի սև խմբի
ձուլման հետեւանքով և ուրեմն այդ բառը երբեմն
եղած է * հասւ։ 1) Մենք տեսանք սակայն թէ և ս
ձայները երբեմն եղած են եղերական, այսինքն՝ մի
լիաձայն վանկի մաս են կազմած՝ գրաւելով ձայնաւորի
երկու կողմերը, իրենց ձայնաւորի չքացումից յետոյ

1) Բառերի վերն ու առջեւը դրած այս * նշանը
ցոյց է տալիս, թէ նրանք ա'յդ ձեւով աւանդուած չեն,
բայց ենքաղրիլի են։

միայն նրանք եկած են իրար մօտ և ձուլումով տուած են ց: Տեսանք նոյնպէս, որ այդ ձայնաւորի երանզը նշանակութիւն չունէր. կարեւորը նրա չքացումն էր, հետեւապէս մեր վերականգնած բառի աւելի հին վիճակը տուած կը լինենք, եթէ գրենք. հաց = հատ + Զ + ս, ուր մեր Զ գլխազիրը նիշում է մի ձայնաւոր և ուրեմն մեր բառը մի ժամանակ կարող էր լինել * հա՛տիս, * հա՛տուս և այլն: Այս վիճակի մէջ բառը երկվանկ պիտի լինէր և յարաշեշտ, այսինքն պէտք է շեշտէր իր առաջին վանկը: Գիտունների կարծիքով նախագրական հայերէնի շեշտը շատ զօրաւոր է եղած (A. Meillet Esquisse... էջ 1): Այս զօրաւոր շեշտի ազդեցութեան տակ մեր վերականգնած բառի երկրորդ վանկի ձայնաւորը պիտի սղէր ու չքանար և եղերական և ս և ա ձայներն իրար մօտ գալով՝ ձուլուէին և դառնային ց: Մենք տեսանք, թէ անշեշտվանկի ձայնաւորն է, որ սղում է և չքանում: Մեր վերականգնած բառի մէջ անշեշտ վանկի ձայնաւորն է չքացած. հետեւապէս ձուլման պայմանն իրացած է:

Բառերի վերջին վանկերը տոկունութեան տեսակէտով սովորաբար այն արժէքը չունին, ինչ որ նրանց միւս վանկերը. նրանք աւելի շատ են ենթակայ փոփոխման: Սանսկրիտ լեզուի մէջ օրինակ բառերի վերջին և ձայնը դառնում է մի պարզ հունչ, որ նիշում են և գրով՝ տակը մի կէտ: 1) Այս հունչը դիւրաւ կարող էր ցնդել և ձայնաւորը մերկանալ, որով մեր հին 2) հատիս բառը պիտի դառնար հա՛տի: Աս մեր հատ

1) A. Meillet. *Introduction à l'étude comparative des langues Indo-Européennes*. 1924. էջ 107 - 8.

2) Տպարանը յատուկ զիր չունենալով սանսկրիտի վիստրգա հնչիւնի համար, երա փոխարէն դրուած է լատինական հ:

բառի սեռականն է, որ ժամանակի ընթացքին ձգած է իր ին և դարձած չ հայ, ինչպէս մեր գառական պատմասնի բառն այսօր դարձած է պատասխան: Ուրիշ սեղ ես ցոյց եմ տուած, որ մեր նախագրական լեզուի մէջ եղակի ուղղական ու սեռականը միեւնոյն ձեւն ունէին և նրանց նշանակութիւնը տարբերում էր շեշտով միայն 1): Միեւնոյն հատի բառն օրինակ՝ ուղղական էր, երբ շեշտում էր իր առաջին վանկը՝ հա՛տի և սեռական՝ երբ հնչում էր իրը հատի՛: Բնական է, որ առաջին դէպքում ի ն անշեշտ մնալով՝ պիտի չքանար, որովհետեւ բաց վանկ էր կազմում: Եթէ նա բաղաձայնով փակուէր՝ կը սղէր և կը դառնար լ. այսպէս՝ Ուզզ. սե՛րման, որ դարձած է սե՛րմն, ուր ը չի գրւում, բայց հնչւում է: Այսպիսով մեր հատիս բառը նախ պիտի դառնար հա՛տին, ապա՝ հի-ի ցնդումով՝ հա՛տի և ուղղականի մէջ ի-ի չքացումով՝ հա՛տ: Բառերի սեռականը վերականգնում է նրանց նախագրական ձեւը:

Այսպիսով մեր վերականգնած * հատիս բառը հայ միջավայրի մէջ տարբեր բարբառներում տարբեր հոլովոյթի ենթարկուած է, մի տեղ նա չքացնելով իր վերջին վանկի ձայնաւորը և եղերական և ս ձայներն իրար ձուլելով՝ տուած է ց և բառը դարձած է հաց. մի ուրիշ լեզուական միջավայրում միեւնոյն * հատիս բառը վերջին ս-ն հնչելով իրը հ՝ ցնդած է և մնացած է մերկ ձայնաւորը, որ շեշտի աղջեցութեան տակ սղած ու կորած է ուղղական ձեւի մէջ և երեւում է նորից, երբ սեռական ձեւը իր շեշտը զարկում է նրան. հա՛տի (ի) — հատի՛: Այսուհետեւ ցեղերի խառնուրդով այդ երկու բառերը, որ տարբերացած են և որ սակայն նոյն ծագումն ունին, մտած են հայոց լեզուի գանձարանը և լեզուական տնտեսութիւնը նրանց տուած

1) Տես Հայրենիք ամսագիր, 1928 թ.

է տարբեր պաշտօններ, որով հայ նիշած է ցորենի հատիկը և հաց՝ այդ ցորենից պատրաստած հացը:

Ինչպէս հնչաբանօրէն նրանք ծագում են միեւնոյն նախաձեւից, իմաստաբանական տեսակէտով նոյնպէս նրանք նոյն ծագումն ունին: Հայ և հաց բառերի նախագրական նոյնացումը մեզ փոխաղբում է մշակութային պատմութեան մի շրջան, երբ մարդիկ զեռ հաց պատրաստել չգիտէին և նրանց հացը հատն էր, այսինքն հացահատիկը: Թափառական մի հայ ցեղ, լեզական տարբեր հոլովոյթի հետեւանքով, իր անջատ միջավայրի մէջ՝ վաղնջական հատիս բառը վերջին ձայնաւորի սղումով և եղերական և ս ձայների ձուլումով գարձրեց հաց, իսկ միւսը՝ վերը բացատրածս փոփոխութեամբ՝ կազմեց համեր(ի). մշակութային զարգացումը իր կարգին ստեղծեց երկրագործութիւն և երկանք, հատից ալիւր պատրաստել կարողացան և ալիւրից հաց, որով հացն ու հատը անջատուեցան իրարից իբր տարբեր իբրեր և ցեղերի խառնուրդով՝ լեզուի մէջ մտած երկու բառերից մէկը նիշեց ցորենի կամ գարու հատը և միւսը՝ նրանց ալիւրից պատրաստած հացը: Կարելի է ասել, որ առաջին անգամ հաց պատրաստեց ա՛յն հայ ցեղը, որ վաղեմի հատիս բառն ամփոփեց իբր հաց, որ և դարձաւ մեր կերած հացի անունը: Մենք տեսնում ենք թէ ի՞նչ արդիւնքի հասցրեց ց ձայնի լուծումն իր բաղադրիր տարբերի: Նա ո՛չ միայն մեկնեց այդ բառի հոլովոյթը, ո՛չ միայն ցուցադրեց հաց ու հատ բառերի վաղնջական նոյնութիւնը, այլ և մի պատուհան բացեց մեր մշակոյթի հնագոյն պատմութեան վրայ:

Առնենք հիմա մեր հունցել բառը, որի բունն է հունց և որ ունի մի ց: Հունցել նշանակում է ձեռքերը բոռնցք արած՝ զանգել շաղուած խմբը և թանձրացընել: Այդ բունի ց-ն լուծելով՝ մենք կըստանանք

բառի հին ձեւը — նունս, որ ամփոփումն է մի աւելի հին * նունսիս ձեւի և որ վերջին սի հունչացումով ու չքացումով՝ պիտի տար նունսի, այսինքն մեր նունս բառի վաղեմի ուղղականը և այսօրուան սեռականը։ Այս լուծումով մենք նորից տեղափոխում ենք մշակութային պատմութեան այն շրջանը, երբ մարդիկ ապրում էին հունտով և հատիկով։ Հունտերը կապիճներից հանելու համար կանայք իրենց բունցքներով ձեղքում էին կապիճները և այդ գործողութիւնն է, որ համարուած է հունցել, այսինքն՝ հունտել՝ եթէ կամենանք մի նոր բառ շինել։ Հաւանական է, որ նրանք հունտերը կապիճներով հաւաքում էին և տանում իրենց բնակարանը և մաս առ մաս հունտում և ուտում։ Հունտելը կապւում էր այսպիսով ուտեստի գաղափարին և հետազային խմոր հունցելը, որ իբր զործողութիւն նման էր հունտելուն։ այդ բառով նիշուեց։ Միեւնոյն նախաւոր ձերից՝ արտաքերական տարսեր հոլովոյթով՝ տարբեր լեզուական միջավայրերի մէջ կազմուած ու տարբերացած բառերից մէկը—հունս(ի) միաց հունտաը նիշելու համար, իսկ միւս բառը հունց՝ իբր անկախ բառ չքացաւ, բայց իբր բայի բուն՝ կազմեց հունցել բայը։ Այս տարբերացած բառերը մըտած են հայոց լեզուի գանձարանը հայ ցեղերի նախապատմական խառնուրդի ժամանակ և լեզուական տնտեսութիւնն է, որ որոշած է նրանց նոր իմաստը։
Անջատ բառերի սահմանից անցնենք բայական ձեւերի աշխարհը։ Լատին լեզուն երկու բայ ունի. linos' և sinos', 1) որոնց բայածականն է l'itus և si'itus :


*) Տպարանը երկար ձայնաւորերի համար յատուկ գրեր չունենալսվ նրանց փոխարեն դրուած են սովորական գրեր մեր այս՝ նշանով։ Իսկ կարն ձայնաւորերի վրայ դրուած է բուք (՝) :

Այս ձեւերը հին են և ծառայած են իրր կրտորական
անցեալ դերբայ։ 1) Եթէ այս դերբայները հայ էեղ-
ուական միջավայրի մէջ կազմուէին՝ շեշտելով իրենց
առաջին ձայնաւորը մեր վաղեմի դօրաւոր շեշտով՝
նրանց երկրորդ ձայնաւորները պիտի սղէին և չքա-
նային և եղերական և և ս ձայներն իրար ձուլուելով՝
տային ց և այդ դերբայները հնչէին իրը * լից և * սից :
Թէև տարբեր նշանակութեամբ, բայց միեւնոյն կազ-
մութեամբ երկու բայ ունի և հայոց լեզուն. լնում և
խնում, որ ամփոփուած են * լի-ն-ում և խի-ն-ում *
վաղեմի ձեւերից՝ սղելով իրենց ձայնաւորը։ Սրանց
արմատն է լի և խի, խսկ ն-ն ածանց է։ Եթէ այս
բառերը իրենց կրտորական անցեալ դերբայը լատին
ձեւով կազմէին՝ պիտի տային լի. տուս և խի տուս, որ
հայ միջավայրի մէջ ամփոփուելով՝ պիտի գառնային
լիս և խիս, խսկ իրենց վերջին բաղաձայները ձու-
լելով՝ պիտի տային լից և խից : Եւ իրօք մենք ու-
նինք այս ձեւերը, որ լնուլ և խնուլ բայերի կատար-
եալ ժամանակի բուներն են. համ * լից-ի', լցի' .
* խից-ի, խցի' : Նայելով այս զուգահեռին՝ ես ասում
եմ. ո՞չ մէկ հիմք կայ պնդելու, թէ մեր լից և խից
բայաբուները նախապէս չեն եղած լիս-Զ- և և խիտ-
-Զ- ս, այսինքն՝ որ այդ ձեւերի ց-ն նախապատ-
մական շրջանին չի եղած մի լիաձայն վանկ, մի տիս
կամ տուս։ Այս հաշուով՝ մեր բուլոր բայերի կատար-
եալ ժամանակի բուները, որոնք ց ունին՝ այս կարգի
կազմութիւն կարող ենք համարել և հետեւապէս կա-
տարեալի դիմաւոր ձեւերը կազմուած համարել մի
վաղնջական անցեալ դերբայից և դիմակերտ ածանցից.
այսպէս՝ աս-աց-ի (գաւառական և հնագոյն ձեւը ասա-

ցիմ), *զրի-այշի, որ ի և ա ձուլելով իրը ե՛ դարձած է զրեցի, և այնու կուծելով ասաց և զրեց բուների ց-ն և վերականգնելով սպած ձայնաւորները՝ մենք կըստանանք. աս-ատ իս, զիր-ի-ատ-իս, որ հնդեւրոպական լիդուների մէջ այնքան սովորական է վախճանով են երեւում Նկատելով, որ հնդեւրոպական նախալեզուի մէջ ներգործական բաղկացութիւններն իւրենց շեշտը վերջին վանկի վրայ ունէին, իսկ կրաւուրականները՝ շեշտը վերջին վանկից դէպի յետ էին մղում մենք կարող ենք ասել, թէ մեր վերականգնած ձեւերը կրաւորական զերբայներ էին, ինչպէս են լատին ձեւերը: 1) Եւ այդ շեշտի հետեւանք պէտք է համարել վերջին բաղաձայների չքացումը, որով և և ս ձայները հնար ունեցած են մօտենալու և ձուլուելու՝ տալով ց:

Միւս կողմից եթէ մեր վերականգնած ձեւերի վերջին ս-ն յապաւեինք՝ մենք կ'ստանանք աս-ատի և զիրի-ատի, որ բուներից մէկը արմատ և բուն է միաժամանակ աս (հմ. սնսկ. ահ', որ նշանակում է «ասել» և այդ ձեւով մնացած է մեր ֆողթան բարբառի մէջ. ահալը — ասել եմ), իսկ միւսը ածանցաւոր բուն է — զիրի, որ կարող ենք հին ուղղականը համարել զիր բառի, որ իր ի-ն պահած է (հմ. ուղղ. զիրի) — սեռ. զիրի', զրի'. գրաբարն ունի գրո՛յ): Այս ձեւերը նման են մի կողմից սլաւ լեզուի անորոշ զերբային, միւս կողմից սանսկ. ներկայ Յ-րդ դէմքին. հմ. սլաւ՝ ս-պաս-ատի = փրկել. մենիատի = փոխել, փոխանակել. և սնսկ. դարն ատի = տալիս է. և 10դ. կարգի բայերը՝ կամայական սիրում է: Այսպիսով ձեւեր, որ համեմատութեան եղը չունէին քոյր լեզու-

1) Sbu A. Karnoy. Gramm. élément de la langue sanscrite, 1925 էջ 182



Ների հետ՝ ցի լուծումով և նրա ծագման արժէքաւորամամբ գտնում են այդ եղբերը և մեկնութեան զուռ է բացում լեզուախոյզի առջեւ:

Մեր նպատակը չէ այստեղ մանր քննութեան ենթարկել այդ ձեւերն ու առնչութիւնները. մեր նպատակն է ցոյց տալ թէ ցի բաղադիր ծագումն ընդունելով և այդ հիման վրայ բառերի նախաւոր կերպարանքը վերականգնելով՝ մենք ի՞նչ արդիւնաւոր հետեւանքների կարող ենք հասնել:


Բայց իմ պրակը վերջացաւ և ես ընդհատում եմ, Յուսով եմ հնար ունենամ խօսքս շարունակելու:

1937, Մայիս

Հեղուստը բարեկամներին եւ դնկերներին

«Յուշագրիս» մեման գրութիւններ կարդացող շատ իիչ մարդ կայ մեզանում. հազիւ մի քանի տասնեւակ. հետեւապէս ոչ մէկ յոյս կայ սպագրութեան ծախսն իսկ զոցելու: Ձեւի համար զիս նշանակած եմ մէկ թրանեկ: Ասում եմ «ձեւի համար», որովհետեւ երէ իիչ է կարդացողը, շատ առեջի իիչ է զնորդը: Ընկերներու ու բարեկամներու զիտեն իսկ նիւրական կացութիւնը, զիտեն նաև, որ այս տեսակ ծախսերի տակ մտնելու ես հետաքանիւմ: Երէ նրանի ինձ նման այն կարծիքին շինեն, թէ Յուշագրերու կարող են պիտանի շինել մեր շեղուի ֆնաութեան համար՝ կը իննդրեմ նիւրապէս ինձ օգնեն այս ձեռնարկութեան մէջ: Յուշագրերու սպագրելու եւ պրակ առ պրակ: Ամէն պրակի ծախսն է մօս 200 ֆր. 500 օրինակի համար: Սացած գումարների հաշիւը կը տամ պրակների կողի վրայ: Առելորդ է ասել թէ աշխատանիքին համար ոչ մէկ դրամ կը հանուի այդ գումարից: Հրատարակուած պրակների ամբողջ պահեստն ու մնացորդ գումարը պիտի մնայ Համազգային դնկերութեան:

Սիրով Ն. Աղբաղեսն,



ԲԱՆԱՍԵՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԶՈՅԼ ԲԱՂԱՁԱՅՆԵՐԻ

8 (Վերջ)

Մեր առաջին Յուշազրի մէջ տեսանք թէ ց-ն և և աճյների ձուլման արդիւնք է: 1) Այս ձուլումը կայուն է ընդհանրապէս: Բայց կան դէպքեր, երբ նա քայլքայւում է կարծէք: Դրա մի պայծառ օրինակն է գրեցից-գրեսցես հակազրութիւնը: Այս ձեւերից երկրորդը առաջին ձեւից է կազմուած իբր գրեցից — գրեցից-ե՛ս, ուր շեշտը վերջին վանկին անցնելով նաև խորդ ձայնաւորը չքանում է, բայց բառը փոխանակ ամփոփուելու իբր գրեցից- երեւում է գրեսցես կերպարանքով, ուր ս-ն փոխարինում է ց-ին: Ի՞նչ է այս ս-ն, որ անցնում է ց-ի տեղ: Եթէ փոփոխութեան ենթարկւող ց-ն գրենք իր այն վիճակով, երբ ձայնաւորը չքացած է, բայց եղերական ձայները դեռ չեն ձուլուած՝ (ինչպէս պատսխան գաւառական ձեւի մէջ): Մենք կ'ըստանանք *գրեսցես և կը տեսնենք, որ ս-ն ց-ի երկրորդ բաղադրիչն է: Արտաքերողն շտապում է կարծես վերջին շեշտած վանկին հասնելու, որ խտացնում է բայաձեւի տարբերացումը իմաստի տեսակէտով, և իր աճապարանքի մէջ՝ թողնում է ս-ը և առնում միայն ս-ն, որով արտաքերում է գրե(s)սցի՛ս: Պայթուցիկի անկումը ս-ից առաջ սովորական երեւոյթ է լեզուների մէջ: Այսպէս սլաւ ձեւը վես-վարեցի, առաջնորդեցի՝ ներկայի մէջ հնչումէ իբր վեդ-ոն (կամ՝

1) Զատ գրերը պէս է իրենց անունով կարդալ. այսպէս՝ «ցոն» տիւն եւ սէ ձայների ձուլման արդիւնք է»: «ի՞նչ է այս սէն, որ անցնում է ցոյի տեղ» եւալլն:

ում) 1) հետեւապէս առաջին ձեւը պէտք է լինէր վե՛դս,
ուր սակայն ընկած է դ-ն, որ հին Տ-ի համարժէքն է։
նաև սլաւ՝ չիս-հաշուեցի, հակազրաբար չիս-ոն(մ) ձեւ-
ւին, որ պիտի տար չիտս, բայց Տ-ն ընկած է Ա-ի առ-
ջեւ։ 2) Այսպէս լատ. ներկայ գերբայ *serens*, որ ծա-
գում է * *serentes* ձեւից և որի սեռականն է *serentis*,
ուր տեսնում ենք թէ ընկած է Լ-ն։ 3) Այսպէս մեր
սին բառը, որի կշիռն է պարսկ. փսրան = ստիճնք.
կամ սաղմոս բառը, որի յունարէնն է *psalmo's* և ուր
տեսնում ենք թէ ընկած են վ (և թ4): Վերջին բառերն
այդ կերպարանքը չէին ունենայ, եթէ հայերէնը Ա-ի
առջեւ պայթուցիկը ձգելու ունակութիւն չունենար։
Այսպիսով Ա-ն, որ տեսնում ենք գրեսցես ձեւի մէջ,
ո՞չ թէ ց ձայնի արտաքիրութեան մի տարբեր եղանակ
է, այլ այդ ց ձայնի տարբերից մէկն է։ Բաղադիր
ց-ն քայքայուած է այդ բառի մէջ։

Կարող ենք հիմա ամփոփել մեր տեսութիւնը ց
ձայնի մասին և ասել. ց-ն բաղադիր ձայն է։ Նա Տ և
Ա ձայների ձուլման հետեւանք է, որ պատահած է մի
վաղեմի լիածայն վանկի ձայնաւորի չքացման և եղե-
րական ձայների սերտ մերձեցման պատճառով։ Վա-
ղեմի լիածայն խումբը՝ տարբեր միջավայրի մէջ հունչի
վերածելով ցնդած է վերջին Ս ձայնը և վերջին ձայ-
նաւորը չքացնելով՝ թողած է Տ-ը։ Քայքայման գէպ-

1) Այս վանկը սլաւ լեզուն տառադրձում է Մի
գրով, որ կոչում է «մեծ իւս» եւ որի հնչումը կարծում
են թէ եղած է ո՞ն կամ ո՞մ։ Տե՛ւ. Պ. Սմիրնովսկի. Քերա-
կանութիւն հին եկեղեցական սլաւերէնի. (ուուսերէն), էջ6։

2) A. Meillet. *Le sbaue commun*, 1924. էջ 112.

3) A. Ernout. *Morphologie historique du Latin*,
1927, էջ 93-4.

4) Ն. Մառ. Քերականութիւն հին հայերէն լեզուի
(ուուսերէն) 1903, էջ 33

քում ց.ն ձգում է իր բաղադրիչ ս.ը և պահում է ս.ն: Տ և ձայներ ունեցող բառերն այսպիսով կարող են կշռի գալ մեր ց ունեցող բառերի և ձեւերի հետ: Այս տեսութիւնն արժէք ունի և օտար ցերի համար: Պէտք է նախ վերականգնիլ ցերի նախնական գիծակը և ապա միայն բառերն ու ձեւերը համեմատել իրար հետ և գծել նրանց հոլովոյթի ծիրը:

Զ

Մեր առաջին Յուշագրի մէջ (Եջ 7) տեսանք, թէ ձայնազիր մեքենան վկայում է, որ չ ձայնը բաղադրի է և իր տարրերն են ս և ւ: Ս ձայնը լծորդ է և ձայնին, այսպէս՝ Եղիօէ և Եղիսէ, բերես և ոռւս. բերես: Եթէ հիմա զուգագրենք ց և չ ձայների բաղադրիչները՝ կ'ըստանանք ՏԱ-ՏԵ, ուր ս.ը նոյն է երկուսի մէջ եւս, իսկ ս և ւ լծորդ են. հետեւապէս մենք առաջուց կարող ենք ասել, որ ց և չ պէտք է լծորդ լինին, այսինքն իրար փոխարինեն լեզուների և բարբառների մէջ: Այսպէս է, որ սլաւ լուշ-ինա բառի արմատը կշիռն է մեր լուց-կի բառի արմատի և երկու բառերը մերձիմաստ են: Լուչինա մայրի ծառի բարակ և խէժառատ փայտն է, որով ոռւս գիւղացիները լուսաւորում էին իրենց խրճիթը, երբ լուցկին չկար, և վառում էին իրենց կրակը, իսկ լուցկի դասական բառ է և նշանակում է լուցանող, վառող:

Այս հաշուով մենք կարող ենք լծորդ և նոյնիմաստ համարել մեր գրիչ բառը և * գրից կազմութիւնը, որ ստորագասական ձեւի բունն է. համ. գրից-եմ: Գրիչ նշանակում է գրող, հետեւապէս նոյն իմաստը պիտի ունենար և գրից կազմութիւնը և ուրեմն՝ գրիցեմ՝ պիտի նշանակէր գրիչ եմ, գրող եմ: Կարող ենք ասել, որ մեր հնագոյն լեզուի մէջ՝ գործողի գաղափարն անշատ առած ժամանակ՝ կիրարկում էին -իչ վախճանով կազմութիւններ. արարիչ, գրկիչ և այլն. իսկ բայական կազմութեանց մէջ առնում էին նրա համարժէքն

ու լծորդը ցով՝ գրիցեմ, փրկիցեմ և այլն 1) էուծելով գրիցեմ ձեւի ե-ը իբր իա, որոնց ձուլման հետեւանքն է նա, մենք կ'ըստանանք *գրիցիամ, ուր ամ դիմակերտ է, իսկ գրիցի բուն։ *Գրիցի ձեւը կարող ենք նկատել իբր գրից կազմութեան վաղեմի ուղղական-սեռական, որ եթէ իբր սեռական շեշտէր իր վերջին ձայնաւորը՝ պիտի սղէր առաջինը և դառնար *գրցի՛, իսկ եթէ մեար ուղղական՝ պիտի ձգէր իր վերջին ձայնաւորը և շեշտն առաջին ձայնաւորին զարկելով՝ դառնար *գրի՛ց։ Մենք չունինք *գրից բառա-ձեւը, բայց ունինք իր համարժէքը, որ է գրի՛չ և որի սեռականն է գրչի՛։ Նրա վաղեմի ուղղական-սեռական ձեւն եղած է *գրիչի, որ ուղղական ձեւի մէջ շեշտն առաջին ի-ին զարկելով և երկրորդ ի-ն ձգելով՝ եղած է գրի՛չ (գրի՛չի՛ > գրի՛չ (ի)), իսկ սեռական ձեւի մէջ շեշտը վերջին ի-ին զարկելով և առաջին ի-ն սղելով՝ եղած է գրչի՛ (գրիչի՛ > գրիչի՛), Այս մեկնութեամբ միանգամայն պարզում է թէ ինչո՞ւ համար մեր -իչ վերջացող բառերի սեռականը -չի վախճան ունի. արարիչ-արարչի՛. փրկիչ-փրկչի՛ և այլն։ Մենք տեսանք, որ նոյն էր պարագան և մեր հաց-հացի կազմութեանց համար։ Գրիչ և գրից ձեւերի նոյնացումով, որ արգիւնք է ց և չ ձայների զուգահեռ կազմութեան, ուստի և լծորդութեան՝ մենք կարող ենք մեկնած համարել ստորագասական ձեւերի կազմութիւնը։ Այս հանգամանքը, որ ց ունեցող բայաբուները մենք նկատեցինք իբր կրաւորական դերբայ, ո՛չ մէկ արգելք է այս նոր մեկնութեան, որովհետև բառաձեւ և կիրարկութիւն կամ իմաստ՝ իրար հետ կապ չունին։ Միեւնոյն ձեւը կարող է տարբեր իմաստ ունենալ, տարբեր ժամանակ և տարբեր միջավայրում։ այսպէս՝ գրեմ Սահմ. ներկայ է գրաբարի մէջ և Ստորագասական՝ աշխարհաբարի մէջ, թէն երկուսն եւս միեւնոյն ձեւն են և նոյն ծագումն ունին։

1) Տես նաեւ իմ յօդուածը «Իցեմ» Հան. Ամս. 1929, էջ 121

Այսպիսով մենք տեսանք թէ ց և չ դուզահեռ կազմութիւններ են: Իրաւունք ունինք ասելու, որ նրանք նաև զուգահեռ ծագում ունին, այսինքն՝ չ ձայնը ծագում է մի լիածայն անշեշտ վանկից, որի ձայնաւորը չքացած է և որի եզերական և և ձայներն իրար մօտ գալով՝ ձուլուած են իրար և տուած են չ:

Հ. Վ. Հացունու կազմած ցանկի մէջ 1) շատ քիչ բառեր կան, ուր և և տ իրար մօտ են եկած, բայց չեն ձուլուած և չ չեն տուած: Դրա պատճառն այն է, որ ու խումբը կարող է ձուլուել և չ դառնալ ա'յն զէպքում միայն, երբ այդ երկու ձայնը միեւնոյն վանկի մաս կազմեն: Այս եզրակացութեան եկած է ձայնաւրանութիւնը և այդ հանգամանքը երրորդ պայմանն է ձայների ձուլման: 2) Նոյնը վերաբերում է և ցի կազմութեան: Այսպէս՝ *հատիս ձեւի մէջ բնական է, որ ու և չ ձուլուին, որովհետեւ նրանց որոշապէս բաժանում է մի ի, թէև նրանք միեւնոյն վանկի մաս են կազմում — հատիս: Բայց երբ այդ բառն իր երկրորդ ձայնաւորը կորցնելով դառնում է *հա՛ս, այս անգամ ս խումբն է, որ դառնում է միեւնոյն վանկի մաս, ուստի և ձուլուած է՝ տալով ց: Արդ՝ քննելով Հ. Վ. Հացունու օրինակները մենք տեսնում ենք, որ պատճան բառի մէջ ու և տարբեր վանկերի մաս են կազմում — պատ-սամ, հետեւապէս ձուլուել չէին կարող, այդպէս են նաև «վատշուեր» և «պատշիր» բառերը. իսկ պատճամ բառն արտաբերում ենք իրը պա-տըշ պամ, որով թէև ու և ձայները միեւնոյն վանկի մէջ են, բայց նրանց բաժանում է մի շատ զգալի ը: Այս բոլոր զէպքերի մէջ նոր ձայնի կազմութեան երեք պայմաններն իրացած չեն լիովին, ուստի և չ չի գուացած: 3) Յ ի պէս նաև չ-ն տարբեր լեզուական մի-

1) Տես Հ. Վ. Հացունի. — Ուղղագրութիւն եւ առողանուրիւն հայերենի. 1933, էջ 202.

2) Տես M. Grammont. *Traité de phonétique*, էջ 107.

3) Մնացած երկու պայմաններն են. 1. Վանկն անեւես պէս է լիներ. 2. Զայնաւորը պիտի չխնար:

ջավայրերի մէջ տարբեր հոլովով; թէ ունեցած . մի տեղ լիածայն վանկի և և ձայները ձուլուելով՝ ծագած է չ. միւս տեղ միեւնոյն վանկի եղերական ո-ն և ձայնաւորը չքացած են և մնացած է ո-ը, որ մաս է կաղմած նախորդ վանկի: Այսպէս՝ կանչ, որ ծագում է *կանչ ամփոփ ձեւից, իսկ սա մի լիածայն *կանչից ձեւից՝ տարբեր միջավայրի մէջ ձգած է -իւս վախճանը և պահելով ու կցելով նախորդ վանկին տիւ վանկի ո-ը դարձած է *կանչ, որ մենք չունինք իրը զատ ձեւ կանչել գաղափարին մերձաւոր իմաստով. բայց այս ենթադրական ձեւը նոյն է ինչ որ լատ. օֆու-ս բառի արմատը, որ նշանակում է երգ և մեր «կանչ» բառի կշիռն է. հմ. գաւառ. «խաղը կանչել», այսինքն՝ երգել: Այստեղից պարզ է, որ մեր չ ունեցող բառերին ու ձեւերին կարող են կշռել այնպիսի օտար բառեր ու ձեւեր, որոնք վերջանում են և: Այսպէս՝ հայերէն խաչ և վրացերէն խատ, որ նոյն բառը պէտք է համարուին և նոյն իմաստն ունին:

Ճ Ծ

Անցնինք հիմա ց և չ ձայների բախտակիցներին: Մենք ունինք կուկոն և կսկիծ բառերը, որ համարաւում են կրկնաւոր, այսինքն՝ ծագում են նոյն արմատի կրկնութեամբ. *կոնկոն և *կիծկիծ: Համեմատելով միեւնոյն բառերի հին ու նոր ձեւերը մենք տեսնում ենք, որ մի տեղ և ձայնին փոխարինած է ո-ն, իսկ միւս տեղ ծ ձայնին՝ ս-ն: Ի՞նչ են այս և և փոխարին ձայնները և ի՞նչ ծագում ունին: Ծ և ծ ձայները կազմում են բերանի խոռոչի մէջ ա'յն վայրին մօտիկ. ուր կազմում են ց և չ ձայները. այդ վայրը բնուում է ատամնաշարի և նախաքիմքի միջև ընկած տարածութիւնը: Եթէ լեզուի առաջին մասը սապատենք և կցենք առաջաքիմքին՝ լեզուի ծայրը կը բարձրանայ դէպի վերին ատամնաշարը և եթէ լեզուն քիմքից զատենք գիրթ՝ կըստանանք և և ծ. ն-ն ա'յն դէպում, երբ լեզուի սապատը առաջաքիմքի յետին մասին մօ-

տենայ և ծ այն դէպքում, երբ մօտենայ առաջին մասին: Իսկ զ կազմելու համար լեզուի առաջին մասն առանց սապատելու և հետեւապէս քիմքին փակցնելու՝ մենք մօտեցնում ենք վարի ատամնաշարին. եթէ չմօտեցնենք՝ Կ'արտարերենք չ: Յամենայն դէպս այս չորս ձայների կազմութեան միջավայրը նոյնն է և ինչ-ինչ պայմաններ միայն ստեղծում են նրանց տարրերացումը: Միւս կողմից այն լեզուները, որ ն և ծ չունին, ինչպէս ոռւս լեզուն, մեր ն և ծ ձայներն արտաքրում ու տառագարձում են իբր չ և զ, այսպէս մեր ձանիկը ոռւսի համար՝ Զանիկ է և մեր Մաթերը՝ Յատեր: Այսպիսով օտար ականջի համար մեր ն և ծ ձայները նման և ցեղակից են չ և զ ձայներին: Մենք տեսանք թէ չ և զ ձայների բաղադրիչներ են և ս ձայները: Ես ենթադրում եմ, որ ն և ծ նոյնպէս բաղադրի ձայներ են, որոնց երկրորդ բաղադրիչներն են և ս, իսկ առաջին բաղադրիչն է և ն նրանք ծագած են նոյն պայմաններում ինչ որ զ և չ ձայները, այսինքն նախաւոր լիածայն վանկեր՝ կորցնելով իրենց ձայնաւորը, եղբարական ս և ս և ս ձայներն իրարեկած ու ձուլուած են և տուած են ն և ծ:

«Կունկոճ» բառի օ-ն ոչ մէկ տարբերութիւն ունի չուն, առուն և ուս բառերի շերից, ինչպէս «կսկիճ» բառի ս-ն չի տարբերում սուր, մասուր և ուս բառերի ս-երից: Միւս կողմից եթէ ն և ծ բաղադրի ձայների ս-ը նոյն լինէր զ և չ բաղադրի ձայների սի հետ՝ այն ժամանակ նրանք իրար մօտ գալով և ձուլուելով՝ ոչ մէկ պատճառ կ'ունենային ն և ծ կազմելու. նրանք կը տային զ և չ: Պարզ է ուրեմն, որ զ և ծ և չ ն ձայների տարբերացման պատճառը նրանց բաղադրիչ ս-ի մէջ պէտք է որոնել: Եւ ես ասում եմ. նախագրական հայերէնն ունեցած է երկու տեսակ ս. մէկն ատամնային, որ սովորականն է և ես նիշում եմ սովորական ս տառապվ և միւսը՝ հմային, որ նիշում եմ լատինական և գրով: Քմային և-ը համարեա չքացած է մեր

լեզուի մէջ. նրա նկատելի հետքը տեսնում ենք թիվ-
լիսի բարբառում, որ գուցէ յարատեւած է վրաց լեզուի
ազգեցութեան տակ, որի Տերը քմային են: Այդ բար-
բառը մինչև իսկ մեր ատամնային Տերը վերածած է
քմային Տերի, նամանաւանդ սուղ ձայնաւորից (բ.ից)
յետոյ և բաղաձայների առջև միտլը (միտք), Տինոր:
Եթէ փորձէք լեզուն սապատելով և ամրապէս քիմքի
առաջամասին փակցնելով ու պոկելով արտաքերել Տ
դուք կ'ըստանաք և և ծ ձայներին մօտ հնչիւններ,
բայց այս հանգամանքը պէտք չէ մոլորութեան մատնէ
գիտողին, կարծել տալով թէ և ծ ձայներն այլ բան
չեն քան Տ ձայնի քմային արտաքերում: Եթէ այդպէս
լինէր, մենք չէինք ունենայ կոչկոճ և կոկիծ բառերի
և ս ձայները: Մենք այդ ձայներն ունինք, որով-
հետեւ և և ծ ձոյլ ձայներ են և և ս այդ ձայների
բաղադրիչներն են, որ երեւում են այդ բառերի մէջ
և և ծ ձայների քայլայման հետեւանքով:

Մենք կարող ենք զուգադրել ց, չ, և և ծ ձայների
ծագման տարազները.

առ > ց || տչ > չ
լս > ծ || լչ > ձ

Նկատելով, որ է և Տ նոյն ձայներն են, միայն
տարբեր երանգով՝ — մէկը քմային, միւսն ատամնա-
յին, — մենք կարող ենք առաջուց ասել, որ վերը
զուգադրած ձայները պիտի լծորդ լինեն հորիզոնական
և ուղղահայեաց զուգադրութեամբ. այսինքն՝ ց-ն և
չ-ն և ն-ն ու ծ-ն մի կողմից և ց-ն ու ծ-ն ու ն-ն
միւս կողմից: Երանք պիտի լծորդ լինեն թէ՛ իրենց
ձոյլ վիճակով և թէ՛ քայլայման դէպքում. այսինքն
պիտի կշռեն իրենց բաղադրիչներին՝ Տ, ս, և և է ձայ-
ներին: Այսպէս՝ կապին և կապիչ, որ նոյնիմաստ են
(ն-չ). Կին և կիծ, որ մերձիմաստ են (ն-ծ). *գրից և
գրիչ, որ նոյնիմաստ պիտի նկատուին, ասաց և ասած,

որ նախնաբար նոյնիմաստ պիտի համարուին:

Հետաքրքրական է, «ճանաչել» բայի պարագան, որի կատարեալն է «ծանեայ», Ամէնքը համաձայն են, որ ճանաչեմ բայի և արդիւնք է չ ճայնի յետաղարձ ազգեցութեան, որով նախաւոր *ծանաչեմ բայը դարձած է նանաչեմ*, Բայց ինչո՞ւ հանաչեմ և ոչ չանաչեմ, ինչ որ աւելի բնական կը լինէր: Դրա պատճառն այն է, որ ծ և ն ձայների առաջին բաղադրիչը ո՛չ թէ ատամնային, այլ քմային է: Նրանց տարբերողը երկրորդ բաղադրիչն է՝ ս.ն և շ.ն: Այս երկու ձայների արտաքերութիւնն սկսում է նոյն կէտից, որ քըմային է.ի կազմութեան կէտն է: Հ.ի յետաղարձ ազգեցութիւնը երկրորդ բաղադրիչի նոյնացման մէջ է: Այսպէս ասենք՝ շ.ն իր և բաղադրիչով է ազգած ծ.ի վրայ, փոխելով նրա ս.ն շ.ի: Նոյնացումը ստեղծւում է տարբերութեանց վերացումով, բայց նոյնանալ կարող են երեսոյթներ, որ նման գծեր ունին: Աննմանները չեն կարող նոյնանալ, սթէ որ և է նման զիծ չունին: Ծ և ն ձայների կազմութեան կէտը և առաջին բաղադրիչը միանգամայն նոյնն են. երկրորդ բաղադրիչն է նոյնացած, որով և ձայները նոյնացած են:

Նոյն հիմքերով է, որ մենք նոյնացնում ենք ասած և ասաց—ձեւերը: Մենք տեսանք, որ «ասաց—» բունը մի վաղեմի գերբայ է (Յուշագիր, Ա, էջ 17), իսկ «ասած» ձեւը գերբայ է այսօր և եղած է նաև դասական շրջանից առաջ. հմ. «արարած» բառը և նմանները իրենց կազմութեամբ նրանք նոյն են. տարբեր են միայն նրանց ց և ծ ձայների առաջին բաղադրիչները, լինելով մէկը քմային է, միւսն ատամնային: Այս տարբեր ս.երը կարող էին տարբեր բարբառների յատուկ լինել և ուրեմն ց և ծ տարբեր բարբառների համարժէք ձայներ լինել, որ միեւնոյն բայց աձեւի հնագոյն կերպարանքն ամփոփելով՝ հասած են տարատեսակ արդիւնքի՝ ս.երի տարբերութեան, հետեւանքով այսպէս.

X բարբառ *ts* Ն ծ (ասալս Ն ասած)

Y բարբառ տս Ն ց (ասատս Ն ասաց)

Երկու բարբառն եւս նախաւոր էիս և տիս լիաձայն վանկերը (որոնցից մէկի Տ. Ը քմային է, միւսինն՝ ատամնային) ամփոփելով՝ կազմած են մէկը ց, իսկ միւսը՝ ծ: Այսուհետև բայական այդ ձեւերը ցեղերի խառնուրդի հետեւանքով մտած են միեւնոյն հայոց լեզուի գանձարանը և մենք ունինք թէ «ասաց» բունը և թէ «ասած» գերբայը: Կարող էր լինել, որ մեր բովանդակ լեզուն նախապէս ունեցած է երկու տեսակ Տ. քմային և ատամնային՝ ինչպէս վերը ենթադրեցի: Այս կէտը հաստատապէս որոշելու համար անհրաժեշտ է մանր և երկարատես քննութիւն: Ինչ որ պարզ է և որոշ այն է թէ ծ և ց երկու տեսակ Տ. երի և ս ձայնի ձուլուածք են. այդպէս են նաև ն և չ, որոնց առաջին բաղադրիչները քմային և ատամնային Տ. երն են, իսկ երկրորդ բաղադրիչները՝ ՛ ձայնն է: Այս ձայների քայլայումից յետոյ նրանց առաջին բաղադրիչները կարող էին նոյնանալ՝ տալով միապէս ատամնային Տ:

Այստեղից հետեւում է ինքնին, որ մեր ց, չ, ն և ծ ձայներն ունեցող բառերն ու ձեւերը պէտք է նախապէս լուծուին իբր Տ, Տ Ե Խ Խմբեր ունեցող և սրանք վերականգնուին իբր լիաձայն Խմբեր: Ամէն Տ, Տ և ս ձայն քննելու ժամանակ պէտք է հարցնենք թէ զրանք վաղեմի ց, չ, ն և ծ ձայների քայլայման մնացորդ չե՞ն: Այդ ձայներով վերջացող մեր բառերն ու ձեւերը կարող են կշռի գալ օտար այնպիսի բառերի և ձեւերի հետ, որ ունին Տ, ս կամ Ե:

Թ

«Երբ արտաքերումը թուլանում է՝ Ա. Ն զիւրութեամբ անցնում է հ. ի», զրում են երկու մեծանուն

լուզուագէտներ։ *) Արտաքերութիւնը թուլանում է վերջին վանկերի վրայ։ Արդ՝ ի՞նչ արդիւնք կ'ունենար այդ թուլացումն ու ս-ի անցումը հ-ին, եթէ մեր վաղեմի լեզուական միջավայրերից մէկը այդպէս արտաբերէր վերջին ս-երը այնպիսի վանկերի մէջ, որոնց կազմութիւնն էր ս + Զ + ս։ Բնականաբար նրանք պիտի գառնային ս + Զ + հ և երբ նրանց միջի ձայնաւորն սնչեցած մնալով չքանար՝ պիտի տային տի խումբը, որ ձուլուելով՝ պիտի դառնար թ։ Նոյն արդիւնքը պիտի սաւացուէր եթէ վերջին և ձայնը անցնէր հ-ի։ Այս անցումն անհնարին չէ, որովհետև ս և շ լծորդ են, այսինքն՝ փոխարինում են իրար։ և ինչ որ մի տեղ ս է, մի ուրիշ տեղ ո է։ Այս լեզուի մէջ հնգեւրոպ. և ձայնը տուած է խ և օ։ Նոյն լեզուով սիչտ-նշանակում է էմիզում է։ Նոյն արմատից հին բարձր գերմ. սիհան-նշանակում է մաղել և սիգան-կաթիլ առ կաթիլ ընկնել սրանց կշիռն է մեր լեզում. ժիր, ուր թ-ն մեր տեսութեամբ սլաւ չ ձայնի. զուգահեռն է, իբր տն-սւ. Նոյն արմատից է և մեր գաւառ. ըրտար բառը, որ մաղի մի տեսակն է և պիտի վերականգնել իբր ժիս-արար և որի արմատը կշռում է ուսւ սիս-օ բառին, որ մաղ է նշանակում։ Տեսնում ենք, որ ս և օ լծորդ են։ *)

Արդ՝ մեր վարկածը կարող ենք այսպէս տարագել.

$\begin{matrix} \text{տա} & \triangleright & \text{g} \\ \text{լա} & \triangleright & \text{ձ} \end{matrix} \left\{ \begin{matrix} \text{ս} = \text{հ} \\ \text{լհ} \end{matrix} \right\} \triangleright \beta$

$\begin{matrix} \text{լշ} & \triangleright & \text{ձ} \\ \text{տշ} & \triangleright & \text{չ} \end{matrix} \left\{ \begin{matrix} \text{շ} = \text{հ} \\ \text{տհ} \end{matrix} \right\} \triangleright \beta$

Այս տարազներն ասում են, քանի որ գ, չ, ն, ծ ձուլ բաղաձայներ են և նրանց առաջին բաղադրիչներն

*) A. Meillet et J. Vendryes. *Traité de gramm. comparée des langues classiques*, հզ 47, § 65

*) Sbu A. Meillet. *Le slave commun*, հզ 25, § 30 եւ հզ 28 § 32.

են և և ս, որ նոյն բաղաձայնն են տարրեր երանդով, և նրանց երկրորդ բաղազրիչներն են ու և ո, որ լծորդ ձայներ են, ուստի նրանց ձուլումով զոյացած բաղաձայները պէտք է լծորդ լինեն, այսինքն փոխարինեն իրար լեզուից լեզու և բարբառից բարբառ: Եւ իրօք այդպէս է. այսպէս ծածկոյք և ծածկոյք (թ-ց). ծորել և թորել (թ-ծ) գաւոս. քինք և կիննի-լիթ (թ-չ), փուչ և փուր (փչանալ, փթել — թ-չ): Բնական է, որ թ-ի քայլայման զէպքում նա մի կողմից կարող է տալ և միւս կողմից հ, այսինքն իր բաղազրիչներից մէկը կամ միւսը. հմ. օրինակ փթել և փթել, որ ծագում են փութ (sh) և փուտ (s առանց հ-ի) արմատներից:

Այսպիսով մենք գտնում ենք ձոյլ ձայների լծորդութեան բանական և բնական պատճառը. նրանք լծորդ են, որովհեան իրենց բաղազրիչները լծորդ են: թ-ն և ձայնի արտաքերեաթեան մի տեսակը չէ, այլ տնի խմբի ձուլուածքն է: Պարզ է, որ թ-ն աւելի նոր ձայն է, քան իր բաղազրիչները: Նա հորովոյթի արդիւնք է: Թ ունեցող բառերին ու ձեւերին կարող են կշռել մեր և օտար այն բառերն ու ձեւերը, որ ունին ց, չ, ն, ՛, ս, ւ, ի ձոյլ բաղաձայներն ա'յն զէպքում, երբ օտար կշիռն ունի ձոյլ բաղաձայն, և պարզ ձայներն ա'յն զէպքում, երբ նրանք կարող են համարուել ձոյլ բաղաձայների քայլքայման հետեւանք: Նախնական շան կամ սան կշիռ չեն թ-ի, բայց ց-ից և չ-ից մնացած շան և սան կարող են կշռի գալ թ-ին:

Փ

Մեր և ձայնը լերկ պայթուցիկ է: Տեսանք թէ նա իր երկու տեսակով (ըմային և ատամնային) ձնունդ է տալիս ձոյլ ձայների, որ յայտնի են կէս-պայթուցիկ անունով: Լերկ պայթուցիկ է նաև պ-ն: Տեսանք նրա պարագան: Մենք ունինք սեպուի բառը, որից ածանցով ծագում է սեպիական բառը, որ արտարեւում և մինչև իսկ գրում է սեփական: Նոր կազմու-

թիւնը մի վաղեմի «սեպօնիական» ձեւի ամփոփումն է, որ դասական շրջանին զեռ հնչում էր սեպիական։ Մենք տեսնում ենք թէ իր նոր արտաբերութեան և գրութեան մէջ հին — պուն — վանկի ձայնաւորը չքաշած է և եղերական պ և ի ձայներն իրար գալով՝ ձուլուած են և տուած են վի։ Այս լիածայն վանկը իր ձայնաւորը կորցրած է անշեշտ մնալով, որով երկու եղերական ձայները միեւնոյն վանկի մաս են դարձած (հմ. սեպիական), ուստի ձուլուած են։ Դասական շրջանին անշուշտ վանկերի տրոհումն այդպէս չէր, այլ պ խումբն արտաբերում էր մի թեթև ը-ով իր սեպիական, որով պ և ի անջատւում էին և ձուլուել չէին կարող։ Մեր լեզուն հազիւ երկու զուգադրութիւն ունի պ և ի ձայների։ մէկը սեպիական բառն է, որի մասին խօսեցի. միւսը զժպհի բառը, որ արտաբերում ենք. զժպհի, այսինքն պ և ի զատում ենք իրարից ը-ով, որով ձուլման պայմանները չեն իրանում, ուստի ձուլում չի պատահած 1)։ Եթէ փորձէք այդ եռավանկ բառն արտաբերել երկվանկ, ջանալով չարտաբերել պի խմբի միջի ը ձայնը, գուք կը նկատէք, որ նախ զժուար է այդ փորձը և ապա պի խումբը միտում է դէպի վի։ ինչպէս «պացիուն» բառի առիթով՝ ես ընդհանրացնում եմ այս երեւոյթը և ասում եմ. մեր վի-ը ծոյլ բազաձայն է, նա ձուլած է մի վաղեմի լիածայն անշեշտ վանկի եղերական պ և ի ձայները։ Այստեղից հետեւում է այն ամենը, ինչ որ ասած եմ ձոյլ բազաձայների մասին. վի ունեցող բառերն ու ձեւերը պէտք է վերականգնուին իրը պի ունեցող, իսկ այս պի խումբն իրը մի վաղեմի լիածայն վանկ, որի եղերական ձայներն եղած են պ և ի։ Քայքայման դէպիում նա կարող է տալ պ և ի, հետեւապէս իր կոիրը կարող են լինել այնպիսի բառեր ու

1) Տես Հ. Վ. Հացունի, Ուղղագրութիւն եւ Առողանութիւն Հայերենի. էջ 188

ձեւեր, որոնք ունին պ և հ: Մեր լեզուն, որ պատմական ժամանակներում ձուլած է պի խումբն ու վ. ի վերածած՝ ոչ մէկ հիմք կայ կարծելու թէ այդ ունակութիւնը չունէր նաև հին նախազրական չրջանին: Այսպէս մենք ունինք մի քանի բառեր, որ համարւում են կրկնաւոր. սարսափ, կարկափ և այլն, որ վերջանում են վ.ով: Կարծում եմ, որ այս բառերը ո՛չ թէ կրկնաւոր, այլ ածանցաւոր են, նկատելով որ մենք ունինք կարկել և սարսել բայցերը, որ նոյն արմատն ունին, հետեւապէս այդ բառերը պիտի տրոհել իրը սարսափ, կարկափ: Ի՞նչ է այդ — ափ ածանցը: Վերականգնելով վան իրը պի, իսկ այս խումբն իրը մի վաղեմի լիաձայն վանկ-պին, մենք կըստանանք սանսկրիտ գործիական հոլովի - bhis վախճանի կշիռը, որով կարող ենք ասել, թէ մեր բառերը մեռած գործիական ձեւեր են, ինչպէս մեր իրեւ, բարեւ և նման ձեւերը, և երբեմն նշանակած են սարսով, կարկով: Մեր գրաբար լեզուի մէջ հնդեւրոպ. bhi ձայնը տուած է բ (հմ. անձամբ), իսկ սա իր հերթին դարձած է ւ (հմ. բանիւ, որ վաղեմի *բանիբին ձեւից է ծագում, ուր ընկած են վերջին ձայնաւորն ու հունչը 1): Պէտք է կարծել, որ մեր հին բարբառներից մէկը ի ձայնին տալիս էր պ կշիռ և բառավերջի ս-ն արտաքերում էր թուլակի իրը մի հունչ-ի, որով — bhis այդ բարբառի մէջ գառնում էր պին, իսկ այս լիաձայն վանկը իր ձայնաւորը կորցնելով իրը անշեշտ վանկ՝ և եղերական ձայներն իրար մօտ գալով՝ տուած են պի, որ ձուլումով գարձած է վ, որով հին սարսապին գարձած է սարսափ: Գրաբարի բ ձայնին Արցախի բարբառը տալիս է պ կշիռ. այսպէս՝ գրաբ. բերեմ. Արցախի պի հայ բարբառ է եղած այն, որ — bhis վախճանը հնչափութելով տուած է պին:

1) See A. Meillet. Esquisse, էջ 47. 36

Ռ

Կարծում եմ ձոյլ է և մեր ու ձայնը, որ ծագում
է երկու ր.-ի ձուլումով: Ծ ձայնը դիպուածական թան-
ձրացում է ստանում ոնդային ն.-ի մօտ գալով և լ
ձայնից առաջ, այսպէս՝ ձմեռըն: Մեր տեսութեամբ այս
բառի վաղեմի ուղղական-սեռականն եղած է ձմերան,
որ ուղղականի մէջ շեշտը զարկելով ե-ին՝ հետեւեալ
ձայնաւորը սղած է, որով բ մօտենալով ոնդային ն.-ին՝
առած է թանձր երանդ. ձմեռըն: Սեռականի մէջ շեշտն
անցնելով վեռջին վանկին՝ նախորդ ձայնաւորն է
չքացած, իսկ բ.ն վերստացած է իր նախաւոր երանգը
և մհնք ունինք ձմ(ե)րա'ն▷ ձմրա'ն: Այսպիսով
«ձմեռն» բառի ու ձայնը դիպուածական ծագում ունի,
որ բ ձայնի գրաւած զիրքի հետեւանք է: Այս երեւոյ-
թը չէ, որ աչքի առջեւ ունիմ, երբ ասում եմ թէ ո.-ն
ձոյլ բազաձայն է: Ես ասում եմ. ո.-ն ծագողապէս
ձոյլ է, անկախ իր զիրքից, նա երկու բ.երի ձուլման
հետեւանք է, որոնց միջև չքացած է մի ձայնաւոր,
որ մեծ մասամբ մի հին ա է: Այսպէս առնենք պայ-
ծառ, պայտառ և կայտառ բառերը, որ ու ունին վեր-
ջին վանկի մէջ: Ես ու ձայնը լուծում եմ իրը որ,
որոնց միջև եսթադրում եմ թէ երբեմն եղած է մի ա,
որով մեր բառերի վաղեմի ձեւը պէտք է լինէր պայ-
ծարար, պայտարար, կայտարար, որ վերջին ձայնաւորի
անկումով՝ դարձած են պայծարր, պայտարր, կայտարր
և երկու բ երի ձուլումով տուած են պայծառ, պայ-
տառ և կայտառ: Պայտառ, որ նշանակում է պայտ
շինող, պայծառօրէն ցուցադրում է իր իմաստը *պայտ-
արար նախաւոր ձեւի մէջ, որ իր կազմութեամբ նման
է ներկ-արար, հաց-արար, տն-արար բառերին: Պայծ,
որ բարբառների մէջ դարձած է պէծ, նշանակում է
կայծ, ցոլք. հմ. «կրակի պէծերը», այսինքն՝ կայ-
ծերը. «արեւը պէծին է տալիս», այսինքն՝ ցոլքեր է

արձակում, որով պայծառ նշանակում է կայծ կամ ցոլք անող: Իսկ կայտ, որ կայթ բառի լերկ ձեւն է, նշանակում է ոստոստում, ցատկրտուք և բարբառների մէջ օրինապէս ամփոփուած է իբր կէտ. Յ. Թուման-եան գրում է.

Անհանգիստ հորթե՛ր, ամառուան չոդ օր՝
Կէտ արին՝ փախան, ընկան սար ու ձոր:

Այսինքն՝ «կայտ արին, փախան», որով կայտառ նշանակում է կայտ արար, այսինքն կայտ անող, կայթող, ցատկրտող:

Այս բառերի նախաւոր լրիւ ձեւերի վերջին վանկն անշեշտ է եղած, այլապէս նրա ձայնաւորը չէր կարող սղել. և երկու ր-ն վերջին վանկի մաս են կաղմած, այլապէս, նրանք չէին կարող ձուլուել: Ունինք տարր բառը, ուր սակայն ր-երը ձուլուած չեն և չեն ձուլուած, որովհետեւ երկուսի միջև արտաքերում ենք մի թոյլ ը.— տարըր: Ունինք «երրորդ» բառը, ուր երկու ր իրար մօտ են, բայց նոյն վանկի մաս չին կազմում.— եր-րորդ: Բայց «եռակի» բառն արտաքերած են երր. ակի և ոչ եր-րակի, ուստի և երկու ր-ն ձուլուած ու տուած են ու: Այդպէս է, որ «երրեակ» բառը ու չունի, որովհետեւ արտաքերուած է եր-րեակ, թէե երկու ր-ն նախապէս միեւնոյն վանկի եղերական ձայներն են եղած. հմ. երիր, եր(ի)րեակ, երրեակ: Կարող ենք ասել ուրեմն, որ բառերի տրոհման կերպը նշանակութիւն ունի ձոյլ ձայների ծագման համար:

ԲԱՆԱՍՔԻՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԶՈՅԼ ԲԱՂԱՁԱՅՆԵՐԻ

Զ

Մեր բաղաձայները իրենց արտաքերական կերպին
և իրենց երանգին նայելով՝ երեք կարգի են. այսպէս՝

Երկ առ առ Ատամնային Քմային (հազարային)

Երկ	ա	ա	կ
Միջակ	բ	գ	գ
Թաւ	փ	թ	թ

Իսկ մեր սոյլ ձայները երկու կարգի են. այսպէս՝

Երկ	ա	չ
Միջակ	զ	ժ

Դիտունները ենթադրում են, որ Հնդեւրոպական
նախալեզուն ունեցած է միմիայն մի սոյլ ձայն՝ լերկ
ս, որ յաճախակի երեւցած է այդ լեզուի մէջ և որ մի-
ջակ բաղաձայների առջև հնչած է միջակ երանգով իրը
զ. այսպէս՝ զբ, զդ, զգ 1) : Այս տեսութեամբ զ, շ և
ժ յետագայ տարբերացումներն են սոյլ սի. յատկապէս
զ-ն իր երանգն ստանում է իր զիրքից: Մեր լեզուն
պահած է այդ յատկութիւնը. սոյլ ձայներից միջակն
է, որ զալիս է միջակ ձայներից առաջ. այսպէս՝ զբ-
աղում, ազգել ազգ. բայց զերջին բառի միջակը, երբ
բարբառի մէջ հնչում է լերկ՝ սոյլը նոյնպէս լերկա-
նում է, հմ. ասկ (ազդ). կամ երբ սոյլն ընկնում է
միջակի առջև՝ ստանում է միջակի երանգ. այսպէս
սկսել, բայց՝ սկիզբն:

Այստեղից հետեւում է, որ մի սերտ կապ կայ ձայ-
ների երանգների միջև. Բերած օրինակները վկայում
են միջակ ձայների յետաղարձ ազդեցութեան մասին

1) Տես A. Meillet et J. Vandryes. Traité de gramm. comparée des langues classiques, էջ 36, §47 և A. Meillet. Esquisse, էջ 17 §15.

սոյլ ձայնի վրայ. այսինքն՝ բ.ն աղդում է իրանից առաջ հնչող ս ձայնի վրայ և նրա երանգը փոխելով՝ դարձնում է զ. հմ. սկիզբն և սկսել:

Նկատի ունենալով մեր երկու Յուշագրերի մէջ կատարած քննութիւնը՝ կարող ենք ասել, որ ձայների ձուլման մէջ նոյնպէս երեւում է միեւնոյն հակումը. այնտեղ նոյնպէս լերկ պայթուցիկն ու լերկ սոյլն է, որ ձուլում են իրար. այսպէս Տ.Ը (թէ՛ ատամնային և թէ՛ քմային), որ լերկ ձայն է, ձուլում է ս և տ ձայների հետ, որ նոյնպէս լերկ են և տալիս է զ, ծ, ն, չ: Մինչդեռ միջակ դ և լերկ սոյլերն իրար հետ չեն ձուլում, այսպէս՝ դս կամ դս խմբերը:

Տեսականօրէն առաջուց կարող ենք ասել, որ եթէ միջակ զ և ծ ձայները նոյն կացութեան մէջ գտնուին միջակ դ ձայնի հանդէպ, ինչ որ սան ունի Տ.Ի հանդէպ՝ նրանք կարող են ձուլուել և նոր ձայների ծնունդ տալ: Այսինքն՝ եթէ լինի մի անշեշտ վանկ, որի եզերական ձայները լինեն դ և զ կամ դ և ծ և եթէ այդ վանկի ձայնաւորը չքանայ և եզերական դ և զ և դ և ծ ձայներն իրար սերտ մօտենան և միեւնոյն վանկի մաս կազմեն՝ նրանք կարող են ձուլուել և մի նոր ձայն առաջ բերել: Միաժամանակ՝ եթէ այդ տեսակ բազադիր մի ձայն քայլայուի՝ կը վերածուի իր բազադրիչ տարրերին, որ են դ և զ և դ և ծ:

Այդ կարգի բազադիր ձայներ են, կարծում եմ, մեր ձ և զ ձայները, որ ձուլուածքն են դզ և դժ խըմբերի, որոնք երբեմն եղած են լիաձայն վանկեր: Մեր լեզուն չունի դզ և դժ զուգազրութիւն. յայտնի են երկու դէպք միայն. մէկը դզի (Ժ.Պարից), որ չզիտենք թէ ինչպէս էր հնչում, և որ նշանակում է ձի, որով կարող ենք ասել՝ թէ այդ բառը մեր ձի բառի մի տարրերակն է, ուր սակայն դզ խումբը չի ձուլուած և ձի դարձած: Եթէ սխալագրութիւն չէ այս բառը, իր հնչաբանական արժէքը շատ մեծ է. նա նոյն արժէքն ունի ձ ձայնի ծագման համար, ինչ որ «ապացմուն բառը ց-ի գոյացման համար: Միւսը մեր ժխտական

դժ մասնիկն է. դժգոհ, դժբախտ և այլն, որ սակայն արտաքերում ենք իբր դրժ, այսինքն եզերական ձայները որոշապէս զատում ենք իրարից մի շատ դպալի բառվ, որով նրանք չէին կարող ձուլուել և ձուլուած չեն:

Այս վարկածով պարզ է, որ զ և ձ իրար պէտք է լծորդ լինեն լեզուներից լեզու և բարբառից բարբառ. այսպէս՝ ա'յն ինչ որ գանձ է մեզ հաշար՝ պարուի համար գոնջ է: Նկատելով, որ լեզուներից լեզու և ն դ փոխարինում են իրար՝ անակնկալ չի լինի մեզ համար եթէ թ և զ կշռեն իրար, քանի որ նրանց բաղադրիչները լծորդ են, մէկը լիննով տն խմբի ձուլում, որի հ կարող էր ծաղել ս.ից, իսկ այս ձայնը հիմքն է ծ.ի. իսկ միւսը լիննով դժ խմբի ձուլում: Մեր ջեր բառի կշռների մէջ կարող ենք տեսնել այս լծորդութիւնը. այսպէս՝ յուն. թե՛րու ամրան տաքութիւն, ուր տեսնում ենք թ, որ է տն, իսկ նրա կշռն է մեր զ ձայնը, որ է դժ, որով՝ ս դ և հ ծ: Քայլայման զէպքում ձ.ն պիտի տայ մի կողմից դ, միւս կողմից զ, քանի որ նա դզ խմբի ձուլուածքն է. մենք այս երեսոյթը կարող ենք ստուգել մեր «ձմեռն» բառի կրշտութեամբ ս.իւ և սանսկրիտ ձեւերը մաշուած են, կամ տակնք՝ պայթուցիկը ձգած են զ.ից և ն.ից առաջ, որովհետեւ մեր ձ.ն, ոչ թէ զ կամ հ ձայնի մի տարատեսակ արտաքերութիւնն է, այլ դզ ձայների մի ձուլում է 2): Մենք տեսանք թէ պայթուցիկների անկումը ս.ից առաջ մի սովորական երեսոյթ է լեզուների պատմութեան մէջ: Այդ իսկ պատճառով թրքախօս հայի բերանում ինձ բառը գառնում է ինզ, պա-

1) Երջուած ա.թ նիւռում և տեղ ա, որ սովորաբար տառապարանում են իբր է. գէնջ:

2) Զեր և ձմեռն բառերի օտար կշռները տեսնել A. Meillet, Esquisse, էջ 9 և 10.

հելովի իր վերջին բաղադրիչը։ Թուրքը ձ չունի և նրա լեզուին վարժուած հայ բերանը քայքայում է ձև։ Մենք այստեղ տեսնում ենք, որ ինզ ձեւը կշռում է ինձ ձեւին և ուրիմն զն ձին, բայց պարզ է։ որ զն է ձի ծնունդը և ոչ հակառակը։

Նոյն է պարագան և օտար լեզուների համար, յուն։ Զենք և իր սեռ։ Diós մի նախաւոր * Dzicaw ձեւի քայքայում պշտք է համարելու Հայերէնի մէջ այդ ձեւը կարող էր տալ մի կողմից Ձեւս (դզն ձու լելով), միւս կողմից Դեւս և Զեւս (ձն քայքայելով իբր դզ և պահելով բաղադրիչներից մէկը կամ միւսը)։ Տեսանք, որ զն նախնական չէ։ նա ս ձայնի տարբերակն է, որ տալիս է նաև ն, որով եթէ յոյն բառը լերկ և ունենար և զի փոխարէն ն՝ պիտի ձուլէր տի խումբը և տար թ, որով բառը պիտի հնչէր իբր թեսու։ և իրօք այս բառը, որ նոյնպէս Աստուած է նշանակում, մենք այդ ձեւով գտնում ենք յունարէնի մէջ։ Զենք և Diós բառերի հայ կշխոն է դեւ, սեռ։ դիւաց։ իսկ իր լերկ ձեւն է տիւ և տնւ, որ գանում ենք տեւել բայի մէջ։ Այս բառերը մեր և օտար քոյր լեզուների մէջ նշանակում են։ Աստուած, երկինք, օր, դեւ, որ իմաստապէս կապուած են իրար։

Այս լուծումով մենք տեսնում ենք, որ ինչպէս պարզ ձայները ձուլուելով տալիս են ձոյլ բաղաձայն, այնպէս և ձոյլ բաղաձայները քայքայուելով՝ տալիս են պարզ բաղաձայներ, հետեւապէս ամէն մի պարզ բաղաձայնի առջև պէտք է հարց տանք, թէ նա նախնապէս պարզ է եղած, թէ քայքայումի արդիւնք է։ Միաժամանակ տեսնում ենք, որ ձան իբր վաղեմի դզ լծորդ կարող է լինել դ և զ ձայն ունեցող բառ ու ձեւերի, ինչպէս նաև այնպիսի ձոյլ բաղաձայների, որոնց բաղադրիչները ձի բաղադրիչների հետ լծորդ են, ինչպէս ց (իբր ս) թ (իբր տի) եւայլն։

Ընթերցողիս մտքի պրկումը մեղմելու համար, ես

անցնում եմ մեր «հացի աշխարհը» և առնում եմ մեր հունձ բառը, որ մի ձ ունի կուծելով ձ.ն իբր դզ մենք կըստանանք *հունցիզ, որ նախապէս՝ ըստ մեր վարկածի՝ լիաձայն անշեշտ վանկով էր վերջանում, այսպէս՝ *հունցիզ, որի դ.ն եթէ ս.ն լինէր՝ հետեւորդ գ.ն՝ երազի ներդաշնակումով՝ պիտի լինէր ս և բառը հնչէր իբր *հունցիս: Առ մեզ ծանօթ հունց արմատի նախաւոր կերպարանքն է, որից կազմուած է «հունցել» բայը (ԲՅ. ա., 15) 1): Հին գարերը մեզ աւանդած են երկու գրութիւն, հունն և հունդ, որով հնձել և հունցել բառերը նոյնիմաստ են իրենց ծագման մէջ և նըրքանց տարբերութիւնը բարբառական պէտք է համարել: Հձելը, որ հին *հունձել է, պիտի նշանակէր հունդ հաւաքել, հունդը զատել կապիճներից: Զոյլ քաղածայնի լուծումը մեզ նորից փոխադրեց մի վազո՞ւց անհետացած աշխարհ, ուր մարզիկ ապրումէին հունդով:

Հետաքրքրական է մեր «հնձան» բառը, որ կարծում եմ մի վազեմի *հունձան է և ծագում է «հունձարմատից»: Բայց ի՞նչ կապ կարող է լինել հունձ անելու և գինի հանելու միջեւ: Հնձանը աւազանի ձեւով մի շինուածք է, ուր թափում են խաղողը և ոտներով ձգմում՝ նրա հիւթը հանելու համար: Կարծում եմ, որ հին ժամանակ հունդատու հասուն բոյսերը լցնում էին մի փոսի մէջ, որ հունդերը ցրիւ չզան, և տղամարդիկ ոտքով ծեծում էին այդ «կալը»՝ հունդերը զատելու համար կապիճներից: Պործողութեան և տեղի նոյնութիւնը ստեղծած է զաղափարների գուգորդութիւն, ու թէս այդեղործութեան երեւումով վաղեմի փոսերը դարձան հնձան, բայց գործողութեան նոյնութիւնը պահեց հին բառը նոր գործի համար, այնուհետեւ ցեղերի խառնուրդի հետեւանքով միեւնոյն բառը, որ տարբեր միջավայրերի մէջ տարբերացած էր իբր հունձ և հունց (ունինք և հունձ) մտան հայոց լեզուի բառական դանձարանը և նիշեցին նոյն գործողութիւնը,

1) Այսուհետեւ «Քանասերի Յուշագիրը» պիտի լիւատակիմ իբր ԲՅ.

բայց տարբեր բերքերի վրայ՝ —խաղողի և հացահատիկի։ Հայերէնի ն-ն «չափազանց» թոյլ հնչիւն է բառասկզբին 1), ինչպէս նաև բարդութեանց մէջ, և ենթակայ ցնդումի։ Այս ցնդումի հնագոյն օրինակը մեր «երկերիւր» բառն է, որ ծագում է *երկինարիւր ձեւից, ուր հ-ն ցնդած է և իա ձուլուելով տուած են ե. այսպէս՝ երկինարիւր ▷ երկիարիւր ▷ երկերիւր։ Մեր հին բարբառներից մէկի մէջ ցնդած է նաև «հունդ» բառի հ-ն և այդ բառը ունի ձեւով մտած է զրաբարի գանձարանը։ Այս ձեւի հիման վրայ մենք կարող ենք մի նոր մեկնութիւն տալ մեր «ընթանիք» բառին, որ ունինք նաև ընդանիք ձեւով։ Սովորաբար այս բառը ծագած են համարում «տուն» բառից իրը ըն-տան-իք 2), Այդ բառը մենք կարող ենք նախ համարել կազմուած իրը ընդ-անի և հասկանալ «հետինները» իմաստով։ 3) այն ժամանակ դա կը լինի վաչկատուն կենցաղի մի բառ, երբ մարդու ընտանիքը իր հետիններն էին՝ իր կինը, զաւակները և իրեն յարածները։ Այդպէս էր մեր Հայկը, երբ զաղթում էր մեր երկերը։ Երկրորդ մենք կարող ենք ածանցել «ունդ» բառից իրը ունդ-անի, այսինքն՝ ունդեր, հունդեր։ հմ. համակ-անի, աւագ-անի։ Փաւասոս գրում է, որ Հայր մարդպեսը։ «զերկու տոհման զաւագս տայր իւրով չարախօսութեամբն հանել ընդ սուր և անունի առնել միահաղոյն դտոհմն Ռշառունեաց և զառնմն Արծրունեաց» (Պ. ԺԳ), ուր անունի նշանակում է առանց ունդի, ընդազուրկ, այսինքն՝ առանց սերմի։ Տոհմը «անունդ անել» նշանակում էր ունդ չթողնել, սերմ չճգել, որ նորից աճէ, որով տեսնում ենք թէ առհմի անդամները համարուած

1) A. Meillet. Esquisse, էջ 17-18

2) Տես Հ. Անառեան. Արմատ. Բառ. Բ. Ընտանի բառի տակ։

3) Հնդ բառից, որ նշանակում է հետր, միասին. հմ. ընդ նմա եւ այլն եւ որի կեիոն է, կարծում եմ, զերմ. and եւ բառը։ Այս դեպքում մեր ընդ-ը տարբեր ծագում կ'ունենայ, քան բուսական «ունդ»ը։

են ունղեր, այսինքն՝ ունդ-անի: Իր առաջին ձայնաւորի սղումով այս բառը պիտի դառնար «ընդանի» և իր կրկին յոգնակին՝ «ընդանիք» 1).

Զոգ վերջանում է բաղաձայների այն շարքը, որ իմ կարծիքով ձոյլ են: Տեսականօրէն դրանցից մէկը պէտք է լինէր նաև մեր էն, որի քննութիւնը սակայն կապուած է մի ուրիշ շատ հիմնական և շատ մուլթ մնացած խնդրի հետ, որին առիթ կունենամ անդրագառունալու: Ձոյլ բաղաձայները, ինչպէս տեսանք, հետազայ կազմութիւն են: Նրանք հոլովոյթի արդիւնք են և աւելի նոր երեւոյթ են քան իրենց բաղադրիչները: Երբ կարդում ենք օրինակ թէ «բառասկզբին հայերէն ձ-ն է», որ կշուռմ է սնսկ. ի ին, զինգ՝ շ-ին, հին սլաւ՝ շ-ին (և յոյն, շ-ին (խ-ին), լատին. հ-ին, զոթական ց-ին)», որին կցւում է «ձմեռ» բառը և համապատասխան կշիռների շարանը՝ մենք ստանում ենք մի մեծարժէք ծանօթութիւն, բայց և ոչ մէկ լուսաբանութիւն թէ ի՞նչպէս կարող է մեր կէսպայթուցիկ ատամնային ձ-ն կշոփ գալ զոթ. միշակ գ-ին, որ կոկորդային է կամ ոռւս ու զենգ գ-ին, որ ատամնային միջակ սոյլ ձայն է կամ լատին ու սնսկ. հ-ին, որ հունչ են՝ աւելի կամ պակաս զօրաւոր: Համեմատութիւնն ասում է, որ այդպիս և զա ստոյգ է, բայց ինչո՞ւ այդպէս է, այս հարցումի պատասխանը չկայ: Ձայների համեմատական կշիռներն այսպիսով վկայում են փաստը, առանց մեկնութեան: Այդ մեկնութիւնն է, որ մենք փորձում ենք գտնել: Վերի վկայութիւնը կարող է կարծել տալ, թէ մեր ձ-ն զենգ ու սլաւ զ-ի մի հայկական արտաբերութիւն է, ինչպէս սնսկ. և լատ. հ-ն հայոց ձ-ի մի հնդկական և լատինական արտաբե-

1) Հմ. Եաեւ «Տոհմ» եւ Եոր պարսկ. քոխմ, քուխմ, որ Եանակում է սերմ, ձու, ցեղ: Տես. H. Hubschmann. Armenianische grammatis, էջ 253. Փաւստու բնդանիք բառը գ-ով է գրում. հմ. ընդանիս (Գ.իա), լընդանութիւն (Պ. Բ) և այլն:

2) A. Meillet, Esquisse, էջ 9.

բութիւն։ Բայց ես ասում եմ. մեր ձ-ն որ և է պարզ ձայնի տարատեսակ արտաքերութիւն չէ, այլ դ և գ ձայների ձուլում է, հետեւապէս լատ. հ-ն և սլաւ գ-ն, որ ծագողապէս նոյն են, մի նախաւոր ձ-ի քայքայ-ման արդիւնք են։ Մեր լեզուն ունի թէ զ և թէ հ, այնպէս որ եթէ ձմեռն բառի արմատը նախապէս հիմ լինէր կամ զիմ՝ պատճոռ չկար, որ մեր լեզուի մէջ այդ արմատը դառնար ձիմ, քանի որ հայ բերանը կա-րող էր արտաքերել և՛ հիմ և՛ զիմ։ Միւս կողմից բա-նական ոչ մէկ հիմք կայ, որ մի պարզ հ և զ արտա-քերուին իբր ձ։ Եթէ երբ և իցէ և ուր և իցէ եղած է մի նախալեզու, որի բառամթերքի ձեւափոխուած մէկ բառն է մեր ձմեռը, սլաւոնի զիման, սանսկ. հնմանը և այլն. ապա՝ այդ բառը պէտք է իբր արմատ ունե-նար *դիմ, որ մեզանում հ-ն զ-ի փոխելով և դզ ձայ-ները ձուլելով՝ դարձած է ձիմ — իսկ այլուր՝ հ-ն զ-ի փոխելով ձգած է պայթուցիկը (զիմ) կամ պայթուցիկը ձգած է նախ քան հ-ն փոխուէր զ-ի (հիմ)։ Այսպէս պէտք է կարծել և միւս ձոյլ ձայների համար։

Այս վարկածով պարզում է նախաւոր լեզուի ձայ-նաշարը. նա չունէր և չէր կարող ունենալ ձոյլ բա-զաձայներ։ Նա ունէր, օրինակ՝ Տ և Ա, բայց չունէր Գ, որ այդ երկու ձայների հետագայ ձուլուածքն է։ Նա կարող էր ունենալ ՏԱ խումբ, որ կարող էր տալ Ա (Տ-ի անկումով), կարող էր տալ Տ (Ա-ի հունչացումով և չքացումով) և յ ՏԱ խումբի ձուլումով, որ իր հեր-թին կարող էր նորից քայքայուել։

Կրկնում եմ. ձոյլ ձայները պարզ ձայների տա-րատեսակ արտաքերութիւն չեն. այնպիսի երեւոյթ չեն, ինչպէս արեւելեան հայի Պոլ Բուրժէն, որ արե-մտեան հայի բերանում դառնում է Փոլ Պուրժէ։ Պ ձայնը փ արտաքերելու համար պէտք է ձայնաշարի մէջ ունենալ փ ձայնը և բերանի մէջ՝ այդ ձայնը կազ-մալու յարմարութիւն։ Ձոյլ ձայները պարզ ձայների ձուլում են։ Բաղադիրը կարող է պարզի վերածուիլ լուծումով, որ նոյն է թէ՝ քայքայումով։ պարզերը

կարող են բազաղիր ստեղծել ձուլումով, բայց միշտ տարբեր են բազաղիրն ու պարզը և նրանք ոչ նոյն են, ոչ կարելի է նրանց նոյն համարել: Ձոյլ ձայները պատմական հոլովոյթի արդիւնք են, հետագայի կազմութիւն, հետեւապէս նրանք յուշարձաններ են, ուրոնց տակ թաղուած է լեզուի վաղնջական պատմութիւնը: Բանալով վաղեմի դամբարանները, քայլայելով ու բաժնելով սերտօրէն ձուլուած տարբերն իրարից, զետեղելով նրանց միջև վաղուց չքացած ձայնաւորները, մինք կըստանանք մի նոր «հայոց լեզու», որ նման չէ մերինին և որ սակայն մերն է եղած անյիշելի ժամանակներում: Մեր միավանկ բառերը կը դառնան առնուազն երկվանկ, կերեւան նոր վանկեր, որոնց հետքը չի մնացած, բառերը նոր իմաստ կըստանան և կը պարզեն իմաստական հոլովոյթի ծիրն ու պատճառը և կը նկարեն մեր աշքին մի կենցաղ, որի հետքերն են մնացած այսօր: Հնչաբանական տաղտկալի համարուած հետազօտութիւնը կը դառնայ մի հզօր կանչ վերակոչումի և փող՝ մեռելների յարութեան:

Պէտք է լուծել թէ՛ մեր թէ՛ օտար ձոյլ բազացայները և վերականգնած ձեւե՛րը համեմատել իրար հետ և գծել հոլովոյթի ծիրը ամէն մէկ լեզուի համար: Ինչպէս տեսնում էք հետազօտութեան մեր եղանակը նոյնպէս համեմատական է, բայց տարբեր երեւոյթներ է համեմատում իրար հետ և տարբեր եղանակով:

Մեր տեսութիւնը ձոյլ բազաձայների և ձոյլ ձայնաւորների մասին մատնանշում են ձայների ձուլման հիմնական երեւոյթները և պայմանները: Շատ բարդ է այս ձայների աշխարհը, բազմաթիւ նոր խնդիրներ են ծագում նոր տեսակէտի հետեւանքով, որ կ'աշխատենք ձեւակերպել և լուծել մեր տեսութեանց հիման վրայ: Լեզուների աւելի հմուտ մէկը կարող էր մեծարժէք հետեւանքների հասնիլ այս տեսութեանց կիրարկութեամբ: Բայց մինչև հմուտների երեւան գալը աշխատենք մեր անկատար ծանօթութեամբ կիրարկի այս տեսութիւնները բառեր ու ձեւեր մեկնելու հա-

մար, որ ասել է՝ մեր լեզուի հնագոյն պատկերը և իր վաղեմի հոլովոյթն ուրուագծելու և վաղնջական պատմութիւնը վերականգնելու համար։

Հետեւեալ պրակս պիտի յատկացնեմ «լծորդութիւն» կոչուած երեւոյթի մանր քննութեան, իսկ այս պրակի մնացորդ էները օգտագործում եմ մի քանի ստուգաբանութիւններ տալու համար, որ մէկ կողմից պիտի հաստատեն մեր տեսութիւնը ձոյլ բաղաձայների մասին, միւս կողմից օրինակ ծառայեն մեր հետազօտական եղանակի կիրարկութեան։

1. Ծիծ — նշանակում է «ստիճանք»։ Արան կարող էր կշռել մի բառ, որ ծի տեղ ունենար ք, թիր՝ քանի որ գիտենք թէ ատամնային և քմային սերը նոյն ձայներն են՝ տարբեր երանդով, իսկ ս-ն հ-ի ընտանիքին է պատկանում (հ, ս, զ, ժ)։ Ծ ձայնը լինելով ձուլում մի վաղեմի և խմբի, ուր է քմային է, կարող է կշռել մի վաղեմի ևն խմբից ծագած ձայնի, որ կարող է ք-ն լինել։ Միաժամանակ նա կարող է կշռել և ց-ով կազմուած նոյնաձև մի բառի, որ է ցից, քանի որ և ս ս խմբերը, որ ձուլումով տուած են ծ և ց՝ իրենց ս-ի երանդով են միայն տարբերում իրարից, այլապէս ձուլման պայմաններն ու ձուլումը նոյն են։ Քայլքայման զէպքում ծ, ց և ք պիտի տային մի կողմից և (լ քմային՝ ծ-ի քայլքայումով և ս ատամնային՝ ց-ի և ք-ի քայլքայումով), միւս կողմից պիտի տային ս կամ հ։ Քայլքայման պարագան զեռ չի ատպահովում քայլքայման հետեւանքների յարատեւումը։ այսինքն՝ այն հանգամանքը, որ օրինակ թիր կարող է տալ *հիին, զեռ չի նշանակում, որ այդ ձեւի բառ պէտք է պահուած լինի լեզուի մէջ։ Լեզուն մէկն ընտրում է, միւսը մոռանում է, երրորդը աւելորդ է նկատում։ Այսպէս մեր մէջ բառը և նրա գործիականը՝ միջեւ, որ մենք պահում ենք խնամքով իրենց իմաստի տարբերացման հետեւանքով։ մէկը ցոյց է տալիս որ և է առարկայի ներսը, միւսը երկու մերձաւոր առարկաներ իրարից

զատող տարածութիւնը։ տան մէջ և տների միջեւ։ Եթէ մտածում եւ այս նրբութիւնը չլինէր՝ այդ բառերից մէկը կամ միւսը կը բաւէր երկու տարրեր գաղափար։ Ներ նիշելու համար և երկրորդը կը մոռացուէր ու կը չքանար։ Այզպէս է, որ մեր լեզուի մէջ մնացած են և՛ հայ և՛ հաց բառերը, որովհետեւ նիշած են տարրեր իրեր, թէև իրը բառ՝ ծագողապէս նոյն են։

Արդ՝ ծիծ բառին կարող է կշռել մի թիք, որ վրաց։ Նշանակում է մաս։ Այս մերձեցումը ինձ բերում է այն եղակացութեան, որ ծիծ նախապէս պէտք է նշանակէր ո՞չ թէ սաինք, այլ սաինքի պտուկ, որ գոյնով ու ձեւով նման է մատի։ Ծիծ բառի մաս իմաստը պահած է նաև մեր լեզուն ծիծիկ բառի մէջ, որ է ծիծ-իկ և նշանակում է նկոյր։ Ծ և ց-ի լծորդութեամբ ցից և ծիծ պիտի նոյնանան։ հմ. ոռուս. ցից !, որ սպառնական ձայնարկութիւն է և արտաքերում են ցուցամատը թափ առաջ։ հմ. և մեր «մատը թափ տալ մէկի վրայ» որ նշանակում է սպառնալ։ Ծիծ բառի ծ.-ի քայլայումը պիտի տար Տիս, որ նոյնպէս սաինք է նշանակում։ Փաւստոսի պատմուով՝ Փառանձեմը «մերկատիս» սուգ էր անում Գնէլի վրայ և նրա մատաղ կուրծքը տեսնելով Արշակ Բ զգայալվառ որոշում է կին առնել նըրան։ Ցից ասում են հայերը մատի պէս տնկուած փայտին։ Տիս արմատի կշիռն են ֆր. teler — մօր կաթը ծծել. (մն. հայերէն ծծել, որ է՝ ծիծ-ել)։ telin — կնոջ սաինքի պտուկը. telon — կնոջ սաինք 1)։ Գերմ. zilze (ցիցե), որ մեր բառի իմաստն ունի. տես նաև նոյն բառի գերմանացքի լեզուների կշիռները։ նիդերլանդ՝ tilt, անգլոսաքսոն՝ tilt և այլն, և այլն 2)։

Մենք աեսնում ենք թէ մեր իսկ լեզում ծիծ և Տիս նոյնիմաստ են. զրանց զուգահեռ՝ նոյնիմաստ են գերմաներէն ցից-եւ և անգլոսաքսու։ Տիս։ Այսաեղից

1) See. L. Cléda-Dictionnaire étymologique de la langue française, էջ 629

2) See. F. Kluge. Etymologische Wörterbuch der Deutschen Sprache էջ 546

տեսնում ենք, որ մեր ծ և գերմ. ց կշռում են իրար. միաժամանակ միեւնոյն ս.ն է. որ երեւում է նաև նիւդերլանդի և անգլոսաքսի լեզուում ինչպէս և մեր տիտղոսի մէջ: Տարբեր չէ այդ բառերի իմաստը. յաճախ նոյն է. երբեմն մերձիմաստ են: Տարբեր բառեր են զրանք թէ նոյն բառի տարբեր կերպարանքները: Կարծում եմ բառերը նոյն են. հետեւապէս ց և Տ կշռում են իրար, ինչպէս նաև մեր ծ.ն և գերմ. ց.ն: Մենք տեսանք թէ այս երկու ձայները կշռում էին նաև մեր լեզուում. հմ. ծիծ և ցից: Արդ՝ ի՞նչ է ց.ն. Տ.ի արտաբերութեան մի կերպը. և ի՞նչ է վրացու թ.ն քիր (մատ) բառի մէջ նո՞յնպէս ս.ի մի տարբեր արտասահնութիւն: Ես ասում եմ, ո՛չ. ծ, թ, ց լծորդ են, որովհետեւ նրանց բաղադրիչները լծորդ են. և Տ.ը այդ բաղադրի ձայների քայլայման հետեւանք է: Ո՛չ թէ նախապէս եղած է մի տիտղոս որի Տ.երը արտաբերած են հունչով իրը տիտղոս որ իր հ.ն ս.ի փոխելով տուած է սա իսկ սա՞ ց. այլ նախապէս եղած է մի *սիթս որ իր ս.երը հ.ի վերածելով՝ եղած է տիտղոսի, իսկ հ.երի ցընդումով՝ բառն եղած է տիտղոս: Նոյն սա խմբերը ձուլումով տուած են ց (ցից): Այդ Տ.երը մի ուրիշ լեզուական միջավայրի մ.ջ եղած են քմային և Խորմբը ձուլումով՝ տուած է ծ (ծիծ). մի այլ տեղ տիտղոս ձուլուելով՝ տուած է թ վրաց. թիթ):

Այս օրինակի վրայ մենք տեսնում ենք թէ ի՞նչպէս ծ, ց, թ, Տ կշռում են իրար և մենք զիտենք դրա բնական և բանական պատճառը: Այս լուծումների հիման վրայ, ո՛չ միայն կարելի է գծել բառերի փոփոխութեանց ընթացքի ծիրը, այլ և գաղափարների զուգորդութեանց ընթացքը, թէ ինչպէս մատի ձեւից ու գոյնից ծագում է «մատ» նշանակող բառի «պտուկ» իմաստը. մատի տնկուածքից՝ ցից սպառնականը և ցից գոյականը. տիտղոս ֆրանսացու ծծել բառը և ստինք նշանակութիւնը և այլն: Եւ նկատելով, որ ի կազմութեամբ բառերը ունին իրենց զուգահեռը ու կազմութեամբ (որի մասին պիտի խօսեմ առանձին) ինչպէս

Բիր (գաւառու), և բուր (մատ), կիր և կուր և այլն. (այդպէս նաև գերմ. ցիցե, որի համարժէքը հին բարձր գերմաներէնում եղած է լուս, լուս)՝ կարող ենք գերմ. էլլ և լուս ձեւերին կշիռ տալ մեր ծիծ և ծուծ բառերը, որով և կշռել մեր ցից և ցուց (-ան-ել), Յոյց տալը պիտի նախապէս նշանակէր մատնանշել, մատով նիշել առարկան. և ինչպէս յայտնի բառը ծագում է այսնուլ բայի արմատից, որ է այս և նշանակում է թմբածե ուսուցք, և ուրեմն՝ յայտնի՝ պիտի նշանակէր թմբածե ուսուցք, աչքի ընկած, այնպէս և ցոյց բառը պիտի նշանակէր մատի պէս տնկուելով երեւցած և աչքի ընկած:

Այսպէս կարելի էր երկար շարունակել, բայց ես ընդհատում եմ, ուրիշ օրինակի անցնելու համար:

2. Վեց, որ ունինք վար ձեւով վարսուն բառի մէջ և վեց ձեւով վետասան բառի մէջ, որ նշանակում է տասնուվեց: Իր կշիռն է յուն. *վեկս, որ դարձած է նեկս, պարսկ. շեշ, որ արտաքերւում է նաև իբր շատ, ննակ. շատ, որ փոխւում է «տասնուվեց» նշանակող բառի մէջ իբր շօ՛դասա, լատ. sex և այլն: Ա. Մէյէ կարծում է, որ «վեց» բառի ց-ն «հնումն եղած է շաջող կէս-պայշթուցիկ, որովհետև այնտեղ, ուր բաղաձայնի առջև նա կորցնում է իր կէս-պայշթուցիկ բնոյթը՝ դառնում է ոչ թէ ս, այլ օ» և բերում է «վիշտասան» բառն իբր հիմք և ապացոյց (Esquisse, էջ 19): Այդ շաջող կէս-պայշթուցիկը չ-ն է, որով ենթադրւում է մի չորրորդ ձեռ* վեչ: Վրացին ասում է ե՛վս, իսկ հին վրացերէնը՝ ե՛վուս. այստեղ ե-ն պէտք է համարել մի հին ե, որ լերկացած է. հմ. երես և գաւառ. էրէս, իսկ ու ն ձեւափոխումն է հին ու-ի. հմ. Աստուած - Աստված:

Մեր լեզուի մէջ մենք տեսնում ենք իրական վեց և վար և ենթադրական *վեչ, որով թ, ց, չ, լծորդ են իրար. *վեց ձեւը տալիս է վեց, որով չ և դառնում են լծորդ: Թրքախօս հայի բերանում վեցը դառնում է վես, որով ց-ն դառնում է լծորդ ս-ին: Տեսնում ենք

թէ ինչպէս մի հին *վետօսասան դառնում է վետօսասան,
որով ս-ն ընկնում է ո-ի առջեւ, և մի *վետօս դառնում
է գես՝ միեւնոյն երեւոյթը պարզելով մեր աչքին:
Պարզ է նախաւոր չի և հին ց-ի քայլայումը իրենց
բաղադրիչ մասերի, որոնցից մնում է երկրորդը (c, v)
և չքանում առաջինը (s): Միաժամանակ մենք տեսնում
ենք չ և ց-ի լծորդութիւնը թ-ի հետ վար—ձեւի մէջ:
Մենք բացարեցինք այդ երեւոյթի բնական և բանա-
կան պաճառը. քանի որ ց-ն մի հին ս է, որ ձուլ-
ուած է. և քանի որ ս-ն լծորդ է հ-ին, ուստի մի հին
տի, որ մի հին ս խմբի զուգահեռն էր, ձուլումով
պիտի տար թ: Հետեւապէս վեց բառի մեր ունեցած
տարբերակները շատ հին ժամանակ հնչած են իրը
*վատին, *վետօս և վետօս: Պարզ է, որ այս բառերը չեն
կարող միեւնոյն բարբառի բառեր լինել, որովհետեւ
եթէ մի բարբառ ձայների մի խումբ արտաբերում էր
ս-ն ա չէր կարող միաժամանակ, միեւնոյն բառի մէջ,
միեւնոյն խումբն արտաբերել տես կամ տի. եթէ մի լեզ-
ուական միջավայր ե ձայնին տալիս էր ա կշիռ(վաթ-
վեց)՝ նա չէր կարող միաժամանակ միեւնոյն բառի
մէջ միեւնոյն ձայնը երկու կերպարանքով ունենալ
և պահել: Հետեւապէս այդ երեք բառերը երեք տար-
բեր լեզուական միջավայրերից են եկած և մտած գրա-
բարի գանձարանը. գրանք երեք տարբեր հայ ցեղերի
բառերն են վեց գաղափարի համար: Այդ բառի վերջին
ձայնը իրը թ հնչող բարբառը պիտի տար *վեր եթէ
ձայնաւորը ե հնչէր. հետեւապէս մենք չենք կարող
ասել թէ վար ձեւը ծագում է վեց կամ *վեչ ձեւից:
Դրանք պարզապէս երեք տարբեր բառեր են երեք
տարբեր և անկախ լեզուական միջավայրերի, որ ունե-
ցած են իրենց առանձին և յատուկ հնչարանութիւնը
և սակայն ունեցած են մի հասարակաց յատկութիւն՝
նրանք ձուլած են սերտօրէն կից ձայները և նոր բա-
ղաձայներ ստեղծած: Որով տեսնում ենք թէ մենք
ունեցած ենք հին բարբառներ՝ շատ աւելի հին քան
մեր գրաբարը. և ապա՝ որ մեր գրաբարը մի խառն

լեզու է և ոչ անաղարտ և միաձոյլ հին բարբառ։ Նրա
բառամթերքը կազմուած է եկամուտ տարրերից։ Բար-
բառների մրցութեան հետեւանք են վեցը, վարսունն
ու վիշտասանը. ամէն մի բարբարից մի բան է մնացած
իրր դիրտ և ժառանգութիւն, մէկի *վեցունն է կո-
րած, միւսի *վեչունը կամ *վեցունը, միւսի *վարը
(իրր վեց)։ Բայց այս բոլոր տարատեսակ ձեւերը մի
ընդհանուր դիմ ունեն, որով հաստատում է, թէ այդ
հին բարբառները միեւնոյն նախահայերէնի մաս են
կազմած։ Նրանք բոլորը յուն։ ԼՏ խմբին դիմաբերում
են ՏԻ, ՏԵ կամ ՏԱ, Այսինքն և Ճայնին՝ մի Տ։ Այդ նոյն
դիմաբերումը մենք տեսնում ենք և ուրիշ բառերի
մէջ. այսպէս՝ այծ, որ մի հին *այտս է և յուն։ aiks,
ուր կան ց-ի համարժէք է. հմ. սեռ. aigōs. կամ բոյծ
և սնսկ. bħoġah, ուր ծ-ն որ է ևս՝ կշռում է gaħ
(նախապէս — gas) անշեշտ վանկին և ուրեմն Տ-ը կշիռն
է ց-ի, որ իր հերթին լծորդ է կ-ին։ Մենք տեսնում
ենք, որ յուն։ ԼՏ խումբը ամփոփումն է մի նախաւոր-
gos անշեշտ խմբի, որով մեր ծ-ն նոյնպէս մի հին
լիածայն վանկի ամփոփում և եղերական ճայների ձու-
լում է, ինչ որ պարզած եմ իրր մեկնութիւն ծ ճայնի
ծագման, ինչպէս սեռ. aigōs, ուղղականի մէջ շեշտն
առաջին վանկին զարկելով և երկրորդ վանկի ճայնա-
ւորը սղելով դարձած է aiks 1), այնպէս և մեր այծ
բառը ամփոփումն է մի հին *ա'լ + Զ + Ս ձեւի, որ ամ-
փոփումով դարձած է այտս, խակ սա ձուլումով՝ այծ
(և-ծ)։ Նոյնը նաեւ բոյծ բառը, որ եղած է երբեմն
բոյծև՝ իսկ սա բոյծ + Զ + Ս։ Այս բառն ունինք նաև իր
վերջին ճայնի քայլքայուն կերպարանքով, ուր — Զ + Ս

1) Զայնաւորի անկման հետեւանեով բաղաձայնը
փոխած է իր երանզը. հմ. բաղիք, բայց բաղկել. բա-
ղաք, բայց բաղկի (Թիֆլիս):

ընկած են և մնացած է է-ը, որ դարձած է ատամնային (տեղ-տեղ պահած է նաև իր քմային հին երանգը)։ այսպէս՝ բուժ. համ. գաւառ բրտել, որ է՝ *բուժել և նշանակում է կուշտ ու կուռ կերակրել. այս ձեւը մնացած է և իր բրել, որ է՝ *բութել, և ուր տեսնում ենք հին և — խումբն իրը թ հնչած և իրը ք ձուլուած։ Նոյն բառն է և խոտաբօւտ բարդի մէջ, որ նշանակում է խոտակեր, խոտասուն։

Վերի համեմատութիւնները ցոյց են տալիս, թէ քոյր լեզուների — os, is as, us (հմ. litus▷ լիտո▷ լից օրինակը ԲՅ Ա. 16) վախճանները, որ չեն երեւում մեր լեզուի մէջ՝ ի՞նչպէս են չքացած։ Այն դէպքերում երբ այդ վախճանների և ձայնը մերձօրէն կից գըտնուած է իր նման լերկ ատամնային կամ քմային և-ի հետ՝ ձուլուած և տուած է զ կամ ծ. այն դէպքում երբ այդ և ձայնը ւ-ի անցնելով՝ սերտօրէն մերձ գըտնուած է քմային կամ ատամնային և-ին՝ ձուլուած է նրա հետ և տուած է ն կամ չ, երբ նոյն և ձայնը հունչի անցած է և ատամնային և-ի կից գտնուած՝ ձուլուած է և տուած է ք։ Երբ ատամնային ձայնը եղած է միջակ, այսինքն դ և միեւնոյն և ձայնը անցած է զ-ի կամ ծ-ի՝ ձուլուած է նրա հետ և տուած է ձ կամ զ։ Մնացած դէպքերում այդ և ձայնը հունչի անցնելով՝ ցնդած է, իսկ իր ձայնաւորը չքացած է ուղղական ձեւի մէջ, որ սակայն երեւում է սեռականի մէջ՝ երբ բառի շեշտն անցնում է իր վրայ։

ԲԱՆԱՍՔԻՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԼՇՈՐԴՈՒԹԵԱՆ

Լծորդ ասում են այն ձայներին, որ լեզուից լեզու և բարբառից բարբառ փոխարինում են իրար. նաև և չանգ բառերի մէջ և կ լծորդ են Զ և Գ ձայներին: Երկու հայ բառ են զրանք, որ նոյն իմաստն ունին, բայց տարբերում են իրենց հնչական կերպարանքով: Այդ տարբերութիւնը բարբառային է: Այսպէս նաև բերեմ և յուն. *fē'go'* լատ. *fēgo'*, նոյնիմաստ են և բ և է լծորդ են մէկ լեզուից միւսը: Միեւնոյն բ—Ֆ փոխանցումը մենք հանդիպում ենք նաև մեր լեզուի մէջ. այսպէս՝ զաւառ. բորժ-ել, որ կարծում եմ ծագում է մի հին * բորբ-ել բայից, ուր բ և ֆ լծորդ են իրար: (Հմ. բորբ, բորբոք և այլն): Ի՞նչն է այս համատարած երեւոյթի պատճառն ու հիմքը:

Գիտենք թէ մեր բաղաձայները իրենց արտաքերութեան կերպին ու երանգին նայելով՝ այսպէս են դասակարգւում.

Տրթնային ատամնային քմային (հագագային)

լերկ	պ	տ	կ
միջակ	բ	դ	դ
թաւ	փ	թ	ք

Նախորդ Յուշագրերի մէջ (ա, բ, դ) մենք տեսանք թէ թաւձայները ձոյլ են, այսինքն կազմուած են լերկ ձայներից և կցորդ հունչից՝ իբր պհ—վի, սհ—բ և կհ—ֆ (վերջին ձայնի մասին դեռ առիթ չունեցայ խօսելու): Այս բոլոր ձայները պայթուցիկ են իրենց ընդհանուր

Նրանց իմաստի տարբերութիւնը չքացած է ժամանաւ կի ընթացքին և այսօր մենք ունենք տարտառակ, բայց նոյնիմաստ երկու բառ :

Պիտի փորձեմ նոր մեկնութիւն տալ այս ձեւերին, հիմնուելով մեր տեսութեանց վրայ :

Յայտնի չէ ո՞չ «ցերեկ» և ոչ «ցորեկ» բառերի հին հոլովումը : Երեկոյ ձեւը թւում է ինքնին մի հին բայց քարացած սեռ, հոլով. հմ. գործոյ, որի ուղղականը պիտի լինէր «երեկ»: Ունենք երեակ, որի սեռ. կարող է համարուել քարացած երեկոյ ձեւը : Հետեապէս ցերեկ բառը գուցէ իբր սեռական ունէր «*ցերեկոյ»: Այս «երեկոյ» ձեւը նկատուած է ուղղական և ընթացած է եւան հոլուական կարգով. հմ. ժողովուրդ — ժողովրդեան ॥ երկոյ — երեկոյեան: Բայց այս ձեւը նոյնպէս քարացած է: Բարբառների մէջ ունենք «իրիկուայ», իրիկուան» ձեւերը. վերջին ձեւը «իրիկուն» բառինն է. հմ. անուն-անուան ॥ իրիկուն-իրիկուան: 1)

1) Կարող ենք ասել, որ երեկոյեան և իրիկուան (երեկուան) ձեւերը տարբերացած են և ւ լծորդ ձայներով և տարբեր շեշտառութեամբ: Իրիկուան ձեւը շեշտառում է իբր իրիկուան (երեկուան). իսկ միւսն իբր երեկոյան: Որով կարող ենք զուգազրել առանց մանրամասն մեկնութեան:

Երեկուան (ան) — երեկոյ (յա՞ն) → երեկոյան:

հմ. մրջիւան (ան) — մրջիյ (ա՞ն) → մրջիան:

Թէ ինչ աղբեցութիւն ունի հոգեբանական տարրը լեզուի հոլովոյթի վրայ՝ ապստամբելով հնչական օրէնքների գէմ՝ կարելի է տեսնել «երեկուան» և «իրիկուան» ձեւերից, որ գտնւում են միեւնոցն բարբառի մէջ, բայց մնացած են տարբեր հնչական կերպարանաբով, որովհետեւ ստացած են տարբեր իմաստ և կի-

իսկ «իրիկուայ» ձեւը յիշեցնում է մեր յատուկ անուն՝ ների հոլովական կարգը. հմ. Սահակ-Սահակյալ, բայց ո՞րն է եղած այդ բառի ուղղական ձեւը: Այս խնդիրը հետազօտուած չէ: Այդպէս են բոլոր ժամանակ ցոյց տուղ բառերը. գիշերուայ, օրուայ, ամսուայ, տարուայ, շարաթուայ ևայլն, որ ունեն իրենց զաւդահեռը իր օրուան, տարուան, ցերեկուան ևայլն: Սրանց մտուին ես առիթ կ'ունենամ խօսելու: Գուցէ կարելի լինէր հիմք առնել «աներեկ» և «աներեակ» (= երեկոյ չունեցող, մշտալոյս) բառերի հոլովաւմը, նրանց սեռականն ունի լ. հմ. «յաւուրն աներեկի»: Բայց այստեղ խանգարում է մի պարագայ. բարդ և ածանցաւոր բառերը փոխում են իրենց հոլովական կարգը. այսպէս՝ զործ-զործոյ, բայց բարեգործ-բարեգործի: Միւս կողմից թէե բարբառն ասում է «ժամուան», «ցերեկուան», բայց ունի նաև «ցերեկին» ձեւը, հմ. «գիշերը ցերեկին խառնել» բացատրութիւնը, որ նշանակում է «շտատ և անընդհատ»: «Ցերեկին» այստեղ տրական է, որով իր սեռականը պիտի լինէր «ցերեկի»: Թուում է թէ ա՛յս է եղած «ցերեկ» բառի հին հոլովաւմը: Այս վարկածի մի ուրիշ հիմքը պիտի տեսնենք քիչ յիսոյ:

Անդամատեհնք մեր ունեցած այն ձեերը, որ աւանդաբար հասած են մեզ: Նկատելով, որ մեր տեսութեամբ և ձայնը նախնական չէ, այլ մի վաղեմի խալ խօրի ձուլման հետեանք է՝ մենք կարող ենք ցերեկ և ցորեկ բառերի վերջին ե-երը լուծել իրը իս: Մենք կ'ըստանանք, ցերի-ակ և ցորչ-ակ: Մեզ աւան-

բարկութիւն, երեկուան (արտաբերում է էրեկուան) նշանակում է անցոծ օրուան, նախորդ օրուան. իսկ իրիկուան (իրիկուան) — երեկոյի. հմ. «էրեկուան օրը» և «իրիկուան հովը»:

կերի. սղումով կամ լծորդ բազաձայների տարբերութեամբ. այսպէս՝ կո՛լոր և կլո՛ր. — կլորել, գլորել, քլորել. — կլոլ-կլոր։ Հնչական այս տարբերացումները օգտագործուած են լեզուի մէջ, նրանց կառչած են նոյն իմաստի տարբեր երանգներ կամ մերձաւոր իմաստներ։ Շեշտական և հնչական տարբերութիւնները դարձած են միջոց իմաստի մերձաւորութիւն և երանգ արտայայտելու համար։ Մի քանի տարբեր ձեւեր կարելի է հանդիպել միեւնոյն բարբառի մէջ և միաժամանակ։ Այսպէս՝ կօնեցին ունի կլորել, գլորել, քլորել, կոլոր և քոլոր։ Նոյնը ուրիշ բարբառներում։ Մենք վերը տեսանք նոյնիմաստ բառեր, բայց տարբեր կերպարանքով և Տարբեր բարբառների մէջ (հաց-խաց), այսպես անուանում ենք մերձիմաստ բառեր, տարբեր կերպարանքով, բայց միեւնոյն բարբառի մէջ։

Ինչո՞ւ համար մի բարբառ ասում է բերեմ, իսկ մէկ ուրիշը՝ պիրեմ (Արցախ)։ Ինչո՞ւ համար միեւնոյն բարբառը երբ երեխան է երեխային թաւալում գիտնին՝ ասում է. զլորեց, իսկ երբ շունն է շանը թաւալում ասում է. վլորեց։

Խորանանք այս հարցերի քննութեան մէջ։

Եւ նախ մի հարցում. այս տարբերացումները հի՞ն են թէ նոր։ Ս. Մեսրոպից յետո՞յ է, որ Արցախնեցին ասում է. պիրեմ, իսկ Վանեցին՝ խաց, թէ այդպէս էր զրերի գիւտից առաջ։ Դասական գիտեմ և կօնեցու գիդեմ ձեւերը նոյն հնութիւնն ունին, թէ կօնեցին նոր է փոխած իր հնչումը և արտարերում է դ այնտեղ, ուր Ս. Մեսրոպ հնչում էր ս։

Այս հարցումին պատասխանելու համար պէտք է իմանալ թէ արդեօք մեր լեզուի ձայները ո՞րքան ժամանակ կարող են անփոփոխ մնալ միեւնոյն պայմանաներում։ Այսպէս՝ առնենք հաց բառը, որ միավանի է. նա ունի մի ն, որ գալիս է ա ձայնաւորից առաջ։ ունի

մի ց, որ գալիս է նոյն ձայնաւորից յետոյ։ «Հաց» դասական բառ է. Երեւան, Արցախ և շատ բարբառներ ասում են «հաց», որով տեսնում ենք թէ ի և ձայները իրենց բնիկ հնչումով մնացած են անփոփոխ աւելի քան 1500 տարի։ Այդպէս է ի-ննաև նաև բառի մէջ և այլուր՝ ա ձայնաւորից առաջ։ Հաւասար, հաւատ, հաս, համ եւայլն։ այդպէս է նաև ց-ն նոյն ձայնաւորից յետոյ։ այսպէս՝ բաց, լաց, կաց եւայլն։ Խաղող բառի լա ձայնը գալիս է ա-ից առաջ։ Այդ բառը դասական բառ է և այդ կերպարանքով անփոփոխ մնացած է շատ բարբառների մէջ։ այդպէս է լս-ն նաև խաղ, խաւար, խաղաղ և այլ բառերի մէջ։ Հնատեւապէս՝ այդ ձայնը նոյնպէս ապրած է անփոփոխ աւելի քան 1500 տարի։ «Հաց» բառը «խաց» բառի։ համեմատութեամբ չունի այնպիսի բացառիկ հանդամանք, որ մենք ստիպուած լինենք տաելու թէ ի-ն լս-ի փոխուած է զասական շրջանից յետոյ։ այդ բառի ի-ն նոյն քան անփոփոխ կարող էր մեզ հասնել, որքան լս-ն։ Մենք կարող ենք որոշապէս ասել, որ Ա. Մենը պատահած վանեցին խաց չէ՞ր արտաքերում, ո՞չ ոք կարող է ասել։ Ոչ մէկ բանաւոր և բաւարար հիմք կայ ենթագրելու թէ խաց ձեւը նոր է, քանի որ ի-ն և լս-ն անփոփոխ հասած են մեզ հատ և խաչ և նման բառերի մէջ։ Մեզ պէտք չէ մոլորութեան մէջ ձգէ այն հանդամանքը, որ հաց և խաղող զասական բառեր են։ գրաբարը հայոց միակ լեզուն ու բարբառը չէր։ հայոց լեզուն շատ աւելի ընդարձակ էր քան որ և է բարբառ։

Բայց ահաւասիկ հնչական տարբերութիւններ բուն իսկ զասական լեզուի մէջ կամ բաւարար հին գարերից։ Փաւստոս շփոթում է պայթուցիկները գը-

բելով. 1)

գ-ը կ-ի փոխարէն. մանզիկ (Գ. ժա). ցանզութիւն (Գ. ժգ). ընզեր (Գ. իա) ընզերէր (Գ. ժդ). ընզու (Գ. ա). անզանելոց (Գ. ե) եւայլն:

կ-ն գ-ի փոխարէն՝ կանկնել (Գ. իա). տիրանհնկնին (Գ. ի) եւայլն

ձ-ն ծ-ի փոխարէն՝ պանձացեալք (Գ. ժգ). ընձաւիւթիւն (Գ. իա):

ջ-ն ն-ի տեղ՝ վախչան (Գ. դ).

ջ-ն չ-ի տեղ՝ գոզէին (Գ. ը).

դ-ն ս-ի տեղ՝ ընդանիս (Գ. իա) յընդանութիւն (Գ. ը) եւայլն:

Այս երեւոյթն իր արժեքը չի կորցնի՝ եթէ այս դրութիւնը համարենք տառասխալ: Զեսադրի զրողը կամ արտագրած է, և ուրեմն սխալներն աչքի վրիպանք են: կամ գրած է տուն տուողին լսելով, և ուրեմն սխալները ականջի վրիպանք են: Նկատելով, որ «ընտանի» բառը Փաւստոսի պատմութեան մէջ գտնում ենք և՛ Տ-ով և՛ Դ-ով գրուած՝ պէտք է ենթազրել, որ գրիչը կամ Տ է տեսած՝ բայց Դ գրած, կամ հակառակը: Նաև տուն տուողը. կամ իր սովորական արտաբերութեամբ հնչած է ընտանի, բայց լսողը Դ-ով է գրած: կամ տուն տուողը Տ տեսած է բայց իր բարբառական արտաբերութեամբ հնչած է ընդանի և գրիչը գրած է այլպէս: Ինչ և լինի պատճառը՝ ձայների այս շփոթը հին է. առնուազն այնքան հին, որքան այն ձեռագիրը, որի համեմատ կատարած է իր տպագրութիւնը Ք. Պատկանեան: Այսպիսով տեսնում ենք, որ բաղաձայների լծորդութիւնը հին երեւոյթ է: Ս. Գրքի ընտանին և Փաւստոսի ընդանին նոյն կարգի երեւոյթ

բարբառները։ Նրանցից մէկը գրի առնուած է Ե. գում՝ միւսները մնացած են անդիք, բայց աւելի կամ նուազ չափով ազգած են գրաբար լեզուի վրայ։ Հեղինակ ու թարգմանիչ, գրիչ և տուն տուող սովորած են գրաբար լեզուն, բայց չեն մոռացած մայրենի բարբառը և լսելով օրինակ՝ ընտանի, գրած են՝ ընդանի կամ հակառակը։

Լեզուաբանութիւնը նոր և հզօր թոփչք առաջ յն օրից, երբ հաստատեցին թէ հնչական փոփոխութիւնները պատահական չեն, այլ ենթակայ են որոշ կանոնի, որին բնական օրէնքի ուժ կամեցան տալ առաջին խանդավառութեան ընթացքին։ Այդ կանոնները յաւերժական չեն, այլ փոխուած են միջավայրից միջավայր և գարերի ընթացքին։ Այդ կանոնի իմաստն այն է թէ միեւնոյն ձայնը միեւնոյն դիրքի մէջ միեւնոյն ժամանակ և միեւնոյն միջավայրում չի կարող երկու տարբեր երանգ ունենալ, եթէ սնսկ, եհ ձայնին մեր գրաբարը որոշ պայմաններում տալիս է բ կշիռ, ապա բոլոր այն բառերը, որ որոշ պայմաններում սնսկ, լեզուի մէջ ունին եհ՝ մեր գրաբարի մէջ պիտի ունենան բ եթէ պահած են սանսկրիտ բառերի կամ ձեւերի համարժէքը։ Այսպէս՝ սնսկ, եհա՛րա՛մ, որ է բերեմ, գրաբարի մէջ ունի բ գործիականի վախճանը, որ է ՚blis, գրաբարի մէջ բ է, ամձա՞բ։ Լատիներէնի բ-ն անցնելով հին ֆրանսայի բնակչին՝ որոշ պայմաններում գարձած է ս. և ամէն անգամ երբ բ-ն ա՛յբ պայմանների մէջ է գտնուած՝ միշտ գարձած է ս. այսպէս՝ րա՛pilione-pavillon, *superano-souverain եւ այլն 1)։ այդպէս է և մեր բարբառներից մէկում, ուր սիպտակ հնչում է սիվտակ։ Այս կանոնը ճիշտ է տե-

1) Shu L. Cléda. Manuel de phonétique et de morphologie historique du français. 1917, եջ 9—10

սապէս և ճիշտ է անխառն լեզուների համար։ Սակայն չկան անխառն լեզուներ, ինչպէս չկան դտարիւն աղաքեր։ ուստի լեզուները վիտում են այս ընդհանուր կանոնի դէմ մեզանչող երեւյթներով, որոնք սակայն պատահական բնոյթ չունին, նրանք որոշ պատճառների արգիւնք են, որ պէտք է որոնելու գանել՝ լեզուական երեւյթներին բանական մեկնութիւն տալու համար։ Տեսանք թէ ինչպէս գրաբարը, որ մի հին բարբառ է, սնսկ. Եհ-ին տալիս է բ կշիռ. բայց Արցախիցու լեզուն, որ նոյնպէս մի հին բարբառ է, նոյն Եհ ձայնին տալիս է ալ կշիռ. հմ. պիրեմ: «Պիտի» ձեւը, որ մի բայ է բարբառների մէջ, (հմ. պտեմ, պտես, պտի գնայ ևայլն), ինձ թւում է, որ կշիռն է սուս. բուզու, բուզիչ, բուզես,— (պիտի լինեմ, լինես լինի)՝, և պարսկ. բուզան (լինել) բայերի և մեր բարբառների և գրաբարի մէջ տալիս է ալ կշիռ. հմ. «Ոչ է պիտոյ բժիշկ կարողաց» (Մատ. թ. 12): Բայց նոյն Լոռու բարբառը, որ միջակ դ ունէր լերկ Տի դէմ, այս անգամ միջակ Բ ունի գրաբարի լերկ պի դէմ. հմ. գալ բլիմ=պիտի գամ. նաև պայթուցիկի անկումով՝ գալ' դիմ, գալ' դիս, գալ' դի: 1) Այս կէտի մէջ գրաբարը տարբեր է Լոռու բարբառից ա՛յնպէս, ինչպէս տարբեր է սլաւ և պարսիկ լեզուներից։ Այս տարածայնութիւնը վերացնելու համար գիտունները ենթազրում են, թէ Լոռեցին զասական շրջանից յետոյ միայն փոխած է գրաբարի պ-ն բ-ի և ս-ը՝ դ-ի։ Սակայն մենք տեսանք թէ բաւարար ու բանական հիմքեր չկան այս վարկածի համար։ Ինչ որ յետոյ գրի առնուած է՝ գեռ չի նշանակում թէ նոր է. Լիտուայի լեզուն ժօ գարում չի նշանակում թէ նոր է. Լիտուայի լեզուն ժօ գարում չի առնուած է, բայց նա պահում է նոյնքան հին գրի առնուած է, պատճառ սանսկրիտը կամ յունարէնը։ Գիտունները, որքան սանսկրիտը կամ յունարէնը։

1) Պիտի բայի մասին խօսելու եմ մի ուրիշ անգամ։

հերն ասում են, որ հնդեւրոպ. թ ձայնին հայերէնը տալիս է ի կշիռ. այսպէս՝ անսկ. թա՛ռթա՛ս — հուն (գետի). յուն. pe'don — հետ (ստքի հետք և ստն). բայց ունինք սն, որի կշիռն է յուն. թօ'ձա և ուր ի չի երեւում: Այս երեւոյթը մեկնում են ասելով թէ հայոց հ-ն շատ թոյլ հնչիւն է, ուստի ցնդած է. այդպէս է և հորբ բառի մէջ, որի կշիռն է յուն. թօ'րթի: Բայց ինչո՞ւ համար նոյն հ-ն, որ թոյլ ձայն է՝ չի ցնդած հետ բառի մէջ. չէ՞ որ նա նոյնպէս ծագում է թ ձայնից: Արդեօք ցնդում է հ-ն որովհեաւ ո ձայնից առաջ է ընկած. բայց ահա բառեր, որ գիտունների ասելով նախապէս ն չեն ունեցած, բայց հայերէնը հնչում է հ-ով ո՞չ միայն ա և ու ձայների, այլ և ո՞ի առջեւ. հմ. հաւ, լատին. ասէ, հում, յուն. օ'տօ's, բայց և հոս, լատ. odor: Եթէ գրաբարը սից առաջ ընկած հ-ն չէր պահում, ի՞նչպէս է որ չեղած տեղը ն է ստեղծում նոյն ո-ից առաջ և պահում է:

Հինգ բառի մէջ, որի կշիռն է յուն. թե՛ռթե՛ թ տուած է հ. իսկ յիսուն բառի մէջ, որ նոյն հինգ բառոից է ծագում և ուր հ-ն նոյն թ-ի կշիռն է (հմ. յուն. pentēkonta - յիսուն), այս անգամ տուած է յ: «Անկասկած յ-ն արդէն առնելու վրայ էր այն արտաքերութիւնը, որին նա հասաւ վերջը» գրում է Ա. Մէյերայց այն ժամանակ հնչակոն կանոնի հիմոն վրայ հինգ բառը նո՞յնպէս պէտք է հնչեր յինք: 1) Այսուղ մի թերի բան կայ, որ մեկնութիւնները գարձնում է առարկելի:

Այդ թերութեան պատճառն այն տեսակէտն է որից նայում են հայոց լեզուին: Դրաբարն է միայն որ քննութեան և համեմատութեան է գրում, քանի

որ հին բարբառների մնացորդներ չունինք, ինչպէս
ունի օրինակ յունարէնք: Եւ յետոյ՝ գրաբարը նկատ-
ուում է իբր միաձոյլ լեզու և ոչ խառն բարբառ, ուր
մտած է ո՛չ միայն մի ճոխ բառամթերք օտար լեզու-
ներից, այլ և բառեր ու ձեւեր հայ բարբառներից:

Երկարատև շփման հնատեւանքով, շփու մներ թէ՛
բարեկամական և թէ՛ թշնամական (շփում հարեւանի,
տիրապիտողի և հպատակի, յաղթողի և յաղթուածի)
ցեղերն ու աղջերը իրարից փոխ են առնում ո՛չ միայն
արհեստ ու արուեստ, տարագ ու բարք, այլ և բառեր
ու ձեւեր, որ ժամանակի ընթացքին աղջայնանում
են, ուստի զարմանալի չէ, որ միեւնոյն լեզում մի-
եւնոյն բառը հանդիպում ենք երկու կամ աւելի կեր-
պարանքով: Այդ բառերը և ձեւերը կազմաւորւում են
իրենց բնիկ բարբառների մէջ իրենց բնիկ հնչական
կանոններով և յետոյ անցնում են ցեղից ցեղ իրենց
պատրասի կերպարանքով: Միեւնոյն զազափարն ար-
տայայտելու համար մի ցեղ կիրարկում է մի որոշ բառ
այն ձեւով, որ այդ բառն ստացած է ի՛ր բարբառի
մէջ, միւս ցեղը միեւնոյն զազափարն արտայայտում
է միեւնոյն բառով, բայց այն կերպարանքով, որ այդ
բառն ստացած է ի՛ր սեփական բարբառի մէջ: Եւ երբ
մի ցեղի բառն անցնում է միւսին՝ նա անցնում է ա՛յն
կերպարանքով, որ ստացած էր փոխառու բարբառի
մէջ, որով հասարակաց լեզուն տէր: Է գառնում երկու
բառի կամ ձեւի, որ նոյն են իբր բառ, բայց ունին
տարբեր հնչական կերպարանք: Երկու կամ աւելի
բառի տէր գառնալով՝ լեզուական մտածումն օգտա-
գործում է հնչական տարբերացումը միեւնոյն զազա-
փարի երանդներն արտայայտելու համար, իսկ եթէ
չունի զազափարի երանդներ, այն ժամանակ բառերից
մէկը մնում է միւսը մոռացուում է և շատ անգամ մը-
նում է օտար փոխառութիւնը և ոչ բնիկ բառը. այդ-

սլես պէտք է կորած լինի * բոլոր բառը, որ հաւանօրէն
կար ա՛յն բարբառի մէջ, որ բառի վերջին լ-ը հնչում
էր ր :

Խնդիր է այժմ, թէ մի բարբառ, որ բառավերջի
լ-ը փոխում էր ր-ի, ի՞նչպէս կարող էր և' կոլոլ ձեւն
ունենալ և' կոլոր ձեւը. եթէ նա անկարող էր բառա-
վերջին և ո-ից յետոյ և արտաքերել և զրա՛ համար
կոլոլ-ը կոլոր-ի փոխից, ապա ի՞նչպէս կարողացաւ
պահել կոլոլ ձեւը։ Պէտք է նկատել, որ հնչական օ-
րէնքները յաւել ժական չեն. նրանք գործում են մի
որոշ ժամանակ և մի որոշ միջավայրում։ Լատին։ *fragile*
բառը ֆրանսայի ժողովուրդի բերանում դարձած
է *frêle*. յետոյ դրական ճամբով միանգամ եւս փոխ
առնուած է այդ բառը և այսօր հնչում է *fragile*։ Եր-
կու բառն եւս միեւնոյն ֆրանսերէնի բառեր են, բայց
ստացած են իմաստի տարբեր երանգ։ Փարիզեցին մի
ժամանակ երկու ձայնաւորի միջև ընկած ը ձայնը
արտաքերում էր իբր շ, իսկ հիմա արտաքերում է դ-ի
մօտ մի հնչումով։ Այն շրջանին *chaire* բառն արտա-
քերում էին տեղ (*chaise*). Այսօր այդ երկու բառն եւս
միեւնոյն ֆրանսերէնի բառեր են, բայց իմաստի տար-
բեր երանդ են արտայայտում. մէկը քարոզչի բեմն է,
միւսը նշանակում է թիկնութուու։ Եւ ֆրանսացին կա-
րողանում է արտաքերել և' մէկը և' միւսը։ Մենք
այսուղ տեսնում ենք միջավայրի նոյնութիւն (Փա-
րիզ), բայց ժամանակի տարբերութիւն։ Այդպէս է,
որ գրաբարի և հայերէնի հաց-ը խաց է դարձած մի
քանի բարբառներում և խաղողը՝ հաղող։ Այդպէս է,
որ արտաքերութեան հետեւելով՝ ոմանք մի նոր բառ
են մտցնում հայերէնի մէջ՝ գրելով ինչ և միաժամա-
նակ զնջին, թէև չնչին բառը ինչ բառի ժխտական ձեւ-
փց է ծագում։ հմ. ինչ-չինչ-չինչ-ին, չնչին։
Եւ այս զուգահեռ կազմութիւնը շատ հին է, քանի որ

զինջ և *չինչ միեւնոյն բառերն են իրենց ծաղման մէջ։
Ն և զ լծորդ են։ Այն բարբառը, որ ինչ բառն արտա-
բերում էր *ինջ, բնական է, որ չինչ բառն արտաբե-
րէր զինջ և չնչինը՝ *ջնջին։ Սակայն պայքարի մէջ
յաղթանակած է այն ցեղի լեզուն, որ արտաբերում էր
ինչ. բայց փոխառութեամբ պահած է *ինջ արտաբերող
բարբառի զինջ ժխտականը, տալով նրան իմաստի
ատարբեր երանգ։ Զինջ բառը չի կարող այն բարբառի
բնարոյս բառը լինել, որ ստեղծած էր չինչ բառը։ Եր-
կուսն եւս հայ բարբառներ են եղած, բայց մէկի ս-ին
միւսը տուած է դ կշիռ և այդ ձայների և համապա-
տասխան սոյլերի ձուլումով մի տեղ կազմուած է դժ,
և ուրեմն՝ զ, միւս տեղը Տ, և ուրեմն չ։ Որով գաւառ.
ինդո՞ր, ինտո՞ր, պահում են ինչ և *ինջ բառերի մէկ
ձեւը, առանց վերջին ձայնաւորի և սոյլի (ինդ+Չ+Ժ>
*ինջ և ինՏ+Չ+Չ> ինչ)։

Ուստի ես ասում եմ. երբ միեւնոյն բարբառի
կամ լեզուի մէջ միեւնոյն բառը կամ ձեւը երկու տար-
բեր կերպարանքով է երեւում՝ զրանցից մէկը կամ
միւսը փոխառութիւն է։ Միւս կողմից փոխառած ձեւ-
երի օգտագործումը իմաստի երանգներ արտայայտե-
լու համար մեզ անխուսափօրէն պիտի բերէ այն եզրա-
կացութեան, որ հնչապէս տարբեր բայց մերձիմաստ
բառերը նախապէս եղած են նոյնիմաս, բայց տարբեր
բարբառների մէջ նրանց ննչական տարբերացումը
կատարուած է տարբեր բարբառների մէջ, այդ բար-
բառների հնչական օրէնքներով, իսկ նրանց իմաստի
տարբերացումը կատարուած է այն լեզուի կամ բար-
բառի մէջ, որ փոխ է առած այդ բառը կամ ձեւը։
Միեւնոյն բառն ու ձեւը լծորդ ձայներով հնչած են
տարբեր բարբառներ, իսկ եթէ լծորդ ձայներով բառեր
ու ձեւեր կան միեւնոյն լեզուի կամ բարբառի մէջ։
Դրանց մի մասը փոխառութիւն է, եկամուտ է։ Այդ

փոխառութիւնը պատահած է ցեղերի խառնուրդի կամ փոխազդեցութեան հետեւանքով։ Ընդանի և ընտանի հանդիպում ենք Ս. Գրքի և Փաւստոսի մէջ զրանք չեն կարող միեւնոյն բարբառի բառեր լինել, որովհետեւ միեւնոյն բարբառը միեւնոյն ձայնը միեւնոյն պայմանների մէջ չէր կարող միաժամանակ երկու կերպ հնչել, այսինքն և՛ դ' և՛ Տ:

Այսպիսով «լծորդութիւն» կոչուած լեզուական երեւոյթը ընկերաբանական հիմք ունի. Նա ընկերային յարաբերութեանց հնչական անդրադարձումն է։ Տարբեր հայ ցեղեր, տարբերացած բարբառներով, երկար դարեր մրցած են իրար հետ, յաղթահարած են իրար. երկար դարեր ասլրած են իրրե հարեւան, բարեկամ թէ մրցորդ. խառնուած են իրար, խնամացած և խառնուրդով ստացած են մարմնական խառն կազմ, հետեւապէս և ձայնական գործարանների մանր տարբերացումներ, որ սակայն բաւ են ձայնական երանգներ ստեղծելու համար. իրարից փոխ առած են բարք ու բառ, տարագ ու բառաձեւ Երբեմն յաղթողն է, որ լեզուապէս ընկղմած է աւելի կիրթ պարտուածի մէջ. Երբեմն պարտուածն է սեփականած յաղթողի բարբառը՝ յարմարելով իր հնչումի և մատածումի կերպին։ Նախապատմական այս դէպքերը չեն կորած անհետ. նրանց ազգեցութեան տակ է, որ ձեւացած են լծորդութիւնները, ստեղծուած է հոլովական կարգի բազմազանութիւնը, նոյնիմաստ բառերի երանդաւորումը, բայական կարգի խանդարումները, բացառութիւնները, զարտուղի ձեւերը, բաղաձայնների խճողումները կամ ձուլումներն ու անկումները և այլն և այլն։ Լծորդութեանց մէջ թաղուած է ո՛չ միայն որեւէ լեզուի կամ բարբառի, այլ և այդ լեզուն կամ բարբառը խօսող ցեղերի վաղնջական պատմութիւնը։

Իրրե հնչում՝ լեզուն բնական հոլովոյթի արգա-

սիք է. իրու միջոց յարաբերութեան՝ իմացական ճիշդի արդիւնք է։ Բնական հոլովոյթի արդիւնքը (ձայների և ձեւերի փոփոխութիւնը) օգտագործում է մարդու իմացութիւնը՝ գաղափար, զգացում և կամք արտայայտելու համար։ Այսպէս՝ կոչտ քարի կտորը հոսուն ջուրն է, որ դարձնում է ողորկ խիճ ու մանր աւազ, բայց մարդն է, որ նրանցից շաղախ է պատրաստում իր պէտքի համար։

Լեզուսահր բարեկամներին և ընկերներին
«Յուշագրիս» Ամամ գրորիսներ կարդացող
շատ իիչ մարդ կայ մեզանում. հազիւ մի բանի
տասնեւակ. հետեւապէս ոչ մէկ յոյն կայ սպազրոքեան
ծախսն իսկ զոցելու: Ձեւի համար զին Աշանակած
եւ մէկ Ֆրանֆ: Ասում եւմ «Ճեւի համար», որով-
հետեւ երէ իիչ է կարդացողը, շատ առելի իիչ է
զնորդը: Ընկերներու ու բարեկամներու զիտեն իմ
Ախրական կացորիսնը, զիտեն Ասեւ, որ այս տեսակ
ծախսերի տակ մտնելու եւ հնար յունեւ: Երէ Արանի
իման Ամամ այն կարծիքին յինեն, թէ Յուշագրերու
կարող եւն պիտակի յինել մեր յեզուի քննորքեան
համար՝ կը խնդրեմ Ախրապէս իման օգնեն այս
ձեռնարկութեան մէջ: Յուշագրերու սպազրելու եւ
պրակ առ պրակ: Ամեն պրակի ծախսն է մօս 200
Ֆր. 500 օրինակի համար: Ասացած զումարների
հաշիր կը տամ պրակների կողի վրայ: Աւելորդ է
ասել թէ աշխատանիին համար ոչ մէկ դրամ կը
հանուի այդ զումարից: Հրատարակուած պրակների
ամբողջ պահեստն ու մնացորդ զումարը պիտի մնայ
Համազգային ընկերութեան:

Միրով Ն. Աղքալեան,

ԲԱՆԱՍԻՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԼՇՈՐԴՈՒԹԵԱՆ

Լծորդութեան ծագման այն ուրուսագիծը, որ տուի
նախորդ Յուշագրիս վերջը, ընդհանուր է լուրդ ազգերի և
ժամանակների համար; Բոլոր ազգերը, որ այսօր թւում են
ձոյլ ամբողջութիւն, արգիւնք են ցեղացին խառնուրդի.
իրենց մարմինի կազմն ապացոյց է այդ վաղեմի ձուլ-
մանն Զկան անխառն ազգեր, ուստի չկան և անխառն
զեղուներ: Զուլումն իր կնիքը գնում է լեզուի հնչա-
կան և իմաստաբանական կողմերի վրայ: Այն ցեղերը,
որ խառնութով տուած են ազգերի այսօրուան կազմը,
անբան անասուններ չեն, այլ բանական մարդիկ,
որոնք ունեին իրենց լեզուն ու բարբառը և իրար փոխ-
առին շատ լեզուական տարրեր, ևթէ մեացին իրը
կենակից: Թէ այսօրուան ազգերի մարմնական ո՛ր յատ-
կանիշը ո՛ր մի ցեղից է ժառանգուած կամ ո՛ր ցեղերի
խառնութիւ արգիւնքն է՝ զեռ գիտութիւնը որոշել չի
կարողանում: Գանգ ու ուկոր քննելով՝ հազիւ կարո-
զանում են մի գաղափար կազմել չքացած և զեռ կայուն
ազգերի և ցեղերի հասակի բարձրութեան, զանգի ձեւի
և նրա տարրողութեան մասին և հազիւ մատնանշում
են մի քանի արաւաքին նշաններ ապրող ազգերի վրայ:
մազի և մորթի գոյնը, քթի ձեւը, ճակաաի անկիւնը
և ամին իսկ թէ ցեղերի խառնութիւնը հետեւանքով
ի՞նչ փոփոխութիւն կրած է բերանի խոռոչը, քիմքի
քարձրութիւնը, հագազի կազմութիւնը, լեզուի գիրքն
ու մեծութիւնը, որ քայլայտած ու հող են դարձած
և որ սակայն ձայնի գործարանն են՝ ո՛չ ոք կարող է

ասել: Նոյն կարգի խնդիրներ են այսօրուան լեզուների և մարդկային ձայնաշարի ծագման հարցերը: Լեզուն մարդկային ճիղի արդիւնք է և ճիգով է, որ անբան անասունը խօսուն մարդ է գարձած և անյօդ դժբառքը՝ յօդաւոր լեզու: Անկերպարան և անորոշ ժխորի միջից նախապէս ո՞ր ձայները դարձան պարզ ու որոշ ո՞ր մի տեղի լեզուն էր որ գարձաւ բուն, որի վրայ պատուաստուեցին ուրիշ բարբառների ձեւերը, ո՞րն եղաւ փոխառու և ո՞ր մէկը փոխառու: Բառեր ու ձեւեր, որ այսօր միեւնոյն լեզուի սեփականութիւն են, բնածի՞ն են այդ լեզուի մէջ թէ՛ եկամոււա: Եթէ եկամոււա են՝ արիւնակից ցեղի՞ց են մատած թէ օտար ցեղից և ապա գարձած հարազատ, ինչպէս «բախտ» ու «պայքար» բառերը մեր լեզուում: Սրանք հարցեր են, որ կամ չեն դրուած, կամ եթէ դրուած են՝ հազիւ սկսած են քննութեան առնուիլ: Գիտունները խոհեմութեամբ հաժարում են այս հարցերին մօտենալ, քանի դեռ հնարջունին ստուգելու, որովհետեւ այս ամենը կատարուած են այն ժամանակ, երբ չկար գիր ու զպրութիւն, հետեւապէս չկայ որ և է շօշափելի հետք: Բայց միթէ աղն իր բազազրութեամբ չի՞ իտօում իր անցեալի մասին, թէե ոչ մի վկայութիւն չունինք թէ ե'րբ և ի՞նչ պայմաններում երկու տարր իրար միանալով տուին աղը, որ չկար երբեմն: Լուծելով աղը, որ հին կազմութիւն է, հնար եղաւ գտնելու նրա աւելի հին տարբերը: Լեզուն, որ գարեր ապրած է մարդու բերանում, նրա հնչիւնները ու բառերի և ձեւերի իմաստը բազկացութիւններ են, որ կարող են լուծել և զատել իրենց բազազրեները, ինչպէս ջուրը ելեքտրական հոսանքի ազդեցութեան տակ: Պէտք է գտնել այն ազգակը, որ կարող է լուծել բազազիր ձայներն ու գաղափարները: Մեզ համար այդ ազգակը ձայների ձուլ-

ման պարագան է և այն հիմնական տեսութիւնը թէ ամէն ինչ այս աշխարհում իր պատմութիւնն ունի, այսինքն՝ հողովոյթի արդիւնք է:

Մի բան պարզ է մեղ համար, որ միեւնոյն բարբառը միեւնոյն գաղափարի համար չէր կարող տարակերպ բառեր հարել: Տարակերպութիւնը նշան է տարբեր ծագման, որ կարող էր լինել կամ համամանակ (*synchronique*) և ուրեմն փոխառութիւն կամ տարամանակ (*diachronique*) և ուրեմն բնաբոյս հրլովոյթի արդիւնք: «Ասէկոսէ» բացատրութիւնը, որ մտած է զրական լեզուի մէջ, չի կարող Արարատեան բարբառի ծնունդ լինել, թէև այսօր այդ բարբառից ծագած զրական լեզուի մէջ է զանուռմ: Նա փոխառութիւն է Թիֆլիսի բարբառից, որ ունի «կ'օսէ» ձեւը. բայց այդ բայածեւը, որ նշանակում է «ասում է» (հմ. կըսէ), Թիֆլիսի բարբառի մէջ անշուշտ ծագած է մի որոշ ժամանակ և որոշ պայմաններում. այստեղ նա բնաբոյս է, իսկ ուրիշ տեղ՝ զրական լեզում՝ նա եկամուտ է: Այսպէս նաև Շկոլով և «քոլով» ձեւերը չեն կարող միաժամանակ միենոյն բարբառի մէջ գոյանալ. կամ նրանք գոյացած են տարբեր ժամանակ և ուրեմն տարամանակ են. կամ մէկը փոխ առնուած է ուրիշ լեզուական միջավայրից և ուրեմն համամանակ է միւսին. այսինքն՝ թէև միենոյն ժամանակ և միենոյն բարբառի մէջ է զանուռմ իրեն զուգահեռ ուրիշ ձերի հետ, բայց այդ բարբառի ծնունդը չէ: Այս կարգի բառերի և ձեերի մանր քննութեամբ և զասակարգումով կարելի է մօտաւորապէս վերականգնել բարբառական այն հին ցանցը, որ փոռած էր մեր աշխարհի մէջ՝ ուր և լինէր այդ աշխարհը, Կարելի է վերականգնել բարբառական այն տիպերը, որ գոյութիւն ունեցած են նաև քան զրաբար լեզուի կազ-

մութիւնը՝ ցեղերի խառնուրդի ու ձուլումի հետեւ տանքով։ Կարելի է մի ազօտ լոյս սփոել մեր լեզույթ կազմաւորման և պատմութեան մթին անցեալի վրայ։

Վերը տեսանք՝ որ լծորդ ձայներով կազմուած բառերն ու ձեւերը կո՞մ նոյնիմաստ են, կա՞մ մերձի մաստ։ Ե՛ւ բնական է ե՛ւ հասկանալի այս երեսյթը մեր տեսութեան լուսով։ Մի ցեղ, օրինակ, որ մորթին փաթաթելուն և քարը թաւալելուն ասում էր «կլոլել» և խառնուեցաւ մի ցեղի հետ, որ նոյն գործողութեանց ասում էր «գլորել», նրանց նոր սերունդը երկու բառ կունենար իր տրամադրութեան ասկ միեւնոյն գաղափարները նիշելու համար։ կլոլել և զլորել։ Ժամանակի ընթացքին, իր մտաւոր գարգացման գուգահեռ՝ տարբերելով գործողութեանց երանդները՝ նա պիտի օգտագործէր այդ բառերը, գուգորդելով նրանցից ամէն մէկը միեւնոյն գաղափարի տարբեր երանդի հետ, որով մորթին պէտք է «կլոլէր» և քարը՝ «գլորէր»։ Ուրիշ բարբառներից մերձաւոր ձեւեր փոխ առնելով՝ պիտի հարստանար նրա բառամթերքը և պիտի միջոց ունենար իր հարստացած մըտածումի երանդները նիշելու թէ ե՞րբ և ո՞ր ցեղերն ստեղծած են հնչական երանդներն այդ բառերի, որ նոյնիմաստ են կամ մերձիմասա՝ ոչ ոք կարող է ասել այսօր։ բայց որ տարբեր լեզուական միջավայրերում կամ տարբեր ժամանակ ստեղծուած են այդ տարբեր ձեւերը՝ տարակոյս չկայ։ Կարող էր պատահել, որ մի բարբառ, որ ունէր լովզ ձեւեր, մի ժամանակ այդ լովզը հնչէր և «կոլոլ» ձեւին գուգահեռ երեւար «կոլոր» ձեւ, ինչպէս chaire-ը Փարիզեցու բերանում մի ժամանակ դառնում էր chaise և honosis ձեւը լատին լեզուի մէջ դառնում էր մի ժամանակ honozis և ապա գարձաւ honoris և մնաց այդպէս։ Այնուհետեւ՝ արտարերական

այդ ալիքն անցնելով՝ բարբառի մէջ մնաց և՛ կոլո՛ և՛ կոլոր, ինչպէս ֆրանսերէնի մէջ մնացած է և՛ chaires և՛ chaises:— Սա կը լինէր տարամանակ կազմութիւն միեւնոյն բարբառի մէջ և երկու ձեւ միասին կը լինէին բնաբոյս: Բայց կարող էր նաև պատահել, որ դրանց մէկը բնաբոյս լինէր, իսկ միւսը փոխառութիւն մի հարեւան կամ յաղթական բարբառից և երկուսն ապրէին քով քովի և հետագայ սերունդի համար երկուսն եւս համարուէին մայրենի ձեւը, ինչպէս մեր երակների տրինը, որ հայկական է, բայց ոչ ոք կարող է ասել, թէ ո՞ր անհնատացած ցեղերից է մեզ անցած. մերազնեա՞յց ցեղերից թէ օտարը, յաղթակա՞ն հայի թէ զերի օտարի, ուամկի՞ թէ ազնուականի... Այս տարատեսակ աղբիւրներից հասած ձեւը, որ օրինածին ծնունդն էին իրենց միջավայրի, խուժելով այս ու այն կողմից և այս ու այն ժամանակ՝ պիտի պայշար սկսէին գոյութեան և յարատենութեան. մի քանիսը կառչելով գաղափարի այս ու այներանգին՝ պիտի մնային իրեկ պիտանի, ուրիշներ պիտի մոոցուէին և չքանային: Շեշտի ազդեցութեան տակ նրանք պիտի սղէին իրենց ձայնաւորները, տալով բառերին նոր կերպարանք, մի երկու բարբառ պիտի պահէին պայթուցիկների լրրիւ շարքով ձեւեր՝ կլոր, զլոր, իլոր—մի քանիսը պիտի մնային թերատ շարքերով. ումանք և լեռ վախ ճանով, ուրիշներ լով երեք ձեւ և րով մէկ կամեր կու, և պիտի առաջ բերէին «բացառութիւններ», ձայնարանական օրէնքների խախտումներ, անվերծանելի հակասութիւններ: Պիտի խանգարուէր լեզուի պարզ ու միօրինակ հին կարգը, բայց և լեզուն պէտք է հարստանար ու բարգանար՝ իր բառերով ու ձեւերով:

Իրերի այս կացութիւնը մեզ հրահանգում է մի նոր եղանակ հետագառաւութեան և մի նոր միջոց թաշ փանցելու մեր լեզուի անցեալը և գտնելու հին հայ

ցեղերի բառակազմութիւնը, մեր այսօրուան բառամբօթերքի ծագումը, նրանց արմատների և հին ածանցների նախաւոր իմաստն ու արժէքը, նրանց հետագայ տարբերացման ուղիներն ու պատճառները. ընդնշմարելու հին հայի մտայնութիւնը; նրա վաղեմի մշակոյթի բնոյթն ու աստիճանը: Պէտք է խօսեցնել բառերն ու ձեերը, որ հնագոյն վկաներն են հայի գոյութեան և որ այսօր թւում են քարացած բրածոներ: պէտք է մտովին վերականգնել և զգալ այն տաք մահչը, որ երբեմն հոսում էր նրանց միջով:

Լեզուի կազմութեան և հոլովոյթի այն ծիրը, որ գծեցինք, յատուկ է բոլոր լեզուներին, որովհետեւ մէկ է մարդկային ցեղը այս աշխարհի մէջ և մէկ է իր ձամբան: աւազն ու խիճը տարբեր լինելով՝ շաղախները տարբեր կարող են լինել, բայց շաղախը պատրաստում են խիճ ու աւազից և խիճ ու աւազից կազմում են շաղախ: Ուստի այս կարգի հետազօտութիւնները չափ աւելի արդիւնաւոր կը լինեն, եթէ կատարուին համեմատական եղանակով: Այդպէս աւելի պայծառ կերեան այն եղանակները, որով գործում ու ստեղծում է մարդկային միտքը լեզուի կառուցման ընթացքին: Զուգահեռները ոչ միայն ըմբռնելի կը գարձնեն երեսոյթը, այլ և կը հիմնաւորեն սկզբունքները: Այդ համեմատութիւնը պէտք է կատարել ամենից առաջ մեր խսկ լեզուի բնագաւառում՝ կտրելով նրա թէ՛ լայնութիւնը և թէ խորութիւնը, այսինքն թէ այսօրուանը զուգազրելով իրար, որ գտնում ենք տարբեր բարբառական միջավայրերի մէջ, և թէ նոր վիճակից դէպի հինը խորանալով և վերասաեցելով հոլովոյթի յեաաղարձ ծիրը: Բուն խսկ լեզուն չափ աւելի լոյս ունի իր մէջ իր մութանցեալը լուսաւորելու, քանի կտրծում են շատերը: Համեմատաբար քիչ մութ անկիւններ կան, որ պէտք

ունին լուսաւորուելու օտար լեզուների լուսով։ Այս
աշխատանքի մէջ շատ աւելի մեծ ու վճռական ար-
դիւնքի կարող են հասնիլ նրանք, որ ինձանից շատ
աւելի հմուտ են օտար և մեր հին ու նոր լեզուներին՝
եթէ յօժարին այս ճամբով գնալ:

Մի քանի թանձրացեալ օրինակների վրայ փոր-
ձենք կիրարկել մեր տեսութիւնը, ցուցադրելով միա-
ժամանակ մեր հետազօտութեան եղանակը։

Առնենք մեր մերձ արմատը, որ համարում է scer
և cer նախարմատից ծագած՝ ծ «աճականով»։ 1) Ես ա-
ռում եմ. եթէ ունինք մերձ ապա լծորդ ձայների հիման
վրայ կարող էինք ունենալ և կերծ և զերծ իրը նոյն-
իմաստ կամ մերձիմաստ բառեր։ Զեմ լսած կերծ, բայց
իրօք ունինք զերծ և սրանից զերծուլ, զերծել, զեր-
ծանել և մերձ, որից՝ քերծել և այլն։ Քանի որ տե-
սանք թէ ըն լծորդ է ծ-ին՝ մենք կարող էինք ունե-
նալ նաև կերը, զերը և մերը, որոնցից միայն մէկը
մնացած է մեր լեզուի մէջ, որ է քերթ և սրանից՝
քերթել, քերթուլ և այլն։

Խօսելով ձայնաւորների մասին ես այն կարծիքն
եմ յայտնած, թէ և ձայնը նախնական չէ. նա ծագում
է ի և ա ձայների ձուլման հետեւանքով։ Երբ իա կը-
ցորդութեան ա ձայնի վրան է շեշտը՝ այն ժամանակ
ի-ն դառնում է յովտ (y) 2) և ձուլուելով ա-ին, որ
այդ առիթով փոխում է իր երանգը իրը շեղ ա՝ մենք
ստանում ենք ե (յա—ե), իսկ երբ շեշտը զարկում է իա
կցորդութեան ի-ին, այն ժամանակ ա-ն է դառնում

1) Տես Հ. Ահառեան. Արմատական բառարան, հատ. VI.

2) Յովտը մեր լ-ն է, բայց այն հնչումով, որ ու-
նի կամայական բառի յա վանկի մէջ, ուր նա ն չէ։

յովտ և տալիս է ից. որ ձուլումով դառնում է մի երակար ի՛: 1)

Այս երեսոյթն այնպէս են բանաձեռւմ գիտունները, որ իբր թէ հետեւորդ բաղաձայնի չքացման հետեւանք է ձայնաւորի սղումը, բայց իրօք այդ երկու երեսոյթներն իրարից տարբեր են, սակայն այս մասին մի ուրիշ անդամութեաւորդ ձայնաւորի սղումով իր առջեկի ձայնակիցը ձեռք է բերում սացական երկարութիւն, որ ժամանակի ընթացքին կարող է կորցնել, ինչպէս պատահած է մեր լեզուի մէջ, որի բոլոր ձայնաւորները կարճ են:

Արդ՝ լուծելով մեր վեց իրական և ենթազրական արմատ բառերի ե—երը իբր վաղեմի իա, մենք կը ստանանք *կի—արծ, *զի—արծ, *փի—արծ և *կի—արբ, *զի—արբ, *ֆի—արբ։ Այս Ենթազրական ձևերի մէջ եթէ շեշտուէր ի—ն՝ հետեւորդ ա—ը պիտի յովտանար և ձուլուելով իր նախորդ ի ձայնաւորի հետ պիտի երկարէր նրա տեսողութիւնը (ի'ա—ի'ց—ի''), որով այդ նոր բառերը պիտի հնչէին իբր կի՛րծ, զի՛րծ; ֆի՛րծ, կի՛րբ, զի՛րբ, ֆի՛րբ՝ ա՛յս ծիրով կի՛—արթ—կի՛ցրթ—կի՛րթ ևալն։ Այնուհետեւ նրանք պիտի կորցնէին իրենց ձայնաւորի երկարութիւնը։ Այսպիսով միմիայն շեշտի տարբեր զարկով լեզուն պիտի տիրանար նոյնարմատ բառերի մի նոր շարքի, ինչպէս աիրացած էր ծ և թ լծորդութեան հետեւանքով։ Սղելով իրենց կարճացած ձայնաւորը, այս նոր շարքը մեզ պիտի

1) Տես Հ. Ամս, 1930, № 5-6. մեր Հնչաբանական պիտողութիւնները, թէ ինչ էր մեր երկար ձայնաւորի ընոյթը կարելի է նշմարել արտաքերելով սերմ և սերմն, մատ և մատն, նիմ և նիմն, առաջին օրինակների մէջ ե, ա, ի կարճ են, իսկ երկրորդ օրինակների մէջ նոյն ձայնները երկար են. սե՛րմն, մա՛տն, հի՛մն, և չե՞ն

տուր սուղ արմատների մի նոր շարան — կրծ. (կրծ), գրծ, քրծ, կրբ, գրբ, քրբ,

Քերծ միավանկ արմատը՝ ե-ի լուծումով՝ դարձաւ երկվանկ, իսկ շեշտի և լծորդի տարբերացումով երեք արմատական բառերը դարձան տասն և ութ:

*կիրծ, զերծ, քերծ, — *կիրծ, *զիրծ, *քիրծ — կրծ, *զրծ, քրծ
*կիրթ, *զերթ, քերթ կիրթ, զիրթ, *քիրթ կրթ, զրթ, քրթ

Մեր լեզուի մէջ չպահուած կամ լաւ ևս՝ իմ չիմացած արմատները նշանակած եմ աստղանիշ:

Մենք տեսանք նախորդ յուշագրերի մէջ, որ ծ և թ ձոյլ բազաձայն են և մի նախաւոր լիաձայն վանկի խզերական ձայների համազրութիւն: Երբ իրենց միջի ձայնաւորը չքացած է՝ այդ ձայներն իրար մօտենալով՝ ձուլուած են. որով ծ մի հին ևս է (քմային տ-ով), իսկ թ-ն մի հին ևս է (ատամնային տ-ով): Իսկ այդ ևս և տի ձայների միջև երբեմն հնչած է մի ձայնաւոր, որ չքացած է նախորդ ձայնաւորի գորաւոր շեշտի ազդեցութեան տակ. հետեւապէս ևս երբեմն եղած է լ+Զ+ս

կարող կարճ արտաքերուիլ, որքան և աշխատէք: Նրանք երկար են հետեւորդ ձայնաւորի սղման հետեւանքով. բաւական է, որ սղումը չքանայ՝ երկարները կարճ կարտաքերուին, այսպէս սերմա՛ն, մատի՛ն, հիմա՛ն, ուր նոյն ե, ա, ի, կարճ են հնչում: Նրանք կարճանում են նաև այն դէպքում, երբ սուղ ձայնաւորը (ը) չքանում է այդ բառերի վերջին ե-ի կցումովը հետեւորդ ձայն է այդ բառերի վերջին ե-ի կցումովը հետեւորդ ձայնաւորին, այսպէս՝ մատնու-ուաը (մատն ու ուաը). հիմնէ կարեոր (հիմն է կարեոր): Այսպէս՝ ձայնաւորները ստացական երկարութիւն են ձեռք բերում նաև յօդի հետեւանքով. սե՛րմս, հիմդ, տո՛ւնդ և այլն, որով հետեւ պահում են փակ վանկի սուղ ձայնը. սե՛րմըս, հիմըս, տո՛ւնըս ևայլն:

և ահեղած է $s+2+h$. և ուրեմն՝ առնելով մեր վեց բառ-
ուրից երկուսը միայն՝ ֆերծ և ֆերպ՝ սրանք եղած են
երբեմն՝ $\varphi_{\text{երծ}} = \varphi_{\text{ի}} w' r + t+2+u$

$\varphi_{\text{երթ}} = \varphi_{\text{ի}} w' r + s+2+h$ 1)

որով ինչ որ միավանի էր՝ հիմա մեղ երեսում է իրբ
վաղեմի եռավանի :

Մեր տեսութեամբ, որի մասին խօսած եմ այլուր, 2)
սուզ վանկերի մէջ միւս սղած է մի հին ձայնաւոր
և լրին խմբերի մէջ միւս չքացած է մի վաղեմի ձայ-
նաւոր։ Այսպէս սրի ձեր սրբ սուզ վանկի մէջ սղած է
մի ի. հմ. սիրտ, որ սեռականի մէջ եղած է *սիրտի'
և գարձած է սրբափ (գրութեամբ՝ սրտի)։ Այսպէս՝
տեսցես, ուր տեսնում ենք մի լրին խումբ սզ, ուր սա-
կայն չքացած է մի հին լ. հմ. ապառնի 1. զէմք.
տեսից, *րից՝ *տեսից-ես, *տեսըցես, տես'ցես 3): Մեր
ընտրած երկու բառերի մէջ մենք տեսնում ենք եր-
կու լրին խումբ րէ և րէ, որոնց մէջ ենթադրում եմ,
թէ չքացած է մի շատ հին ձայնաւոր, որ կարող էր
լինել ի, ա կամ ու, որով այդ բառերը վերականգնե-
լի են իրը՝ $\varphi_{\text{երծ}} = \varphi_{\text{ի}} w' r - 2t - 2u$.
 $\varphi_{\text{երթ}} = \varphi_{\text{ի}} w' r - 2s - 2h$.

Մենք ստացանք այս բառերի կատարեալ վիճակը,
ուր ամէն մի բաղաձայն յենուած է մի ձայնաւորի՝
որ կարծում եմ հնագոյն ձեն է եղած բառակազմու-

1) հ-ն մի թեթև հունչ է, իբր ս-ի անփոյթ ար-
տաբերում, ինչպէս ասնսկրիտ լեզուի մէջ, ուր այդ
հունչը կոչւում է վիսարգա:

2) Տէս Հ. Ամս. 1930, 3-4.

3) լրին ասելով նիշում եմ բաղաձայների այն խում-
բը, որոնց միջև ձայնաւոր չի հնչում, իսկ սուզ ասե-
լով՝ հասկանում եմ բաղաձայների այն խումբը, ուր
հնչում է մի ը:

Շեսնում ենք թէ ինչպէս մեր լուծումի հետեւանքով, միավանկ ևերծ բառը գառնում է խռավանկի: Մէկ արմատի փոխարէն մենք հիմա ունինք չորս ածանց կամ արմատ, որ տարբեր խմբումներ կարող էին ունենալ և տարբեր արդիւնք տալ:

Առաջին արմատն է ի, «որին զուգահեռ են կի և զի արմատները, որ թագնուած են կերծ և զիրծ ամփոփումների մէջ (իբր վաղեմի կի արծ և զի-արծ):

Երկրորդ արմատի կամ ածանցի կցումով՝ որ է-ար, մենք կստանանք ֆի-ար, (ու նաև կի-ար և զի-ար) որ շեշտի տարբերութեամբ մեզ կը տայ երկու ձեւ քի՛-ար, քի՛ցր, ֆի՛ր և քի՛-ա՛ր, քցա՛ր, ևեր: Այս արմատները պէտք է նոյնիմաստ կամ մերձիմաստ լինեն, քանի որ իրենց տարբերը նոյն են: Տարբեր կերպարանքն արդիւնք է նախաձեր տարբեր շեշտառութեան: Բարեբախտաբար այդ երկու ձեւը միաժամանակ պահած է մեր լեզուն. մէկը կրկնաւոր ձեռվ՝ իբր * քիր-քիր, որ երկրորդ ձայնաւորին զարկելով իր շեշտն եղած է՝ քրքի՛ր. հմ. հատարելիր, երբ. ել. միւսը մնացած է ևեր. ել բայի մէջ: Այս շարքի մէջ կը մտնի նաև կեր, իբր կի-ար, որ զիառւները համարած են նախարմատ (տես վերը): Այսպէս գնալով կարող ենք ասել, որ հնարաւոր էին նաև կիր և կեր, ինչպէս նաև՝ զիր և զեր արմատներ, իբր միենոյն հին կի-ար և զի-ար բաղկացութեանց տարբերացում՝ շեշտի զարդի տարբերութեան հետեանքով: Այդ արմատները նոյնպէս մնացած են լեզուի մէջ. հմ. կիր, որով բռում են պատերը, նաև սուզ ձեռվ՝ կրել բայի մէջ, որ է կիր-ել. հմ. «կրեմ գլուխդ» անէծքը. զիր, որ է տառ. հմ. գրել. ուր արմատն երեսում է սուզ ձեռվ. հմ. զիր-ել, գրել. ու նաև՝ զեր, որ տեսնում ենք զերծ բառի մէջ, ուր ծ-ն համարուած է «աճում»: և կեր, որ նշանակում է ուտեստ և միաժամանակ նշանակում

է մի տեսակ հիւանդութիւն։ հմ. կեր ցաւ ։

Այս նոր կազմութեանց կցելով երբորդ արմատը՝
որ է Զս մենք կըստանանք. *իւր-Զս, և իբր զուգա-
հեռ կազմութիւն՝ *կիր-Զս, *զեր-Զս. ինչպես նաև
*իւր-Զս և զուգահեռ՝ *կիր-Զս, *զիր-Զս։ Այս երկու
նոր կազմութիւնները, որ երկվանկ են, շեշտելով ա-
ռաջին վանկը՝ երկրորդի ձայնաւորը պիտի սղեր ու
չքանար և մեզ տար ֆե'րս, ֆի'րս. և զուգահեռ. կե'րս,
կի'րս, զի'րս, զիրս։ իսկ շեշտելով երկրորդ վանկը և
սղելով ու կորցնելով առաջին վանկի ձայնաւորը, մենք
պիտի ստանանք քրի's և զուգահեռ կրի's, գրի's։ 1) Վերի
ձեւերի նման, ուր զի'ր՝ շեշտի զրկումով և ձայնաւորի
սղումով տալիս է զր (զըր) հմ. գրել՝ այնպէս և այս նոր
ձեւերը կարող էին տալ քրս (քըրս), զրս; կրս։ Այս հնաւ-
րաւոր ձեւերից մեր լեզուն պահած է *ֆի'րս, քրս. իբր
լերկ ձեւը քր-ել բայի, որ է *ֆիր-ել — մանած թելի
մազմզուկները մաքրել՝ մէկ պատ տալով մնտաղէ մի-
թ շուրջը և միլը վեր ու վար շարժելով։ (միլ=մնտա-
ղէ կարճ ու բարակ ձող, որով գուլպա են գործում և

1) Ե-ի անկման համար հմ. ոռուս. բորե'ց—մարտիկ,
ըմբիչ, և սեռակ. բոր'ցա'—մարտիկի, ըմբչի. նաև հայ.
թիթե'զն և սեռ. թիթ'զա'ն; որ ամփոփումն է թիթե-
զան ձեի՝ ե-ի չքացումով։ Ահաւասիկ հոլովոյթի ծիրն
իր կայաններով։

Մեր ունեցած ձեւերն են՝ քեր-Զտ, գեր-Զտ, կեր-
Զտ. անյայտ Զ-ին տալով ի արժէք, մենք կըստանանք:
քե'ր-իտ զե'ր-իտ կե'ր-իտ (շեշտը առաջին ձայ-
նաւորի վրայ)

որ պիտի տար՝ քե'ր-տ զե'ր-տ կե'ր-տ (երկրորդ ձայնաւորի
չքաշումով)
կարող էր հնչել՝ քեր-ի'տ զեր-ի'տ կեր-ի'տ [վերջին ձայնաւորը
շեշտելով]

որին այլուր ասում են նայ): Գիրս, իբր լեռկ ձեզ զիրք
բառի, որ նշանակում է սեպ կտրուած: Կիրս - կրտել
բայի մէջ, որ է *կիրս-ել, և նշանակում է մազը աղ-
մատի մօտից խուզել: Ու նաև նրանց զուգահեռը ե. ով:
*զիրս, որ այս ձեռով լսած չեմ. կետ, որ ձանօթ ար-
մատ է. հմ. կերտել (ոմանք համարում են փոխառու-
թիւն), *ֆերս, որ այս ձեռով լսած չեմ:

Այս բոլոր բաղկացութիւնները, սկսած երկվանկ ձեե-
րից, ունեցած են ի վախճանով կազմութիւններ, այս-
պէս՝ կեր-ի, քեր-ի, գեր-ի, կիր-ի, զիր-ի, քիր-ի.
կերտ-ի, գերտ ի; քերտ ի, կիրտ-ի, զիրտ-ի քիրտ-
ի 1): Այս բաղադիր ձեերից է, որ կազմուած են մեր
եւ պիտի տաք՝ քր-ի'տ զր-ի'տ կր-ի'տ [առաջին ճայնաւորի
նախ սղումով, ապա՝
չքացումով]

Նոյն արդիւնքը պիտի տային եւ ի-ով կազմուած ձեւերը միմւնոյն
շեշտառութեամբ.

քի'ր-իտ	զի'ր-իտ	կի'ր-իտ
քիր-տ	զիր-տ	կիր-տ
եւ՝	քիր-ի'տ	զիր-ի'տ
քի-ի'տ	զի-ի'տ	կի-ի'տ

Սրանց նուղ ձեւերը պիտի լինեին՝ քըրըտ զըրըտ կըրըտ
եւ վերջին սուղ ծագնաւորի չքացումով քըրտ զըրտ կըրտ
հմ. քըրըչնի (ծառ է), մըճըճել, խըճըճել և նման բառե-
րի հնչական կազմը: Պարզ է, որ սուղ վանկերը հին ձայ-
նաւոր են սղած և լոխն խմբերը հին ձայնաւոր են կորց-
քած: Պարզ է նաև, որ սուղ վանկերն ու լոխն խմբերը
կարող են զանազան ձայնաւորներ սղած ու կորցրած
լինել, քանի որ բոլոր ձայնաւորները սղումով տալիս են
ը և ապա չքանում: Պէտք է վերականգնել այդ սղած ու
կորցք ձայները՝ աչքը պահելով քոյր լիզուների ու-
նեցած համարժեք լիտձայն ձեերի վրայ:

1) Սրանք կարող են նկատուիլ իբր հին ուղղական-
ներ, որ իրենց իւն երեցնում են սեռական հոլովի մէջ,

բայերի անորոշ համարուած դերբայները, ալ ածանց ցով. այսպէս՝ քերի-ալ, քերել (իա'-ի), ու նաև՝ *կերել, զերել, *կիրել, կրել, *զիրել, գրել, *քիրել, քրել. հմ. քրրել, կերտել, (իբր՝ կերտի-ալ). *գերտել, *քերտել, կրտել (իբր՝ *կիրտի-ալ) *զրտել, *քրտել։ Այս ձեւերը կարող են մնացած լինել այնպիսի բարբառների մէջ, որ կ-ին տալիս են զ կամ ք կշիռ, որով մէկ բարբառի կրելը կամ կրտելը միւսի մէջ դառնում էր զրել, զրտել կամ քրել, քրտել։ Այս դէպ-քում նրանք պէտք է նոյնիմաստ լինէին, բայց տարբեր բարբառների մէջ իսկ եթէ փոխառութեամբ անցած են ուրիշ բարբառ և երեք ձեւով երեսում են միենայն բարբառի մէջ իրո՞ օրինակ՝ կրել, զրել, քրել - ապա այդ բառերը պէտք է մերձիմաստ լինեն փոխառութեամբ մէջ։ Այս կէտին կ'անդրադառնամ գրութեանս վերջում։

Ս.րմատական բառերի այս նոր շարքին կցելով չորրորդ արմատը (կամ՝ ածանցը), որ է Զ և և նրա տարմանաւանդ բարդ բառերում, որոնց հոլովումը պէտք չէ համարել նմանական կազմութիւն, այսինքն հետեւթիւն լեզուի մէջ եղած հոլովական մի կարգի. այսպէս՝ խոտակեր - խոտակերի. պատմագիր - պատմագրի. և այլն։ Դիտել պէտք է, որ Վ.րաց լեզուի մէջ ի-ին կազմում է ուղղական հոլով. իսկ բառն առանց ի-ի «անորոշ հոլով» է. այսպէս՝ պուր — «հաց» է անորոշաբար. իսկ պուր-ի «հաց» է իբր ուղղական։ Այդպէս և մեր կեր կարող է նկատուիլ իբր «անորոշ հոլով» և կեր-ի, իբր վաղեմի ուղղական - սեռական։ Աս մի առնչութիւն է, որ հորիզոն է բացում լեզու ախոյզի աշքին... հմ. Ն. Մառ. Քերականութիւն հին պրացեռէն գրական լեզուի. (սուսերէն) § 43, էջ 29, Նաև նոյն Ն. Մառի. *La langue georgienne*, էջ 62 § 76.

բերակը, որ է Զի մենք կստանանք նոր բառեր. (առանում ենք միմիայն կերտ և կիրտ ձևերը.)

- 1 կերտ-Զս, որ կը տայ կերց (տս-ց՝ ձայնաւորի չքառական)՝
- 2 կերտ-Զի, > > կերք (տհ-ը՝ > ցումով).
- 3 կիրտ-Զս, > > կիրց (տս-ց՝ > > >)
- 4 կիրտ-Զի, > > կիրք (տհ-ը՝ > > >)

ու նաեւ նկատելով սերի տարբերութիւն իբր քմային եւ ատամնային
5 կերտ-Զս, որ կը տայ կերծ (լս-ծ՝ ձայնաւորի չքառական)՝

6 կիրտ-Զս, > > կիրծ (լս-ծ՝ > ցումով).

№ 5 բառը իբ եռավանկ վիճակի մէջ, երբ նրա ձևն էր կեր-Զէ-Զս՝ կարող էր ունենալ տարբեր շեշտառութիւն թէ՛ միենոյն և թէ տարբեր բարբառների մէջ. (միենոյն ոռւս լեզուի մէջ օ'կնա-նշանակում է պատուհաններ և օկնա' - պատուհանի : Այսպէս օրինակ մեր լողանալ բառը, որ հնչելով իբր լո՛գանուլ կամ լո՛գանա՛լ, կորցրած է միջին ա-ը և դարձած է լող'նալ. իսկ հնչելով իբր լողա՛նալ՝ - դարձած է լողա՛նալ, որով միենոյն ռառը հայոց լեզուի մէջ երեսում է երեք տարբեր կերպարանքով - լլա՛նալ, լողա՛նալ, լող'նալ): Զօրաւոր շեշտը զարկելով առաջին ձայնաւորին՝ միջինը պիտի չքանար և բառը գտնար կերտ-Զս, նոյն շեշտի ազգեցութեան տակ այս նոր ձևը պիտի կորցնէր և վերջին ձայնաւորը և բառը դառնար կերտս, իսկ քմային տ-ի և ս-ի ձուլումով՝ պիտի հնչէր կերծ (լս-ծ): Նոյն մեկնութեամբ կիրտ-Զս-Զի հնչէր կը կիրտ կիրք (տհ-ը):

Հանրահաշուական այս տարագների մէջ, ուր Զ-ն X-ի դեր ունի եթէ ենթագրենք, որ Զ-ն եղած է ի՝ մենք կըստանանք հետևեալ պատկերը (անյայտով և առանց անյայտի):

կե՛ր - ԶԵ - ԶԱ	միջին այնաւորի աղումով՝	վերջին ձայնաւորի սղումով՝	վերջին բաղածայների ծուլումով՝
կե՛ր - իԵ - իԱ	կե՛ր Ե-իԱ	կեր ԵԱ	կերՃ
կի՛ր - ԶԵ - ԶԱ			
կի՛ր - իԵ - իԱ	կի՛ր Ե-իԱ	կիր ԵԱ	կիրՃ
կե՛ր - ԶՄ - ԶՀ			
կե՛ր - իՊ-իԻ	կե՛ր Պ-իԻ	կեր ՊԻ	կերԹ
կի՛ր - ԶՄ - ԶՀ			
կի՛ր - իՊ-իԻ	կի՛ր Պ-իԻ	կիր ՊԻ	կիրԹ

Առնելով այս ձևերից երկուսի լիածայն կերպարանքը միայն, որ են կեր-իԵ-իԱ և կիր-իՅ-իԻ, մենք կարող ենք տեսնել տարբեր շեշտառութեանց հետևանքները: Տեսանք, որ առաջին ձայնաւորը զօրապէս շեշտելով՝ նրանք պիտի դառնային կերծ և կիրբ: Շեշտելով միջին ձայնաւորը, նրանք պիտի դառնային ասացին ձայնաւորի սղումով և ապա չքացումով՝ կրբ-ի'Ե-իԱ և կրբ-ի'Ե-իԻ և ապա՝ կրի՛տիս և կրի՛տիի իսկ նաև վերջին ձայնաւորի չքացումով՝ կրի՛Էս, կրի՛տի և վերջին բազայների ձուլումով՝ կրի՛ծ, կրի՛ր: Իսկ եթէ նոյն լիածայն ձևերը շեշտէին իրենց վերջին ձայնաւորը՝ այն ժամանակ առաջինը պիտի սղէր, երկրորդը չքանար և բառերն երեւային այս կերպարանքով. կրի՛ս, կրտի՛հ. (Կրրէի՛ս, կրրէի՛հ) իսկ եթէ թերի շեշտ զարկէին առաջին ձայնաւորին՝ պիտի երեւային իրբ կրբ-իԲ-իԱ, կեր-ի՛Ռ-ի՛Ի: Կրտի՛հ և կիրտի՛հ ձևերը իրենց հ-ն ցնդելով՝ պիտի դառնային կրտի՛, կիրտի՛: Մենք տեսնում ենք, որ միեւ նոյն սուղ ձևը - ինչպէս կիրբ - կարող է գալ բազմազան նախաւոր ձևերից, մանաւանդ եթէ նկատի ու նենանք, որ Զ անյայտը կարող էր լինել ոչ միայն ի, ինչպէս ենթադրեցինք, այլ և ա կամ ու և ուրեմն նախաւոր բառը լինել՝ կեր-աԵ-աս, կեր-իԵ-աս, կեր-իԵ-իԱ,

կերաւէիս, և այլն: Թէ այս կարգի հնարաւոր ձեւը քանի՛ ան մնացած մեր և օտար լեզուների մէջ՝ դրանց հաշիւը կարելի է տեսնել եթէ ուշաղիք խուզարկուի մեր և օտար հին ու նոր լեզուների բառամթերքը: Աս մի աշխատանք է, որ կարելի է կատարել և մասամբ կատարած եմ: Բայց այս մասին մի ուրիշ անգամ: Դառնանք մեր տեսութեան:

Մենք տեսնում ենք, որ այս լուծումով մեր լեզուն ստանում է կցողական կերպարանք, որ գիտուններից ոմանք համարում են լեզուների նախաւոր վիճակը: Մասնիկներն իրար կցուելով՝ ստեղծում են նոր ձեւը և սիշում են նոր իմաստներ: Այդ նոր ձեւը շեշտառութեան, ձուլումի և ամփոփման հետեւանքով ստանում են տարատեսակ կերպարանք և ստեղծում են ձեւը բազմազանութիւն, որ հետագային օգտագործում են իմաստի երանգներ նիշելու համար:

Նկատելով որ այս բոլոր տարատեսակ ձեւը միևնոյն բազմըրիչ տարրերից են կազմուած և նրանց շարքերը տարբերանում են ձայների լծորդութեան հետևանքով՝ ես ասում եմ առաջուց. բոլոր այդ ձեւը պէտք է կամ նոյնիմաստ կամ մերձիմաստ լինեն, ինչպէս էին կլոր և զլոր բառերը: Եթէ մի տեղ ասում են կեր, մի ուրիշ բարբառում կամ մի քոյր լեզում մենք կարող ենք սպասել զեր կամ մեր և այս զուգահեռ ձեւը պէտք է նշանակեն կամ կե՛ր կամ պիտի նիշեն զրան մերձաւոր մի գաղափար: Մենք այսպիսվ հնչական աշխարհից թևակոխում ենք իմաստի աշխարհը: Հնչական աշխարհում յաճախ կորած են լինում ձայնական հոլովոյթի միջին փուլերը, այսպէս օրինակ լատ. honoris` honor բառի սեռականն է. բայց նախապէս եղած չէ honor բառ, այլ եղած է *honor և իր սեռականը՝ *honoris: Լատին լեզուի

պատմութեան մի որոշ շրջանում երկու ձայնաւորի
միջև գտնուած Տ-ը հնչած է և *honoris հնչած են
իբր *honoziš, մի ձև, որ չքացած է։ այս նոր ձևի մէջ
չ ձայնը երկու ձայնաւորի միջև ենթարկուած է բէ-
ացման 1) և հնչած է իբր ը 2) և բառը դարձած է
honoris։ Այնուհետև նկատելով -is վախճանն իբր
սեռականի նշան՝ լատին ժողովուրդի լեզուական գի-
տակցութիւնը honoris ձևը տրոհած է իբր honor-is
և honor համարած է ուղղական 3)։ Միմիայն համե-
մատական լեզուազիտութիւնը կարող էր գծել այս ան-
հետացած պատմութեան ծիրը և վերականգնել *hōros,
*hōnosis և *honoziš նախնական և միջանկեալ ձևերը։
Ճիշտ այսպիսի մի աշխատանք ստիպուած է կատարել
իմաստաբանը ցոյց տալու համար թէ ի՞նչ կապ կարող
է լինել պատը ծեփող կրի և միտքը դրոշմող գրի միջև,
կամ սեպ ժայռ նիշող ֆերծ-ի և մորթեն զատող ֆերպ-ի
միջև (հմ. քերթել ոչխարը)։ Հնչական տարրերացման
գուգահեռ ընթացած է իմաստների տարրերացումը։
մէկը ձայնաբանական երեսյթ է, միւսը՝ մշակութա-
յին - իմացական։ Լեզուն արտացոլում է մշակոյթը։
լայնագոյն առումով նաև մարդկային իմացութեան և
յուղաշխարհի հնչական անդրադարձումն է, ինչպէս ի-
րերը այնպէս և բառերը ժամանակի ընթացքին փո-
խում են իրենց կիրարկութիւնը։ Նոր վերարկուն հագ-

1) Այսպէս եմ թարգմանում *rhotacisme* բառը։

2) Այսպիսի մի բան, բայց հակառակ ընթացքով մենք
տեսնում ենք և մեր նոր նախիջևանի բարբառում, ուր
մարդ բառը հնչում է մաժդ և Զէյթունի բարբառում,
ուր կերպամ-ը եղած է գեածթոմ։

3) *Sens. F. de Saussure, cours de Linguistique
générale, § 221; A. Meillet & J. Vendryes. Traité de
gramm. comparée des langues classiques. § 106, 107.*

նում են երբ մտնում են մարդամէջ։ Երբ հնանում է՝
տանն են գործ ածում, երբ աւելի հնանում է՝ զառ-
նում է յաւելեալ վերմակ, ժամանակ անցնելով՝ նրա
մի մասով յատակ են սրբում, մի ուրիշ մասը շան տակն
են ձգում, որ չմրսի ձմեռը, վերջն իր անպէտք
քուրջ նետում են դուրս։ Աղքիւսի մէջ մի հնամաշ թեք
տեսնելով՝ մենք չենք անդրադառնում, որ երբեմն այդ
թեքին յենուած է մի սիրուն կին և որ երբեմն այդ
թեքը խոզանակում էր ամէն օր... ի՞նչ կապ այդ քուր-
ջի կտորի և նոփանոր վերարկուի միջև։ Եւ սակայն
կապը պարզ է, եթէ նկատենք նրա ճակատագրի մի-
ջին փուլերը։ Այսպէս է և բառերի իմաստի պարա-
գան։ Ո՞վ կարող է ասել թէ բազմաթիւ հնարաւոր ձե-
երից ո՞ր մէկը մինչև ո՞ւր է հասել հոլովոյթի ընթաց-
քին և ե՞րբ է առմիշտ չքացել, դառնալով անպէտք
քուրջի կտոր։ Ե՞րբ են կիրն ու կերը իրար շատ աւե-
լի մերձաւոր գաղափարներ նիշել, քան այսօր, երբ
թւում է թէ նրանք ոչ մէկ կապ ունին իրար հետ-
իայց ես ասում եմ. այդ կապն եղած է. մի կապ, որ
իր ծագման մէջ հասնում էր նոյնացումի։ Պէտք է մտո-
վին վերապրել և վերականգնել այն ճամբան, որով ըն-
թացած է իմաստի տարբերացումը։ Հնչական վաղեմի
նոյնութիւնը և մերձաւոր առնչութիւնը պարտադրում
են ընդունել նրանց իմաստների վաղնջական նոյնու-
թիւնն ու սերտ կապը։ Այսպիսով լեզուի հնչական
հոլվոյթը դառնում է զուգահեռ իմաստական հոլվոյ-
թին. իսկ իմաստական հոլվոյթը անդրադառնումն է.
իրային հոլվոյթի, այսինքն՝ մշակոյթի։

Լեզուասէր բարեկամներիս եւ ընկերներիս
«Յուշագրիա» նման գրուրիններ կարդացող
շատ քիչ մարդ կայ մեզանում. հազի մի քանի
տասնմեռակ. հետեւապէս ոչ մէկ յոյս կայ սպազրութեան
ծախսն իսկ գոցելու: Զետի համար զի՞ն նշանակած
եմ մէկ Ֆրանֆ: Ասում եմ «ձեռի համար», որով-
հետեւ եթէ քիչ է կարդացողը, շատ աւելի քիչ է
զնորդը: Ընկերներու ու բարեկամներու զիտեն իսկ
նիւթական կացուրինը, զիտեն նաև, որ այս ժեսակ
ծախերի տակ մտնելու եւ հետար յունեն: Եթէ նրանք
ինձ նման այն կարծիքն չինեն, թէ Յուշագրերու
կարող են պիտանի շինել մեր լեզուի թնանութեան
համար՝ կը ինորեն նիւթապէս ինձ օգնեն այս
ձեռնարկութեան մէջ: Յուշագրերու սպազրելու եմ
պրակ առ պրակ: Ամեն պրակի ծախսն է մօս 200
ֆր. 500 օրինակի համար: Ասացած զումարների
հաշիվը կը տամ պրակների կողի վրայ: Աւելորդ է
ասել թէ աշխատանիխ համար ոչ մէկ դրամ կը
համուի այդ գումարից: Հրատարակուած պրակների
ամբողջ պահեստն ու մնացորդ գումարը պիտի մնայ
Համազայշին Ընկերութեան:

Միրով Ն. Աղմաղեսմ,

ՔԱՆԱՍԵՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԼՇՈՐԴՈՒԹԵԱՆ

Մեր վերջին Յուշագրի (Ե) մէջ մենք վերականգնեցինք բազմաթիւ հնարաւոր ձեւեր, որ կարող էին առաջ գալ արմատների բարդումով, ձայնաւորների սղումով, անկումով և ձուլումով և ձայնապուրկ վանկերի եղերական, բաղաձայների ձուլումով կամ վախճանական ձայների փոփոխմամբ և չքացումով։ Երանք մեծ մասամբ կի արմատից կազմուած էին Երանց թիւը կարելի էր հուապատկել, եթէ լրիւ շարքեր կազմէինք նաեւ գով և բով։ Այստեղ ես նըւ կատի ունեմ միեւնոյն կի արմատից կազմուած ձեւը։ Քանի՞ոն այդ հնարաւոր ձեւերից պահած է մեր լեզուն։

Նախ մնացած է կի արմատն իբր հրամայական թիվիսի բարբառի մէջ, ուր կի' նշանակում է կե՛ր։ Արմատները սովորաբար հրամայական են միանդամայն, այսպէս՝ հաշանակել, հրամ, հա՛ս, կի. Ն արմատն է մի բայի, որ կազմուած է ար ածանցով, իբր կի-ար-ել, որ իս ձայները ձուլելով՝ պիտի տար կերել, հմ. բարբառական՝ կերել եմ. և դր. կերեալ եմ։ Ինչպէս ունինք տես-ան-եմ և հրամ. տե՛ս. այնպէս ունինք կի-ար-ել և կի', որով ար և ան նոյնարժէք են և ինչպէս առիթ կունենամ ցոյց տալու՝ նոյնիմաստ են. հմ. ար-ել (եմ) և ան-ել, որ նոյնիմաստ են և ուր անել բայը կապ չունի գասական առնել բայի հետ։ Վերջինը ծագում է ար-ան-ել ձեւից, ուր բան ոնդային ն-ի մօտ թանձր երանգ ստացած է, ինչպէս ձմե՛ր (ա) ն բառի բ-ն, և որ վերստանում է իր նախաւոր քնոյթը, երբ զատւում է ն-ից. հմ. ար-ար-ի։ Նոյն

ձեռվ և նոյն հիմքով թիֆլիսի բարբառն ասում է բի՛,
իբր՝ բեր՝, որովհետև այս բայը նոյնպէս լուծում է իբր
բի-ար-ել, որ իա ձայների ձուլումով դարձած է բերել:

Այսուհետեւ մնացած են նախաւոր կի-ար ձեր եր-
կու օրինական ժառանգները՝ կեր, իբր արդիւնք ա-
ձայնի շեշտառութեան և իա ձայների ձուլման, կի-ա՛ր,
կե՛ր, որ ինչպէս զիտենք *կիերել բայի հրամայականն
է և նախապէս պիտի նշանակէր կի ա՛ր, այսինքն՝ կի
արաւ: Նախական կի արմատի իմաստը տարբերացած է
հետագային և իր նորածանց ձեն անցած է հինի տե-
ղը և համարուած է բայարմատ: Հին արմատները
բազմիմատ են: այսպէս՝ արաւ-նշանակում է գործ,
աշխատանքի արդիւնք, մշակած հող, հմ. Հաճեցայ եռ
յամենայն արարս իմ (Ժող. Բ. 11), այսինքն՝ իմ ա-
րածները, գործերը, շինածները, յօրինածները հաւնեցի,
որով՝ արաւ անցեալ գերբայ է: Եներկարաւ, ուր նոյն
արարս բառը ներկայ գերբայ է և նշանակում է ա-
նող, շինող: Այսպէս և այ նշանակում է և' անող
հմ. խոսակեր (կի-ա՛ր), այսինքն խոտ կի անող, խոտ
ուտող, և' նշանակում է արած, այսպէս՝ ցեցակեր (կի-
ար), այսինքն ցեցի կի արած, ցեցի կերած: Ունի
նաև ապառնի գերբայի իմաստ, այսպէս՝ կեր (կի-ա՛ր),
որ նշանակում է գրաստի և խաչանց ուտելիք. իսկ Դա-
զսինի բարբառի մէջ նաև անտառի պառւզներ: Կաղին,
ընկոյզ և այլն: 1)

Մնացած է և նոյն նախաւոր ձեր երկրորդ կեր-
պարանքը իբր արդիւնք ի ձայնի շեշտառութեան,
հետեւորդ ա ձայնի յովտացման և ձուլման

1) Բառամթերքի համար լայնօրէն օգտագործում եմ
Հ. Սահեանի «Հայերէն Գաւառուական բառարանը»: Ինչ
որ այնտեղից չէ առնուած՝ իմ անձնական յուշերին
եմ պարտական:

ի՞ր նախորդի հետ, որ նոյներանգ ձայնաւոր է և այդ
իսկ պատճառով ձուլած է յօվաը, այսպէս՝ կի՛.ար,
կի՛.ցը, կիր՝, և հետագային իշխ կարճացման հետեւ
անքով՝ կի՛ր։ Այս բառը մի կողմից նշանակում է բռու,
որով ծեփում են պատերը և որին շատ տեղ օտար բա-
ռով ասում են քիրաջ և որ կիր արմատի թորդ իր ար-
մատից է ծագում։ միւս կողմից կրել բայի արմատն է
և նշանակում է անձամբ կամ զբաստի, կառքի կամ
մարզու միջոցով մի քեռ տեղափոխել հմ. դժուարակիր.
ունաեւ ներքին ապրում ունենալ ցաւ կրել, կիր-ք և լն։

Ի՞նչ կապ կարող է լինել այս տարիմաստ բառերի
միջև։ Այս կապը գտնելու և քայքայուած շարքը նո-
րից կցիլու համար պէտք է դիմենք միենոյն արմատի
գծորդներին, որ ինչպէս տեսանք կա՛մ նոյնիմաստ
կա՛մ մերձիմաստ պիտի լինեն։ Կիր արմատի զուգահե-
ռն են զիր և իր (իբր զի՛.ար, զի՛.ցը, զի՛.ռ, և
քի՛.ար, քի՛.ցը, քի՛.ռ)։ ինչպէս նաեւ զիր և ֆեր (իբր
նախաւոր գի.ա՛ր և ֆի.ա՛ր)։ Քեր-ը արմատն է ֆերել
բայի, որ նշանակում է որեէ առարկայի վերնաշնրաը
հեռացնել եղունգով կամ որեէ գործիքով. այսպէս՝ քե-
րելով յղկում են քարը, հեռացնում են արեխի ցեխը,
մարմիկ կեղար և այլն։ Այս հաշուող կիր պիտի նշա-
նակէր քերուածք, քերուք. և սա ա՛յն շրջանի բառ
է, երբ կիրն ստանում էին ոչ թէ կրաքարն այրելով
ու փշրելով, այլ կրաժայոը քերելով։ Քեր արմատի
գծորդական կշիռն է զեր, որի վաղեմի գործիականը
պիտի լինէր զեր (հմ. ձերք-ակալել, որ հին ձեն է
գործիականի, որի զասական ձեն է ձեռամբ)։ 1) Գեր

1) Ուշադրութեան արժանի է, որ թէն այս ձեի մէջ
ուն հեռու է ն.ից, բայց պահած է իր թանձր բնոյթը.
նշանակում է՝ հին հայերն ունեցած են և' ձեր և' ձեռ
ձեռքը։ Այս մասին կը խօսեմ այլուր։

արմատից է զերբ ել, որ նշանակում է ձեռքի մատաներով յափշտակել, բուսով հաւաքել, իր կողմը քաշել։ Այս բառերից մէկը գրաբարի տիպարին պատկանող մի բարբառից է դալիս իբր ամփոփումը զեր-եհին նախաձեի 1), միւսը Արցախակերպ մի բարբառից է անցած՝ իբր մի վաղեմի զեր-քին ձեի ամփոփում, ուր քին տուած է րի, իսկ սա ձուլումով՝ վի (գերփեկը)։ Այս բառի նախաւոր իմաստն է ուրեմն զեր-ով, քեր-ով, այսինքն քերելով։ Գործողութեանց նմանութիւնը ստեղծած է գաղափարների զուգորդութիւն, իսկ գործողութեանց երանգի տարբերութիւնը արտայայտուած է նոյնիմաստ արմատների կիրարկումով, որոնք սակայն լծորդ ձայներով տարբերացած էին։ (Հմ. զեր, ներ և կեր)։ Միանգամ որ պարզուած է ներ և զեր արմատների նախազրական նոյնութիւնը և հետագայ մերձիմաստութիւնը՝ մեր տեսութեան համաձայն պէտք է նոյնիմաստ կամ մերձիմաստ լինեն նաև այդ արմատների տարբերացումները, որ սաեզծուած են տարբեր չմշտառութեան հետեանքով։ Այսինքն՝ կեր, զեր, ներ, պիտի մերձիմաստ կամ նոյնիմաստ լինեն զիր, կիր, քիր արմատներին։ Եւ այլպէս նն իրօք։ Հմ. քիր արմատի

1) Հին հայերէնը միմիայն մի բառ է պահած հին գործիական ձեռով, որ է արամբի, ուր ի-ն մնացած է անվթար՝ ցնդելով իր հունչը, սա-այր բառի գործիականն է, որ զրաբարը պահած է արամբ ձեռով, այսինքն՝ ի-ն ձգելով, ինչպէս միւս գործիական հոլովների և ուրիշ բառերի մէջ։ Հմ. պատասխանի-պատասխան (ուր ի-ն ընկած է), և որ ստացած է տեխնիկական իմաստ և այդ իսկ պատճառով յարատեած է իր նախնական կերպարանքով։ Արամբի նշանակում է մարդ ունեցող, ամուսինը կենդանի կին, ոչ այրի-այսինքն՝ մարդով կին, ո՛չ անմարդ։

կրկնաւորը, որ է *քիրքիր։ Արանից ծագում է քրքել, որ նշանակում է փորփրել, թելահան անել, փշրել, այսպէս՝ հետաքրքիր, այսինքն՝ հետքը քրքրող։ հազուստի կտորը հնանալուց քրքրում է, այսինքն՝ թելահան է լինում. միսը շատ եփելուց քրքրում է, հողը քրքրելուց մանրում է, ինչպէս ժայռը քերելուց՝ փշրում է։ Եւ նախնական գործիքը — եղունդ, կարծր քար կամ մի ուրիշ կարծր բան, որով քերած են կրաքարի երեսը — իր ընթացքով նման է մատները կարծ արած ձեռքի, որ քերում, գերբում է, և ատամների, որ քերում, գերփում են միաը ոսկորից, ուստի և այդ գործողութիւնն արտայացնում է լծորդ ձայնով մի նոյնարժէք արմատ, որ է՝ կեր։ Եւ կերելու արդիւնքը, որ նոյն է թէ ներելու արգիւնքը նոյն արմատի մի տարբերակով է նիշուած, որ է կիր։ Քերելը քերածի վրայ թողնում է գնանման հետքեր, մի տեսակ՝ ակօներ, որ նիշում է կիր արմատի լծորդը, որ է գիր. և այդ է նրա նախաւոր իմաստը։ Հմ. յուն. ցրձի՛, որ նշանակում է զրել, բայց որի նախաւոր իմաստն եղած է մորթը ցտել, պատռել, ճանկուել՝ եղունդով, սաեղով կամ փշով, ու նաև՝ ծասի կեղեւը հանել, լերկել, պլուկել, սկրդել։ Նոյն կամ մերձաւոր իմաստ պահում են բոլոր այն յոյն բառերը, որ միւնոյն ցր - արմատից են ծագում և որ կշիռն է մեր գիր արմատի, որ սղումով դառնում է գր - հմ. գրել։ Կարով ենք ասել, որ յուն. ցր խմբի մէջ չքացած է մի հին իւ Մեր լիածայն արմատը՝ գիր՝ այսպիսով նպաստում է յոյն արմատի կորած ձայնաւորը վերականգնելուն։ *graſis* (*սեռ. graſidos*) նշանակում է պղինձ կամ մարմար քանդակելու երկաթէ գրիշ։ *graſeiiion* - սլաքաձև մի գործիք, որով գրում են, ծակում, փորագրում։ Այսպիսով գրելը դառնում է քերել, քերծել և զրիչը, այլ բան չէ քան քե-

բիչ։ Այդ իմաստը պահում են խորագրել և փորագրել բայերը, որ անշուշտ նկատի ունին քար, թաց աղիւս կամ ուրիշ հարծը առարկայ և ոչ թուղթ կամ մազադաթ, որոնց վրայ չի կարելի ո՞չ խոր գծել և ոչ փո՞ր, այսինքն փոս գրել, փորելով գրել։ Ու նաև երկաբագիր, որ իր մէջ ունի իր գործիքը (իրկաթ) և արձանագիր, որ մատնանշում է իր նիւթը (արձան=քար. ժայռ)։ Գրելը նաև սկրդել է, մորթը ցանել, եղունգով կամ սուր բանով, օրինակ՝ փշով։ քերել, ճանկատել, հետեապէս՝ քերքերել։ ուստի՝ գրգռել, որի արմատի վերականգնած ձեն է *զիրզիր.ար՝ ըստ մեր տեսութեան ու ձայնի մասին։ (տես Յ.Բ.35)։ Իր զուգահեռն է, բայց ոչ կրկնաւոր ձեռով՝ կիր, որով կիր-ք նոյնանում է իր իմաստով կամ առնուազն մերձենում է իր նշանակութեամբ գրվու գաղափարի հետ։ հմ։ գաւառ, բացատրութիւնները. «ձեռս քոր է գալիս ցայսինքն ծեծել եմ ուզում. «ջանդ քո՞ր է գալիս» այսինքն՝ ծե՞ծ կուղես՝ ևայլն։ Կիր գտնում ենք քոյլը լեզուների մէջ. այսպէս ոռւս. կիր-կա բառի մէջ, որ նշանակում է ծայրը սուր և մըմաձեւ փորելու գործիք, որի լծորդ ձայներով կաղմուած համարժէքը գտնում ենք իլ.ունդ բառի մէջ, որ ոռւսի կիր-կա-ն է (իլ-ունդ, ուր իլ-կ և լ-ը)։ Փոսելու և ծակելու գաղափարին կառչած է պարսկ. իիր, որ նշանակում է առնանդամ և Արցախեցու խեռ., որ նոյն բանն է նիշում և ուր ե-ը կշռում է ի-ին, ո-ն, ր-ին և խ-ն ի-ին. և միւս նոյնիմաստ բառի արմատը կիլ-ուր ի-ն սղած է և տուած կլ և ր-ն լծորդ է լ-ին։

Մենք տեսանք թէ մեր բերած արմատական կազմութեանց զոյդ շարքերը, որ նոյն ծագումն ունին և նոյն տարրերից են կազմուած, սակայն լծորդ ձայներով՝ իրենց նախնական իմաստի մէջ նոյն են և իմաստապէս տարբերացած են միենոյն նախնական գործողու-

թեան այս կամ այն երանգը և այս կամ այն արդիւնքը նիշելով, Կիր արմատի մի տարբեր իմաստը, որ տեսնում ենք կրել, այսինքն՝ անձամբ կամ գրաստով փոխազրել բայի մէջ, մենք գտնում ենք ոռւս, ցիր-յա բառի մէջ, որ նշանակում է բեռ-ել, եթէ ուղենանք մի նոր բառ համարել, ու նաև բեռը բեռնել (փոխազրողին). հմ. ծանրակիր. ծանրութիւն կրել և այլն: Այստեղ զուգորդուած են քերուածքը և նրա փոխազրութեան գաղափարները, քերուածք իբր բեռ ու ծանրութիւն: Իսկ զերբելու և զերփելու կշիռը գտնում ենք միեւնոյն ոռւս լեզուի մէջ, ուր շա-ցրեբ-ալ' - նշանակում է հաւաքել (խոտ կամ ուրիշ իրեր), և կուտել, օտարի ունեցածը բռնի յափշտակել, իր կողմը քաշել, հաւաքել. և նոյն արմատից՝ սակայն իբր տարբեր զործիւական՝ gr-ab - արմատը, որ նշանակում է յափշտակել, թալանել. հմ. grab-ն'. և նոյն արմատից տարբեր նախածանցներով կազմուած նոյնիմաստ և մերձիւմաստ բազմաթիւ ալաւ բառերը: Փորելու և փոսելու գաղափարը մենք գտնում ենք գերմ. graben բայի մէջ, որ նշանակում է փորել, և այլն: Այսպէս ուրեմն՝ նոյնիմաստ կամ մերձիւմաստ են:

1 կեր զեր բեր իբր կի.ա՛ր. ի ա ձուլուած իբր ե).
2 կիր զիր քիր (իբր կի՛-ար. ա յովտացած եւ ձուլուած ի-ին). և նոյնիմաստ և մերձիւմաստ են, որովհետեւ միեւնոյն տարբերից և միատեսակ կազմութիւն ունին, միայն թէ առաջին ձայները լծորդ են և շեշտերը տարբեր են եղած: Միեւնոյն հիմքերով նոյնիմաստ կամ մերձիւմաստ պէտք է լինեն նաև նրանց հետագայ բարդացու մնիերը :

Այսպէս կերտ և կիրտ, որ *կեր - ատի, *կեր - իտի

1) Տես Վ. Դալի բառգիրքը. հատ. ա, էջ 361.

կամ *կեր-ուտի ձեերից կարող են ամփոխուած լինել ինչպէս *կիր-ստի, *կիր-իտի և *կիր-ուտի ձեերից։ Սլաւ բառակազմութեան տեսակէտով այդ ձեերը անընդուշ գերբայներ են, հմ. իբր կազմութիւն՝ pris-a'ti գրել, mol-՛tî աղաչել. ցու ս'տի-կորացնել, ճկել, թեքել, Բայց այս ձեերը շեշտը պահած են վերջընթեր վանկի վրայ, իսկ իմ ենթադրած ձեերն եղած են նախայարաշեշտ, այսինքն վերջից երրորդ վանկն էր շեշտուած։ Կեր-ստի պիտի նշանակէր կեր.ել, որ է ֆերել, կիր-ստի՝ պիտի ունենար նոյն կամ մերձաւոր իմաստ։ Արդ՝ այս ձեերն ընկած են մի լեզուական միջավայր, ուր բայերի անորոշ գերբայները կազմում էին ալ մասնիկով, և դարձած են կրկնապէս բայեր, տարով՝ *կեր-ատ-ի-ալ, *կիր-ատ-ի-ալ, որ «ածանց»ի ա-ը կորցնելով և ի և ա ձուլելով՝ տուած են կերել, կիրտել, իսկ այս վերջինը դարձած է կրտել, աղելով իր արմատի ի-ն (կըրտել)։ Մենք տեսնում ենք, որ սլաւկերպ կազմութեանց վրայ նստած է մի նոր ու թանձր խաւ, որ այլափոխած է նրանց կերպարանքը։ Ալ-իլ և սլի վախաճանով բայ կազմող մի գանգուածի մէջ իբրև լեզուաշխարհ։ Մեր բայերի միջից, մեր լուծումի շնորհիւ, երևում են այդ խորտակուած նաւի կայմերը միայն, Գուցէ սկիւթական ձեեր են դրանք, որոնց կլանած է մեր աշխարհի լեզուական միջավայրը և որ սական աւելի զօրաւոր եղած են ուռսական տափաստաններում և իրենց զրօշմը անկորուստ մնացած է սլաւ լեզուի մէջ և ոռւսերէնում, որ նրա մի ձեափոխութիւնն է։

Կերտելն ուրեմն հարկ չկայ եկամուտ բառ համարելու։ Նա բնականոն ձեռվ կարող էր կազմուել մերազնացած արմատներից։ Կերտել նախապէս պիտի նշանակէր ֆերել. ապա՝ կոփել ու տաշել և վերջը դաղափար-

Ների զուգորդումով՝ քանդակել, կառուցել նրա նաւ խաւոր արմատն է կեր, որ լծորդն է ներ արմատի Կրտել, որ նոյն նախաճեմի զուգահեռն է և ծագած է տարրեր շեշտառութեան և ձայնաւորի սղման հետեւ և անքով նշանակում է մազը արմատի մօտից կտրել. հմ. գլուխը կրաել, ու նաև՝ որձ անասունը մալել: Իմաստի այս տարրերացումը պէտք է համարել վերջամուտ: Իր տարրերակը պէտք է լինէր զրաել, զիրս արմատից: Տեսանք, որ կիրտ և զիրտ ծագում են կիր և զիր նախարմատից: Գիր արմատից էր նաև սուս, ցիր-յա, որ ծանրութիւն էր նշանակում: Բայց կարծես թէ մեր տեսութեան ծզութիւնը վկայելու համար, այդ նոյն բառը նշանակում է նաև մազը տակից խուզել, լիովին ճազատ, մերկազլուխ, խուզուած մարդ, անմազ. քոսոս: 1) Սրանով պարզում է թէ ինչու ներ և կեր արմատներին զուգահեռ զեր արմատից կազմուած զերծ արմատը, պիտի նշանակէր մազը գործիքով վար առնել, հմ. զերծել:

Կերտ և կիրտ արմատներից կազմուած ներգործական և կրաւորական դերբայները պիտի լինէին կերտիս և կիրտիս, կամ քմային լուղ՝ կեր-լ-իս, կիր-լ-իս, որ վերջի վանկի եղերական ձայները իրար մօտեցնելով՝ պիտի տային կերւս և կիրւս, իսկ սրանք ձուլելով տան իրը ծ՝ պիտի տային՝ կերծ և կիրծ: Կերծ արմատը պահած չէ մեր լեզուն, զրա փոխարէն պահած է նրա զուգահեռները իրը լծորդ, զերծ և ներծ: Տեսանք թէ ինչ է նշանակում զերծ արմատը: Քերծ - նշանակում է լերկ և սեպ ժայռ, այսինքն՝ քերած, զերծած ու ցից քար, որով տեսնում ենք, թէ գաղափարներն իրենց իմաստով մերծ են իրար: Իսկ կիրծ արմատը մենք

1) Տես վ. Դալ՝ Բառովիրք համ Ա. 361. Բառն այդ իմաստն ունի Կուրսկի և Ռեազանի նահանգներում:

տեսնում ենք կրծել բայի մէջ, որ այլ բան չէ քան
ատամներով գերծել միսը ոսկորից կամ պտուղի մսուկը՝
կուտից: Ընթերցողը կարող է մտածել, որ կրծել բայը
գալիս է կուրծ արմատից: Հմ. կաշառակուրծ, բայց
պիտի խնդրեմ առայժմ ընդունել, որ կիրծ ու կուրծ
նոյն են կամ մերձիմաստ են մինչև առիթ ունենամ
յատուկ Յուշագիր նուիրելու այդ զուգահեռ կազմու-
թեանց և ցոյց տալու թէ դրանք մերձիմաստ են իրենց
ներքին կազմութեամբ և էութեամբ: Յամհնայն գէպս
կրծել բայը նոյնքան կարող է կիրծ արմատից համար-
ուիլ, որքան կուրծ արմատից, քանի որ ի և ու երբ
սղում են՝ միապէս տալիս են ը. հմ. սիրտ, սրբափ և
բուն բընական:

Միջանկեալ մի պարբերութիւն սկսելով՝ թեթեակի
պիտի անդրադառնամ մեր արմատների երկրորդ բա-
ղաձայնին, որ իր զուգահեռ լծորդներով ստեղծում է
նոր մերձիմաստ բառեր: Մենք տեսանք կիրմատի
ֆիլ զուգահեռը լունգ բառի մէջ: Մեր լեզուի մէջ
լծորդ են դել, ինչպէս նաև ը և լ, որով մէկ ձայնից
միւսին անցումը բնական է տեսնել մեր բառերի մէջ.
Հմ. տեսել եմ և տեսեր եմ լ և ը լծորդ են և լեզ-
ուից լեզու: Հմ. մաղ.թ. ել և սլաւ. mol. iti-sia (աղօ-
թել): Այս հաշուով կեր կարող էր տալ և տուած է
կեղ, որից կազմուած է կեղ-եք-ել բայը, որ նշանա-
կում է քաշկռտելով պատռակ, բզիկրզիկ անել, քեղր-
թել, չարչըկել. նոյն արմատից է և նեղթել բառը:
Նոյն արմատից է և կեղեւ բառը, որ տարբեր ձևերով
ունինք: Դա մի հին գործիական է, ինչպէս բարեւ
բառը, որ է բարեաւ: Կեղեւ պէտք է լուծուի իբր
կեղ-ի-աւ, որով իր բունն է կեղ-ի: Ա-ի փոխարինու-
մով լ-ի և նախնական բ-ի պահպանումով՝ այդ բառն
ունինք կլեբ ձևով, որ է *կեղ-աբ. բ և պ ձայների

շծորդումով՝ ունինք կլեպ, որ է *կելի. ապ. կ-ք ձայ-
ների լծորդումով՝ ունինք բլեպ, որ է *քելի ապ. Այս
նոր արմատներից կազմուած են կեղեւել, կլպել, բլպել,
կլեպել, բլեպել: Վերջապէս գրաբարածե վերջով ունինք
բլեւ, որ է *քելի-ի-աւ: Այս բոլոր բառերը զուգորդուած
են քերելու և գերծելու զաղափարին և ինչպէս տե-
սանք՝ նոյնանում են իրենց ծագման մէջ՝ լինելով
լծորդ ձայներով կազմուած գործիական հին հոլովներ:
Այս ընտանիքին պէտք է միացնել և կերպ բառը, որ
նոյնպէս մի հին գործիական պէտք է համարել (հմ.
ձերբ.) և որ նշանակում է արտաքին տեսք, իսկ գրա-
ցերէն՝ կուռք, այսինքն՝ տաչուած, կոփուած, ինչպէս
մեր կուռքը, որ ծագում է կոանել բայց և նշանա-
կում է կառնուած: Այս ընտանիքի անդամ է և կելծ
բառը, որ զուգահեռն է զերծ արմատի, և պիտի նա-
խապէս նշանակէր քերծուած, քերուած, ինչպէս և
կելդ բառը, որի նախնական ձևի վերջին Ա.Ն հունչ
դարձած ու ցնդած է (կեղ-տիս, կեղ-տիհ, կեղտի(h)
և վերջին ձայնաւորն ընկած է ուղղականի մէջ, որ
սակայն երեսում է սեռականի մէջ, երբ շեշտան անցնում
է իր վրայ (կե՛ղտի, կե՛ղտ(h) և կելդի') և իր նախնա-
կան նշանակութիւնը պէտք է լինէր քերուածք:

Ատամային Տ.ով կազմուած գերբայը պէտք է լինէր
կեր's-իս, որ իր Ա.Ն հունչի վերածած գէպքում պի-
տի տար կեր'sին, իսկ այս ձևը, վերջին վանկի ձայ-
նաւորը սղելով՝ պիտի դառնար կե'rտն և ՏԻ ձուլե ով՝
կերբ, որի շեշտառական տարբերակը պիտի լինէր կիրբ:
Այս արմատից ունինք կրբել բառը, որ նշանակում է
մանած բրդէ թելը մաքրել իր մազմզուկներից և յղկել
ու կոկել: Կրբելն իրը դաստիարակութիւն՝ փոխաբե-
րութիւն է և վերի գործողութիւնն ունի իրը հիմք:
Երեխան կրթելը նրան յղկել է նշանակում՝ վերացնե-

լով այն ամէնը, ինչ որ աւելորդ է : Այս բայն ունինք և քրել և քորել ձեռվ, որ նոյնիմաստ է առաջինի հետ : Պարզ է այն կապը, որ կայ քերելու, քերելու և կրելու միջև : Թել կրթողը մեսաղէ ճաղով քերում ու քերում է մազմզուկները և թելը յդկում : Կերը արմատին զուգահեռ են զերը և ները, ինչպէս նաև զիրը և ֆիրը . վերջինը տեսանք քրթել բայի մէջ . իսկ զիրը նշանակում է սեպ կտրուած, խստօրէն միջատուած . հմ. «խօսքը գիրթ կտրել» . «ժայռը գիրթ իջնում է մինջև ձորի յատակը» : Սրա զուգահեռն է ներծ, որ ինչպէս տեսանք լերկ ու գիրթ ժայռ է նշանակում . իսկ քերծել, գիտենք, որ նշանակում է սկրցել եղունգով կամ սրածայր մի բանով ինչպէս ասեղ, փուշ և այլն :

Եթէ զերբայական - Տիս վախճանի Տ-ը հնչէր քը- մային երանգով, իսկ ա-ն հնչուէր իբր Շ՝ այն ժամա- նակ մինք կ'ստանայինք լիւ . իսկ երբ ձայնաւորը չքա- նար՝ Ե խումբը ձուլումով պիտի տար - ն . որով կիրծ- ը պիտի իբր զուգահեռ ունենար կիրն հմ. կրնատել, և կրնտել : Այսաեղ բայի ատ բաղադրիչը ոմանք հակ- ուած են համարելու հատ, որի հ-ն ցնդած է և որ հատ- ան, ել բայի արմատն է և նշանակում է կտրել . իսկ կրն տրամադիր են համարելու կարն բառի ամփոփումը, որով կրծատել=կարծ կարել, ինչ որ գէմ չէ իմաստին, բայց ես կարծում եմ, որ ատ հնդերոսպական ալ վախ- ճանն է, որ եղ. երրորդ գէմք է կազմում սանսկրիտի մէջ . հմ. յայալ-յաղթումէ և անորոշ զերբայ է սլաւ լեզուի մէջ . հմ. pis-at-i-զրել: Իսկ կրն-ը սուզ զուգա- հեռն է կրծ սուզ արմատի, որից ունինք կրծել . հմ, նաև կրնուկ, կրծօնի և կրնօնի, որ նշանակում են կրծու- ածքի մնացորդը կամ կրծուելիք: Այս կարգի կազմու- թիւնները նոյնպէս բազմաթիւ են; Նկատենք միայն, որ բարբառների մէջ գ-ը և կ-ը անցած են դ-ի և

ձայնաւորի սղումով տուած են մի տեսակ ձայնարկութիւններ կամ՝ նոր՝ սակայն մերձիմաստ կամ նոյն իմաստ բառեր, այսպէս՝ դրվելը գարձած է դրվել և նշանակում մատները կարթ արած՝ ուժեղ քորել մարմինը, քերել մորթը. «զր'ոք կտրեց», այսինքն զիրը կտրեց, ատամները դրեացնել, որ է կրծտացենլ և այլն: Այս բառի վրայ կարելի է տեսնել թէ ինչպէս գործողութեան և իմաստի երանդները նոյնարմատ բառերով են նիշում և զուգորդւում. կրնը կիրճ արմատն է, և սա՝ կիրծ արմատը, իսկ սա՝ կիր արմատից է գալիս, որի զուգահեռն է կեր և ուրեմն նաև ենք: Ատամը կրծում է և կրծելը ծնում է ձայներ. և մենք ունինք նոյն արմատից կրնել, կրնօնիք, որ կրծելու գործողութիւնն ունի իբր կեռ, որին կառչած է, և ունինք կրնել, դրեացնել, ուր կրծելու ձայնն էնկատի առնուած:

Բազմաթիւ են այս լծորդ կաղմութիւնները: Լուծծենք մի քանիսն ևս, առնելով Հ. Աճառեանի Հայերէն գաւառական բառարանից և մեր լիշողութիւնից: Կեռ, որ նշանակում և կոր, ծուռ, բայց և՝ կարթածե գամ, որից բան են կախում. ակիշածե երկաթ, որով տերե են կարում կամ խոտ են քաղում. կեռ ծայրով մեաազէ կոճակ, կոր ծայրով կոպալ, արօր և կեռ ծայրով երկար շամփուր, որով հաց են հանում թոնրից: Այս բառը պիտի լուծել իբր *կի-ար-ար, ուր գտնում ենք մերընդարձակ շարքի պարզ արմատը-կի. բայց կեռ բառի իմաստին նայելով՝ նա կաղմուած է իբր երկրորդ անգամ բարդուած բառ. այսինքն՝ իբր *կեր-ար, որ դարձած է *կերը և եղած է կեռ՝ երկու բ-ի ձուլումով: Կեր լծորդն է ենք արմատի, որով կեր-ար, որ է՝ կեռ, պիտի նախապէս նշանակէր քերով. քեր անող, քերիչ. (ար՝ պարզ արմատն է առնել բամի, որ է մի հին *արան-ել և ունի իր պարզ արմատով կատարեալը աշ-

խարհաբարի մէջ, որ է՝ արի (ըրի) և կրկնաւոր արմատով՝ գրաբարի մէջ, որ է՝ ար-ար-ի): Հին մարդու քերիչը մի կեռ փայտ էր անշուշտ կամ մի կեռ եղջիւր: Կեռի նշանակում է երջիւրը կեռ կենդանի, օրինակ՝ կով, եղ: Գործողութեան գաղափարը զուգորդուած է գործիքի ձերն և քերողը դարձած է «կեռ ձեռ ունեցող»: Կեռ փայտ էր այն նախնական արօրը, որ քերում ու քերծում էր հողը, որով մենք տեսնում ենք գաղափար ների նոյն կցորդութիւնը: Մնացած նշանակութիւնները առարկաների ձերի փոխաբերութիւններ են: Կեռովիք-նշանակում է ատամ: Այս բառն ունեցած է նաև՝ այսպէս ասենք՝ արխազաձեռ մի կազմութիւն: Իբր ակեռիք, որից ծագում է նոյն բառի ակռիք ձեզ, ու նաև ակռայ ձեզ, որ նոյնպէս ատամ է նշանակում: 1) Այս բառը պէտք է լուծել իբր *կի-ար-ար-ի-ք, որ նախաւոր կազմութեամբ նշանակում է կի-անող, իսկ երկրորդաբար կազմութեամբ՝ որ է *կեր-ար-ի՝ նշանակում է կեր անող. բայց իբր բունն է կեր (հին*կի-ա՛ր), որ զուգահեռ է լծորդ լեց արմատին և ուրեմն կեռիք նշանակած է քերող, որ նոյն է թէ՝ կերող: Այսուղ զուգորդուած է ուտելու գործողութեան մի տեսակը՝ կրծելը, որ քերել է և ուր ատամների դերը հիմնական է և ակնյայտնի, ուստի քերողն է, որ համարուած է կերող, *կեր-ար-ի, որ է՝ կեռի, իսկ յոգնակին՝ կեռիք, կերողներ, քերողներ, որ հետագային եղակի իմաստ առած է, ինչպէս մեզ համար կամք, երկինք և

1) Արխազների լեզուի մէջ, որ կովկասեան ժողովուրդ են և ապրում են կովկասեան շղթայի դէպի Սև ծովն իջնող լանջերի վրայ, առ մի յօդ է. այսպէս՝ ա-պըր-պըր' լ-պղպեղ-ա-փարա-դրամ, փարայ. ա-բըրբ' ն-ծիսախոտ, թութուն ելն. տես, Ն. Մառ. Արխազական վերլուծական այբուբէն. 1926, էջ 39-40 (ոռոսերէն):

նման բառերը : Կեռալ նշանկում մարմինը քերուիլ, քոր գալ, և որ Հ. Աճառեան համարում է եռալ բառից ծագած, ուր սխալմամբ «առնուած է ներկայի կը ածանցը, իբր կ'եռալ» (Էջ 564): Իրօք այստեղ կեռ արմատն է, որ զուգահեռն է ներ արմատի և բառը կազմուած է չաս կանոնաւոր . կեռ՝ այստեղ լուծել պէտք է իրը *կե՛ր-ար. Նոյն արմատից է կեռ-ւըսուկ, որ այլ բան չէ քան մեր սովորական ներւըսում բառը: Կերին որ նշանակում է հացի կեղև և որի մօտ Հ. Աճառեան հարցնում է ներին?: Կերինը, որ ունինք և ներինջ ձեռվ, հացի կեղև չի նշանկում, այլ երբ բոքոն հացի խմորը թոյլ զանգուած լինելով՝ թոնրի պատից վայր է ընկնում և մոխրի մէջ կուտ է դառնում՝ նրա մի մասը մընում է թոնրի պատին կպած և երկար մնալով՝ խիստ կարմրում ու կարծրանում է: Հացարարը թաթակիշ կոչուած շամփուրով ներում է այդ մնացորդը և այ'դ է, որ կոչում է կերին, որ նոյն է թէ «քերինջ» և ներ արմատի լծորդ կեր արմատից կազմուած է և իր նշանակութեամբ անցեալ գերբայ է և ուրեմն նշանակում է քերած, թէ և իր կազմութեամբ զուգահեռ է ներկայ գերբայի հմ: Տերիչ, որ նշանակում է քերող: Թերիչ է կոչում թաթակիշը ուրիշ բարբառներում: 1) Դաղրեցնենք այս երկար շարքը և եզրափակենք, որովհետեւ մօտ է պրակիս վերջը:

Մենք տեսանք բազմաթիւ բառեր, որոնց ծագումն ու կազմութիւնը մեկնւում են մեր իսկ լեզուի ընձեռուած միջոցներով, առանց զիմելու օտար կշիռների: Օտարն եկաւ միմիայն հաստատելու հարազատ լեզուի ընձեռու-

1) Հացարարը երկու տեսակ երկար շամփուր է գործածում: մէկը կոչում է կեռ, որով ճանկում է թխուած հացը, միւսը՝ ներիչ, որով հացը զատում թոնրի պատից և կեռով դուրս հանում:

ծը և ոչ թէ մեկնելոււ Տեսանք, որ բառերի բազմա զանութիւնը իր հիմքի մէջ սակաւազան է. լծորդ ձայները և ուսպատկում են բառերի շարքը, տալով կ, զ և է ձայներով կազմութիւններ (կեր, գեր, ֆեր), որ սակայն մերձիմաստ են կամ նոյնիմաստ: Արդ ես ասում եմ. չի կարող լեզուական միենոյն միջավայրը և՛ իեր տալ և՛ գեր և՛ կեր. դրանք միենոյն արմատն են՝ բարբառական տարբեր արտաբերութեամբ: Կարող ենք ասել, որ եղած են առնուազն երեք լեզուական միջավայր, որ միենոյն գործողութիւնը նիշած են նոյն կազմութեան բառերով, որ սակայն լծորդ ձայներով են յօրինուած . Դ, Կ, Ք: Լուծելով հայոց հին ու նոր լեզուի բովանդակ բառամթերքը կարելի է հաշուել թէ ո՞ր ձայնով կազմուած արմաներն են, որ գերակշուռմ են և այդ հաշուից գալ այն եզրակացութեան, որ մեր լեզուի հիմնական խաւը կազմած է, օրինակ՝ Կ բարբառը, այսինքն այն բարբառը, որ իր արմատները կ-ով էր կազմում: Հետեւապէս կարող ենք ասել թէ զ և է ձայներով կազմուած նոյնիմաստ կամ մերձիմաստ բառերը փոխառութիւն են Դ և Ք բարբառներից Կ բարբառի մէջ: Ինչպէս մի անգամ ասած եմ արդէն (Յ Դ. 66) լծորդութիւնը ընկերային յարաբերութեանց ձայնական անդրադարձումն է: Նա վկան է հայ ցեղերի վազնական պայքարի և բանաձեւն է ստացուած արդիւնքի: Մի քանի հիմնական սկզբունքներ բաւական են լրւաւորելու այդ մթին անցնալը: 1. Բառերի և ձեռերի անվթար կերպարանքի սկզբունքը, որի համեմատ նախնական կազմութիւնները եղած են լիաճայն և մի բաղաձայն միշտ յենուած էր մի ձայնաւորի. հետեւապէս՝ ձայնաւորների բոլոր սղումներն ու չփացումները հետագայ երևոյթներ են: 2. Ձայների ձուլման սկզբունքը, որով պարզ ձայնաւորներն ու բաղաձայները ստեղծած են

նոր ձայներ։ 3) Շեշտի սկզբունքը, որ պատճառն է ձայնաւորի սղման ու կորուսաի, ինչպէս նաև պայմանը թէ՛ ձայնաւորների և թէ՛ բաղաձայների ձուլման։ 4) Լծորդ ձայների սկզբունքը, որ այլ բան չէ քան լեզուական տարրեր միջավայրերի հնչական արտայայտութիւն։

Միևնոյն լեզուի բարբառները յաճախ իրար յարաբերում են այնպէս, ինչպէս այդ բարբառներն ունեցող լեզուն և իր օտարացած քոյրերը։ Լեզուների կեանքի մէջ տմէն ինչ խստօրէն օրինական է և պատճառական։ Ծեզումն ու զարտուղութիւնը տեղ չու նին այնտեղ։ Ինչ որ համարում է չեղում՝ արդիւնք է ու րիշ ժամանակի և ու րիշ միջավայրի։ Լեզուի մէջ իրար քով յարատեռում են հազարամեայ կազմութիւններ, որ յիշեցնում են երկրի մակերեսը, ուր նոյն լոյսին նայում են և առաջնական շրջանի ժայռերը և՛ հնազարեան զիրտերը, որ իրք ժայռատեսակ՝ զուրս են եկած մակերես հրաբուխների ցնցումով և խախտուած ծալքերով, և նոր ժամանակների աւագն ու սեահողը։ Աւազի տեսակի ափից նայելով քարացած դիրտը մի զարտուղութիւն է և սեահողի տեսակէտից զատելով՝ խճաքարը մի չեղում։ Բայց իրօք ո՞չ մէկն է, ո՞չ միւսը։ Նրանք օրինապէս կազմուած են տարբեր ժամանակ և տարբեր պայմաններում, ուստի ներկայացնում են ատրբեր միացումներ։ Տու՛ր այն ջերմութիւնը, երբ մետաղ ու ժայռ մեծազանգուած լաւայ էին և չես տեսնի ո՞չ ժայռ, ո՞չ մետաղ։ Այդպէս է լեզուն։ Մեր լուծումներով կարելի է մտովին շրջել հոլովոյթը և հասնել լեզուական կազմութեանց ակունքներին և աստիճանաբար վար իջնելով՝ գծել հոլովոյթի ծիրը։

ՄԱՆՐՈՒՔ

Օգտագործելու համար պրակների ազատ էջերը,
Մանրուք ընդհանուր վերնագրի տակ և յատուկ թուա-
համարով պիտի լոյս տևանեն անջատ մեկնութիւններ,
իբր արդիւնք մեր տեսութեանց կիբարկութեան։

1. Ոսկերիչ. (Ե=իա)։

Ոսկերիչ նշանակում է ոսկէգործ։ Ի՞նչպէս պէտք է
արոնել այս բառը։ Յայտնի է -իչ վախճանը, որ -ող
վախճանի արժէք ունի. այսպէս՝ գրիչ՝ նշտանակում է
զրոլ, մատնիշ-մատնող ևայլն։ Եթէ յապաւենք այս
վախճանը՝ մենք կըստանանք ոսկեր. (իչ)։ Արդիւնքն
անիմաստ է։ Անկասկած բառը ածանցուած է ոսկի
բառից։ Բառի բուն իմաստն ու հին մտածման հետքը
գտնելու համար՝ պէտք է այդ բառի ե-ը վերածել իր
նախնական վիճակին, որ ըստ մեր տեսութեան պէտք
է լինէր իա, որով ոսկերիչ պիտի ծագէր մի հին ոս-
կիարիչ ձեւց։ Այս ձեւը մենք կարող ենք տրոնել իբր
ոսկի-ար-իչ։ Բա՞րդ է այս ձեւը թէ ածանցաւոր։ Ես
ասումեմ. բարդ է. նա կազմուած է ոսկի և արիչ բա-
ռերից։ Ոսկին յայտնի է, իսկ արիչ՝ առնել բայի սոս-
կան արմատից է ածանցուած, որի կրկնաւոր ձեւից-
ածանցուած բառն է ար-ար իչ։ Այսպեսով մենք ունե-
ցած ենք արիչ և արարիչ նոյնիմաստ ձեւերը։ Այս
ձեւերից առաջինը մեր լեզուն չի պահած իբր առան
ձին բառ, բայց նա շատ հին է, աւելի հին քան ոսկե-
ղարեան լեզուն, քանի որ Ս. Գիրքը պահած է կափա-
րիչ բառը, ուր արիչ նոյն իմաստն ունի և նշանակում
է անող. կափ-արիչ=կափ անող. հմ. կափումն, կափ-
ութումն, որ նշանակում են գոցել, հետեապէս կափ-
արիչ պիտի նշանակեր գոց անող, գոցող։ Այս բառը
մէկ անգամ գտնում ենք Ս. Գրքի մէջ. «Եւ առեալ

գմարմինն (Յիսուսի) Յովսեկի... եղ ի նոր գերեզմանի
դոր փորեաց ի վիմի և թաւալեցուցեալ կափարիչ դըան
գերեզմանին վէմ մի մեծ՝ գնաց > Մատթ. իէ. 59-60։
Մեծ վէմը գոցում էր ժայռափոր գերեզմանի դուռը, կա-
փում էր, կափ էր անում: «Կափկափել» նշանակում է
ատամ ատամի զարկել ցրտից կամ վախից. իսկապէս
իր բուն իմաստը պիտի լինէր բերանը բաց ու խուփա-
նել՝ նայելով կափարիչ բառի իմաստին: Այսպիսով մենք
գտանք մի նոր բառ -արիչ-, որ կարող ենք կիրարկել
այսօր, ասելով՝ օրինակ՝ «Նա է արիչն ու վարիչը այս
ինչ գործի»: Բառի կազմութեան համար հմ. լատ. ալ-
րիք -ոսկերիչ, որ ծագում է հին *ալրի-*fac-s* ձևից
(ալրու-ոսկի, ոսկէ իր, + *facio*-ես անում եմ, ես գոր-
ծում եմ): 1) Ինչպէս տեսնում էք՝ մեր և լատին բա-
ռը նոյն կազմութիւնն ունին և լեզուական նոյն մտած-
ման արդիւնք են: Բայց տեսնում ենք նաև, որ ե-ը նախ-
նական ձայն չէ, նա մի հին իա է, որ ձուլումով տու-
ած է ե: Եւ այս է մեր տեսութիւնը ե-ի մասին:

2. Զոջոխերի-դժոխի (դժ=ջ)

Վրացին դժոխերին ասում է զոջոխերի: Այս բառը
կրկնաւոր է անշուշտ և ծագում է *զոխ. զոխ-երի մի
ձևից. հմ հայերէն փոփոխել, որ է՝ *փոխ-փոխել. բառն
ունինք նաև այս ձևով. հմ. փոփոխել: Զոխ սոսկա-
կան արմատը ուրիշ բան չէ քան մեր դժոխ.ք բառի
եղակին, ուր սակայն դժ ձուլումով տուած է զ. դժոխ
-զոխ, որով տեսնում ենք թէ մեր տեսութիւնը ձոյլ
բաղաձայների մասին արժէք ունի նաև օտար լեզունե-
րի համար: Ինչպէս մեր «դժոխք» բառը՝ վրացու հա-
մարժէքը նոյնպէս յոգնակի է. եր վաեճանը նոյն ար-

1) M. Niedermann. Phonetique historique du Latin,
1931. էջ 59.

ԺԵՔՆ ունի վրաց լեզուի մէջ ինչ որ մեր ստան վախ-
ճանը. այսպէս՝ կախ-իր, նշանակում է կախերի բնա-
վայր. Վրացին հային ասում է՝ սոմեխ. (ի). իսկ սոմիս-
եր (ի) նշանակում է Հայաստան, որով՝ «Ճոջոխ-եթ» նոյն
է թէ «Ճոջոխ ք», սոսկական արմատով՝ *«Ճոխ. ք»,
իսկ իր գեռ չձուլուած զիմակում «զժոխ-ք»։ Հմ. նաև
հայ. զաւախ-ք և վրաց. զաւախ-եթ։ Այստեղից
պարզ է, որ վրացու զ ձայնը նոյնպէս ձոյլ է և նոյն
դժ ձայների ձուլման հետևանքն է, ինչպէս մեր զ-ն։
Մեր բառը «ջոխք» չի դարձած, որովհետեւ մենք ար-
տաբերում ենք «զըժոխք», այսինքն մի զգալի բովլ
դ-ն բաժնում ենք ձ-ից, մինչդեռ ձայների ձուլման
համար անհրաժեշտ պայման է, որ նրանց միջև ձայ-
նաւորը լիովին չքանայ և երկու բաղաձայները միասին
միենոյն վանկի մաս կաղմեն։ Մեր բառը ձուլման կէս
ձամբին է մնացել. նա սղած է ձայնաւորը, բայց պա-
հած է նրա սղմում ը-ը։ Հմ. նոր պարսկ. դո՛զախ և
զենդ. դուժահ. 1) որ նշանակում են դժոխք։

1) *Sku. H. Hübschmann. Armenische Grammatik.*
Էլ 142։

ԲԱՆԱՍԵՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ



ՏԵՍՈՒԹԻՒՆ Ի ԵՒ ՈՒ ԿԱԶՄՈՒԹԵԱՆՑ

Մեր Գ. Յուշագրի մէջ (Էջ 48) խոստացած էինք
առանձնապէս խօսել ի և ու կաղմութեանց մասին։ Այդ
խոստումն է, որ կատարում ենք հիմա։

Երեանի բարբառն ասում է կիտել, որ նշանակում
է կուտել, այսինքն հաւաքել, դիզել, խմբել բլրածեւ։
«Ունքերը կիտեց», այսինքն՝ յօնքերն իրար բերեց,
հաւաքեց, որ նշան է սպառնալից դժգոհութեան։
«Քարերը կիտեց», այսինքն բլրածեւ դիզեց իրար վը-
րայ։ «Կիտուկ»-նշանակում է շեղջածեւ հաւաքած։
Նոյն ձևի կազմութիւնն է նաև «բիթ», որ նշանակում
է բութ մատ։ «Կիպ», որի մի տարբերակն է «քիփ»
և նշանակում է մարմնին լաւ յարմարած, լա՛ւ կպած
(հագուստ), ոտքին լաւ եկած (կօշիկ), իրար լաւ բըռ-
նած երկու իր (օր, կողերը յպկած երկու տախտակ, որ
իրար «կիպ» բռնում են, իրար լաւ են կպչում)։ Հ.Դ.
Ալիշան գրում է՝

Սրտիկս որ ի խաչն էր կիպ՝ թունդ առաւ。
այսինքն՝ սիրտս, որ կպած էր խաչին, ցնցուեց, թունդ
եղաւ։ Այս բառի զուգահեռն է «կուպ», որ նշանակում
է կպած։ «Կուպ տալ» նշանակում է ճօթի երկու ծայ-
րերն իրար միացնել մի թեթև կարով, այսինքն՝ ի-
րար կպցնել։ 1) կիտ և կութ-, բիթ և բութ, կիպ և
կուպ նոյնիմաստ են։ Այս կարգի կազմութիւններ չառ
կան թէ՛ մեր և թէ օտար լեզուների մէջ։

Ինչպէս մեկնել այս երեսյթը։ Ինչու համար կիպ

1) Տես, Հ. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան։

և կուպ նոյնիմասո են. ինչու համար գրաբարն առում է կուտել. իսկ բարբառն ասում է կիտել; 1) Այս տարատեսակ ձեւը ի՞նչ կապ ունին իրար հետ:

Առաջին մտածութն այն է, որ կիպ ձեւը արտաքերական տարբերակն է կուպ ձեւի. այսինքն՝ հին կուպ բառի ու ձայնը ժամանակի բնթացքին փոխած է իր արտաքերութեան կերպը և հնչած է ի, որով կուպ դարձած է կիպ և կուտելը՝ կիտել: Եթէ մինչեւ իսկ այսպէս լինի՝ պէտք է մասր քննել ու տեսնել թէ ինչու համար և ինչ պայմաններում ուն դառնում է ի: Ուրիշներ կարող են փորձուիլ այս երևոյթի մէջ տեսնել միենոյն արմատի տարբեր ձեւը, ինչպէս ասում են՝ «Ճայնագարձները»: Այսպէս սանսկրիտ լեզուի մէջ միենոյն արմատը տարբեր ձեւը ունի՝ զօրաւոր, միջակ և թոյլ.-օրինակ՝ սնա՛ր (քուն, ան երկար). սնար (ան կարճ), սար (տարբեր ճայնաւոր). կամ թէ ա'ն (երթար) - է (սանսկրիտ լեզուի մէջ երկար ը՛ն ծագում է նախաւոր ա'ն խմբից), - ի. ևայլն: Բայց նոյն այս երևոյթը դեռ մեկնութիւն չունի: Լեզուագէտները վկայում են փաստը՝ առանց մեկնութեան:

Պիտի փորձենք մեկնել այս երևոյթը, հիմ առնելով մեր տեսութիւնը ձոյլ ճայնաւորների մասին (Տես Հանդէս Ամսօր. 1930, 1931, 1932 մեր յօդուածները «Հնչաբանական դիտողութիւններ», խորագրով):

Կուտել բայի բունն է կոյս, որ նշանակում է շեղջ, իրար վրայ զիզած իրեր, հմ. քարակոյտ ևայլն: Այս բառն է, որ կորցնելով իր շեշտը, դարձած է կուտ «կուտել» բայի մէջ: Այսպէս՝ կո՛յս (ուն շեշտուած). կուտել' (ուն անշեշտ): Այդպէս նաև՝ կո՛յս-կուտակա՛ն. լուսաւո՞ր և լո՞յս ևայլն: Ա.Մեսրոպի բերանում այս բառը հնչած է կօյտ և ոչ կայտ, ինչպէս այսօր մենք 1) Կուտեցին քարինս և արտրին բլուր. Ծն.լա. 46և այլն:

ենք հնչում։ Ոյ խմբի այս հին արտաբերութիւնը պահած է Քնսարի բարբառը, որ հնչում է լօ'ց և ոչ լլ'ց, ինչպէս մենք ենք արտաբերում։ Այս արտաբերութեան հետքն երկում է և Խարբերդի բարբառում, ուր ասում են «լոս»։ (Երեանն ասում է լիս։ հմ. «լիսը քու տեսնողին»։ «աչկս լիս» (աչքս լոյս) ևայլն։ Արցախիցին արտաբերում է կիւտել (Փր. Ա). փոխագարձաբար Քեսապցին զասական սիւն բառը արտաբերում է սոյն։ Տօյն՝ որով իւ. -ոյ. ու դառնում են լծորդ։ Նրանց պէտք է աւելացնենք նաև ցս և այ(հմ. սիւն բառի սովորական արտաբերութիւնը, որ է ցայտ (ց=յ) և լոյս բառի ընթացիկ արտաբերութիւնը, որ է լայս)։ Արտաբերական այս ատարբերացումները ինքնին շատ հետաքրքրական են և միանգամայն մեկնելի են մեր տեսութեանց լուսով։ բայց մենք հիմա պէտք է թողնենք այս նիւթը, մեկնելու համար ի և ու ձայների կապն ու առջութիւնը այնպիսի ձեերի մէջ, ինչպէս կիւտել և կուտել, որ ինչպէս տեսանք՝ նոյնիմաստ են։

Կուտել բայի ե-ը մեր տեսութեամբ մի հին իախմբի ձուլման հետեւանք է։ դա մի հին կուտի-ալ է, ուր ալ ածանց է, որ եկած է կուտի բունի վրայ։ Նոյն լուծու մով կիւտել՝ մի հին կիւտի-ալ է, ուր ի և ա ձուլումով տուած են ե։ Նետելով վերջին ածանցները, որ նոյն են, մենք կ'ըստանանք երկու բուն։ կուտի և կիւտի։ Համեմատելով իրար հետ կոյտ բառն ու կուտ կազմութիւնը, մենք տեսնում ենք, որ այս նոյնիմաստ բառերի մէջ լ և ւ (ց և Ո) լծորդ են. մէկն է կօյտ, միւսն է կօաւտ։ Գիտենք թէ ի ձայնը սղու մով տալիս է կամ' կամ ւ. այսպէս՝ որդի-որդուոյ (ի-ւ) և *տա-իցեմ-տայցեմ(ի-ւ), Այս հիման վրայ ես ասում եմ. կոյտ և կուտ ձեերի լ և ւ լծորդ ձայները ծագում են մի հին ի ձայն և իրենց ընդհանուր ծագման պատճառով է, որ

նրանք լծորդ են: Վերականգնելով այդ հին ձայնաւորը՝ մենք կըստանանք մի նախաւոր ձեւ, որ է *կոթիս, որ տարբեր շեշտառութեան հետեւանքով, կամ լաւ ես՝ ո ձայնի շեշտուած և անշեշտ վիճակի հետեւանքով, տուած է երկու ձեւ: շեշտուած՝ կո՛խտ-կո՛յտ (կօ՛յլ), անշեշտ՝ կոթիս-կուտ (կօաւէ): կուտի ձեւի շեշտն եղած է իր վերջին ի ձայնաւորի վրայ: Իրը բայական բուն՝ մենք տեսանք, որ նա եղած է կուտի: հետեւապէս երբ առնում ենք այս բունի մի մասը - կուտ, անշեշտ մասն է, որ առնում ենք: Նախաւոր բունի ի վախճանը, որ շեշտուած էր, իրը բազազրիչ մտնելով կուտել բայի մէջ՝ կորցրած է իր շեշտը և այդ կորուստի հետեւանքով է, որ գարձած է յովտ (յ) և ձուլուելով հետեւորդ ա-ի հետ, տուած է եւ այսպէս՝ կո՛յտի (ո շեշտուած). կուտի՝ (ո անշետ, ւ. ը փոխարինած լծորդ լ-ին, վերջին ի-ն շեշտուած), կուտի-ա'լ → կուտե'լ (վերջին ի-ն անշեշտ, ուստի յովտացած և յ գարձած և ձուլուած հետեւորդ շեշտուած ա-ի հետ: կուտի-ա'լ-կուտյա'լ-կուտե'լ):

Մենք հիմա կարող ենք զուգազրել երկու բուները.
կի՛տի=կո՛յտի

Այս ձեերին իրը զուգահեռ մենք կարող ենք դնել սլաւ լեզուի (նաև ոռւսերէնի) այ'ս ձեերը.

piti (խմել)=poiti (խմցնել):

Սլաւ երկրորդ ձեւի մէջ շեշտը ի ձայնին է զարկում, իսկ հայ ձեւի մէջ ո ձայնին: Իրեւ ձեեր նրանք լիով վին զուգահեռ են: Իրը շեշտառու բառեր՝ երկրորդ ձեերն իրարից տարբերում են շեշտով միայն: Հայ ձեերն իմաստի տարբերութիւն չեն տալիս, մինչդեռ սլաւ ձեերը որոշապէս տարբեր իմաստ ունին: մէկը ներգործական է, միւսն անցողական իմաստ ունի:

Մեր Հնչաբանական դիառողութեանց մէջ ես այն կարծիքն եմ յայտնած թէ օտար լեզուների օ ձայնը

կամ ո է կամ օ, այսինքն՝ կամ մի հին առաջ է, կամ
մի պարզ առւ Ենթագրում եմ, որ սլաւ րօլի բառի
մէջ օ-ն մի հին ո է. այսինքն՝ մի հին առաջ, որ ծա-
գում է մի նախաւոր իալ խմբից, ուր առ նախապէս
օ-ի հնչում առնելով՝ իալ խումքը դարձած է յօ, իսկ
այս նոր ամփոփումի է հնչիւնը սղած է առ ուղղութեամբ
(Կարող էր սղիլ և յ ուղղութեամբ) և յօ-ն դարձած է
առ, որ մեր ո-ն է:

Սլաւ օ-ին և մեր ո-ին իրենց վաղեմի արժէքը տա-
լով՝ մենք կրստանանք հետեւ հալ զուգահեռ պատկերը:

կո՛խաթի = կիա՞ւխաթի և զուգահեռ՝ կիտի
poili == piawili և » piti

թէ՛ սլաւ և թէ հայ վաղեմի ձեերի մէջ մենք տես-
նում ենք միենոյն առ ածանցը, որ piti և կիտի ձեե-
րը տարբերում է rī-aw-itî և կիա՞ւխաթի ձեերից:
Այդ առ ածանցն է, որ ներգործական piti ձեին տա-
լիս է անցողական իմաստ rī-aw-itî, այսինքն՝ poili
բառի մէջ: Այդ ածանցի իմաստափոխ արժէքը մեռած
է մեր լեզուական զիտակցութեան համար, քանի որ
մեզ համար «կիտել» և «կուտել» նոյն իմաստն ունին:
Սլաւ լեզուի մէջ սակայն, ինչպէս նաև ուսւ լեզուի
մէջ, որ նրա զաւակն է, այդ ածանցի արժէքը շատ
որոշ է և զգալի. այսպէս՝ zt-aī-զիտենալ. ս-zt-aw-a'itî
-ձանաչել. հմ. «ոչ գիտեմ զքենց» — այսինքն՝ քեզ չեմ
ճանաչում: st-aī-կենալ, կանգնել. st-a'w-itî .զնել,
po-st-a'w-it կանգնեցնել. ս-st-a'w- կանոնազրու-
թիւն. հմ. «մեր պապերի դիրքն ա», այսինքն զրած օրէն-
քն է, սահմանած կանոնն է, աւանդած կարգն է: շa-
st-a'w-a-ուղարգել սահմանների վրայ, ուր տուրք են
դանձում և անցագիր ստուգում: հմ. «կեցիր՝ տեսնեմ»,
«կաց՝ մի լսեմ»:

Սլաւ բառի արմատն է rī, իսկ tî-ն բայակերտ է.

հմ. du'm-a-ti -մտածել, s-lom-a'-ti -կոտրել, բեկտ-նել. vi-ti հիւսել, re'-li երգել ևայլն: նոյն ար-մատն է և քոյր լեզուների մէջ. սնսկ. ri'-ta'h-խը-միչք, յուն, ri'-no'-խմում ևմ: Մենք տեսնում ենք, որ քոյր լեզուների մէջ արմատի ի՞ն երկար է: Երկար պէտք է լինէր նաև սլաւ ձեի ի՞ն:

Մեր Հնչաբանական դիտողութեանց մէջ ցոյց ենք տուած, որ երկար ի՞-ա՝ տալիս են եա: Արդ՝ սլաւ րի՝ արմատը + առ պիտի տային րցա՛ռ և տուած են իրօք. այդ բառը նշանակում է «արբեցող»: այստեղ + առ ածանցը նոյն արժէքն ունի ինչ որ մեր լեզուում. հմ. խմ-ան, որ նշանակում է խմող, այսինքն արբեցող: Ինչպէս տեսնում էք ոչ միայն բառակաղմու-թեան, այլև իմաստի նոյնութիւն կայ այդ երկու բա-ռերի մէջ. հմ. կծ-ան, վաղ-ան ևայլն:

Բառակաղմուկան տեսակէտից համեմատելով ու գուգաղբելով մեր կուտի և սլաւ րօիլ ձեերը, մենք տեսանք թէ դրանք իրենց նախնական վիճակի մէջ նոյն կազմութիւնն ունեցած են և հետագային տար-բերացած են տարբեր շեշտառութեան հետևանքով. շեշտից յետոյ ի՞ն յովտացած է հայ ձեփ մէջ տալով ։ հմ. ko'yt և շեշտից առաջ հնչած է և kowti. բայց նախապէս իր կազմութիւնն եղած է koiti. ինչպէս սլաւ րօիլ բառը, որ այդ հին կերպարանքը պահած է իր շեշտը զարկելով առաջին i-ին: Տեսանք, որ մի ածանց-առ- տարբերած է պարզ րիլ և կիտի բուները՝ դարձնելով կօ'յտի և րօիլ: Հարեւանցի նայելով այս կազմութեանց՝ թւում է թէ i-ին գառնում է օ, կամ օ-ն դառնում է ։ Իրօք ոչ մէկն է և ոչ միւսը. պար-զապէս մի հին բառակաղմութեան առջև ենք, որի հետքն է մեացած և որի աւ ածանցը ամփոփուած է իբր. օ: Ուրեմն՝ ո'չ թէ i-օ կամ օ-ի ձայնազարձում,

այլ պարզապէս վաղեմի բառակազմութիւն:

Թէ ինչ արժէք ունէր աև ածանցը մեր լեզում
կամ թէ ի՞նչ ձայն է փոխարինում այս խմբի մէջ
առն, որ նախնական ձայն չէ, այլ մի խից է, որ յօ-
րանջը է գոցում — ուրիշ խնդիր է, որի մասին տեղը
չէ խօսելու: Մենք կարող ենք ասել, որ կիտել և կուտ-
ել հին ձեեր են. մէկը պարզ կազմութիւն է. կի-սի,
միւսն ածանցաւոր. կի-աւ. ի-սի: Ինչպէս թիւ և րօ-
տի միւնոյն թիւ՝ արմատից են ծագում, ուստի նոյն
գաղափարի երանգ են արտայայտում, այնպէս և մեր
կուտել ու կիտել ձեերը միւնոյն կի արմատից են ծա-
գում, բայց մենք այլևս նրանց տարբերութիւնը չենք
զգում: Անշուշտ հին հայի համար կիտ և կուտ նոյն
արժէքը չունեին (ինչպէս ուստի համար այսօր նոյն
արժէքը չունին թիւ և րօտի), բայց այդ արժէքի
զիտակցութիւնը մեր լեզուն մեզ չէ աւանդած: Այսօր
մեր երկու ձեերը «բարբառային» դարձած են: Երբ չես
կարող տարբերել «կիտել» և «կուտել» կազմութեանց
իմաստը՝ — երկու ձեերից մէկն աւելորդ է դառնում:
Այս տեսակէտից նոր հայն աղքատացած է նախագրա-
կան հայի համեմատութեամբ:

Այս լուծումի հիման վրայ մենք կարող ենք մեր
ոյ, ու կազմութիւնները վերականգնել իբր ի կազ-
մութիւններ և ի կազմութիւնները վերաստեղծել իբր
ու կազմութիւններ: Մենք կարող ենք առաջուց ասել,
որ բոլոր ի և ու կազմութիւն ունեցող բառերը դոյզ առ-
զոյզ պէտք է լինեն մերձիմաստ: Մէկ լեզուի մէջ գտ-
նուած ի կազմութեամբ բառը մենք կարող ենք որո-
նել ու դանել ուրիշ լեզուի ու կազմութեան բառերի
շարքում և հակառակը, Բայց այս որոնումի ընթաց-
քին պէտք չէ մոռնալ, որ այդ կազմութիւնները կա-
րող էին տարբեր շեշտառութիւն ունենալ և տարբեր

արդիւնքի հասցնել. ինչպէս մեր կոյտ (*kojtl*) և
ոռւսի րօն'՝, որ քոյտ չէ գարձած տարբեր շեշտի հե-
տեանքով։ Պէտք է նկատի ունենալ և լծորդ ձայների
պարագան. այսպէս՝ մեր ծիծ (ստինք) բառը, որ ի
կազմութիւն ունի, ու կազմութեամբ տալիս է ծուծ.
և ծծել, որ կարող էր ծաղկել թէ՛ ծիծ և թէ ծուծ
ձեւերից, քանի որ ի և ու սղումով տալիս են ը՝ պէտք
է նոյն գաղափարի տարբերակները լինելին կամ մերձաւ որ
իմաստ ունենային։ Այս կազմութեանց զուգահեռները
լծորդ ձայների հիման վրայ՝ մենք գտնում ենք Վրաց
լեզուի մէջ, ծուծ-ու, որ նշանակում է ծիծ, ստինք, և
ձիձաւ, որ նշանակում է ստնտու, ծծմայր, Մէկր
ծագում է մեր ծուծ բառի լծորդ համարժէքից, որ է
ծուծ, միւսը մեր ծիծ բառի համարժէքից, որ է ձիձաւ
Այս բառերը նոյնիմաստ են կամ մերժիմաստ, որով-
հետեւ ունեցած են նոյն նախաւոր կազմութիւնը և
տարբերացած են նոյն ննչական օրէնքների ազգեցու-
թեան տակ։ Այս հաշուով թիր, որ տեսանք թէ մեր
ծիծ բառի լծորդական համարժէքն է, ու կազմութեամբ
մեզ պիտի տար բուր, որ մի մատնաձև կամ ստինքի
պառուկի ձեռով պառուզ է։ Ոմանք այս բառը փոխառու-
թիւն են համարում. բայց մեր լուծումից պարզ է, որ
նա օրինական տարբերակն է թիր բառի, բայց ու
կազմութեամբ։ Տիե-իկ անել՝ նշանակում է նստիլ-իր
արմատից ծագած ու կազմութեամբ ձեւը պիտի տար
տուս, որ նշանակում է պոչ (հմ. զրաբ. տուն, որ է՝
տուս-ուն). նշանակում է նաև հագուստի քղանցք, բայց
յետելի կողմից, հմ. չուխի տուտը. նշանակում է ծայր
վերջ. հմ. աշխարհի տուտը, խօսքի տուտը։ *տուս-ուզ
նշանակում է յետոյք (մանուկների):

Այսպէս կարող ենք ասել, որ միտ բառը պիտի ու
կազմութեամբ մեզ տար մուտ, որ գտնում ենք «հու-

մուտ հմուտ բառի մէջ, ուր պարզ է թէ մուտ բաղադրիչը «մտնել» բառի հետ չէ, որ կապ ունի, այլ միտ բառի հետ, որովհետեւ նմուտ նշանակում է բանգէտ, խելացի, իր գործին վարժ. (իու հին արմատ է, որի իմաստն է՝ «չառ»):

Հնդկերոպական լեզուների համեմատական քերականութիւնը և և օ ձայները համարում է հիմնական. իր կառուցութիւնը մերը այդ տեսութիւնն ունին իրը հիմք: 1) Դա մի պատուար է, որից այն կողմ չեն անցնում: Հինդ-իրանեան լեզուները այդ ձայների դիմաց ունին ա: Այս փաստը վկայում են, այդ հիման վրայ լեզուական խմբեր են որոշում և թողնում են առանց մեկնութեան: 2) Հնչաբանութիւնը մանր քննութեամբ պարզում է ձայների կազմութեան վայրն ու կերպը բերանի խոռոչի մէջ: Նրա քննածն այսօրուան ձայներն են այսօրուան խօսողների բերանում: Նա չի զրադառում ձայների ծագման խնդրով: Բայց վկրջապէս ճիշտ է թէ ամէն մի լեզու ձայներ ունի, սակայն եթէ մարդը մի անխօս անտառնի խօսուն սերունդն է, պէտք է ընդունե, որ մարդկային լեզուի ձայները հոլովոյթի արդիւնք են: Բազմահազար տարիների ընթացքին մարդն իր ներքին աշխարհը ձայներով է արտայատած. բայց ի՞նչ ձայներով. այբուբէնի ողջ ձայնաշարով: Այդ ձայնաշարն Աստուած է պատրաստել ու զրել մարդու բերանը, թէ գա մարդու երկարաւե ճիշտ գերի և իր կենցաղական պայմանների փոփոխման արդիւնք է, որ փոխած են նաև նրա մարմին կազմը: Մենք աշխատած ենք գտնել այն նախնական ձայնաշխմբերը, որ ամփոփումով տուած են այսօրուան ձայն

1) A. Meillet. *Introduction à l'étude comparative des langues indo-européennes*, § 70:

2) A. Meillet. *Les dialectes indo-européens*, § 25:

ներից շատերը, ձոյլ բաղաձայները և ձոյլ ձայնաւորոները։ Այդ աշխատանքի մի նմուշը տեսանք կիսի, թիւ և կետի, ուժի կողմութեանց լուծման մէջ։ Մենք տեսանք թէ այսօրուան ու ն և օչն հետագայ կազմութիւններ են. տեսանք, որ այդ բառերը եղած են երբեմն, բայց ոչ այդ կերպարանքով. տեսանք, որ մի ժամանակ ոչ ու եղած է, ոչ օ Այս կարգի լուծումներով մենք կարող ենք կռահել, իսկ փաստերի յաճախումով նաև հաստատել՝ թէ ի՞նչ արժէք և իմաստ ունէին այս կամ այն ածանցն ու վախճանք, որ այսօր հպամը են մեզ համար։ Լեզուն իրը յօրինուածք իմացական երկոյթ է. պայծառ չէ եղած այդ իմացութիւնը, բայց եղած է իմացութիւն։ 1) Երբ այսօր լուսմ կամ կարգում ենք «զրադարան» — մենք դիտենք, որ դա նշակում է «զրգերի դարան»։ Իսկ երբ ասում ենք «դարան», հասկանում ենք պահելու կամ պահու ելու մի տեղ, մի թաքստոց. բայց երբ ասում ենք «գիրք» մենք այլևս չենք մտածում, որ դա նշանակում է «գրեր, տառեր»։ Միայն զրաքար իմացողը զիտէ, որ ք. ն. յոզնակի թուի նշանն է. ժողովուրդի համար մեռած է այդ գրի արժէքն ու գերը։ Եթէ զրաքար լեզուն չլինէր՝ «գիրք» բառը կարող էր համարուիլ արմատական բառ, ինչպէս «խլինք» բառն են համարում գուցէ։ Բայց դասական շրջանի հայը շատ լաւ զիտէր քայնի արժէքը և նա հրէշաւոր կը համարէր ու տպիտական մեր «կամքեր» յոզնակին։ Գրաքարն ինքը նոյն զիտակի մէջ էր իր հեռաւոր նախահայրերի հանգէպ, ինչպէս այսօր մեր ժողովուրդն է զրաքարի հանգէպ։ Իր հերթին նա չէր ըմբռնում վաղեմի բառակազմութեան ներքին իմաստը։ Ինչու հեռու գնանք. բարձրագոյն իմացութեան հասած հին յոյնի միտքը,

տեական շիռում ունենալով հնդկերոպական ազգերի հետ,
երբէք զիթի չընկաւ, որ իր և նրանց լեզուն խորթաշ
ցած քոյրեր են: 1) Զարմանալի չէ ուրեմն, որ այսօր
տամանագին աշխատանքով միայն կարող ենք մասամբ
վերահասու լինել անիմուստ նկատուած մասնիկների և
ածանցների ներքին իմաստին: Այսպէս՝ սնակ. *pi-tih*
նշանակում է խմիչք, խմելիք: Գիտենք թէ ծան մի
հին լիս է (քմային և ող), Գիտենք նաև. որ սանկ.
վիսարգան (տակը կէտ ունեցող ն ի նիշած ձայնը) մի
հին ս է, որով-լիս մի հին լիս վախճանի հնչափոխումն
է: Արդ՝ այս վիճակի մէջ՝ ձայների այս խումբը (են-
թաղրելով թէ ե. քմային էր)՝ մեր լեզուի մէջ պի-
տի կորցնէք իր ձայնաւորը և լուսումը ձուլումով
պիտի տար ծ, որով մեր ծուծ բառը կարող ենք վերա-
կանգնել իրը մի հին *ծօլՏ, *իսկ սա մի վաղեմի
ծուլիս: *Pi'* արմատից այս վախճանով կազմուած սանս-
կրիտ բառը (*պ' լ-լին-հին՝ րի-լիս*) ստացած է «խմիչք»,
«խմելիք» իմաստ: Այս հաշուով վաղեմի ծուլիս ձեզ,
որ ամփոփուած է իրը ծուծ՝ պիտի նշանակէր ծծելիք:
և իրօք պահած է այդ իմաստը, հմ. ուկորի ծուծը,
եղեգի ծուծը: Իր պարզ կազմութիւնը ի. ով նոյն
իմաստը պէտք է ունենար. և իրօք այդպէս է. հմ.
ծիծ, որ նշանակում է ստինք և այնքան մերձուատ
կապուած է ծծելու գաղափարին:

Մեր լու ծումներով մենք հասանք մի որոշ արդիւն-
քի. տեսանք տարակերպ ձեերի ներքին կազմութեան
վաղնջական նոյնութիւնը: Այս արդիւնքին հասնի չէ-
ինք կարող, եթէ չընդունէինք, որ ո և օ ծոյլ ձայ-
նաւորներ են: Լուծումների գրական արդիւնքը, որ
կարծում եմ թէ պարզ է աննախապաշար մտքերի հա-
մար, արդարացումն եղաւ մեր տեսութեանց ճշու-

թեան:

Ինչպէս մեր կեանքը, այնպէս և լեզուական ստեղծագործութիւնը մի յարաշարժ լինելութիւն է, որ ասել է՝ նորաստեղծութիւն։ Պէտք է ջանալ այդ սակեդագործութիւնը իր աշխատանքի վրայ բռնել։ Մարդկային մտքին վիճակուած չէ սակայն հոսունն ըմբռնել։ Նրա ձեռքն անցնում են անջատ խիճեր, որ ապրած են բաղմազարեան թաւալում։ Մենք կարող ենք սակայն արդիւնքը լուծելով՝ դէպի պատճառը վերանալ և հոսանուտ հոլովոյթի ծուփերն իրար կցել մտովին և հատուածաբար գծել նրա անցած փուլերի ճամբան։ Մենք չենք կարող տիեզերքն իր քառսին վերածել։ բայց կարող ենք մտովին վերսակցել քառսը։ Գիտութիւնը որոշ տեսակէտով վերականգնումի մի յարածուն փորձ է։ Ներկան դննելով՝ նա վերակազմում է անցեալն ու նրա հոլովոյթի ծիրը։ Տեսութիւնները գործիքներ են այդ աշխատանքի համար։ Տեսութեան փոփոխութիւնն ազգում է աշխատանքի եղանակի և ստացած արդիւնքի վրայ, աշխատանքի նոր եղանակը տալիս է նոր իմացումներ։ իսկ նոր իմացումների օգնութեամբ յօրինւում են նոր կառուցումներ։ Մենք աշխատում ենք մասնական աշխատանքով մեր տեսութեանց բացատրական արժէքը ցուցադրել։ Աւելի հըմուտ ձեռքերի մէջ այդ արժէքը շատ աւելի վճռական և փայլուն արդիւնքներ կը տայ։

ՄԱՆՐՈՒՔ

3. Հաց — մաց

Մենք ունինք այնպիսի ասութիւններ՝ ինչպէս հաց-մաց, բան-ման, որ ընդհանրապէս կազմուած են միւնոյն բառի կրկնուած ձեից, բայց ուր երկրորդը իր սկզբի բաղաձայնը փոխում է մ.-ի, իսկ եթէ կըրկ-նուածը ձայնաւորով է սկսում, այն ժամանակ սկզբ-րից առնում է մ օր. ատամ-մատամ, երես. մերես և այլն։ Այսպէս՝ «հաց-մացը հաւաքեցին ու նստեցին, որ խօսեն»։ «Երես-մերեսը ջարդեցին՝ արինլուայ արին» և այլն։

Ի՞նչ են այս կազմութիւնները. ի՞նչ է նրանց բնոյթն ու ծագումը։ Նրանց այսօրուան իմաստն է. «Նիշած առարկան և այլն»։ Հաց-մացը հաւաքի՛ր», նշանակում է. «հացը և այլ եղածները հաւաքիր»։ «Ի՞նչ իմացար. նոր բան-ման կ՞այ»։ այսինքն՝ «նոր բաններ և նրանց նման կամ յարակից բաններ կ՞ան»։ Այսպիսով հաւաքական իրերից մէկը նիշում է իր բուն անունով, իսկ մնացած յարակից կամ մերձաւոր իրերը ամփոփուած են նոյն բառի մ ունեցող ձեի տակ։ Հաց-մաց ի՞նչ է այս մ.-ը և ի՞նչ իմաստ ունի. և ինչո՞ւ մ և ոչ ուրիշ մի ձայն. ինչու հաց-մաց և ոչ հաց-նաց կամ զաց։ Այս կարգի մի քանի կազմու-թիւններ մ.-ի փոխարէն ունին չ. այսպէս՝ աման-չա-ման. հանաք-չանաք, (հանաք=կատակ) ուր հ.ն ցնդած է, ինչպէս չնշաւած բառի մէջ, որ է՝ չինչ. հաւատ, չիմա կարող ենք հարցնել. ինչո՞ւ մ.ն և չ, և ոչ ուրիշ ձայն։

Ինձ թւում է, որ չ-ով կազմուած ձեերը մեզ կա-

բող են տալ մ.ով կազմութեանց բացատրութեան բառ նարին։ Յայտնի է, թէ ինչ է նշանակում «աման», որ շատ հին բառ է և հանգիպում է մեր սեպագիր արձանագրութեանց մէջ 1)։ «Չաման ձեզ ևս արոհում եմ իրը շաման, այսինքն «ոչ աման»։ Հմ շատուած, չտես և այլն։ Անման չամանը հաւաքել»՝ նըշանակում է հաւաքել ամանները և այն ամէնը ինչ որ աման չէ, շաման է։ Ժողովուրդն ասում է, «հանաքը չանաք դառաւ»։ այսինքն՝ ինչ որ կատակ էր՝ դարձաւ ոչ կատակ, — գյուղութիւն, անհամութիւն, կագ ու կոփւ։

Մարդկային միտքը շատ հին դարերից փորձած է զասակարգել իրերն ու երեսյթները։ Գիտական մտածութեան առաջին փորձն է զա։ Այդ զասակարգութեան փորձերն ունին իրենց պատմութիւնը, որ թաղուած է լեզուների կառոյցի հիմքում։ Նրանց հետքը մնացած է քերականութեան մէջ, յատկապէս ձեւաբանութեան։ Հին դասակարգութներից մէկն է իրերի և երեսյթների բաշխումն ըստ սեռի, որի հետքը մնացած է քերականական սեռի մէջ, ոուս և գերման լեզուն բոլոր իրերն ու երեսյթները համարում է երեք սեռի։ արական, իգական և չեզոք, գերմանացու համար Weib, որ կին է նշանակում, չեզոք սեռի բառ է և ոչ իգական, որովհետեւ կինը նկատուած է իր, աղիսք։ Ֆրանսերէնն ու արաք լեզուն երկու սեռ ունին 2), արական և իգական։ Նրանց լեզուական մտածութիւնը աշխարհի մէջ էդ ու որձ է տեսնում։ Ձևաբանութիւնը ցուցազրում է լեզուական

1) Տես. Հ.Յ. Տաշեան. Ուսումն դասական հայերէն լեզուի։ էջ 355։

2) Արաքն ունի և մի երրորդ քերականական հանուր սեռ, որ տարբեր է քան չեզոքը։

այս աշխարհայեցքը . ոռուսը միւնոյն ածականը երեք
ձեզը է կիրարկում՝ նայած առարկայի սեռին , միւ-
նոյն բայը երեք ձեւ ունի՝ նայելով թէ զործողն ի՞նչ
սերի է . արարի յոդնակին , գերանունն ու բայերը
փոխւում են առարկաների սեռին նայելով : Ուրիշ դա-
սակարգութիւն ունի պարսիկը , որ սեռի տարբերու-
թիւն չունի մեզ նման . նրա մտածման հիմքն է շուն-
չը . իրերն ու երեսյթները չնչաւոր են կամ անշունչ .
ըստ այնմ կազմում է նա իր յոդնակի թիւը . չնչաւո-
րը - ան ածանցով , անշունչը՝ նա ածանցով . այսպէս
մարդ . ան — մարդիկ և քար . նա — գործեր : Մարդ-
կային մտածութեան այս հին փուլերը , որ սակայն
ապրում են լեզուի կառոյցի մէջ , բռնանում են մին-
չե այսօր մարդու մտածումի վրայ : Հին մարդու մը-
տայնութիւնն ստիպում է ֆրանսացուն «զրիչը» հա-
մարել իգական , իսկ «մատիաը» . արական և ըստ այնմ
կազմել նրանց յոդնակին և յարմարել նրանց ածակա-
նը . գերմանացուն ստիպում է աւել - ը համարել անսեռ
կամ չեղոք և ըստ այնմ հոլովել :

Հին մարդկութիւնը բռնած պահում է նոր մար-
դու իմացութիւնը լեզուի աքցանով , որ վաղեմի ժա-
ռանգութիւն է . նա իր նախնական մտայնութիւնը
պարտազրում է մեզ : Երբեմն մարդ ամէն ինչի վե-
րագրում էր շունչ ու կենդանութիւն . ոգեպաշտիկ
շրջանն է գա (apitismos) . այսօր մենք այդ վաղեմի
մտայնութեան գերին ենք լեզուապէս և այդ գերու-
թիւնից ազատում չունինք : Հին մտածումը շունչ ու
կենդանութիւն էր վերագրում բովանդակ տիեզերքին .
այդ մատայնութիւնը մտած է լեզուի կառոյցի մէջ և
իշխում է մինչեւ այսօր . «ջուրը վաղում է , հոսում
է» , «փուշը ծակում է» և այլն ասում ենք մենք ,
իբր թէ ջուր ու փուչ կամեցող արարածներ լինէին ,

որ կարող են վազել ու ծակել։ Այդպէս ենք ասում և ուրիշ կերպ ասել չենք կարող, այդպէս է պահանջում լեզուի կառոյցը, որ կազմուած է շատ հին ժամանակ։ Մեր իմացութիւնն, իբր իմացութիւն, վազուց թուած է հին մտայնութեան խանձարուրը, բայց հնար չունի խորտակելու այդ մտայնութեան մշակած լեզուական ձեռքը։ մենք իրապաշտ ենք, իսկ լեզուն մտածում է իբր ոգեպաշտ։ Այդ իսկ պատճառով լեզուական ձեռքը մեռած են մեզ համար և չունին ներքին իմաստ ու պատկեր և երբ ասում ենք «փուշը նրա ձեռը ծակեց», բնաւ չենք մտածում թէ փուշը մի կամեցսղ արարած է, որ կարող է ծակել կամ ըշծակել, ինչպէս կարծում էր հին ոգեպաշտ մարդը։

Արդ՝ այսպիսի մի հին մտայնութեան բրածոյ արտայայտութիւնն է աման չաման ասութիւնը, որ մի հին փորձ է գասակարգութեան։ Իրերի և երեսյթների համագումարը այդ մտայնութեամբ արոնում է երկու անհամաշափ մասերի։ Փոքրագոյնը, որի վրայ խօսողը դարձնում է իր ուշագրութիւնը, որոշ է, մեծագոյնը՝ մնացած անորոշ և անորակ համագումարն է։ Ամանը աման է և որոշ է թէ ինչ է, իսկ չամանը այն ամէնն է, ինչ որ աման չէ, այսինքն՝ բացի ամանից՝ մնացած բոլոր իրերն ու երեսյթները։ Բայց այդ կարգի արտայայտութեանց իմաստը այսքան բացարձակ հակագրութիւն չունի այսօր։ Ինչպէս մեր միտքն իրապաշտ զարձած է հակառակ լեզուի ողեպաշտութեան, այնպէս և այս կարգի արտայայտութիւնները սահմանափակուած են, հակառակ իրենց բացարձակ բնոյթին։ «Երես մերեսը» ջարդեցին ասելով՝ խօսողը նիշում է երեսը, բայց մերես բառի տակ չի հասկանում մնացած տիեզերքը բացի երեսից, հապա այն բանը, որ ենթակայ է ջարդուելու, և ո՛չ

այն ամէնը, որ ենթակայ է ջարդուելու, օրինակ ոտն ու գլուխը կամ մէջքը, այլ այն ամէնը, որ մերձ է երեսին՝ քիթն ու պառևզը, այսոն ու աչքատակը։ Կարծում եմ գործողութեանց ժխտական ձեզ նպաստած է այս սահմանափակումին։ Ասել-շասել իրարից տարբերում են մի եւ նոյն և մի որոշ գործողութեան ժխտումով ու հաստատումով։ «Հասելը» միմիայն «ոչ ասել» է նշանակում և ոչ թէ նաև ոչ գրել, ոչ նստիլ և այլն։ Մինչդեռ «չամանը» հաւաքել, նշանակում է «ամանի» հետ հաւաքել նաև նրա նրման բաները կամ նրան յարակից բաները։ «Հանաքը» նշանակում է շատ անախորժ բաներ, որ հանաք չեն, բայց որոնք վերաբերմունք են և ոչ ուրիշ կարգի գործողութիւն։

«Հաք. մաց» և «հանաք-չանաք» նոյն կարգի կազմութիւն են և մ. ը նոյնարժէք է չ ին, իսկ չանականք որ ժխտական իմաստ ունի, հետեւապէս ժըխտական է և մ. ը կարծում եմ զա մեր ժխտական մի՛ բառն է, որ այսօր մտկրայ է, բայց հին ժամանակ նշանակած է նաև «ոչ»։ Դասական շրջանին նա մի «ոչ» էր բայերի համար, հմ. մի՛ ասեր, այդպէս է նաև այսօր Բայց մի ժամանակ նա «ոչ» եղած է նաև ուրիշ կապակցութեամբ։ Այս հիմքով է, որ ես մեկնած եմ «մերժել» բայց իբր «մի՛ արժեել» և դամած եմ նրա վաղեմի նշանակութիւնը, որ եղած է «արժէք չտալ, յարդ չտալ, բանի տեղ չդնել» յարգ և արժ նոյն բառերն են և նոյն իմաստն ունին։ զ և ծ լծորդ ձայների համար հմ. տուգանք և տուժելու թոյր լեզուները նոյն ձայնով ունին իրենց ժխտականները։ պարսկ. մա, յուն. մի՛. սանսկ. տմ՛ ։ Հայ. մի՛։

Դասակարգող այս հին կազմութեանց մէջ ման է

որ վճռական նշանակութիւն ունի. այդ ձայնին է կառչած այս կազմութեանց իմաստը, ուստի ձայնական խճողումի ժամանակ նա՛ է, որ մնում է և բառի բուն բաղաձայնն է, որ չքանում է: Այդ կազմութիւնները միշտ զոյգ են. բուն բառն է, որ անջատ կիրարկում ունի, ժխտական ձևն իբր զա՛տ բառ և զա՛տ իմաստով՝ գոյութիւն չունի, իր իմաստը նա ստանում է իր հարեանից և այդ իսկ պատճառով շրփոթ չի ստեղծւում, թէե բառն ստանում է անսովոր կերպարանք. հացն է, որ կիրարկում է իբր զատ բառ. «մաց» բառ չկայ. «հաց-մաց» բացարութեան մէջ է, որ «մացը» ոչ-հաց է նշանակում. այդ հարեանից հեռու նա ոչ մէկ իմաստ ունի, որ կապ ունենար հացի հետ: Բայց ինչո՞ւ «մաց» և ոչ «մհաց», քանի որ մ-ը ժխտական է և ժխտուածը «հացն» է: Այս կազմութիւնը նմանական է. ատամ-մատամ, ասեղմասեղ և նման կազմութիւնները, ուր մ-ը գալիս է ձայնաւորից առաջ, պայծառօրէն ցուցազրում են մ-ի գերն ու արժէքը. միւս կողմից «մհաց», մկրակ, մը-փուշ և նման արտաքերական դժուարութիւնները խօսողին վարում են դէպի դիւրին ուղիներ, մանաւանդ որ զոյգ կազմութեանց չնորհիւ՝ իմաստի անորոշութիւն չի ստեղծւում, ուստի բառը հետեւում է «ասեղ. մասեղ» կազմութեանց օրինակին, մ-ը փոխարիրինում է բառի բուն բաղաձայնին, և «մհացն» ու «մըկ-բակը» գառնում են «մաց» ու «մբակ»:

Բաղաձայների այս փոխարինումը կարող էր պատահել մի ժխտական ձայնաւորի սղումից յետոյ. «հաց-միհաց» հին ձեզ արտաքերական դժուարութիւն չունէր և ոչ իմաստի շփոթ: Եթէ այդ բացարութիւնը ձայնաւորի սղումով ու չքացումով դարձաւ «հաց-մհաց» այն ժամանակ է, որ արտաքերական

գժուարութիւն ծագած է և հան ընկած է. դրանից
իմաստի շվոթութիւն առաջանալ չէր կարող, քանի որ
«մաց» ձեւն իր իմաստական արժէքն ստանում էր
«հաց», բառին կից և նրա հետ միասին կերարկուե-
լով:

Հասկանալի է հիմա թէ ինչու՝ այս կազմութիւն-
ները մազ են և չովկ: Այդ ձայներն են, որ իբր
մնացորդ մի և ոչ ժխտականների՝ զատորոչում են
իրերն ու երկոյթները, բաժնելով երկու դասի—մատ-
նանիշ իրն ու գաղափարը և նրանց յարակիցները:

Լեզուասէր բարեկամներիս և ընկերներիս
«Յուշագրիս» Ամառ գրութիւններ կարդացող
շատ ժիշ մարդ կայ մեզանում։ հազիս մի բանի
տասնեակ հետեւապէս ոչ մէկ յոյս կայ սպազրութեան
ծախֆն իսկ գոցելու։ Զերի համար զին Աշանակած
ևս մէկ Ֆրանք։ Ասում եմ «Ճերի համար», որով-
հետեւ երե ժիշ է կարդացողը, շատ աւելի ժիշ է
զնորդը։ Ընկերներս ու բարեկամներս զիտեն իմ
Այսքան կացութիւնը, զիտեն նաև, որ այս տեսակ
ծախֆների տակ մտնելու եւ հնար յունեմ։ Երե նրանի
ինձ նման այն կարծիքն չինեն, թէ Յուշագրերս
կարող են պիտանի չինել մեր լեզուի մնանութեան
համար՝ կը խնդրեմ Այսքան ինձ օգնեն այս
Ճեռնարկութեան մէջ։ Յուշագրերս սպազրելու եմ
պրակ առ պրակ։ Ամէն պրակի ծախֆն է մօս 200
Ֆր. 500 օրինակի համար։ Սացած զումարների
հաշիսը կը տամ պրակների կողի վրայ։ Աւելորդ է
ասել թէ աշխատանին համար ոչ մէկ դրամ կը
համուի այդ զումարից։ Հրաւարակուած պրակների
ամբողջ պահեստն ու մնացորդ զումարը պիտի մնայ
Համազգային Ընկերութեան։

Միրով Ն. Աղքազեան,

ԲԱՆԱՍՔԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԻԱԽ ԵՒ ԻԱԽԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆՑ

Գիրը հնարուած է ձայներ նիշելու համար, բայց
անցնում է ժամանակ և ձայնը խուսափում է զրից,
որովհետեւ դիրը մեռած նշան է, իսկ ձայնը կենդա-
նի հնչում: Գիրը կարող է ձեւափոխուիլ, իսկ հնչումը
էափոխուիլ: Երկաթագիր յ-ն իր ձեռվ տարբեր է նո-
րագիր յ-ից, բայց իր էութեամբ նոյն է, մինչդեռ
էտպէս նոյն չէ մնացած այդ նիշած ձայնը յիմար կամ
լուծամ բառերի մէջ, ուր նա այսօր հնչում է ն:

Ա. Մեսրոպը չէր հնչում հորժամ, այլ ցորժամ: Մի-
այդպիսի մի նշան է և մեր երկագիր իւ. ն, որ
մի ի է և մի ւ: Այսօր նրա հնչումը տարատեսակ է՝
հայելով տեղին: Փակ վանկի մէջ նա ցը է: հմ. իւր,
քիւր, հիւր: բաց վանկի մէջ և երկու ձայնաւորների
միջև նա և է: հմ. հիւանդ, պատիւ: Ա. Մեսրոպ սակայն
ամէն տեղ այդ գրութիւնն արտաքերած է և: Նրա
նիշած ձայնը բարբառների մէջ բազմազան հոլովոյթի
ենթարկուած է: Երկանցու բերանում նա դարձած է
ի, հմ. ձին, որ է՝ ձիւն: Քեսարցու բարբառի մէջ
նա հնչում է օց: հմ. ձոյն (*dzoyn*), որ է՝ ձիւն: Արցախիցու հնչումով նա ֆրանսական Ա է: հմ. ՄՐԱՊ,
որ է՝ հին «իւրեան»: Նպատակս է պարզել այս տա-
րատեսակ արտաքերութեանց ծագումն ու պատճառը:

Նախ քննենք թէ մեր այսօրուան և տրտաքե-
րութիւնը հին է թէ նոր: Ա. Մէյէ գրում է: «Աւան-

գարար աւ, եւ, իւ արտաքերւում են չրթնատամնային
վ.ով իբր առ, ևն, և. անկասկած սա հին արտաքե-
րութիւնը չէ, որովհետեւ երբ ւ.ը գալիս է անշեշտ
իւղց յետոյ և երբ ի.ն ընկնում է՝ գրում են ու, օ-
րինակ՝ թիւ և սեռակ. բուոյ»: 1) Այսպէս ուրեմն մե-
ծանուն գիտունի կարծիքով մեր իւ գրութեան և հըն-
չումը հին չէ:

Մի ուրիշ տեղ Մէյէն մեր ուշադրութիւնը գարձ-
նում է այն վարանքի վրայ, որ նկատում է իւ գը-
րութեան մէջ, որ տառադրձած են նաև իբր եւ:
Այսպէս՝ հները զրած են ազբիւր և ազբեւր. իսկ մի-
ջին գարում մեր հին արդեւք ձեզ զրադրձած են
արդիօք: «Շրթնային ձայնից ծագած ւ.ի հանդէպ
ե.ը մնում է», ասում է Մէյէ. այսպէս կատ. septem
և հայ. եւրն: Նոյն տեղից իմանում ենք, որ հին գոր-
ծիկան հորովի ւ.ը. օրինակ՝ կամու, բանի ծագում
է մի հին և ձայնից. այսպէս՝ սանսկ. լեզուի գործիա-
կան վախճանը - bhih, զենդ. - bis' (թիշ) և այլն :
(Esquisse, էջ 24, § 19):

Նախ տեսնենք թէ իւ և եւ գրչութեան վարան-
քը ո'րքան հին է: Վրացու Աւետարանի մէջ կարդում
ենք.... «Քեւրիսա տալանտիսա», որ մեր Աւետարա-
նի «պարտական մի բիւր քանքքարոյ» խօսքի թարգ-
մանութեան վերջին մասն է (Մատթ. Ժ. 24), որով
վրացու բեւր-ը մեր բիւր.ն է: Մերոնք նոյնպէս գը-
րած են և' բեւր և' բիւր. ու քանի որ Վրացիները
իրենց Աւետարանը հայերէնից են թարգմանել և շատ
հին ժամանակ՝ ինքնին պարզ է, որ իւ-ի գրութեան
այս վարանքը շատ հին է: Վրացին փոխ առած և

1) A. Meillet. Altarmenische Elementarbuch.
էջ 15, § 20.

տառագարձած է նաև մեր «նիւթ» բառը գրելով Եիւ
վր-ի, որով տեսնում ենք թէ նա իւ գրութիւնը հայի
բերանից լսած է և նաև փակ վանկի մէջ, մինչդեռ
մենք այդ բառն արտաբերում ենք ոչպէս և ոչ ուն-
իլ: Եթէ նկատի առնենք որ Վրացին ունեցած է մեր
և ձայնը, որ արտայայտած է յատուկ գրով 1), այն
ժամակ երեւոյթը աւելի կը պարզուի: Իւ ձայների եւ
արտաբերութիւնը պէտք է բարբառական համարել,
ինչպէս մեր «ձիւն» բառի «ձին» կամ «ձոյն» արտա-
բերութիւնը: Բարբառական պէտք է համարել և և
ձայնի վ արտաբերութիւնը, որ լսած է Վրացին, ո-
րովհետեւ եթէ նա և (այսինքն՝ ա) լսած լինէր, իր
ունեցած և գրով կը տառագարձէր: Ուրիշ տեղ ասած
եմ, թէ Ս. Մեսրոպ իւ գրութիւնը ևա է արտաբե-
րած է ոչ ա: զրա ամենապարզ ապացոցն այն է, որ
այդ երկու տարբեր ձայները նիշելու համար նա հնա-
րած է երկու տարբեր զրեր: և և հետեւապէս նա
շատ լաւ տարբերած է այդ երկու ձայները և եթէ
մի տեղ գրած է և, իսկ մի այլ տեղ վ, նշանակում է
նա և է լսած և ոչ վ:

Միւս կողմից Վրացու փոխառութիւնը ցոյց է
տալիս, որ շատ հին ժամանակ և ձայնը ամէն տեղ
նոյն չէր հայի բերանում: Եթէ Ս. Մեսրոպ արտա-
բերում էր ուաթի (նիւթ), նրա ժամանակ մի ուրիշ
բարբառ արտաբերում էր ուաթի (նիւթ) և այդ ար-
տաբերութիւնն է, որ տառագարձած է Վրացին: Նոյն
հիմքով կարող ենք ասել, որ եթէ մէկը հին ժամա-
նակ գրած է առիւծ և միւսը գրած է առեւծ՝ զրա
պատճառն այն է, որ մէկն իր բարբառում առնած է
լսած, իսկ միւսն՝ առընծ, հետեւապէս այս երեւոյթը

1) N. Marr. *La langue georgienne*, էջ 8:

հնչական է և ոչ գրչական։ Այսօր գաղութների մէջ մենք աշակերտին հրահանգում ենք գրել «հիմար», բայց կարգալ «հիմար», Երևանցին, որ մեզ նման արտաքերում է «հիմար», հրահանգում է գրել «հիմար»։ Երևանցին իբր հիմք ունի այսօրուան արտաքերութիւնը, իսկ մենք աւանդական գրութիւնը։ Բայց Ս. Մեսրոպի ժամանակ աւանդութեան չկար։ Նա ինքն եղաւ աւանդութեան հայրը և եթէ մերոնք հնուց գրած են բեւր և բիւր՝ նշանակում է կեանքի մէջ գոյութիւն ունէր այդ երկու գրութեանց արտաքերական ատարքերութիւնը։ Միենոյն բառն էր, որ առաջարձում էին գրիները իրենց արտաքերութեան համեմատ։ Այսպիսով՝ թէ բիւր և թէ բեւր գրութիւնը, ինչպէս նաև ւ գրի վ արտաքերութիւնը շատ հին են և բարբառական արտաքերութեան հետեւանք պէտք է համարել, ինչպէս բարբառական պէտք է նկատել Նարեկացու խաղբ-ը և հաղբ-ը։ 1) Այդ էր կացութիւնը գրերի գիւտի ժամանակները։

Բեւր բառը մենք արտաքերում ենք բեւր և ուրիշ կերպ արտաքերել չենք կարող։ այս արտաքերութեան մէջ ե. ը երկար է։ Իսկ ի՞նչպէս էին արտաքերում բիւր գրութիւնը Ս. Մեսրոպի ժամանակ։ Սնաշուշան ինչպէս գրուած է, այսինքն՝ բիւր։ Այս երկու բառերի իմաստը նոյն է թէ՛ հայերէնի և թէ գրացերէնի մէջ։ Ի՞նչն է նրանց ատարատեսակ կերպարանքի պատճառը։ ինչո՞ւ մէկը ի և միւսը և ունի Բեւր բառի

1) Խղեսցին խաղբքն (լր. 163). Խայտառակեսցին հաղբիցն գրութիւնք (լ. 463). Նարեկ աղօթից. Վենտիկ. 1859։ Նարեկայ վանքը, ուր միծացաւ որբ Նարեկացին, Վանի շրջանումն է, Ոստանի մօտ։ Հմ. գասական հաց-ը և Վանեցու խաց-ը։

և-ը լուծելով իբր մի վաղեմի խա խումբ՝ մենք կը-
ստանանք այդ բառի նախաւոր կերպարանքը, «ր պի-
տի լինէր *բիաւը։ Այս նախաւոր ձեւի շեշտն եղած է
ա-ի վրայ, որի հետեւանքով նախընթաց ի-ն յովտա-
ցած է և տուած է ց, որ և ձուլուած է հետեւորդ ա-ի
հետ և տուած է ե, ու բառը դարձած է բեւը։ այս-
պէս՝ բիա՛ւր - բցա՛ւր - բ՛եւր 1)։ Բայց մեր վերականգ-
նած նախաւոր *բիաւը ձեւ կարող էր շեշտել և իբ ի
ձայնաւորը, որ և շեշտած է իրօք, սակայն տարբեր
լեզուական միջավայրում։ Այդ շեշտառութեան հետե-
ւանքով հետեւորդ ա-ը յովտացած է և ձուլուած նոյ-
ներանգ լին և երկարած նրա տեղութիւնը, որով
բառը դարձած է բիւր (biWR)։ այսպէս՝ բի՛աւր → բի՛ցւր
→ բի՛ւր։

Ահաւասիկ տարբեր հոլովոյթի ծիրերը տարբեր
շեշտառութեան հետեւանքով։ Նախաւոր ձեւ՝

Բիաւը

ի շեշտուած՝	բի՛աւր • բիա՛ւր	ա շեշտուած։
ա յովտացած՝	բի՛ցւր • բցա՛ւր	ի յովտացած։
ց ձուլուած ի-ն՝	բի՛ւր • բ՛եւր	ց ձուլուած ա-ին։

Այստեղից պարզ է, որ բիւր և բեւը ծագողապէս
միենոյն բառն են։ Նրանք տարբերացած են տարբեր
շեշտառութեան հետեւանքով տարբեր լեզուական մի-
ջավայրերի մէջ։ Այդ տարբերացումը կատարուած է
գրերի գիւտից առաջ։ Մեր տեսութեամբ այս բառերի
մէջ ւ-ը մի խից է, որ գոցում է մի յօրանչք (hiā-

1) Նկատի ունենալ, որ ց ձայնի ազդեցութեան
տակ հետեւորդ ա-ը փոխում է իր արտաքերման կեր-
պը և հնչումէ շեղ, որ պէտք էր յատուկ գրով
նիշուէր, բայց մենք գրած ենք սովորական ա. լ + շեղ
ա-ն է, որ տալիս են ե։

լուս): Այդ յօրանջքը առաջացած է որևէ նախաւոր ձայնի կորուստի հետեւանքով: Այսպէս օրինակ՝ մըրջի՛մն բառը տարբեր լեզուական միջավայրի մէջ իր մ-ը փոխարինած է ւ-ով և բառը դարձած է մըրջի՛ւն, որ անշուշտ հնչուած է իրը մըրջի՛ւն: Մըրջիմն բառը պահած է իր ե-ով զուգահեռը: Արցախեցին ասում է: «մըրջեմնը»: Եթէ այս ձեւ փոխարինէր իր մ-ը ւ-ով՝ պիտի ստանայինք մըրջեւն, որով բիւր և բիւր զրութեանց կարող էինք իրը զուգահեռ տալ մըրջիւն և մըրջեւն ձեւերը: Պարզ է, որ իւ ու եւ կըում են իրար և մէկը միւսի զուգահեռն է:

Առնենք հիմա «ձիւն» բառը, որի շեշտը եղած է ի-ի վրայ և հնչած է «ձի՛ւն»: Այս ձեր մէջ, շեշտի ազգեցութեան տակ և շեշտից յետոյ ւ-ը սղած է իր լծորդ յ-ի ուղղութեամբ և մի որոշ միջավայրում հնչած է ձի՛յն և ը-ի չքացումով՝ ձի՛յն, ուր յ-ին ձուլուելով՝ նախընթաց ի-ին՝ երկարած է նրա տեսողութիւնը և բառը հնչած է «ձի՞ն», իսկ ի-ի հետագայ կարճացումով՝ «ձին», որ երկանցու արտաքերութիւնն է «ձիւն» բառի: Այսպիսով ձին արտաքերութիւնը ոչ թէ ծագում է «ձիւն» ձեից, այլ սրան զուգահեռ ձիյն արտաքերութեան ամփոփումն է և հին ծագում ունի:

Մենք տեսանք թէ իւն մի հին իաւ խումբ է, որի շեշտը զարկում էր ի-ին. իսկ եւ-ը միենոյն իաւ խումբն է, որի շեշտը սակայն զարկած է ա-ին և այդ է պատճառը, որ նրանք լծորդ են: Հետեւագէս այն բոլոր բառերը, որ իւ ունին՝ մենք կարող ենք վերականգնել իրը եւ ունեցող բառեր և հակառակը: Տեսանք նաև, որ իաւ խմբի մէջ ի-ին սղում է յուղութեամբ և այդ վիճակի մէջ է, որ ձուլուելով ա-ին՝ տալիս է եւ Բայց զիտենք թէ հին աւ խումբը

ձուլումով տալիս է օ: Տարբեր լեզուական միջավայրի մէջ իաւ խմբի հոլովոյթն սկսած է աւ խմբից, որ դարձած է օ, հետևապէս այդ խմբի աւը փոխանակ նախորդ ի. ի հետ ձուլուելու և ետ տալու, հետեւորդ ւ. ի հետ է ձուլուած և տուած օ, որով իաւ խումբը փոխանակ եւ դառնալու՝ դարձած է իօ: Ես դժուարանում եմ որոշել այն պայմանները և պատճառները, որ ստեղծած են այդ երեսոյթը, բայց երեսոյթն ինքնին տարակոյսի տեղիք չի տալիս: Դրանով պէտք է մեկնել արդեւք գրութեան նախ արդեօք արտաբերութիւնը և ապա՝ ըստ արտաբերութեան՝ «արդեօք» գրութիւնը: Հին «արդեւք» գրութիւնը մի հին արդի՛աւք է (ե=իա). այս ձեի մէջ աւ խումբն անցնելով օհնչման՝ տուած է *արդիօ՛ք, ուր ի. ին ձայնաւորից ու շեշտից առաջ յովահ անցնելով՝ տուած է արդցօք, որ մեր արտաբերութիւնն է: Բայց նոյն ի. ին կարող էր սղել նաև և ուղղութեամբ և նախաւոր իօ խումբը վերածել ու խմբի, որ մեր ուն է: Այսպիսի մի սղումով կարող ենք մեկնել ատոֆ, բորբոք և նման կազմութեան բառերը: Ո. ին իր նախաւոր արժէքը տալով, որ է՝ իաւ (ւաւ→ւօ→օ) մենք այդ բառերը կարող ենք վերականգնել իբր *աշիաւք, *բարբիաւք: Այս կերպարանքով նրանք յոգնակի գործիական հոլովներ են և նշանակում են ատերով, բորբերով: Այստեղ մեր համար բառն է, որի հ. ն ցնդած է, որով «ատոք հասկ» ասութիւնը նախապէս պիտի նշանակէր հատերով հասկ, այսինքն՝ լեցուն հասկ, հատառատ հասկ և ոչ թէ սակաւահատ կամ դատարկ: Իսկ Խորենացու «վառ և բորբոք պահելով զկայծակն» խօսքը, պիտի նշանակէր վառ և «բորբերով» պահել, ուր «բորբ» պիտի նշանակէր «բոց» և ուրեմն «բորբոք» — բոցերով բարակառ: Հմ. այս արմատից ծագած «բորբել» բառը,

որ նշանակում է բոցերի վրայ աղանձել ցորեն, սուրճ, սիսեռ և այլն։ Այսպէս ուրեմն վազեմի իաւ խումբը մի կողմից տուած է յօ (յաւ), միւս կողմից ո (ւաւ), որով յօ և ո դառնում են լծորդ և լծորդ են իրօք. հմ. յօնք և ունք, յօրանջել և որոնջել։ Եւ այդ երկուաը լծորդ պիտի համարուին իւ ու եւ խմբերին, քանի որ միւնոյն իաւ խմբից են ծագում տարբեր շեշտառութեամբ և տարբեր ձուլումներով, անշուշտ տարբեր լեզուական միջավայրերի մէջ։

Առնենք հիմա ձիւն բառը, որի զուգահեռը պիտի լինէր *ձիւն (իւ = եւ)։ Հին արտաքերութեամբ ձիւն բառը հնչած է ձիւըն, հետեւապէս և և ն ձայների միջև սղած է մի հին ձայնաւոր։ Այդ ձայնաւորը, որ ա է, երեսում է այդ բառի սեռականի մէջ երբ շեշտն անցնում է իր վրայ։ հմ. ձեա՞ն։ Այսաեղ եա գրութիւնը տառագարծում է մի հին ի՛ա խումբ, ուր իւն երկար էր և տեսնում ենք թէ ձիւըն արտաքերութեան ի-ին երկար է և չի կարող կարճ արտաքերուիլ։ Այսպիսով մեր ուղղական ձեր, որ է ձիւ(ա)ն (ա-ը սղած), սեռականի մէջ, երբ շեշտն անցած է ա-ին՝ դարձած է ձիյա՞ն, ուր առաջին ձեի ւ-ը այսաեղ, շեշտից առաջ փոխարինուած է իր լծորդ յով։ Հմ. բարութիւն (ա)ն—բարութիյա՞ն → բարութիսա՞ն։ Բայց նախաւոր *ձիւաւն ձեր տարբեր լեզուական միջավայրի մէջ կարող էր ունենալ և իրօք ունեցած է տարբեր հոլովոյթ։ Նախապէս այդ ձեի աւ խումբն է, որ դարձած է օ և իր նախորդ ի. ն սղած է ոչ թէ լ, այլ և ուղղութեամբ, որով բառը դարձած է *ձւօ'ան, որ նոյն է թէ ձո՞ան (ւօ՞ո)։ Այս յօրանջքը (ոա) լուծուած է ա-ի սղումով լ ուղղութեամբ և բառը հնչած է ձոյն (ձօյն), որ Քեսաբցու արտաքերութիւնն է «ձիւն» բառի։ Տարբեր միջավայրի մէջ նոյն յօրանջքը լուծ-

ուած է ա-ի սղումով և ուղղութեամբ և բառը հնչած
է օձուն» հմ. «Ճուն ձմեռ» բացատրութիւնը: Վերա-
ջապէս միենոյն *ձիւան ձեզ ունեցած է և մի ուրիշ
հոլովոյթի հետագայ ծիր. իր ի-ն ոչ թէ և, այլ յուղութեամբ
սղած է, աւ-ը հնչած է օ և յօրանջքը
լուծուած է և ձայնով, որով ստեղծուած է ձյօն, ուր
օւ հնչած է ինչպէս մեր այսօրուան ու-ն և ուրեմն բա-
ռը հնչած է ձյԱն, որ մեր սովորական արտաքերու-
թիւնն է: Այսաեղից հետեւում է. ա) որ մեր ու ձայ-
նը երկու տեսակ է. զուտ ու, որ է օւ և անզուտ ու,
որ է ւու ($i = o + i = o$): Անզուտ ու-ի կից ձայնը,
որ էր և (W) ժամանակի ընթացքին չքացած է. նրա
հետքը մնացած է ուր բառի գաւառական վուր արտա-
քերութեան մէջ, որ է հին՝ ւուր (WOWT): Բառերի լուծ-
ման ժամանակ պէտք է նկատի ունենալ զուտ և ան-
զուտ ու. երի պարագան: բ) Տեսնում հնք նաև, որ
ո՞ա յօրանջքը լուծուած է երկու կերպ՝ նայած թէ ո՞ր
կիսաձայնն է փոխարինած չքացող ա-ին — ւ-ը իէ
յ-ն, որով ուա տուած է կամ ոյ կամ ու: Բառերի և
ձեւերի լուծման ճամանակ պէտք է նկատի ունենալ և
այս պարագան: Գալով գաւառական ձույն արտաքե-
րութեան՝ պէտք է համարել ձայների զրափոխութեան
(métathèse) հետեւանք 1), որ սովորական երեսյթ է
լեզուների կեանքում, այսպէս dzyun - dzuyun այսին-
քն՝ յս - սյ :

Նկատենք ստեղյն, որ ոչ ամեն ոյ և ու արդիւնք
են ուա յօրանջքի լուծման: Մեծ մասամբ նրանք ծա-
գում են իւսի խմբից, ուր առաջին ի-ն սղած է և
ուղղութեամբ, վերջին ի-ն յամ և ուղղութեամբ,

1) Բազմազան օրինակներ տես M. Grammont,
Traité de Phonétique, էջ 339 և յաջորդները:

իսկ միջին աւ խումբը հնչած է օ, որով հոլովոյթն ընթացած է հետեւեալ զուգահեռ ծիրերով.
Նախաւոր խումբ

իաւի

առաջին իշխն սղած և ուղղութեամբ	ւա՛ւի	ւա՛ւի
աւ խումբը հնչած օ	ւօ՛ի	ւօ՛ի
երկրորդ իշխն սղած յ ուղղութեամբ	ւօ՛յ	ւօ՛ւ 1)
ւօ հնչուած իբր ո (աօ)	ո'յ	ո'ւ 2)
1) իրկրորդ իշխն սղած և ուղղութեամբ 2) ու հնչուած նախ իբր աօա՞ ալ և վերջն՝ ու:		

Միենոյն նախաւոր խմբից ծագելն է պատճառ,
որ ոյ և ու լծորդ են իրար և որոչ պայմաններում
փոխարինում են իրար:

Անցողակի նկատենք նաև, որ միենոյն իաւի
խումբը ենթարկուած է ուրոյն հնչափոխութեան՝ սա-
կայն սլաւ լեզուի մէջ. իր չեցան առնելով առաջին
իշխ վրայ՝ հետեւորդ ա-ը սղած է իբր ը, իսկ նրա յաջորդ
ւան ընթացած է յ ուղղութեամբ, որով ի՛աւի խումբը
դարձած է ի՛րյի, որ սլաւոնի եռի կոչուած հնչիւնն է
և մի թանձր ի է: Այս հիման վրայ կարելի է զու-
գազրել «զլուխ» բառի մեր և ուս սեռական հոլով-
ները. զլսուոյ և գրլով-ց (յ-ը նիշում է եռի ձայնը):
Այս մասին սակայն ես առիթ կունենամ խօսելու,
նրբ կարգը հասնի մեր հոլովների կազմութեան:

Այս լուծումներով տեսանք թէ ինչպէս տարատե-
սակ ձայներ և երկրարբառներ, ինչպէս ո, եւ, ոյ,
ցս, այ, ու, ի կարող են ծագել և իրօք ծագած են
միենոյն ձայնախմբից տարբեր ուղիներով և տարբեր
վայրերում:

Կիրարկենք այս տեսութիւնը մեր Սիւնիք բառի
վրայ, որ ունի մի իւ: Բառն անշուշտ յոդնակի է, ո-

րով կարող ենք տրոհել իրր Սիւնի. բ, Նկատելով, որ
իւ և եւ լծորդ են, և ւն լոին խմբի մէջ սղած է մի ա
այդ բառի զուգահեռը պիտի լինէր Սեւանի, որ մեր
Սեւանայ լնի և կղղու անունն է իր նախաւոր ձեռվէ:
Հետագային նա ձգած է իր վախճանական իւն և դար-
ձած է Սեւան, ինչպէս գասական ռապատասխանի» բառը
ձգելով ի. ն դարձած է «պատասխան»:

Սեւանի ձեռ ես տրոհում եմ իրր Սեւանի և
իրր զուգահեռ ձեւ տալիս եմ նամակ-անի, կանանի,
որով տեսնում ենք թէ Սեւանի մի հին յոգնակի բառ
է: Նրա զուգահեռը — Սիւնի - որոշապէս չի ցուցադ-
րում իր յոգնակի հանգամանքը, ուսաի զարմանալի
չէ, որ նա գալձած է կրկնապէս յոգնակի: Ինչպէս
նոր հայը ժամանակի ընթացքին կորցնելով է ձայնի
յոգնարար արժէքի զիտակցութիւնը՝ «կամք» բառը
համարած է եղակի և ստեղծած է «կամքեր» յոգնակին,
այնպէս և հին հայը աղօտ ըմբռնելով՝ անի վախճանի
յոգնարար արժէքը՝ կազմած է նոր յոգնակի - Սիւնի-
քւ Այս երկու տարատեսակ բայց նոյնիմաստ բառերի
նախաւոր ձեն եղած է Սիւանի (իւ=ի'աւ), որ շեշ-
տելով եր առաջին ի. ն և սղելով ա. ը յ ուղղութեամբ
ու ձուլելով նախընթաց ի. ին դարձած է Սիւնի, այս-
պէս՝ Սի'աւանի - Սի'յւանի - Սիւնի - Սիւնի (վեր-
ջին ա. ն սղած ու չքացած): Միենոյն նախաւոր ձեռը
շեշտն առնելով երկրորդ ա. ի վրայ, առաջին ի. ն
յովացած է և ձուլուելով հետեւրդ ա. ին՝ տուած է ի,
որով բառը հնչած է Սեւանի, այսպէս՝ Սիւանի, Սցաւանի, Սեւանի (ց+շեշտուած կամ անշեշտ ա՝ միա-
պէս տալիս են ե), Կարող ենք ասել, որ միենոյն ժողո-
վուրդի երկու ցեղեր, որ տարբեր շեշտով էին հնչում

իրենց անունը՝ 1) բռնած էին մեր երկրի հիւսիսաւ-
րեւելքը. Գեղամայ ծովի շրջանում ապրում էին Սևա-
նիները, իսկ աւելի արեւելք՝ Սիւնիները (Siwni. ները):

Տեսանք որ Սեւանի յոդնակի է. իր եղակին պի-
տի լինէր Սև. հմ. ձի և ձիւն։ Սև բառը եւ գտնում
եմ Սևորդեաց աշխարհի և Սևորդիք ցեղի անուան
մէջ։ Սևորդեաց աշխարհնը Սևանայ ծովի հիւսիսային
լեռներից զառիթափերով իջնում էր մինչև Կուր գե-
աը, որով նոյն ցեղն էր որ իշխում էր և Սևանի շըր-
ջանին և Սևորդեաց աշխարհն։ Տեսանք, որ Սևանի
մի հին Սիաւանի ձեր ամփոփումն է։ «Սևանի» ձեւն
այսօր սեռական է։ Իր շեշտը արեւելահայի բերանում
նոյն տեղն է, ինչ որ հին ժամանակի եւ բառը հնչում
է Սեւանի։ Ինչպէս տեսնում էք՝ մեր սեռականի իւն
գալիս է հին դարերից։ Գիտուները մեր սեպագիր
արձանագրութեանց մէջ կարգում են Swinina եւ նոյ-
նացնում են Սիւնի անուան հետ 2)։ Եթէ ուզիղ են
կարգում՝ ապա այդ ձեւը պիտի գառնար Տայոն, որ
զուգահեռը կը լինէր Քեսաբցու «ձիւն» բառի «ձոյն»
արարերութեան և մեր այսօրուան «սոյն» (հին SOYN)
բառի Տայոն արտաքերութեան։ Եթէ «ձիւն» բառի իւ
ձայնը այսօր հնչում է օյ (Քեսաբ), ապա պարզ է,
որ այդ տարերացումը շատ աւելի հին է քան դասա-
կան լեզուն։

Սիաւանի հին ձեր յոդնարար մասնիկը զատելով՝
մենք կըստանանք Սիւն, որ կարծում եմ ածանցաւոր
կաղմութիւն ունի իբր Սիւն, որով արմատն է Սիւն

1) Այսօր Վանեցին երան խայլ է համարում, իսկ
երեւանցին՝ հայլ։

2) Տես Հ. Յ. Տաշեան, Ուսումն դասական հայե-
րէն լեզուի, էջ 420.

Այս արմատի կրկնաւոր ձեռվ և վաղեմի՝ անի յոդնաւրար ածանցով մենք կ'ըստանանք Սիւսիւանի, որ Սիսիան բառի հնագոյն ձեն է։ Այս ձեւն այսօր սեռական է, ինչպէս «պատասխանի» հին բառը, որ սակայն դասական շրջանին եղած է ուղղական ։ Ճիշտ նոյն ձեռվ ուղղական է և Սիսիանի հին ձեւը ։ Բուն Սիւնեցին չգիտէ Սիւնիք բառը. իր երկրի անունը նա Սիսիան գիտէ, որով տեսնում ենք թէ այս անունը նոյնպէս շատ հին է և զուր չէ, որ այդ անունով է կոչւում մեր ճանաչած Սիւնիքը։ Կարող ենք ասել թէ Սևանի շրջանում և դէպի հիւսիս մինչեւ կուր գետը նստած էին Սևանիները, դէպի արեելք Վայոց ձորի շրջանում Սիւնիները, իսկ աւելի արեելք մինչև Որոտն գետը կամ լաւ ևս մինչև Հաքարի գետը Սիսիանիները։

Մենք ունինք Սևանի և Սևանայ սեռական ձեւերը. արեելահայն արտաքերում է Սևանի և Սևանայ ժողովրդական երգն ասում է։

Սևանայ ջուրը սա՞ն ա

օ —' օ —' օ —' օ

Սեռականի երկրորդ ձեւ նոյնպէս հին ծագում ունի։ Մենք ունինք «հրաման» բառը, որի սեռականն է «հրամանի»։ սրանից կազմուած է «հրամայել» բայը, որ պէտք է լինէր հրամանիւալ։ Արեելահայն արտաքերում է հրամայել (շեշտը երկրորդ անի վրայ)։ Այս բայի մէջ յւն փոխարինում է «հրաման» բառի նուն, որ գալիս է շեշտից յետոյ և երկու ձայնաւորի միջև։ հրամանիւալ → հրամայել -> հրամայել (իա=ե)։ Այս հաշուով մի հին *Սևանանի ձեւ պիտի ստանար Սևանայի, իսկ սա ձուլելով յի նոյներանգ ձայները որ անշեշտ են, շեշտեց հեռու և բառավերջին, հետեւ ապէս աւելի ենթակայ սղման՝ պիտի տար Սևանայ,

ուր յ-ն հնչած է իբր յ և հնչում էր այսպէս նաեւ գտասկան շրջանին, այլապէս կարիք չկար բառավիրջին յ գրելու: Թէ՛ այն լեզուական միջավայրը, որ սեռական էր համարում Սեւանի ձեւը և թէ՛ այն միջավայրը, որի համար Սեւանայ ձեւը սեռական էր, բնականաբար -ի եւ -այ վախճանները համարած են սեռուականի նշան, որով ստացած են Սեւան ուղղականը: Այս խնդիրների մանր քննութիւնը վերապահում եմ հոլովների տեսութեան:

Ս. Մեսրոպ արտաբերում էր Siwənī, բայց մենք պառում ենք Syunī: Ի՞նչ է ծագումը յս արտաբերութեան: Այս արտաբերութեան մէջ յ ծագում է վաղեմի ի ձայնից, իսկ ու-ն (Ա) զու՞ս է թէ անզուտ և յետոյ՝ ու ձայնի ւ-ը յօր՞անջք է դոցում թէ մի նախաւոր ձայնի սղում է և ուղղութեամբ և եթէ այո՞ւ, որ՞ն է այդ ձայնը: Ես կարծում եմ, որ այդ արտաբերութիւնը ծագում է մի հին Siawini ձեից. (վախճանի համար հմ. սեպագրական Eriaini, որ համարում են Երևանի հին ձեր): 1) Մեր ենթադրած ձեր մէջ -ամի- տուած է զուտ ու (առ → օ, օ՛ւ → օռ = ու), իսկ առաջին ի-ն սղած է յ ուղղութեամբ, որով ստեղծուած է Syowni, որ է Syuni (օռ = ու), Պարզ

1) Զգլիտեմ ո՞րքան ուղիղ են կարգում այս բառը: Այս ձեից էր կարող ծագել Երևան, բայց կարող էր ծագել *Eriaiā'ni ձեից. այս ձեի մէջ միջին ի-ն չհշտից առաջ կարող էր սղել և (Ո) ուղղութեամբ և բառը դառնալ *Eriawa'ni, այնուհետև ձուլելով իա-ն իրը է՝ գառնալ Erewani, իսկ վախճանական ի-ն ձգելով՝ Erewan. այդ կորած ի-ն պիտի երևար սեռականի մէջ. հմ. սեռ Erewan': Այս շեշտով է հնչում բառը նաև այսօր: Արևելեան շեշտառութիւնը շեշտը նոյն վանկի վրայ

է, որ այս արտաքերութիւնը դասական չէ, այլ ծառ
գում է նրան զուգահեռ և նրա չափ հին է:

Առնենք հիմա մեր հիւսիս բառը, որ մի իւ ու
նիւ: Նրա զուգահեռ կազմութիւնը պէտք է լինէր
հիւսիս, նկատելով որ իւ—եւ: Այս ձեւը ևս արոնում
եմ իրը հիւսիս և գտնում եմ մեր լեզուի մէջ հաղու
ուաղէպ ։ Տ վախճանը: Յապաւելով այս վախճանը՝
ևս ստանում եմ հիւս, ուր ևս լոին խմբի մէջ համար
րում եմ թէ չքացած է մի հին ձայնաւոր, մի ի, որով
բառը վերականգնում եմ իրը հիւսիս, որ իր զօրաւոր
շեշտի ազգեցութեան տակ սղած ու ձգած է այդ նաւ
խաւոր ին: Հին *հիւսիս ձեւ շեշտուած է իրը
—' օ —՝ որով միջին ձայնաւորը սղած ու կորած է և
բառը դարձած է *հիւս(ի)սիս, հմ. լո՛զանալ, որ տուած
է լո՛զ(ա)նալ → լո՛զնալ: Արեւելահայն արտաքերում է
հիւսիս, շեշտելով իւն: Այս բառի արժանուն է ուրեմն
հիւս, որ մենք ունինք թէ նղակի և թէ յոգնակի ձեւ
ով: հմ. «հե ի հե», «հեք»: Հիւսիսի մեր հին լեզու^{ու}
ուով նշանակում է հողմ, քամի, իսկ հիւս և հիւս նշան
ակում է ընդհատ և զօրաւոր նշառութիւն: հմ. հեւ
ւալ, վազած շան պէս հեւալ: Այսպիսով հողմը և
յատկապէս ցուրտ հողմն է, որ մեր երկրի հիւսիսը
դարձրել է հիւսիսային կողմ և ոչ հակառակը: «Հիւս
սիս(ի)» պէտք է նշանակէր հողմի կողմ, քամու կողմ,
այն կողմը, որտեղից փչած է հեքը, այսինքն՝ քա-

պահելով՝ վախճանական ձայնաւորի պահպանումով
կամ յապաւում է որոշում ուղղ: և սեռ հոլովների
տարբերութիւնը: Այսպէս՝ հա՛ց(ի) և հա՛ցի: Յատուկ
անուանց մէջ ։ Առև վախճանի համար հմ. սեպազբա-
կան Աշուրիան, որ մեր Ախուրեանն է, թէև ո՛չ գետի,
այլ տեղի, գուցէ և ցեղի անուն:

մին, հողմը: Մինչեւ այսօր մեր գիւղացին ասում է արեգգէմ, այսինքն՝ արեի կողմ, արեելք. այնպէս և հին հայն ասած է «հիւսիս(ի)» այսինքն հեքի կողմ, հողմի կողմ և հասկացած է մեր երկրի հիւսիսը, որտեղից և վիզում են ցուրտ հողմերը: Գամառ. Քաթիւղան գրում է.

Յանկարծ փշեց անհիւրընկալ հիւսիսին,

Թառամեցուց վարդ մանիշակ միասին.

ուր «հիւսիսի» բառը կիրարկում է իր հին իմաստով իբր ցուրտ քամի: Այսպիսով հեքը հողմ է և հողմը՝ հեք:

Տեսանք, որ իաւ խումբը տարբեր սղումով տալիս է ո. (iaw → waw → wo). այս հաշուով ես մեր «հոգի» բառը լուծում եմ իբր մի հին հիաւ-զի (գ.ը ք.էի լծորդն է և նրա պէս կազմում է յոգնակի թիւ. այս մասին խօսելու եմ առանձին): Մենք զանում ենք միենոյն իաւ խումբը, որ եթէ ձուլէր ի և ապիտի տար եւ, որով նեւ-զի, ուր տեսնում ենք նոյն «հեք» բառի եղակին: Յայտնի է, որ քոյր լեզուների մէջ հոգին ու շունչը, որ հեքն է, նոյնիմաստ են կամ մերձիմաստ 1): Յայտնի է, որ ն ձայնը ս.ի մի տարբերակն է և նրա ձեւափառութիւնը լեզուների մէջ: Հեւ արմատը, որ մի հին *հիաւ է, եթէ շետէր իր իւն՝ պիտի տար նիւ, որ գտնում ենք «հիւանդ» բառի մէջ, որի բուն իմաստը պիտի լինէր «հեացող»:

1) Հմ. լատ. anima -շունչ, սնոկ. a'ni-mi - նա փշում է: գոթ. az.an-an - շունչը վիշել: Սրան ցեղակից է համարւում մեր «հողմ» բառը: Նաև ոպսերէն «գուխ», որ ե՛ շունչ է և՛ հոգի, և՛ ոգի: Տես A. Ernout և A Meillet. Dictionnaire étymologique de la langue Latin.

Արդ՝ ս. հ լծորդութեամբ այդ արմատը պիտի տար սիւ, իսկ իր յոդնակի սիւ. ք, որ հայերէն նշանակում է մեղմ հով։ Փոխառաքար մտնելով մի հին բարբառից՝ այս երբեմնի նոյնանիշ բառին կառչած է հողմ գաղա- փարի մի երանգը, որով սիւ նշանակած է ոչ թէ հողմ առհասարակ, այլ «մեղմ հով, բարակ քամի»։ Այսպէս՝ մի բաղաձայնից անցնելով իր լծորդներին և մի ձայնաւորից իր լծորդներին՝ մենք կարող ենք վե- րականգնել մերձիմաստ բառերի շարքեր ու խմբեր, որ հնչապէս կապուած են իրար իբր զուգահեռ հըն- չումներ տարբեր բարբառների կամ բնաբոյս հնչափու- խումներ նոյն բարբառի մէջ, որ մեզ կը տան գաղա- փարների այն շարքը և անցումների այն աստիճան- ները, որով ստեղծուած են բուն և մերձաւոր իմաստ- ները։ Այսպէս՝ ս. գ լծորդութեամբ սիւ ունի իր զու- գահեռը — ժիւ, որ արմատն է շուաք բառի։ Շուաք նշանակում է ստուեր, զով։ հմ. «շուաք տեղ նստել»։ Արևելահայի համար «հով» քամի չէ, այլ զով։ իսկ արևմտահայի համար հովը «զով» չէ, այլ քամի։ Սա նոյն արմատն է, բայց ս. գ լծորդութեամբ զով վե- րականգնել պէտք է իբր վաղեմի զիալի, որի վերջին իշն նախ սղած է և ուղղութեամբ և ապա անցած է վ հնչման, ինչպէս գանձու հին գործիականը, որ այլ բան չէ, քան գանձով։ Նոյն լուծումով նով բառը մի հին նիաւ-ի է, ուր գանում ենք մեկնոյն արմատը հիաւ, որ տուած է նեւ։

Քանի որ նիւ ու սիւ և ուրեմն՝ նեւ ու սեւ լծորդ են՝ ապա կարող ենք ասել, որ Սկանի, Սիւնի և Սկոր- դի պիտի նշանակէին հիւսիսայիններ, և ուստի ուսւի սցէվեր բառի մէջ, որ նշանակում է հիւսիս, մենք գտնում ենք մեր նեւ բառի լծորդական տարբերակը, որ է սեւ և որ տեսնում ենք նաև մեր Սիւան և Սիւ-

նիք բառերի մէջ. նոյն արմատից է ոռւս. սյէնի, որ
նշանակում է տան զով մասը և սյէնիա՛, որ նշանա-
կում է ստուերել, ստուեր ձգել և սյէն՝, որ նշանա-
կում է ստուեր։ Սեերեա՛կ և Սեերեկ՝ նշանակում են
ձմբան քամի, կէս զիշերային, այսինքն՝ մթին 1)։
Հին մարդու գիտակցութեան մէջ հիւսիսն ու մութը
նոյնանում էին, ինչպէս և մութն ու ցուրտը։ Յիշել
«իւաւարն արտաքին», ուր միայն կայ «լալ և կրծել
ատամաց» ցրտի պատճառով։ Մութն ու սեր նոյնա-
նում են, ուստի Սեւան և Սեւորդի բառերի մէջ մենք
տեսնում ենք Սեւ, որ ոչ թէ սե գոյնի հետ կապ ու-
նի, այլ ցուրտ հողմի և հիւսիսի հետ։ Սեանցիներն
ու Սեւորդիները մեր երկրի հիւսիսն էին բռնած, իսկ
Սիւնիներն ու Սիսիանիները հիւսիս-արեելքը։ Իրենց
պատմութեան արշալոյսին Ծուսները մի ցեղ ունէին,
որ կոչւում էր Սեերեանե, այսինքն հիւսիսայիներ,
որովհետեւ ապրում էին կիև քաղաքից դէպի հիւսիս
Դնեպր գետի հոսանքով։ Ճիշտ այդպէս էին մեր Սիւ-
նիներն ու Ոււանիները։ Ընդհատենք այս մերձեցում-
ներն ու լուծումները։

Մենք տեսնում ենք, որ հնչական տարբերացում-
ները զուգահեռ են իմաստների տարբերացման։ Այս
պատճառով բառերի քննութեան ժամանակ կարելի է
մեկնել ոչ միայն հնչական զուգահեռի կայանից, այլ
և իմաստների լծորդութեան կայաբանից։ Եթէ ս ձայ-
նը կարող է տալ զ, շ, ժ, հ նայած լեզուական մի-
ջավայրին՝ քամին իր հերթին կարող է գտննալ և
դարձած է իրօք հով, զով, հեք, հոդի, շուք,
սե, հիւսիս և այլն։ Այնաեղ իրեսյթը հնչաբանական

1) Տես Վ. Դալ՝ — կենդանի Ծուս լեզուի բացառ-
բական բառարան։ հատ. IV, էջ 387-9։

է, այստեղ՝ իմաստաբանական. այնտեղ մի ձայնը միւս
սից է ծագում, այստեղ մի իմաստը միւսից. այնտեղ
գործում է բնական պատճառը, այստեղ՝ բանականը. և
ինչպէս կան զուգորդ ու լծորդ ձայներ, այնպէս կան
զուգորդ ու լծորդ գաղափարներ և իմաստներ։ Հըն-
չիւնների շարքը զուգահեռ է իմաստների շարքին,
ուստի շարքերից մէկը կարող է հետախուզական կա-
յան և բացատրական հիմք դառնալ միւս շարքի հա-
մար։

Լեզուասէր բարեկամներիս եւ ընկերներիս
 «Յուշագրիս» մասն գրութիւններ կարդացող
 շատ ժիշ մատր կայ մեզանում. հազիւ մի բանի
 տառնեակ. հետեւապէս ոչ մէկ յոյս կայ սպազրութեան
 ծախսն իսկ զոցելու: Զեւի համար զիմ նշանակած
 եմ մէկ Ֆրանֆ: Ասում եմ «ձեւի համար», որով
 հետեւ եթէ ժիշ է կարդացողը, շատ աւելի ժիշ է
 զնորդը: Ընկերներս ու բարեկամներս զիտեն իմ
 նիւրական կացութիւնը, զիտեն նաև, որ այս տեսակ
 ծախմբերի տակ մտնելու եւ հնար յունեմ: Եթէ Արամի
 իման նման այն կարծիքին շինեն, թէ Յուշագրերս
 կարող են պիտանի շինել մեր շեզուի ժննութեան
 համար՝ կը իմնդրեմ նիւրապէս իման օգնեն այս
 ձեռնարկութեան մէջ: Յուշագրերս սպազրելու եմ
 պրակ առ պրակ: Ամէն պրակի ծախսն է մօս 200
 ֆր. 500 օրինակի համար: Ասացած գումարների
 հաշիրը կը տամ պրակների կողի վրայ: Աւելորդ է
 ասել թէ աշխատանիքս համար ոչ մէկ դրամ կը
 համուի այդ գումարից: Հրատարակուած պրակների
 ամբողջ պահեստն ու մնացորդ գումարը պիտի մնայ
 Համազգային Ընկերութեան:

Սիրով Ն. Աղբաղեան,

ԲԱՆԱՍԵՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ



ՏԵՍՈՒԹԻՒՆ ԻՉ ԵՒ ԶԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆՑ

Մեր եղակի սեռական հոլովի մասին ես այն կարծիքը յայտնած եմ տարիներ առաջ, որ նա մեր վաղեմի ուղղականն է, միայն տարբեր շեշտառութեամբ։ 1) Այսպէս օրինակ մի վաղեմի ձեւ՝ սերման և շեշտելով իր առաջին ձայնաւորը՝ Ե՛, այդ շեշտի պատճառով սղած է իր երկրորդ ձայնաւորը՝ առև բառը՝ զարձած է սե՛րմ (ա)ն՝ → սե՛րմըն, որ Ա. Մեսրոպ հրահանգած է զրել առանց ը.ի.՝ սերմն, այսպիսով ձեւացած է այդ բառի ուղղական հոլովը։ Իսկ եղ. սեռական հոլովի մէջ շեշտն անցնելով նախաւոր ձեփի երկրորդ ձայնաւորին, որ է ա. բառը մնացած է անվիթար ձեռով՝ սերմա՛ն։

Այս հիման վրայ կարող ենք ասել, որ եթէ կամենում ենք որեւէ բառի հին ձեւ գտնել, պէտք է առնենք ո՞չ թէ նրա եղ. ուղղականը, այլ եղ. սեռականը։ Անշուշտ կարող է պատահել, որ մի բառժամանակի ընթացքին հետեւած լինի ուրիշ հոլովական կարգի և իր եղ. սեռականը իր բուն նախաւոր կերպարանքը չլինի. բայց այդպիսի գէպքերը բացառութիւն կը լինեն և հնարաւոր է մեկնել նրանց երիւումը, եթէ մանր քննութեանց մէջ մանենք։ Իբր ընդհանուր կանոն մենք կարող ենք ասել թէ բառերի ուղղականն ու եղ. սեռականը միևնույն վաղեմի ձեերն

հն, սակայն տարբեր շեշտառութեամբ։ Այս նախաւոր ձեւը ես անուանած եմ «ուղղական» սեռական», որ նայած իր շեշտին՝ տուած է կամ ուղղական, կամ սեռական։

Արդ՝ իչ վերջացող բառերը մեր լեզում տալիս են չի եղ. սեռական. այսպէս՝ արարիչ՝ արարչի, փրկիչ՝ փրկչի ևայլն։ Մեր կանոնի համաձայն «արարչ» ձեն է նախնականը։ Այդ ձեի մէջ սակայն մենք տեսնում ենք ձայնաւորի մի սղում և չքացում ոչ լոին խմբի մէջ։ Այս օրինակի մէջ զիւրին է զըտնել այդ չքացած ձայնաւորը. զա մեր ուղղական ձեի ին է, որ անշեշտ մնալով՝ նախ սղած և ապա կորած է, այսպէս։

ուղղ. արարիչ՝ — շեշտը ի-ի վրայ։

սեռ. արարիչի՛՝ — շեշտը երկրորդ ի-ի վրայ։

արարըչի՛՝ — առաջին ի-ն սղած։

արարչի՛՝ — առաջին ի-ն չքացած։

Այստեղից պարզ է, որ բառի նախաւոր ձեւ թէւ սեռականն է, բայց իր անվարտ վիճակով, իրու արարիչ՝ և ոչ թէ սուր վիճակով՝ արարչի՛։ Այս վաղեմի ուղղական» սեռական ձեն է, որ տուած է թէ՛ հին ուղղական և թէ՛ հին սեռական ձեւերը՝ այսպիսի ծիրով։

ուղղ. արարի՛չի՝ — շեշտը առաջին ի-ի վրայ։

սեռ. արարի՛չի՝ — շեշտը երկրորդ ի-ի վրայ։

Տարատեսակ շեշտառութեան հետեւանքով ուղղական ձեի մէջ սղած ու չքացած է վերջին ի-ն, իսկ սեռական ձեի մէջ նոյն շեշտի հետեւանքով սղած ու չքացած է առաջին ի-ն, որով ստեղծուած է թէ՛ դասական և թէ՛ այսօրուան հոլովական կարգը. այսպէս՝

ուղղ. արարի՛չի → արարի՛չ(ի) → արարի՛չ։

սեռ. արարի՛չի → արարըչի՛ → արարչի՛.

Այս ամենը շատ պարզ է և կարծում եմ համոզիչ։
Երեակայէք հիմա լեզուական մի տարբեր միջա-
վայր, ուր ուղղական էր նկատում ա՛յն ձեզ, որի
շեշտը զարկում էր նախաւոր բառի վերջին ձայնաւո-
րին։ այսինքն՝ որի համար ուղղական էր ոչ թէ ա-
րարի՛չ(ի) ձեզ, այլ արար(ի)չէ ձեզ։ Այդ միջավայրի
մէջ ուղղական կը համարուէին փրկչի՛, նկարչի՛,
դրչի՛, կափարչի՛ ևայլն։ Այս ձեւերին իրը զուգահեռ
մենք կարող ենք տալ օտարածին բառեր՝ բաղմանչի,
(այդեպահ), աշչի (խոհարար, ճաշարար), վինաչի (կա-
րուակ), զուռնաչի (փողար) ևայլն, ու տեսնել, որ
չի վախճանը մեր ~ իչ վախճանի նախաւոր ձեն է,
որ էր ~ իչի՛, սակայն առաջին ձայնաւորը սղած ու
չքացած և շեշտը վերջին ձայնաւորի վրայ։ Հետեա-
պէս մենք չենք կարող պնդել թէ ~ չի վախճանը օ-
տարամուտ է կամ օտար է մեղ։ Դա մեր բնիկ ~ իչ
վախճանի նախաւոր ձեն է, որ հետեւում է բնիկ հո-
լովական մի կարգի, այսպէս՝

Ուղղ. արարի՛չ(ի) — արարի՛չ

Ուղղ. բաղման(ի)չի — բաղմանչի.

Սեռական. արարիչի՛ → արարչի՛.

Սեռական. բաղման(ի)չու → բաղմանչու.

հմ. հին՝ գանձու, նոր՝ գլխու.

Մէկ ձեի մէջ սեռականը կազմուած է երկրորդ
ի.ն շեշտելով. արար(ի)չի՛. միւս ձեի մէջ ուղղական
է այդ ձեզ, բայց ուրիշ շեշտասութեամբ — բաղ-
ման(ի)չի։ Մի տեղ ի.ն սղած ու չքացած է գտնուե-
լով շեշտից առաջ. — արար(ի)չի՛. (օ —'), միւս տեղը
զալով շեշտից յետոյ բաղման(ի)չի (-'օ) 1)։ Այս վեր-

1 Այս ձեզ երերուն շեշտասութիւն ունի. այն-
տեղ ուր նախորդող ձայնաւորները սղած են՝ նա հըն-

ջին ձեր տուած է ի վախճանով մի բառ, որ հետեւած
է մեր հոլովման սովորական կարգին. գինի - դինու,
հկեղեցի - եկեղեցու, որով՝ բազմանչի - բազմանչու
եայլն; Այսպիսով կարող ենք ամել թէ չի վախճանը
նո՞յնքան մերն է, որքան իչ վախճանը. երկուսը միւ
ապէս ծագում են նախաւոր իշխ ձեից և դրա համար
նոյնիմաստ են և նոյնանիչ:

Համաձայն մեր տեսութեան ի - ու կազմութեանց
մասին (ԲՅ. կ) իչ վախճանը կարող էր ունենալ և ու-
նեցած է - իսւիչ տարբերակ, որ ձուլումով պիտի
գառնար - ուչ, որով տեսուչ այլ բան չէ քան տեսիչ,
այսինքն՝ տեսնող, և սրտառուչ, ուրիշ բան չէ քան
սրտառիչ, այսինքն սիրո առնող և ընդհանրապէս
- ուչ և իչ վախճանները նոյնարժէք են և մէկը միւ-
սի տարբերակն է աւ միջածանցով: Այդ ածանցն էր,
որ մենք գտանք կիս և կուտ տարակաղմ ձեւրի վեր-
լուծութեան ժամանակ (ԲՅ. կ): Այս մերձեցումները

չում է վերջին իւն շեշտելով, այսպէս՝ փըսնըչ' (փը-
սալան), ոընըխչ' (սոկրատոյժ), բայց ուր ձայնաւոր-
ներից մէկն անվթար է մնացած՝ այնանդ յարաշեշտ
է, այսպէս՝ վինա՛չի, բազմա՛նչի, բոստա՛նչի, (իսու-
քըս արեւելեան շեշտառութեան մասին է): Փողովըր-
դական երդը շեշտում է նայելով եղանակին.

(իսկ սովորական շեշտառութեամբ)

Մեր բա՛զումը՝ բազմա՛նչի,

Եիւ կա՛յ շուի՛ նըմա՛ն չի, (շի՛ւ կայ ...)

Թորո՛ւն թորո՛ւն զուս ե՛կան, (թորուն թո՛րուն զո՛ւս եկան

Մէկն ի՛մ եարի՛ նմա՛ն չի: (մէ՛կն իմ եա՛րի...)

օ՝ օ՝ օ՝ օ՝ օ՝

Բաղ — այգի, բազմանչի — այդեպան. ունինք եւ
«բազմանչ»ձեւով և նոյն իմաստով, չիւ — ծառի թարմ
ու ձկուն սաս. բոբուն — խումբ-խումբ.
զուս — գուրս. եար — սիրած, սիրեկան:

անուղղակի հաստատում են մեր տեսութիւնը ձոյլ ձայնաւորների գոյսւթեան և ծագման մասին։

Եթէ արարիչք բառը իր շեշտը ա-ի վրայ ունեա նար ու հնչէր իրը «արարիչք» կամ «ա'րարիչք», հետեւորդ իւն պիտի սղէր մեր հին ու զօրաւոր շեշտի աղղեցութեան տակ, և բառը դառնար «ա'րարիչք» կամ «արարիչք», ինչպէս որ դառնում է ածանցումի ժամանակ, երբ իւն մնում է անշեշտ և սղում ու չքանում է. հմ. արարչական, որ է արարիչական։ Բայց մենք ունինք բառեր, որ այդ կերպարանքով երեւում են իրը ուղղական։ հմ. ճանանչ. «տես ու ճանանչ», նշանակում է տեսնող ու ճանաչող։ Այս կարգի բառերի նշ լրին խմբերի մէջ սղած ու չքացած է նախաւոր ի ձայնը, որով այդ բառը պէտք է վերականգնել իրը նաևան-իչ, այսինքն՝ ճանաչող. սա կազմուած է նաև (Ճան) արմատից և կրկնապէս ներկայ գերբայի իմաստ ունի. նախ իրը նաև-ան, որ մեռած է իրը զատ բառ, թէև ունի իր զուգահեռ և կենդանի կազմութիւնները. հմ. վաղան, խածան։ Այս մեռած ձեխն կենդանութիւն տուած է նոր ածանցը ։ իչ, որ կենդանի ածանց է նաև այսօր, եւ բառն եղած է ճան-ա՛ն-իչ, ու սղումով՝ ճանանչ։ Մենք այսպիսով գտանք մեր բայական ։ նշ ։ ածանցի ծագումն ու արժէքը և մեր մի քանի բայերը, որ այդ ածանցով են կազմուած, մենք կարող ենք լուծել. այսպէս։

Իրկնչել — նկատելով, որ ե - խա, մենք կըստանանք՝ իրկնչի-ալ կորնչել կորնչի-ալ մարտնչել

Մենք տեսնում ենք բաղմանչի բառի նման հին և շա՞տ հին կազմութիւններ, որ ծառայած են իրը բայարմատ ։ երկնչի, կորնչի, մարտնչի։ Ինչպէս

աղ արմատը տուած է աղ-ալ և աղ-ի բունը՝ աղել
(հին աղի-ալ), ճիշտ նոյնպէս «երկնչի» արմատը տը-
ւած է երկնչել (հին երկնչի - ալ): Շարունակելով լու-
ծումը և լոին ու սուզ խմբերի մէջ տեղաւորելով
վաղեմի ձայնաւորները, որ սղած կամ չքացած
են վերի ամփոփի ձեւերի մէջ՝ մենք կըստանանք.

երկնչի ← երկ(ա)ն(ի)չի
կորնչի ← կոր(ա)ն(ի)չի
մարտնչի ← մարտ(ա)ն(ի)չի

առ սղած, ի՞ն չքացած. հմ. լիածայն՝ պահպանիչ
կործանիչ, կափարիչ:

Պարզ է, որ այս բառերի սոսկական արմատներն
են Երկ, հմ. երկ-իւզ, կոր - հմ. կոր-ուստ և մարտ:
Երենց միածանց, հին ու մեռած և սակայն նոյնաւ-
ծանց ձեւերն եղած են, *երկ-ան, *կոր-ան, *մարտ-
ան, հմ. խած-ան, կծ-ան և այլն:

Մի անգամ ես նրանք դարձած են ներկայ դեր-
բայ - իչ ածանցով 1):

1) Իսկապէս այս ձեւերը պիտի լուծուին իբր
մաքս-անտիչ ← մարտ-ան-իտ-իչ, ուր և անտ հնդե-
րոսպ. ածանցն է ներկայ դերբայի: Բայց առայժմ ես
քննում եմ իչ և չի ածանցների առընչութիւնը եւ
ոչ թէ նրանց վաղեմի ծագումը: *Կործանիչ, *մարտա-
նիչ և նման ձեւերը «ուամկական ստուգաբանութեամբ»
կարող ենք տրոհել իբր կործ-անիչ, հմ. գաւառակ,
«ամանը կործ արա», այսինքն՝ շրջիր բերանի վրայ:
Այն ժամանակ մենք կըստանանք հին «արիչ» բառի
գուգանեռը, հմ. ոսկի-արիչ → ոսկերիչ, որով կը
տեսնենք թէ ան և ար նոյնիմաստ են և նոյնարմէք,
ան-իչ = ար-իչ: Այս ան-ից է ծագած «անելք բայը

Միենոյն մեկնութիւնը պէտք է տալ և մեր չ բայական ածանցին, որ գտնում ենք թռչիմ թաքչիմ, փախչիմ, հանգչիմ, զատչիմ, մատչիմ, կառչիմ բայերի մէջ: Ինչպէս «մեղանչիլ» բայի բունն է ամեղանչիլ», որ գարձած է «մեղանչի» և ալ ածանցով մեղանչիլ ալ → մեղանչել, այնպէս և՛ վերի բառերը պէտք է լուծել իրը՝

թռչել	←	թոլչի-ալ
թաքչել	←	թաքիչի-ալ
փախչել	←	փախիչի-ալ
հանգչել	←	հանդիչի-ալ
զատչել	←	զատիչի-ալ
մատչել	←	մատիչի-ալ
կառչել	←	կառիչի-ալ

ուր «թաքիչի» եթէ սղէր ու ձգէր իր վերջին իշն՝ պիտի դառնար թաքիչ, որ պիտի նշանակէր թաքող, և յաջորդաբար՝ փախիչ – փախչող, զատիչ – զատող, թռիչ – թռող, ևայլն: Կրկնաբար գերբայական կազմ և իմաստ ունեցող բառի մի լաւ օրինակ է «թռչող» ձեզ, որ նախ գերբայ է և «թռչող» է նշանակած իր քրիչ ձեւով հմ. գրիչ – գրող, և ապա կրկնաբար գերբայանում է իր ող ածանցով իրը թռիչ-ող → թռչող 1):

թիւր իմացութեամբ կամ լաւ եւս՝ ան ածանցով բայերի թիւր արոնումով իրը՝ — կործանեմ, բեկանեմ, տեսանեմ. — հմ. համտես արա, կործ արա ևայլն.

1 Թոլչը «թոլչ-ք» բառի մէջ թւում է թէ բայանուն է, բայց լեզուների պատմութեան մէջ անծանօթ երեսյթ չէ, որ անցեալ գերբայն ստանում է ներկայ գերբայի վախճան: Այսպէս նաև առնելի ներկայ

Այս նոյն ձեւը մեր լեզուի մէջ ունեցած են նաև
• ան վախճանով զուգահեռ ձեւը : Դասական լեզուն
ունի եւ «թոչիմ» եւ «թռանիմ», որ ծագում է
«թռանի» բունից . հետեալէս թռչողի գաղափարն
արտայատուած է և թռիչ(ի) և թռան(ի) ձեռվ . «թռ-
ռան» ձեւ այսօր իսկ կենդանի ձեւ է մեր բարբառնե-
րի մէջ : «Թաքիչ» ձեխն զուգահեռ՝ եղած է մի «թաք-
ան» ձեւ, որից ծագում է մեր թաքնուել բայց, որ է
հին թաքանուել : Փախիչ ձեխն զուգահեռ եղած է
«փախսան» ձեւ, որից ծագում է նարեկացու «փախս-
նու» ձեւ . հմ . «փախնու խաւարն» (Եարեկ, ԽԱ), որ
է հին *փախսանու :

Մենք տեսանք, որ օտար համարուած ~ չի ա-
ծանցը անյիշելի ժամանակներից մերազնական է,
ինչպէս ցոյց են տալիս բայիչ, փախիչ և նման
հին բայաբուները : Նոյն հնութեան ապացոյց են և
այդ բայաբուների լծորդական կշիռները : Գիտենք թէ
ց և չ լծորդ են, իբր վաղեմի սա ևս խմբերի ձու-
լում (ԲՅ. ա) : Ալրդ՝ թաքիչի ձեխն իբր զուգահեռ մենք
ունեցած ենք թաքիցի և տեսուչ ձեխն իբր զուգահեռ
թաքուց մի ձեւ, որ պէտք է լինէին նոյնիմաստ,
բայց տարեր լեզուական միջավայրերի մէջ : Մէկը
կարող էր տալ թաքիցի-ամ → թաքիցեմ (չունենք այս
ձեւը, բայց ունենք նրա զուգահեռը, գրիչի=գրիցի+ամ
~ գրիցեմ) . իսկ միւսը ~ ան ~ ածանցով տուած է

գերկայ է դասական լեզուում և նշանակում է անող,
բայց ուտելի, խմելի նոյն իմաստը չունին, թէև նոյն
է ձեւը : Այստեղ ապանի գերբայն է, որ ստացած է
հին ներկայ գերբայի վախճանը : Այդպիսի մի ձեւափո-
խում կատարուած է յունաց էոլական բարբառում :
Տես A. Meillet եւ J. Vendryes - Traité de gramm.
comparée des langues classiques, § 500, էջ 316.

թաք-ուցան-իւամ → թաքուցանեմ, որ սղելով իր
ա ձայնաւորը և չքացնելով իր ու ձայնաւորը՝ գար-
ձած է թաք(ու)ց(ը)նեմ → թաքցնեմ։ Այսպիսով մենք
տեսնում ենք թէ ռփախուցանեմ» նշանակած է փա-
խուց-ան-ի-ամ, այսինքն՝ փախցնող եմ, քանի որ
ռփախուց» ինչպէս «տեսուչ» պիտի նշանակէր փախ-
ցող, իսկ փախուց-ան = փախցնող։ Այս ձեւերի մանր
քննութիւնը ինչպէս նաև համեմատական կշռները
ևս թողնում եմ յատուկ յուշագրի։

Վերը բերած բառերի սոսկական արմատներն են
թաք, փախ և այլն։ «Փախնու» ձեւ ես վերականգնեցի
իբր «փախ-ան-ու»։ Ժողովուրդն ունի «փախնել» ձեւ։
որ է հին «փախ-ան-ի-ալ»։ որով իր բունն է փախ-ան-ի
և այս հին ձեխն զուգահեռ են (առանց ի ածանցի),
«փախ-ան» և նման ձեւերը, ինչպէս վաղ-ան, որից
ծագում է բարբառական՝ «վաղնել» բայց, որի բունն է
հին «վաղ-ան-ի»։ Իսկ գաւառական փախել եմ, թռել
եմ, հանգել եմ (կրակը հանգել է) և զրական՝ զատել
եմ ձեւերի բուներն են՝ փախ-ի, թռ-ի, հանգ-ի,
զատ-ի, որ ինձ թւում է թէ նոյնպէս ներկայ գեր-
բայի իմաստ են ունեցած և նրանց նորոգումները այս
ու այն ածանցով ձգտել են պահպանել նրանց նախա-
ւոր գերբայական իմաստը (հմ. առնել-ի, լսել-ի, որ
ներկայ գերբայ են գրաբար լեզուի մէջ)։ Երբ հնացել
անթելազիր է զարձել հին ձեւ՝ համեմատաբար անփո-
փոխ մնացած մտածումը ձգտել է մի նոր կարկատա-
նով իր հին ըմբռնումը արտայայտել հին բայակերա
եղանակի կիրարկումով, այսինքն՝ ալ ածանցը կցե-
լով ներկայ գերբայի։ Կարող է պատահիլ նաև, որ
այդ ածանցները՝ ան, չի, զի, ու ուչ, ու ուց
գործողութեան երանգներ էին արտայայտում և ուրե-
մըն ոչ թէ համարժէք էին տարբեր բարբառների մէջ
և միաժամանակ, կամ համարժէք էին միւնոյն բար-

բառի մէջ, բայց տարամանակ, այլ միաժամանակ
միւնոյն ռարբառի մէջ նրանցից մի քանիոը նիշում
էին գործողութեան երանգներ, որ մենք այսօր չենք
նշմարում :

Այս խնդիրները կարող են լուծուիլ միմիայն
մանրազնին և համեմատական քննութեամբ։ Զեա-
րանական խնդիրը, որ գրութեանս նվաթն էր, կար-
ծում իմ պարզուած ու լուծուած է։ ~ իչ և ~ չի նոյն
ձագումն ունին, նոյնարժէք են և նախագրական։

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՌԱ ԿԱԶՄՈՒԹԵԱՆՑ

Ճ Ա Ն Ա Զ Ե Լ — Ծ Ա Ն Օ Թ

Գիտենք թէ «Ճանաչել» բայի և ճայնը հնչափոխուած է հետեւորդ չ ճայնի աղղեցութեան տակ, (ԲՅ. բ. 29): Նախապէս նա եղած է ծ, իսկ բայը ։ Ճանաչել: Այդ արմատական ծան երեւում է կատարեալի մէջ, որ է «Ճանահայ»: Նկատելով, որ Ե-ը մի հին իախմբի ձուլման հետեւանք է՝ «Ճանաչել» բայը կարող ենք լուծել իրը նախաչի-ալ, որով կըստանանք բայի նախաւոր բունը, որ է նախաչի: «Ծանօթ» բառի եղ. սեռականն է «Ճանօթի»: Ուրիշ տեղ ես ցոյց եմ տուած, որ մեր բառի ուղղականն ու սեռականը նախապէս նոյն ձևն է եղած և հոլովները տարբերուած են շեշտի տարբերութեամբ. այսպէս՝

Նախաւոր ուղղական Ճանօթի —' օ
Նախաւոր սեռական Ճանօթի' օ —'

Զօրաւոր շեշտի հետեւանքով ուղղական հոլովի վախճանական իշն ընկած է և բառը դարձած է «Ճանօթ»: Սեռականի շեշտը պաշտպանած է այդ նոյն իշն, ուստի բառի հին ձեզ մնացած է անվթար և մինչեւ այսօր հնչում է «Ճանօթի»:

Գիտենք, որ օ ճայնը մի հին աւ է և մեր հները գրում էին ծանաւը և հնչում էին այնպէս, ինչպէս գրում էին: Հետեւապէս մենք կարող ենք զուգագրել. նախաչի — ծանաւը:

Գիտենք, որ չն մի հին ու է, որ ձուլումով տուած է չ. իսկ ք-ն մի հին ուն, որ ձուլումով տուած է ք և ուրիմն մենք կարող ենք զուգագրել. նախաւի — ծանաւի:

Մեր տեսութեամբ լոին խմբերի մէջ չքացած է մի հին ձայնաւոր «Ծանաւթ» բառի մէջ մենք ունենք մի լոին խումբ, որ է ւր։ Այս ձայների միջեւ ենթադրում եմ, որ սղած ու չքացած է մի հին ա, որով այդ բառի նախաւոր ձևը ես վերականգնում եմ իբր ծանա՛ւատիի։ Այնուհետեւ դիտենք թէ ձոյլ բազաձայները մի հին լիածայն վանկի եղերական ձայների ձուլման արդիւնք են (ԲՅ. ա.)։ հետեւապէս տեսն իմ խմբերը, որ ձուլումով տուած են չ և ք, երբեմն եղած են լիածայն վանկեր, որոնց ձայնաւորը սղած ու չքացած է։ Ենթադրում եմ, որ այդ ձայնաւորն եղած է մի հին ի, որով մենք վերի ձևերը կարող ենք վերականգնել ու զուգագրել իբր՝

ծանա՛ւի ծիւ ծանա՛ւատինի

Համեմատելով մեր յաջորդական լուծումների արդիւնքը՝ մենք կը տեսնենք։ 1) որ այս բառերի արմատները նոյն են — ծան։ (ծ-ի և հնչումը ինչպէս տեսանք հետազայ երեւոյթ է)։ 2) նրանք ունին սոյլ ձայներ, որ լծորդ են — ւ և ի)։ 3) Այնուհետեւ մէկը միւսից տարբերում է աւ ածանցով, որ գտանք կիւտել և կուտել ձևերի քննութեան ժամանակ (ԲՅ. է)։ Նկատելով, որ այս ձեւերի բաղադրիչ ձայները կամ նոյն են կամ լծորդ են՝ ինքնին հետեւում է, որ նրանց իմաստները պէտք է կամ նոյն լինեն կամ մերձ։ Գիտենք արդէն, որ այսօր իսկ այդ երկու բառերը մերձիմաստ են — նանաշ=ծանօր։

Տեսանք, որ բառերի եղակի սեռականը այդ նոյն բառերի նախաւոր ուղղականն է և հետեւապէս վերի ձեւերը հին ուղղական-սեռական են, որ տարբերանում էին իրենց շեշտով։ «Ծանօթ» բառի համար տեսանք, որ այդպէս է, հմ. ծանօթի, ւ ծանօթի', նոյնը եղած է և միւս բառի համար. հմ. «տես ու ծանաչ» ւ «տես

ու ճանաչի» 1): Մեր վերականգնած ճեւերը կարող ենք զուգադրել իբր տարրեր հոլովեր, այսպէս՝

Ուղղ. ճանա՛տիշ(ի) — —' օ (օ) ճանա՛ւատին(ի) — —' օ օ (օ)
Սեռ. ճանատիշի՛ —' — օ —' ճանաւատինի՛ —' — օ օ —' 2)

Ուղղականի զօրաւոր շեշտի հետեւանքով նախապէս պէտք է սղէր Տիս վանկի իշն և բառը դառնար նանա՛տել, իսկ Տ խմբի ձուլումով՝ նանա՛շի, իսկ այսուհետեւ նոյն շեշտի աղղեցութեան տակ պիտի սղէր ու չքանար վերջին իշն և բառը հնչէր նանա՛շ 3): Նոյն զօրաւոր շեշտի հետեւանքով ճանա՛ւատինի ուղղական ճեւի մէջ նախ պիտի սղէր հետեւորդ առ և բառը հնչէր ճանա՛ւտինի. նոյն շեշտի աղղեցութեան տակ պիտի սղէր ու չքանար հետեւորդ իշն և բառը հնչէր ճանա՛ւտինի, ուր Տ ձուլումով պիտի տար թ և բառը դառնար ճանա՛ւրի: Կրկին նոյն շեշտի աղղեցութեան տակ պիտի սղէր և չքանար նաև վերջին

1 «Մեր տես ու ճանաչն է» (ճանանչն է) — այսինքն՝ մեր ծանօթն է. «տես ու ճանաչի մօտ խայտառակ եղանք»: «Անճանա(ն)չ մարդ» — այսինքն անծանօթ, որով՝ ճանաչ — ծանօթ:

2 Այս — նշանը նիշում է անշեշտ բայց տոկուն ծայնաւոր, —' նշանը՝ գլխաւոր շեշտ ունեցող ծայնաւոր, այս՝ նշանը՝ երկրորդական շեշտով ծայնաւոր. օ նշանը՝ սուլ և ուրիմն սահուն ծայնաւոր, որ ենթակայ է սղման և չքացման: Շեշտառութեան տարագները կաղապարներ են, որոնց յարմարում են բառերի զանգուածները: Երանք տարրեր եղած են տարբեր ժամանակ: Այս մասին առիթ կունենամ խօսելու:

3 Արեւելիան շեշտառութեամբ ճա՛նաչ: Շեշտառութեան այս տարրերութեան, նրա ծագման եւ հետեւանքների մասին առիթ կ'ունենամ խօսելու:

իւն և բառը դառնար ծանա՛ւք: Գրական շրջանից յետոյ աւ խումբի հնչումն անցնելով օ-ի, բառը պիտի հնչէր ծանօթ, իսկ ժի՞ գարից յետոյ նաև դրուէր օ-ովի: Հին բառաձեւերի այս կերպարանափոխութեան մեծապէս պիտի նպաստէր և սեռականի շեշտը, իրանից առաջ մնացած ձայնաւորների շեշտերը ուժազրկելով եւ տեղափոխելով և ուրեմն ձայնաւորներն աւելի ենթակայ դարձնելով սղումի և չքացման. հմ. ուղ. սիրտի և սեռական սիրտի՛, որի հետեւանքով առաջին իւն շեշտից զրկուելով՝ սղած ու գարձած է ը և սիրտի՛, որ չենք գրում, թէեւ հնչում ենք:

Տրոհելով մեր վերականգնած ձեւերը և զուգազրելով իրար՝ մենք կըստանանք.

ծան-աւ-իւ-ի ծան-աւ-աս-ին-ի

Այս ձեւերը եթէ շեշտէին իրենց վերջնթեր վանդը՝ պիտի ձգէին իրենց վերջին իւն և դառնային՝

ծան-աս-ին ծան-աւ-աս-ին

Գիտենք որ ն և ս լծործդ են և նին ս-ից է ծառում, որով մենք կունենանք զուգահոռ ձեւեր.

ծան-աւ-ատ-ի'ն ծան-աւ-ատ-ի'ն

ծան-աւ-ատ-ի'ո ծան-աւ-ատ-ի'ո

Հան մի ձայն է, որ ենթակայ է ցնզման, հետեւապէս առաջին շարքը ն-ի ցնզումով պիտի գառնար՝

ծան-աւ-ատ-ի ծան-աւ-ատ-ի

Այս ձեւերին իրը զուգահոռ կարող ենք տալ ոուս և ոլաւ ձեւեր.

z-n-at-i u-z-n-a-v-at-i

Սլաւ բոլոր բնիկ բառերի ս ձայնը ծագում է նա-

իսաւոր ա ձայնից, որ մեր ւ-ի համարժէքն է 1). հետեւապէս մենք կարող ենք վերականգնել սլաւ ձեւը իբր ս-շո-աշ-ալ-ի և տեսնել թէ նա իբր ձեւ լիովին կշռում է մեր ծան-աւ-աս-ի վերականգնած հնարաւոր ձեւին։ Սլաւ բառի չը սուզ արմատը կշիռն է մեր ծան արմատի, հետեւապէս իր նախաւոր ձեւը պէտք է լինէր * չառ. հմ. անսկ. յալունի - զիտէ, ճառաջում է։ Անցողակի նկատենք, որ այս լուծումով մեր ծան դառնում է կշիռ անսկ. յ (ջ) ձայնին։ Նկատելով, որ մեր տեսութեամբ զ և ծ ձոյլ ձայներ են՝ մենք կարող ենք տարբաղադրել նրանց և զուգադրել իբր դժ և լս (քմային ս) և տեսնել, որ ծ և ս ինչպէս և դ և քմային և լծորդ են իբար։ Ու քանի որ սլաւ լեզուն չունի զ և ծ՝ մենք կարող ենք ասել, որ նրա արմատի զ (շ) ձայնը մի ձոյլ ձայնի քայքայման հետեւանք է։ Այդ ձոյլ ձայնը կարող էր լինել ձան, որ իբր դզ խումբ սոյլ զ-ի առջեւ ձգած է իր պայթուցիկ դժն։ Այդպէս է, որ մեր * ձիմ-եռն բասին սլաւոնը տալիս է զ-ով կշիռ։ հմ. չիմ-ա - ձմեն։ Նոյն հիմքերով անսկ. դ ձայնին հայը պիտի տար կամ քմային և կամ ատամային ս. և այդպէս է։ հմ. սամ և անսկ. dadamī - տալիս եմ։

Անցնելով մեր նիւթին՝ մենք կը տեսնենք, որ մեր լեզուն այս բայերի մէջ չի պահած նան-աս ի'ս և ծան-աւ-աս-ի'ս ձեւերը. և չի պահած, որովհետեւ այս ձեւերի սոյլը - սան նախ անցած է և հնչման և շնչման (տարբեր լեզուական միջավայրերի մէջ) և ապա շեշտած է ո՞չ թէ ի՞ն, այլ նախորդ վանկերը իբր նախա՛սիւ և ծան-ա՛ւ-աս-ին և անշեշտ մեացած վերջին ձայնաւորները սղելով ու չքացնելով՝ ստացած է

նանա՛ս և ծանա՛ւատիի, ու ձուլելով վախճանաւ կան բաղաձայն խմբերը ստեղծած է նանա՛չ և ծանա՛ւաք ձեւերը, իսկ այս վերջինը աւի սղումով ու կորուստով դարձած է ծանա՛ւք, այսինքն՝ ծանօթ:

Հիմա կարող ենք զուգագրել նախագրական երկու ձեւերը.

նան-աշ

ծան-աւ-աք

Եւ պարզ տեսնել, որ զրանք նոյնարմատ ձեւեր են, որ տարբերացած են աւ ածանցով, իրենց վախճանական ք և չ ձայները բարբառական տարբերացաման հետեւանք են:

Եթէ հիմա լուծենք «արարիչ» և «զրիչ» բառերի շն և զուգագրենք՝ մենք կըստանանք.

ար-ար-ի՛ս-իւ զիր-ի՛ս-իւ

(շեշտից յետոյ վախճանի իւերը սղելով ու չքանալով՝ տուած են տե խմբեր, որ ձուլումով դարձած են չ): Լուծելով նաև նանաչ բառի շն, մենք կըստանանք. նան-ա՛ս-իւ և կը տեսնենք, որ զրանք զուգահեռ կազմութիւններ են, հետեւապէս պէտք է որ նոյնարմէք և նոյնիմաստ լինեն: Արարիչ ։ ներկայ զերբայի իւմաստ ունի, ինչպէս և գրիչ բառը և նշանակում են արարող, զրող. հետեւապէս նանաչ, պիտի նշանակէր ծանող, հմ. վերծանող: Նոյն իմաստը պէտք է ունենար և ծանա՛ւաք հին բառը. որ հետագային դարձած է ծանօթ, քանի որ ք և չ լծորդ են, և ուրեմն մերձաւորապէս պիտի կազ ունենար ճանաչելու գործողութեան հետ, սակայն պիտի արտայայտէր գործողութեան մի որոշ երանգ, նոյն գործողութեան մի տարբեր տեսակը, որովհետեւ նա տարբերացած է աւ ածանցով. հմ. սլաւ, չո-ալ-ի - զիտենալ. Ա-չո-ան-ալ - ճանաչել: ճանաչ բառի քով զուգահեռ կարող

Էր լինել ծան-ար և ոչ ծան-աւ-ար → ծանօթ :

Առ այժմ գոհանանք այս լուծումներով, առանց ու-
րոշելու աւ ածանցի ձեւարար արժէքը :

Մենք կարող ենք հիմա միւնոյն կարգով լուծել
մի քանի բառեր, որ ունին օ:

1) Ունինք արածել և արօս, որի սեռականն է
արօսի՛: Լուծելով ծ-ն իբր իիս և տրոհելով այս բառե-
րը, մենք կարող ենք զուգագրել, արածել բայի բունը,
որ է արածի-(ալ) և արօս բառի նախաւոր ուղղականը,
որ եղած է արա՛ւատի, այսպէս.

արա՛ւատի → արա՛ւսի, → արածի

ար-աւ-ատի → արա՛ւտի → արօ՛սի (սեռ. արօսի՛):

և տեսնել, թէ այս վերականգնած ձեւերի բուները ի-
րարից տարբերում են աւ ածանցով, այսպէս՝

ար-ատ — ար-աւ-ատ

Եթէ առաջինը այս ձեւերից շեշտուէր իբր ա՛րաս,
պիտի սղէր ու չքացնէր անշեշտ ա-ը և բառը հնչէր
ա՛րաս, որով մենք կը տեսնենք թէ արս, արօս և արած(ել)
արմատակից են և տարբերացած են իրենց շեշտով,
միջածանց աւ-ով և է և ս եղերական ձայների ձուլու-
մով: Իսկ արա՛ծ ձեւը եթէ շեշտէր իր առաջին ա-ը և
հնչէր իբր ա՛րած, պիտի սղէր իր երկրորդ ա-ը և չը-
քացնելով - գառնար ա՛րծ, որի կրինաւորն է արծ-արծ
և սրանից՝ արծարծել: «Կրակը արծարծել» — նշանա-
կում է բոցավառել, այսինքն կեր տալ կրակին. Հմ.
«Կրակը լափեց» բացատրութիւնը: Այս կարգի կազ-
մութեանց համար հետաքրքրական է մեր բողի բառը
որի սեռականն է բո՛ղի: Վրացերէնի մէջ այս բառի անորոշ
հոլովն է բո՛լոկի: Հայերէնի մէջ շեշտն առաջին ո-ին
զարկելով՝ երկրորդը սղած ու չքացած է. այսպէս՝

բո՞ղոք → բո՞ղի: Այս շեշտառութեան հետեւանքով ստեղծուած է մի լոին խումբ դկ, բայց ինչպէս տեսանք երբեմն այդ խումբն եղած է մի լիածայն վանկ և դոկ: Մենք տեսնում ենք թէ լոին խմբերի մէջ սըզած ու չքացած է մի հին ձայնաւոր և հետեւապէս պէտք է լոին խմբերի մէջ վերականգնել չքացած ձայնաւորը՝ բառերի նախաւոր կերպարանքը ստանաւու համար: Վերը բերած օրինակների դ և լ ձայների համար նկատի ունենալ, որ նրանք լծորդ են:

2) Կարօս բառի գասական հնչումն էր կարա՛ւաս և սեռականը՝ կարաւի՛: Վերականգնելով և լոին խմբի չքացած ձայնաւորը, որ էր ա, մենք կըստանանք, կարա՛ւասի և արոհումով՝ կար-ա՛ւ-ասի: Իր արմատն է ուրեմն կար և կար-ա՛ւ-աս-ի մի ձեւ է աւածանցով: Կար արմատի նախաւոր ուզզականը՝ պէտք է լինէր կա՛րի և սեռականը՝ կարի՛, որ մակրայ է գասական լեզուի մէջ և նշանակում է խիստ, իր յոգնակին պիտի լինէր կարի-ք, որ պահած է իր խմաստի հետքը կարօս բառի մէջ. հմ. «աղքատ ու կարօս»: «հացի կարօս»: «կարօտին օգնել» ևայլն, որ նշանաւում են աղքատ ու կարիք ունեցող, հացի կարիք ունեցող, կարիք ունեցողին օգնել: Նոյն արմատը ես գտնում եմ ոռւս լեզուի մէջ, ուր կար-ա նշանակում է պատիժ, պատուհաս, կար-ա՛լի՝ պատժել, պատուհան, իսկ կար-ց՝ վատ, ծանր, անտանելի: Մենք չենք պահած պարզաբան բայը, որ պիտի լինէր *կար-աս-ել բայց պահած ենք բայանունը, որ է կար-ա՛ւ-աս-ի → կարօ՛սի. կարօ՛ս: Այս կարգի կազմութիւնները և ձայների լծորդութեամբ զուգանեն են գառնում սանսկրիտ պատճառական բայերին, ուրոնց ածանցն է ձայած այսպէս՝

Կար-ա՛ւ-աս-ի - ուն-այ-ատի - ստիպել տանելու,
տարցնել 1).

3) Մօս, որի սեռականը և ուրեմն նախաւոր ուղղականն է մօ՛սի. հմ. «մօտի մօտի անել», «մօտի մարդը» ևայն: Այդ բառի դասական ձեւն ու հնչումն էր մա՛ւտի, իսկ նախագրական լիածայն կերպարանքը մա՛ւտի: Ինձ թւում է, որ այս բառի արմատական աշը երկար էր և այդ երկարութիւնը ծագած էր երկու աւերի ձուլման հետեւանքով, ինչպէս սանսկրիտ լեզուի մէջ, ուր երկու և տալիս են մի երկար ա՛: Այսպիսի երեւոյթ անծանօթ չէ մեր լեզուին, որի մասին առիթ կունենամ խօսելու: Այսպէս է օրինակ զալ բառի աշը, որ եկած է * զա-ալ ձեւից: Հին Զուղայի բարբառն ասում է զօլման ամ, այսինքն՝ «գալիս եմ». այստեղ օ՞ն կարող էր միմիայն երկար ա-ից ծագել: Գալ բայի արմատը գ չէ, այլ զա: Այս հաշուով մենք կունենանք մա-ա՛ւտի, որ ձուլումով տուած է մա՛ւտի: և անշեշտ ա-ի չքացումով՝ մա՛ւտի որ է մօ՛սի: Արա անածանց ձեւը պիտի լինէր մա՛ւտի → մա՛սի: Այս բունից կազմուած է մի նոր բայ՝ մատի՛-սի: և մի նոր գերբայ՝ մատի՛-սի-օի, ուր ձայնաւորից յևաոյ եկող ի-ն չքանալով՝ ծագած է մատի՛-սի մի ձեւ, իսկ նրա ՏԵ խումբը ձուլումով տուած է չ և բառն եղած է մատի՛-չի, որ մի նախաւոր ուղղական է և մի բայաբուն: Իբր գոյական՝ իբ ուղղականը հետագային պէտք է զառնար մատի՛-չի (ի-ն ընկած ու կօրած): իբ սեռականը մատի՛-չի, մատի՛-հմ. գրի՛չ(ի)

1) Այս մասին մանրապատում խօսելու եմ, երբ անցնեմ մեր բայերի քննութեան: Առ այժմ ուշադրութեան առնել շեշտի նոյնութիւնը: Տես. Ֆ. Կնառուէր — Դասագիրք սանսկրիտ լեզուի (առևերէն) էջ 79.

→ գրի՛չ, գրիչի՛ → գրչի՛:

Այս բունից կազմուած է ալ վախճանով մի նոր բայ — մատիչի՛-ալ որ իր շեշտը պահելով անվթար իբր մատչի՛-ալ, հետեւորդ ա-ը պիտի յովտանար և ձուլուէր նախորդ իւն այսպէս՝ մատչի՛-ալ → մատչի՛ց լ ։ մատչի՛լ, որ մեր «մատչիլ» բայն է. իսկ եթէ շեշտէր իր ա-ը՝ նախորդ իւն անշեշտ մնալով պիտի յովտանար և ձուլուելով հետեւորդ ա-ի հետ՝ հնչէր իբր ե, որով՝ մատչի-ա՛լ → մատչցա՛լ → մատչել։ Թիֆլիսեցին ասում է. «զո՞նազներին գինի մօտ բերին», այսինքն՝ «հիւրերին գինի մատուցին», ուր տեսնում ենք «մօտ» բառի կապը «մատչիլ» բայի հետ։

Այս լուծումներից մենք կարող ենք հանել ու բանաձեւել մի հնչական օրէնք. ա՛ւա խումբը իր առաջին ա-ը շեշտելով՝ երկրորդ ա-ը սղում ու կորչում է, որով ա՛ւա դառնում է ա՛ւ, որ հետազային հընչուած է օ. այսպէս՝ մա՛ւաս → մաւս → մօս. կարա՛ւաս → կարա՛ւս → կարօ՛ս. արա՛ւաս → արա՛ւս → արօս եւայլն։



ԲԱՆԱՍԵՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ



ԳՈՐԾԻԱԿԱՆ ԲՈՒՆԵՐ ԵՒ ~ ՆԻ ՍԵՌԱԿԱՆ

Մի քանի անգամ արդէն զբած եմ, թէ մեր հին լիլուն պահած է մի գործիական ձև — արամբի —, որի գասական ձևն է արամբ: Սրանք մի և նոյն ձև երն են, միայն թէ առաջինը պահած է իր իւն, իսկ երկրորդը ձգած է: Հին գործիական ձեւի անվիթար պահպանման պատճառը ես համարած եմ նրա կենցաղական ուրոյն իմաստը, որ է «մարդ ունեցող կին»: Մնացած բոլոր զեպքերում հին գործիական ձեւերը կամ պահած են բ-ը և ձգած իւն, կամ բ-ը հնչափոխած են իրը և ձգած են իւն: Այսպէս՝

1. անձամբի → անձամբ (իւն ձգած):
2. կամարի → կամաւ (բ-ն անցած և հնչման և իւն ընկած):

«Սրամբի» ձեւի բի վախճանն ինքնին մի հնչափոխութեան արդիւնք է: Նրա նախաւոր ձեւի սանսկարա կշռն է - *bhis*, որ անցած է - *bhih* հնչման և Մեր լիլուի մէջ այդ վախճանի եկ հնչվունը զառւած ու դարձած է ե, իսկ վերջին հ-ն ցնդած է: Սանսկրիտ լիգուի մէջ սակայն այդ վախճանն ունին միմիայն յօդնակի գործիական հոլովերը և ունին անխտիր՝ լինեն հոլովական բուները ձայնաւոր թէ բաղաձայն և

բառերը՝ արական, իգական թէ չէզոք¹⁾: Այսպիսով
այդ վախճանի որդեգրումը մեր եղակի գործիականի
համար հետեւանք է լեզուական հին գիտակցութեան
քայլքայման: «Գրաբար» խօսող հին հայ ցեղերը
դադրած են գիտակցել այդ վախճանի յոգնարար ար-
ժէքը և իրենց յոգնակի գործիականը կազմելու հա-
մար խուսափած են շփոթից՝ եղակի գործիական ձե-
սին տալով մի ք. հմ. բանիւք, գրծովք, արգեւք,
անձամբ-ք ևայլն: Նրանք պահած են յոգնակի գոր-
ծիականի հին վախճանը և հնչափախած, բայց կիրար-
կած են եղակի ձեւերի համար: Այդպէս է նաև նոր
հայը, որ աշխարհաբար լեզուի և եր վախճանը կցում
է «զիրք» բառին և ստանում է «զրք-եր», թէեւ
«զիրք» բառն ինքնին յոգնակի է, բայց նոր հայն
այլեւս չի գիտակցում ք-ի ձեւարար արժէքը:

Նպատակս է քննել մի քանի բառաձեւը և բա-
յաբուներ և ցոյց տալ թէ նրանք հին գործիական
հոլովներ են:

Նախ առնենք այնպիսի ասութիւններ, ինչպէս՝
թէյը խմում են կծովի կամ զցովի, — այսինքն կամ
շաքարը կծելով կամ թէյի մէջ զցելով. (արևելեան
հայի համար «ձգել» նշանակում է մի պարան կամ
մի կերպաս մի ծայրից բռնել ու երկարել. իսկ «զցել»
— նշանակում է ձգել ցած կամ մի բանի մէջ): Դեղձը
երկու տեսակ է. կրծովի և նղկովի. մէկը, որ ձեղ-
բւում է երկու հաւասար մասի և միւսը, որ միայն

1) Տես Ֆ. Կնառուեր. Դասագիրք սանսկրիտ լե-
զուի. էջ 19, նաև A. Meillet. Introduction à l'étude
comparative des langues indo-européennes. § 259.

կրծւում է։ Փլաւը մի քանի տեսակ է։ Տամովի, երբ
բրինձը գեռ լիովին չեփուած՝ ջուրը քամում են քա-
միչով և յետոյ դնում մարմանդ կրակին, որ լիովին
եփուի գոլորշու մէջ։ Տաշովի, որ պէտք է թողնել կը-
րակին՝ ջուրը քաշելու համար և որի բրինձը կիսով
քայքայում է։ Հափովի, երբ ջուրն ու բրինձը որոշ
համեմատութեամբ են զնում և ջուրի քաշուին ու
բրինձի եփուիլը միաժամանակ է վերջանում։ Առնվի
հաց նշանակում է ոչ սեփական տնտեսութեան ար-
դիւնք, այլ դրսից գնած։ Եխնովի ատամ, այսինքն
ոչ բնական, անվթար, այլ նորոգուած կամ արհես-
տական։ Բերովի հող, այսինքն ուրիշ տեղից բերուած
տանիքի կամ ծաղկանցի համար։ Ծնալովի աթոռ,
այսինքն ծալուող աթոռ, ևայլն, ևայլն։ Այս բոլոր
բառերը կիրարկուում են իրք ածական։ — Կծովի թէյ,
քամովի փլաւ ևայլն։ Առանձին առնուած նրանք
դոյական իմաստ ունեն։ «կծովին համով չէ», գցովի
խմիր» (այսինքն «կծովի թէյը»։ «գցովի» այստեղ
մակրայ է)։ «Մեր քաշովին փշացաւ. (այսինքն՝ քա-
շովի փլաւը)։ «Ո՞րն է ցաւում. շինովին» (այսինքն
շինովի ատամը) ևայլն։ Այս ձեւերը հետեւում են
«զինի - զինու» հոլովական կարգին՝ — կծովին լաւ
է, բայց գցովուն չի հասնի»։ «կծովաւց համ չառայ.
բեր մի գցովին փորձեմ»։ «քաշովու ջուրը շատ չեն
անի» ևայլն։

Ես կարծում եմ, որ այս բոլոր ձեւերը հին գոր-
ծիական հոլովներ են, որոնց բ-ը անցած է և (w) և
ապա վ (v) հնչման, բայց պահած է իր ի-ն, այսպէս՝
շինովի (հմ. արամբի) → շինովի → շինովի։ Եեշ-
տից յետոյ և երկու ձայնաւորի միջև բ-ը փոխած է
իր հնչումը։

Այս հնակերպ գործիական ձևերը դարձած են բուն
և ծնունդ տուած են աշխարհաբար լիզուի կրաւորա-
կան բայերին՝ այսպէս.

Հինուախալ → Հինուաել → Հինուել (ու = ու). (իւա-ե):
Գրուախալ → Գրուաել → Գրուել » » » » »

Այս ձևերն այսօր հնչում են իբր բե՛րվել, շի՛ն-
վել, այսինքն ուն ընկած է և անցած է ս հընչ-
ման: Այստեղից հետեւում է, որ մեր ու պարզ ձայ-
նը երբեմն եղած է երկճայն ու այս պայմանով
միայն կարող էր ուն սղիլ ու չքանալ: Սրեելահայն
արտաքերում է բե՛րվել, շի՛նվել, շեշտելով առաջին
վանկը: Շեշտից յետոյ գալով՝ ուն նախ սղած է և
բառը հնչած է իբր բերւել, շինըւել. այս փուլի մէջ
է, որ ւ-ը թեքուած է դէպի վ հնչում և ը-ի վերջնա-
կան չքացումով ինքն ևս դարձած է լիակատար վ:
Այսպիսով ո՞չ թէ ու ձայնն է, որ դարձած է վ, այդ
այդ երբեմն բաղադիր ձայնի ւն է, որ անցած է վ
հնչման՝ ուի սղումից յետոյ: Որ այս է ու → վ փո-
խանցման երեսյթի ճիշտ բանաձեռումը, կարող ենք
տեսնել մի փայլուն օրինակի վրայ: Միենոյն բառը
մեր տարբեր բարբառների մէջ տարակերպ է հնչում.
այսպես խո՛րուել (խո՛րվել) և խորո՛վել: Սրանք նոյն
բառերն են և ծագում են միենոյն գործիական բու-
նից, որ է խորուալ — միայն թէ այդ ձևերից մէկը
շեշտում է իր առաջին ուն — խո՛րուել, ուստի երկ-
րորդ ուն սղում է և մենք ստանում ենք խո՛րուել →
խո՛րուել → խո՛րվել. իսկ երկրորդ ձևը շեշտը զարկում
է երկրորդ ուին, որով նա մնում է անվլթար և մենք
ստանում ենք խորո՛ւել, որ հետազային հնչած է խո-
րո՛վել¹⁾: Այս չքացող ուն, որոշ պայմաններում մին-

1) Բարբառի մէջ սղում է իբր խորո՛վել, որ հըն-
չում է խորո՛վել:

չեւ այսօր դեռ պահում էիր սուղ վիճակը. այսպէս՝ բըռնըվե՛լ, որ է բռնուել:

Այսպէս նաև ռես տռւի՛ց, որ է տուի՛ մենք հընչում ենք Տրվի՛, ուր պարզ է թէ ը-ը ո-ի սուղ վիճակն է, իսկ վ հնչումը՝ ւ-ի հնչափոխութիւնը։ Կարող ենք ասել թէ շեշտից յետոյ և շեշտից առաջ ու երկծայնի ուն սղում է և գառնում ը, իսկ ւ-ն անցնում է վ հնչման հմ. նաև գրուե՛լ, որ հնչում է իրը գրվե՛լ։ Այս ձայնաշրջման պայմանների մանր քննութիւնը թողնում եմ յատուկ յուշագրի։

Մենք ունենք հին մակրայներ. կամովին, երամովին, ամենեին եայլն։ Ի՞նչ կապ ունեն սրանք շնովի, բերովի և նման ձեւերի հետ և ի՞նչպէս պէտք է արոհուեին այս բառերը. կամովին թէ կամովին։ Պարզ է, որ այս ձեւերի բուները գործիական հոլովներ են. կամով¹⁾, երամով, *ամենե. հմ. գործով, բարե. Բայց մենք տեսանք թէ գործիական ձեւեր են նաև կծովի, զցովի եայլն, ուստի խնդիր է թէ գործիական հոլովի հին ձեւն է, որով ածանցուած է կաշամովին մակրայը թէ^o հոլովի նոր ձեւը. կամովին թէ կամով, Գուցէ մէկը փորձուի ասել թէ կամովին և կամովին նոյն առնչութիւնն ունին իրար հետ ինչ որ ունին հարա և հարսն ձեւերը և ուրեմն «կամովի» ձեւ համարել հին «կամովին» ձեւը, որ սակայն ձգած է իր հան։

Քննենք այս խնդիրը։

1) Սայաթ-Նովան գրում է, «Կէն՝ կամով աւելոցիր քու սրտի ցաւդ» ԾԲ։

Յայտնի է մեր տեսակէտը մեր եղ. սեռ. հոլովի
մասին (ԲՅ. թ): Դա մի վաղեմի ուղղական է, բայց
տարբեր շեշտառութեամբ. այսպէս՝

Ուղղական		Եղ. Սեռական
սե՛րման	→ սեր'մն	սերման'
ա՛ւուր	→ ա՛ւր	աւուր
ե՛զեր	→ ե՛զր	եզեր'
շեշտառութեան	տարբազ	—' օ

Ուղղական ձևերի անշեշտ ձայնաւորները սղած են
և արտաքերուած են իրը լ. այդպէս արտաքերում
ենք նաև մենք: Նոյն ձայները շեշտ առնելով եղ. սե-
ռական ձևերի մէջ՝ մնացած են անվթար: Մենք այս-
տեղ տեսնում ենք մի շարժուն շեշտ, որ ուղղական
ձևի մէջ զարկում է առաջին վանկի ձայնաւորին բխէ
եղ. սեռակ. ձևի մէջ զարկում է երկրորդ ձայնաւո-
րին:

Մինոյն տարագով շեշտուած է և մեր եղ. և յոգ.
գործիական հոլովը, այսպ' օ՝ —', (և ախապէս օ՝ —' օ):

* բանի՛րի	→ *բանի՛ւի	→ բանի՛ւ — բանի՛ւք
* գործո՛րի	→ *գործո՛վի	→ գործո՛վ — գործո՛վք
* կամա՛րի	→ *կամա՛ւի	→ կամա՛ւ — կամա՛ւք
* եղմ'րըի	→ եղմ'րը	եղմ'րը և այլն:

Մենք ունինք գործիական ձևեր, որոնց գործիա-
կան հանգամանքը չենք գիտակցում այլեւ. այսպէս՝
իբրեւ, արդարեւ, բարեւ ևայլն: Այս գործիական ձե-
ւերից շատերը մենք այսօր համարում ենք ուղղական
և հոլովում ենք զրելով. բարեկի, բարեսով, բարեից,
բարեների, բարեներով ևայլն: Ճիշտ մեղ նման՝ նաև
հին հայը գործիական շատ մեռած ձևեր համարած է
ուղղական և հոլոված՝ զրելով. լիբաւի (ներգոյա-

կան), մինչդեռ իրաւ ձեզ իր բառի գործիականն է և ունի իր օրինաւոր յոգնակին իրը իրաւք, որ է իրօք Երբ բառերի ձեական արժեքը մաշւում ու կորչում է՝ լեզուական գիտակցութիւնը նրանց տալիս է նոր արձ մէք. այսպէս է, որ բազմաթիւ մեռած հոլովներ դառնում են մակրայ կամ ածական. հմ. «համով հաց» ու ուր «համով» գործիական է, բայց մտածւում ու կիրարկւում է իրը ածական. «բարե», որ «բարի» բառի գործիականն է, բայց մտածւում ու կիրարկւում է իրը զատ բառ և իրը ուղղական հոլով ևայլն:

Հայ լեզուական մի տարբեր միջավայր իր եզ. սեռականը կազմած է ոչ թէ շարժուն, այլ կայուն շեշտառութեամբ. այսինքն նրա թէ՛ ուղղական և թէ սեռական ձեւերը իրենց շեշտը զարկած են միենոյն վանկին և երկու հոլովները տարբերացած են միմիայն վախճանական ձայնաւորի կորուսով կամ պահպանումով. այսպէս՝

	Ուղղական	Սեռական
Արևելեան շեշտ.	հա՛ցի → հաց (իւն ընկած) —' օ	հա՛ցի —' օ
Գրաբարի շեշտ.	հա՛ցի → հաց (իւն ընկած) —' օ	հացի' օ —'

Արևելեան ձեի մէջ շեշտը կայուն է, այսինքն դարկում է միենոյն ձայնաւորին. ուղղականի մէջ իւն ընկած է, իսկ սեռականի մէջ թէև իւն շեշտ չունի, բայց մեացած է անկորուստ, որով և տարբերացած են ուղղականն ու սեռականը: Գրաբարի ուղղական ձեզ նոյն շեշտն ունի, ինչ որ աշխարհաբար լեզուն և հասած է նոյն արդիւնքին, այսինքն՝ սղած ու ձգած է իր անշեշտ իւն, իսկ սեռական ձեի մէջ շեշտն անցած է հետեւորդ վանկին, այսինքն՝ շարժուած է և իւն շեշտ առնելով՝ մեացած է անվթար. հացի':

Մենք այստեղ պայծառորէն տեսնում ենք թէ ինչպէս իմացական ազգակը գերակշռում է բնական ուժերի վրայ: Բոլոր անշեշտ ձայները ենթակայ են սղման, մանաւանդ դօրաւոր շեշտից յետոյ և դա բնական է: Իայց իմացութեան համար անհրաժեշտ է ձեւերի տարրերացումը, ուստի թէ աշխարհաբար ձեի մէջ շեշտը կայուն է և հետեւապէս հետեւորդ անշեշտ իւն բնական ուժով պէտք է, որ սղէր, բայց բանական ուժի գերակշռումով՝ նա մնում է անվթար: Սյսպէս է որ այն բարբառների մէջ, ուր ալ խումբն անցնում է և հնչման և հայր բառը հնչում է հետ, Տէրունական աղօթքի անունը մնացած է անվթար և կոչւում «Հայր մեր» և մինչեւ իսկ նախագրական հնչումով իր «հայըր մեր»: Այս մէկ տեղը «հայըր» «հէր» չի դարձած, հակառակ բնական հնչափոխութեան, որով հետեւ իմացական ազգակը միջամտած է և «հայըր» ձեզ պահած է անվթար: «հայըր մեր»ն այստեղ ստացած է ուրոյն իմաստ, ինչպէս ռարամբին ձեզ:

Վրացին շեշտում է արեւելեան շեշտառութեամբ. այսպէս՝ նոյն բառն է մեր «քաղաքը» և վրացու «քալաքը», որ անորոշ հոլով է և որի ուզգականն է, «քալաքի», որ մեր նախագրական ուզգականն է և որի շեշտառութեան հետեւանքով կորած է նրա վախճանի իւն:

Ուզգական	Սեռական
Վրաց. քա'լաքի —' օ — քա'լաք(ի)սա (շեշտը կայուն)	
Աշխար. քա'լաք(ի) » — քա'լ(ա).քի » »	
Գրաբ. քաղա'ք(ի) — —' օ քաղաքի'	
(շեշտը շարժուն. — օ —')	

Հին վրացերէնն իր հանդիսաւոր արտաքերութեան մէջ պահում էր շեշտից յետոյ եկող իւն, առանց շեշտը փոխելու. հմ. քա'լաքիսա. իսկ նոր վրացերէնը սղում է այդ իւն, ինչպէս հայն իր առն, որ գա-

Ալս է շեշտից՝ յետոյ. հմ. քա՛լաքսա, քա՛ղքի (արտարերւում է՝ քա՛ղկի): Գրաբարը տարբեր է շեշտում թէ ուղղականը և թէ սեռականը. նրա շեշտը շարժուն է. քաղա՛ք(ի) — քաղաքի՛: Արևելեան այն բարբառները, որ ա-ը չեն սղում՝ իրենց շեշտը նոյնպէս շարժում են, ինչպէս դրաբուրը. քա՛ղաք(ի) — քաղա՛քի (հմ. մեր քաղա՛քի ջո՛ւրը համով է): Նոյն է շեշտը նաև գործ. հոլովի մէջ՝ արեւելեան աշխարհաբարնու վրացերէնը կայուն շեշտ ունեն. — օ. վրաց. քա՛լաքիթ, աշխ, քա՛ղկով (հմ. քաղկովն անց կացաւ ¹⁾): Գրաբարն ու ա-ը պահող բարբառները տարծուն շեշտով. քաղա՛ք — քաղաքա՛ւ. քա՛ղաք — քաշա՛քով:

Մինչեւ այսօր արեւելահայը պահած է շեշտելու իր աւանզական կերպը և այնտեղ, ուր գրաբարն ասում է կամովի՛ն, զլխովի՛ն, ամենեւի՛ն, արեւելահայը կարողում է. կամո՛վին, զլխո՛վին, ամենե՛ւին և գեռ ինդիր է թէ այս արաաբերութերից ո՞ր մէկն է նախագրականը:

1) Սայաթ-Նովան ասում է. «Երեսդ տեսնելու գու քան քա՛ղաք՝ քա՛ղկով, զիդ՝ զիզի պէս» լի: Այսինքըն՝ երեսդ գալիս են տեսնելու քաղաք ու զիւղ իրենց ողջ բնակչութեամբ. հմ. ամբողջ անով հիւր գնացին. «քաղաք քաղքով» նշանակում է ողջ քաղաքով տեսնելու կուգան. «զիդ զիզի պէս», նշանակում է զիւղը տեսնելու է գալիս ինչպէս մի զիւղ, այսինքն՝ բազմութեամբ, զիւղն ամբողջ. հմ. ջուրը թափւում էր հեղեղի պէս:

Առնենք հիմա մի քանի բառերի արևելեան հոլովումը:

Ուղղ.	վե՛ր	տա՛կ	ա՛ռաջ	վերե՛ւ
Սեռ.	վե՛րի	տա՛կի	առաջի	վերե՛ւի
Տրակ.	վե՛րին	տա՛կին	առաջին	վերե՛ւին ¹⁾

Մենք կը տեսնենք, որ աշխարհաբարի տրականը գրաբարի ուղղականն է. վերին, առաջին, բայց տարբեր շեշտառութեամբ: **Մեր տեսութեան համաձայն այստեղ սեռ.** և ուղղ. նոյն ձևերը պէտք է լինեն, բայց կամ տարբեր շեշտառութեամբ, այսինքն՝ շարժուն շեշտով և ի՞ն պահած ու ձգած և գրանով տարբերացած, կամ կայուն շեշտով և ի՞ն պահած կամ ձըդած): այսինքն՝ կամ վե՛րի, որ տուած է վե՛ր. իսկ սեռական վե՛րի (կայուն շեշտ և ի՞ն պահած). կամ՝ վե՛րի, որ տուած է վե՛ր և վերի' (շարժուն շեշտ և ի՞ն պահած): **Արեւելեան հայը չունի վերի' արտաքերութիւնն անհնարին չէ:**

Արդ՝ վերի բառերի սեռականները նկատուած են ուղղական և իրենց հերթին հոլովուած են մի յատուկ

¹⁾ վե՛ր գնա՞ . վե՛րի տունը . վե՛րին տուր (զա՛րկ). ծառի տակ . ծառի տա՛կի մարդը . խնձորի ծառի տա՛կին . տան ա՛ռաջ . տան առաջի մարդը (որ կանդնած է տան առջեւը). տան առաջին մի ծառ կայ . վե՛րեւը մարդ կայ . վերե՛ւի դուռը . վերե՛ւին չի հասնի:

Կարգով. այսպէս.

Ուզղ. վե՛րի տա՛կի առա՛ջի վերե՛ւի
 Սեռ. վերի՛նի տակի՛նի առաջի՛նի վերեկի՛նի
 Տրակ. վերի՛նին տակի՛նին առաջի՛նին վերեկի՛նին¹⁾)

Մենք այստեղ տեսնում ենք շարժուն շեշտ, որ անցնում է մէկ վանկից միւսին. վե՛րի — վերի՛նի; Տեսնում ենք նաև հոլովական ուրիշ կարգ, որ իր սեռականը կազմում է - նի ածանցով. տա՛կի — տակի՛նի: Այս սեռական ձեզ մեր հին զօրաւոր շեշտի աղդեցութեան տակ կարող էր սղիլ իր վախճանական իւն և կարծում եմ թէ սղած է և տուած գրաբարի ուղղական ձեռերը՝ վերի՛ն, առաջի՛ն, որ եղած են երբեմըն վերի՛ն(ի), առաջի՛ն(ի): Այսպիսով՝ ինչպէս ունենք ուզղ. սեռ. մի զոյգ վե՛րի → վե՛ր և վե՛րի. նրան զուգահեռ ունեցած ենք. վերի՛նի → վերի՛ն և վերի՛նի: Այս զոյգի շեշտն եղած է կայուն և հոլովակարը տարբերացած են իւն պահելով կամ ձգելով. հմ. հա՛ցի → հա՛ց - հա՛ցի (արեւելան շեշտ.): Դրաբարի վերնոյ սեռականը, որ է հին վերինոյ՝ տարբեր կազմութիւն է, որի մասին առիթ կունենամ խօսելու²⁾:

1) Վերի տան զուռը. վերի՛նի կտուրը (տան). տակի բաղը (վարի այգին). տակի՛նի խնձորը (այգու). առա՛ջի պատը. առաջի՛նի հիմքը (պատի). վերե՛ւի տուռը. վերեկի՛նի դուռը (տան): Առաջի՛նին մտիկ (նայիր առջելը կանգնածին). վերի՛նին կամ վերեկի՛նին բան չասես, տակի՛նին կանչիր (այսինքն վերը ապրողին բան չասես, տակը պարողին կանչիր):

2) Նրա նախաւոր ուզղ. ձեզ մեր տեսութեամբ պէտք է լինէր վերի՛նոյ (շեշտն իւի վրայ, որի հետեւանքով վախճանը սղած է. սեռականը պահած է այդ

Մենք տեսնում ենք թէ արևելեան կայուն և գրաբարի շարժուն չեշտերը միապէս հին են և նախազրական, որով պիտանի են ձեւերի փոփոխութիւնները մեխներու համար: Վերին ձեւը այսօր արևմտեան հայերէնի մէջ ուղղական է: այդպէս է նաև գրաբարի մէջ: Նրանք չունեն վերի ձեռով ուղղական: Մենք կարող ենք ասել, որ վերին ձեւը ո՞չ թէ ն պահած է, իսկ վերի ձեւը ն ձգած, այլ վերի և վերինի հին ու նոր զուգահեռ ձեւեր են և վաղեմի ուղղական-սեռական հոլովներ, որ նայած իրենց չեշտին և տարբերացման եղանակին՝ տուած են վեր և վերին ձեւերը՝ ի-ն ձգելով, և մինչև այսօր մնացած են անվթար թէև փոխած են իրենց արժէքը:

Առնենք հիմա վերեւի բառը, որ սեռականն է վերեւ բառի և իր հերթին ուղղական է, որի սեռականն է վերեւինի: Վերեւի բառը իր ձեռով մի հին զործիական է, որ սակայն հետագային զիտուած է իրը ուղղական և հոլովուած: հմ. վերեինի, վերեինով, վերեինները ևայն: Լուծելով այդ բառի երկրորդ ե-ը իրը իա, մենք կըստանանք. վերի-աւ-ի. այս ձեին իրը զուգահեռ կարող ենք տալ բարեւ բառի նախազրական զործիական ձեւը, որ պիտի լինէր բարի-աւ-ի: Մենք կը տեսնենք, որ վերեւի բառը մի

վախճանը, որովհետեւ չեշտն անցած է այդ վանկին— վերնո՛յ: Հմ. հակառակ կարգը ուսւ լեզուի մէջ. koleso' (անիւ, ուղղակ.) — kolés (յոդ. սեռ. անիւների. տարբեր չեշտ, վախճանը հնչապէս չքացած): Հայերէնի չեշտառական կարգով այդ բառը պէտք է ուղղ. մէջ հնչէր koléso և վախճանի սղումով և անկումով գառնար kolés, իսկ սեռականի մէջ koleso'. հմ. վերին(ոյ) → վերին, վերինո՛յ → վերնո՛յ:

հին գործիական է, որ պահած է իր իւն, ինչպէս
բարեւ բառը մի հին գործիական է, որ սակայն նե-
տած է իր իւն. հմ. արամբի և արամբ։ Այս գործի-
ականների իւն ձգած ձեւերը սակայն զիտուած են իրը
ուղղական և հոլովուած են մէկը աալով իբր եղ. սեռ.
վերե՛ւի և միւսը՝ բարե՛ւի, իբր ուղղական ունենա-
լով՝ վերեւ և բարեւ։ Այս նոյն ձեւերը գնացած են
նաև նի հոլովման կարգով և տուած են վերե՛ւինի,
ներբե՛ւինի։ Այս կազմութեանց մէջ գործիական հո-
լովները մնացած են իրենց վաղեմի կերպարանքով,
այսինքն իւն պահելով. — վերեի-նի։ Արևմտահայերի
մէջ սովորական չեն այս ձեւերը. եթէ ունենային՝
նրանց ուղղականը պիտի լինէր ներքեին, վերեին,
այսինքն՝ իւն ձգած հին սեռականներ. հմ. վերին,
ներքին։ Նրանց չունեցած ձեւերը սակայն պահած է
արևելահայր — բայց տարբեր արժէքով՝ իբր տրա-
կան. հմ. վերե՛ւին, ներքե՛ւին։ Իրօք սրանք հին
սեռական են - նի վախճանով, որ - իւն ձգելով կամ
պահելով տարբերացած են իբր սեռական և տրական
և այդ է պատճառը, որ սեռ. և տրական նոյն ձեւերն
են ինչպէս գրաբարի, այնպէս և աշխարհաբարի մէջ,
միայն նրանց տարբերակները երբեմն ըմբռնուած են
իբր որոշ և անորոշ հոլովներ։ Այսպէս Քարին տակը,
որ մի գիւղի անուն է. գտնուում է Շուշի քաղաքի
սեպ ժայռերի տակ. իր անունը նշանակում է «Ժայռի
տակ», ուր «Քարին» սեռական է. արևմտահայի հա-
մար նոյնպէս «Քարին» սեռական է։ Դրան զուգահեռ
է «Քարի տակը», ուր «Քարի» նոյնպէս սեռական է.
բայց նոյն ձեւ նաև տրական է. «ոտս առաւ քարի»,
այսինքն՝ «Քարի գիւղաւ» բացատրութեան մէջ, ինչ-
պէս «Քարին» ձեւը ոչ միայն սեռական, այլև տրա-
կան է. հմ. «Նստեց քարին»։ Ես յատուկ յու-
շագիր պիտի յատկացնեմ ձեւի և իմաստի առնչու-

թեան, ցոյց տալու համար թէ ձև և կիրարկութիւն տարբեր բաներ են և իրար հետ կապ չունին յաճախս: «Վերեւ բառի պէս գործիական է նաև «համովք» բառը: Իբր ուղղական առնուելով՝ նրա սեռականն է «համովի»: իսկ այս ձևն իբր ուղղական առնուելով՝ տալիս է սեռական «համովինի»: Սրանք կարող են իրար փոխարինել, կարող ենք ասել, օտայ տանձերից համովինի կոթը կարճ է»: կամ «համովի կոթն երկար է»: Նոյն ձևով ասում ենք ոքու կօշիկը նոր է: ի՞մի տակը ծակ է: կամ՝ իմինի տակը ծակ է»: Այս ձևերից մեկը հին ուղղական է, որ պահած է իր ի-ն, ուստի նրան կառչած է սեռական իմաստ: Իր ուղղականը նոյն ձևն է, նոյն շեշտով, բայց ի-ն ձգած: ի՞մի → իմ և ի՞մի: Գրաբարի շարժուն շեշտառութեամբ նա պիտի հնչէր իմի: Միւսը իմի հին ուղղականի սեռականն է - նի կազմութեամբ եւ տարծուն շեշտով: ի՞մի - իմի՞ անի:

Այս հաշուով մեր հին մակբայները հին սեռականներ են, որ գործիական հին ձևերը նկատած են իբր ուղղական և հոլոված: այսպէս: կամովի՞ անի → կամովի՞ն: բնաւի՞նի - բնաւի՞ն, ամենեի՞ անի → ամենեի՞ն: որով պարզ է, թէ այս ձևերը պիտի տրոհուին իբր կամովի-ն, բնաւի-ն ևայլն, ուր նաև հին - նի վախճանի մնացորդն է:

Նոյն հաշուով արեւելեան տրական ձևերը վերի՞նին, տակի՞նին, առաջի՞նին, վերևի՞նին, պիտի տըրոհուին իբր վերի՞նին, տակի՞ անին, առաջի՞ անին, վերևի՞ անին, ուր վերջին ն, կարծում եմ իր հերթին մի հին - նի վախճանի մնացորդ է և այս ձևերի նախաւոր կերպարանքը ենթադրում եմ թէ եղած է վերի՞ անինի, տակի՞ անինի ևայլն, որ տուած են վերի՞ անին(ի), տակի՞ անինի(ի) ևայլն: Այս ձևերը կարող են նկատուիլ կրկնակի սեռականներ ինչպէս ունենք

Եղբականի յոգնակիներ այսպէս գրքեր, որ է գիրք-եր և այլն:

Այս ձեերը տարբեր շեշտառութիւն ունեցած են, որ կարելի է մակարերել նրանց վախճանական արդիւնքից: Այսպէս տակի՞նի ձեւը բարբառի մէջ հընչում է իբր տըկի՞նի, հմ. տըկի՞նի տակը: Այս արդիւնքը մեկնելի է այն շեշտառութեամբ, որ ունի այդ բառը: անշեշտ ա-ը կարող էր սղել և սղած է: Բայց նոյն բառն ունինք և տակընի՝ ձեռվ. հմ. տակընի տա՛կը տես: Այս սղումները միշտ պահում են իրենց լը և չեն արտաքրեւում իբր տակի՞նի, այլ միշտ և որոշապէս տա-կը-նի՞: Այս սղումը կարելի է մեկնել ընդունելով թէ նախաւոր տակինի ձեւը շեշտուած է իբր —՝ օ —՝, որի հետևանքով միջին իւն սղած է իբր լը: տա-կինի՞ — տա-կընի՞: Այդպէս նաև ունինք իւմի՞նի և իմընի՞: Որով կը տեսնենք կայուն և շարժուն շեշտերի հին խաղը և նրանց հետեւանքը: Այսպէս կարող ենք զուգագրել. (Տես տախտակը էջ 180)

Այս պատկերը մի նոր ապացոյց է թէ մեր շեշտագրութեան երկու կերպերը շատ հին են և նախագրական:

Վերի՞նի սեռական ձեի տրականն է վերի՞նին, որ մի հին վերինի՞նի ձեից պէտք է համարել ծագած, որի վախճանական իւն ընկած է: այդպէս նաև վերեի՞նի և վերեի՞նին, որ է մի հին վերեի՞նինի: ~ նի վախճանով սեռականները յատուկ են աշխարհաբար լեզուին: Ահուական ~ նի և տրական ~ նի ~ նի վախճանները յիշեցնում են ուրարտական սեպագիրների լեզուն, ուր սովորական են ու ու-ու վախճանները¹⁾: Համարձակում եմ ասել, թէ հոլովա-

¹⁾Տես Հ. Յ. Տաշեան, Ուսումն դասական հայերէն լեզուի, էջ 379-80:

ՏԱՐԲԵՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՍՈՒՂ ԶԵՒԵՐ

Առաջին տարբերացում.

Հեշտը կայուն ՝՝ օ
Հեշտը շարժուն ՝՝ օ

Երկրորդ տարբերացում

Հեշտը կայուն օ՝՝
Հեշտը շարժուն օ՝՝

Երրորդ տարբերացում

Հեշտը կայուն ՝՝՝ օ
Հեշտը շարժուն ՝՝՝ օ

վե՛րի → վեր
վե՛րի → վե՛ր

վերի'
վերի'

վերի՛-նի
վերի՛-նի

վե՛րի → վեր
վերի՛ օ՝՝

վերի՛-նի
վերի՛-նի'

վերի՛-նի-ն(ի)
վերի՛-նի՛-ն(ի)

Աղում

վերընի՛ օ՝՝

վերընի՛-ն-ն
վերընի՛-ն-ն

կան այս կարգը ուրարտական ժամանկութիւն է և
ուժան մինր այս վահճանները հնդկութական համա-
լուխն՝ նոյնքան հնդկութական են և ուրարտական

ձերը կամ առնուազն կրած են հնդկրոպական ազդեստոթիւն։ Այս և նի և և նիւնի ածանցները ես գըտնում եմ օրինակ ոռւս լեզուի մէջ։ Մենք ունենք ներքի, ներքին և ներքեւ բառերը։ Սա մի յոգնակի է, որ նկատուած է եղակի։ Հմ. ներ, իսկ յոգն։ ներ-է, հայց։ ներ-ս, որով՝ ներ-է-ի-նի → ներքին։ ներ-է-ի-ա՛ւ-ի → ներքեւ։ Մենք այս բառից եղակի հոլովներ չունենք, որ պիտի լինէին * ներ-ի, * ներ-ի-նի, * ներին, * ներ-ի-ա՛ւ, * ներեւ։

Փոխագարձաբար մենք ունենք եղակի կազմութիւններ. վեր, վերին, վերեւ, բայց չունենք յոգնակի կազմութիւններ։ * վերք, * վերքի, * վերքեւ։ Խուսը սակայն ունի վերխ բառը, որ նշանակում է վեր, վերեւ և որ համարում եմ մեր հնարաւոր * վերք ձեւի կիրու։ Այս բառի յոգնակին է վերխի՛, որ սակայն այս ու այն բարբառում մեր ձեւի պիս չեշաւում է իբր վերխի (հմ. ներքի)։ Սրանից և նի ածանցով կազմուած եմ համարում ոռւս վերխնի¹⁾ բառը, որ նշանակում է վերին (հին՝ վերինի) և որ ծագած հմ համարում մի հին վերխ-ի-նի ձերք, ուր միջին իշն ուղած ու չքացած է։ (հմ. ներքինի || ներքինի' → ներքնի', որ կարող էր տրոհուել ու հնչել նաև իբր ներք.նի և գառնալ զուգահեռ վերխնի ոռւս ձեւին)։ Նոյն արմատից է ոռւս վերխն'վնի բառը, որ նշանակում է վերնագոյն, բարձրագոյն և որ համարում եմ մի հին ու սղած վերխն'վի-նի (հմ. կոմովիշն(ի))։ առեւելան շեշտառութիւն)։ Վերջապէս նոյն արմատից

1) Հին սլաւերէնը զրում է վերխնիի (երկու ի), որ ոռւս լեզուի մէջ դարձած է վերխնի։ Ես առնում եմ բառի բռնը. վերջին իշն սեռի ածանց է, որ յովանում է ոռւս լեզուի մէջ, տալով ։

է նաև ոռւս վերըի' ՅՅի բառը, որ նշանակում է ծայրագոյն, գագաթնագոյն և որ ծագում է նոյն վերին բառից (ոռւս լիզուի մէջ իս և ո լծորդ են) և որ կարծում եմ ամփոփումն է մի հին վերըի' ՅՅի-նի ձեւի (հմ. ներքի՛ Նի-նի → ներքի՛ նին. տրական): Արևելահայը շեշտում է վազեմի ոռւսի պէս. ներքի՛ նին(ի):

Այս լուծումների հիման վրայ կարող ենք ասել, որ մեր «գառին», ձեռին» դասական սեռականները ուրարտական միջամխութիւն են գրաբարի հոլովական՝ կարգի մէջ: Գրաբար «հիմն» սեռական տալիս է «հիման» և «սերմն» «սերման»: Նոյն ձեռվ «գառն» տալիս է «գառան» բայց ոչ գրաբարի, այլ բարբառների մէջ: Սակայն դիտելով գրաբարի հոլովական կարգը և սեռականի և ուղղականի տարբերացման եղանակը շեշտի տեղափոխութեամբ «գառան» ձեռ աւելի սազ կը գար գրաբարին քան աշխարհաբարին՝ հին ուղղականը լինելով գա՛ռան, որ պիտի տար եւ տուած է իրօք գա՛ռնի → գառն և սեռականը շարժուն շեշտով պիտի լինէր՝ գառա՛ն:

Տեսանք թէ շարժուն շեշտը յատուկ է գրաբարին: Արևելահայն արտարերում է գա՛ռան, հետեւելով իր շեշտական կարգին: Այսինքն անշարժ պահելով շեշտը և ձգելով ուղղականի վերջին ձայնաւորը բայց վանկի մէջ. հմ. հա՛ցի → հա՛ց. և սղելով նոյն հուլովի ձայնաւորը փակ վանկի մէջ. գա՛ռան → գա՛ռն որ յետապային դարձած է գառ. հմ. հարսն - հարս, մատն - մատ ևայլն:

«Ուրաբառական» ձեւի սեռականը պիտի լինէր գառի՛ նի, որ ձգելով իր վախճանական իշն՝ պիտի դառնար՝ գառի՛ն, ինչ որ գրաբարի սեռականն է: Թէ կ գա՛ռին մի ձեւ նոյն պէս կարող էր տալ գա՛ռն, բայց նկատելով գառն բառի գործիականը, որ է գառամբ, այսինքն՝ գառա՛ն. բ և յոզ, սեռականը —

գառա՛նց, որ է գառա՛նց, նկատելով, որ յոդն . սեռականի տարածն է եղ. սեռական + ց. բանի' — բանի' + ց, աւո՛ւր — աւո՛ւր + ց, ասաե՛ղ — ասաե՛ղ + ց և այլն, պէտք է ընդունել, որ գառն բառի օրինական սեռականն եղած է գառա՛ն, իսկ գառին ձեզ եկամուտ է կա՛մ մի հին հայ բարբառից, կամ որ հաւանական է՝ ուրարտական միջավայրից և այս եկամուտ տարրն է, որ խանգարած է այդ բառի հոլովական օրինաւոր կարգը։ Այս օրինակի վրայ մենք տեսնում ենք՝ երկու տարբեր լեզուական միջավայրերի փախազգեցութիւն և հոլովական կարգի խաչաձեռւմ։ Նկատենք, որ մին վախճանով «սեռական» մենք հանգիպում ենք նաև ոռւս լեզուի մէջ, ուր նա նկատում է ածական. այսպէս՝ սուկ.ա - նշանակում է էզ շուն, քած. սո՛ւկ-ին¹⁾ սըի՛ն - շան որդի, քածորդի. մամ-ին սըինո՛կ - մայրիկի մանչ, մօր սիրած, փայփայած որդի. (մամ-ա = մայրիկ հմ. մեր օմամ» բառը, որ նշանակում է մեծ մայր, տատ)։ Այս կարգի ին-ով կազմութիւնն է. նովին, որ պէտք է տրոհել իբր նովի՛-ն բառի վերջին ն.ն հին - նի վախճանի մնացորդ պէտք է համարել նովի՛-նի → նովի-ն։ Նի վախճանն այսպիսով գալիս է հին գործիական ձեի վրայ և այս կարգի կազմութիւնները շատ հին պէտք է համարուին։ Վերջին բառի տրոհումից պարզ երեսում է, որ նովի մի հին գործիական է։ Բայց այս ձեերի մանր քննութեան ես առիթ կունհնամ անդրադառնալու։

1) Ին ածանցից յետոյ գալիս է սեռանիշ ձայնաւորը - արակ.-ը, որ չի հնչում, իգ.-ա, չեղոք.-օ։

Մեր լուծումների հիման վրայ կարող ենք առել, որ փեսիվել բայց, որ նշանակում է «վատարանել», ծագում է փեսիվի գործական բունից: Այս բունի արմատն է փին, որ տուած է փին-ովի գործիական (հ/ն փին-ովի): Հմ. նովի-ն): Փին ~ նշանակում է աղք և ուրիմն *փինովել ~ աղբովել, աղբոտել: Այս նոյն արմատն է վրաց. փին-թի բառի մէջ, որ նշանակում է «վատ, անպիտան» և մեր գաւառական փինթի' բառի մէջ, որ նշանակում է պղերդ, թափթփած, կեղտոտ, և որ միենոյն վրաց բառն է, միայն տարբեր շեշտառութեամբ իր փինթի', որ չհշտից առաջ սղած է իր իշն և հնչում է փինթի':

Այս հաշուազ՝ գործիական բունից պէտք է կազմուած լինի մեր նզովել բայց, որ կարծում եմ պէտք է վերականգնել իր նիզ-ովի-ալ: Նիզ կարծում եմ ոլաւ ուշ արմատն է, որ նշանակում է վար, ցած. հմ. նիզ ով-ին = ցած վայրեր գետի հոսանքով կամ լեռան համեմատութեամբ: Կարծում եմ նզովել բայի հնագոյն իմաստն եղած է ներքեւել, ցած բերել և բառն ինքը շատ հին կենցաղի մնացորդ է: Հին ցեղեցն իրենց առաջնորդներն ընտրում էին և աղմուկով բարձրացնում վահանի վրայ կամ ձեռամբարձ, իրենց զլիից վեր բռնած՝ շրջեցնում. բազմութիւնն իր հաւանութիւնն էր յայտնում համակրանքի աղաղակներով: Զհաւանած առաջնորդին ամբոխը ցած էր բերում, ներքեռում էր, *նիզովում էր, այսպիսով բարձր զիրքից նաև քաշում էր ցած: Այս հին սովորութիւնը գետ մնացած է աղղերի կեանքի մէջ, ամբոխը սիրում է իր առաջնորդներին բարձրացնել իր զլիից վեր. այդպէս վարում են նաև սիրած զերասանների հետ: Մինչեւ այսօր քրանսացին իր տհաճութիւնը նման գէպքերում արտայայտնում է կանչելով ձ bas!, որ նշանակում է ցած, վա՛ր (քաշէք): Վրացին կանչում

է. ձի՞րս, որ նշանակում է վար, ցած: Ժամանակի ընթացքին բառն ստացած է տարբեր նշանակութիւն, մանաւանդ երբ արմատի իմաստը մթագնել է խօսողի գիտակցութեան մէջ: Դասական հայի համար նըզովել նշանակած է մերժել, չընդունել, վտարել, բանազրել, որ ասել է իր պատուաւոր ու բարձր գիրքից իջեցնել մի մարդ, մի քաղաքար, մի գործ:

Ծուսն ունի զ - ծ լծորդութիւն, որով Եիծ-ե նըշանակում է աւելի ցած: Կարծում եմ այս լծորդութեամբ միր բառն է նճար, որ պէտք է վերականգնել և տրոհել իբր նիժ-ար, այսինքն ցած անող կամ ցած իջնող: Եւ վերջապէս զ - ս լծորդութեամբ այդ արմատի միւս տարբերակն է նիս, որից նի՛ս-ի → նի՛սի → նի՛ս, որ պիտի նշանակէր իջեան, իջնելու տեղ. հմ. «վէր եկան մի ծառի տակ», այսինքն վար եկան, իջան ձեւերից, նստեցին հանդչելու. նոյն արմատի ածանցաւոր նիս-սի բունից է նսել բայը, որ նշանակում է իջնել, ցած գալ. հմ. «կրակը նըստեց» և զրաբար չիջաւ, որ է՝ զիջաւ. հմ. զիջել - որ է ցած գալ և ցած բերել. հմ. «զիրտը նստեց», որ է՝ յատակն իջաւ ևայլ:

Նոյն արմատը ս - ծ լծորդութեամբ տալիս է նիշ, որից պարսկ. նիշ-ասո-թան, որ նշանակում է «նստել» և ուր իշն՝ ինչպէս միր նիս* արմատի մէջ՝ կարճ է և բառն արտաբերւում է իբր նըշասթա՛ն. հմ. նաև համնըշի՛ն, որ է համանիշ-ի՛ն, որ նշանակում է հարեան, այսինքն՝ համանիստ, նստակից, որի նիստը կից է — նիս-իս-սի բունը մի հին ոլաւակերպ բայ. պէտք է համարել. ածանցի համար — հմ. ոլաւ. lov-i-ti - որսալ. որի ձեւը հայ միջավայրի մէջ կորցրած է իր բայական իմաստը. այդ

հին բայը պիտի նշանակէր «ցածել»։ Հմ։ ոռոսք
ով-ի-ի(ի), որ նշանակում է թելի վրայ շարել յուլունք
և նման բաներ, այսնքն՝ վար իջեցնել։ և ծագում է
ով արմատից, որ նշանակում է ցած։ Այս կարգի հին
բայերով լիքն է մեր լեզուն, որ կասկած չեն թող-
նում թէ հիմնական մի խաւ ընդհանուր է մեր և ոլաւ-
լեզուի համար։ Զուր չէ որ Սևանայ շրջանի նախա-
պատմական գերեզմաններում մի երկարագանգ ժողո-
վուրդ է թաղուած¹⁾։ Ռուսները երկարագանգ են։
Այս լեզուական առընչութեանց մասին ես առիթ
կ'ունենամ մանրապատում խօսելու։

¹⁾ Տես, Ե. Լալայեան. — Դամբարանների
պեղումներ խորհրդային Հայաստանում. 1931. Երե-
ւան։

ՈՒՂՂՈՒՄ ԵՒ ԼՐԱՑՈՒՄ

Մեր թ Յուշադրի մէջ գրած ենք. (էջ 158).

«Տրոհելով մեր վերականգնած ձևերը և զուղադրելով՝ մենք կըստանանք.

նան-ատ-իւ-ի ծան-աւ-ատ-ին-ի

«Այս ձևերը եթէ չեշաէին իրենց վերջնթեր վանկը՝ պիտր ձգէին իրենց վերջին իւն և դառնային.

նան-ատ-ին ծան-աւ-ատ-ին

Ընթերցողն իրաւամբ կարող է շփոթի մատնուիլ, որովհետեւ վերջին իւն ձգելով՝ նան-ատ-իւ-ի ձևը կարող է տալ նան-ատ-իւ և ոչ նան-ատ-ին, ինչպէս զըրած եմ: Այստեղ մի թոփչք է կատարուած: Ես չեմ բերած լծորգական փուլերը, ուստի ծագած է թոփչքը: Ե և ս ձայները լծորդ են, որով զուգահեռ ձևեր են նան-ատ-իւ-ի և նան-ատ-իս-ի: Հ և ս ձայները լծորդ են, որով զուգահեռ են՝ նան-ատ-իս-ի և նան-ատ-ին-ի: Այս հիման վրայ զուգահեռ են. նան-ատ-իւ-ի և նան-ատ-ին-ի: Այս վերջին լծորդ ձևն է, որ զուգագրուած է ծան-աւ-ատ-ին-ի ձևին: Այսպիսով վերանում է թոփչքը:

էջ 160. տող 1. վերից. պէտք է կարդալ ոչ ծանաւատնի, այլ ծանաւատն:

էջ 162. տող 9. վերից. պէտք է կարդալ ոչ կարաւատ, այլ կարաւատ:



Լեզուասէր բարեկամներիս և ընկերներիս

«Յուշագրիս» նման գրութիւններ կադացող շատ քիչ մարդ կայ մեզանում. հաղիւ մի քանի տասնեակ. հետևապէս ոչ մէկ յոյս կայ տպագրութեան ծախքն իսկ գոցելու: Զեի համար գի՞ն նշանակած եմ մէկ ֆրանք: Ասում եմ «Ճեի համար», որովհետեւ եթէ քիչ է կարդացողը, շատ աւելի քիչ է գնորդը: Ընկերներս ու բարեկամները գիտեն իմ նիւթական կացութիւնը, գիտեն նաև, որ այս տեսակ ծախքերի տակ մտնելու ես հսար չունեմ: Եթէ նրանք ինձ նման այն կարծիքին լինեն թէ Յուշագրերս կարող են պիտանի լինել մեր լեզուի քննութեան համար՝ կը խնդրեմ նիւթապէս ինձ օգնեն այս ձեռնարկութեան մէջ: Յուշագրերս տպագրելու եմ պրակ առ պրակ: Ամեն պրակի ծախքն է մոտ 200 ֆր. 500 օրինակի համար: Ստացած գումարների հաշիւը կը տամ պրակների կողի վրայ: Աւելորդ է ասել թէ աշխատանքիս համար ոչ մէկ դրամ կը հանուի այդ գումարից: Հրատարակուած պրակների ամբողջ պահեստն ու մնացորդ գումարը պիտի մնայ Համազգային ընկերութեան:

Սիրով Ն. Աղքալեան

Հասցե. Collège Arménien, Wadi Abou Djémil, 127
Beyrouth, Liban

ԲԱՆԱՍԵՐԻ ՅՈՒԹԱԳԻՐԸ

ՕԳՆ, ԱԻԱԳ, ԱՆԱԻԱԳ, ԱԻԱԳԱՆԻ
(ԱԻԱ → Ա'Ի → Օ)

Ունինք օգն արմատը, որից օպնութիւն, օգնա-
կան, օգնել և այլն։ ¹⁾ Այս արմատն իր կազմութեամբ
նման է սերմն, հիմն և նման բառերին, որ վերջա-
նում են շըն։ Սերմն, հիմն բառերի նախաւոր ձեւն
եղած է սերման, հիման, որ զօրաւոր շեշտ ունինա-
լով առաջին ձայնաւորների վրայ՝ սղած են երկրորդ
ձայնաւորը և տուած են հիմըն, սերմըն։ Սեռական
հոլովի մեջ բառի շեշտն անցնելով վերջին վանկին՝
սղած ա ձայնաւորը վերերեսում է իր նախկին կերպա-
րանքով և բառերը դառնում են սերմն, հիման։
Այսպիսով՝ ինչպէս ասած եմ այլուր, մեր ուղղականն
ու սեռականը մըեւնոյն ձեւերն են՝ միայն տարբեր շեշ-
տառութեամ։

Այս հաշուով օգն արմատի նախաւոր ձեւ պիտի
լինէր *օ՛գան, որ զօրաւոր շեշտի ազգեցութեամբ սը-
դիլով իր առը՝ տուած է օգըն՝ → օգն։

Դիտենք թէ մեր օ՞ն մի հին աւ է։ Հետեւապէս
օգն ← *օ՛գան մի հին աւզն ← *ա՛գան էր։ Այս վերա-

1) Տաս պարսիկ շրջապատում են ութօռւն և ութ
տարեկան Վահան Մամիկոնեան իշխանին և նա անձ-
կութեամբ ձայն է տալիս։ «Ու՞ր ես Մմբատ որդեակ,
հասիր յօգն ծերոյս»։ Յովհ։ Մամիկոնեան եպիսկոպ։
Պատմութիւն Տարօնոյ։ Էջ 34.

կանդնած ձեի մէջ մենք տեսնում ենք մի լոխն խումբ, որ է ւգ: Մեր տեսութեամբ լոխն խմբերի մէջ միշտ չքացած է մի հին ձայնաւոր+այս դէպքում կարծում եմ մի ա. հետեւապէս մեր վերականգնած *աւգան ձեւը ծագում է մի աւելի հին *ա'ւագան ձեից, որ նախայարաշետ լինելով՝ ողած է իր ձայնաւորներից վերջինը և ծգած՝ միջինը — ա'ւ(ա)զ(ա)ն և տուած՝ աւգն → օգն: *Ա'ւագան նախաւոր ձեւը կարելի է տրոհել իրը *ա'ւագ-ան և զուգագրել «խած-ան», հաջ-ան» ձեւերին, որով մենք կ'ունենանք մի ներկայ դերբայ և հետեւապէս օգն մեղ կերեւայ ոչ իրը մի պարզ արմատ, այլ մի ածանցաւոր բուն: Այս հաշուով «օգնել» բայը մի հին *աւագ-ան-ել ձեից ծագած կերեւայ և զուգահեռ կը լինի «հատան-ել», «միուան-ել» և նման բայական ձեւերին: Այս լուծումով բուլոր բայական ն ածանցները կը դառնան ան ածանցի սղում և սթոնել, բռնել, առնելք և նման բայերը կը դառնան վաղեմի *թիուան-ել, *բուռան-ել, *ար-ան-շել և այլն: Եւ ինչպէս ունինք «բուռն», որից ծագած հին համարում «բռնել» բայը, որ սակայն ինչպէս տեսանք մի նախաւոր *բուռան է եղած՝¹⁾ այնպէս և ունինք «օգնել» և «օգն», որ մի վաղեմի *օ'գ-ան «*ա'ւագ-ան է եղած: *Օգնել» բայի պարզ արմատն է ուրիմն ա'ւագ → ա'ւգ → օգ:

Մենք ունինք աւագ և աւագանի բառերը: Ո՞րն էր այս բառերի շեշտը: Եթէ աւագ բառը շեշտէր իր առաջին ա-ը, այն ժամանակ նա պիտի սղէր իր երկորդ ձայնաւորը և դառնար *ա'ւլգ, իսկ ապա՝ *աւգ

¹⁾ Իր սեռականը պիտի լինէր նոյն ձեւը, բայց տարբեր չեշտառութեամբ. բուռան, որ սղելով անշեշտ ձայնաւորը՝ պիտի դառնար բռան և այդպէս է իրոք. հմ. «բռան մէջը հաւաքել» բացատրութիւնը:

→ օգ։ Խսկ շեշտելով իր երկրորդ ա-ը՝ պիտի մնար աւա՛զ։ Միւս բառը նոյնպէս պէտք է նո՛յն ձայնը շեշտէր, այլապէս կը գառնար *աւզանի։ որով կարծում եմ թէ այդ բառը շեշտում էր իրը աւա՛զանի։ Երբ վերջին բառը -ալ ածանցն առնելով՝ դառնում է հինգ վանկանի, այն ժամանակ շեշտերի տեղափոխութիւն է կատարում։ զօրաւոր շեշտն անցնում է առաջին վանկին և վերջին վանկին։ որով՝ ա՛ւազանիա՛լ։ Ի և ա ձուլումով տալիս են և բառը զառնում է քառա վանկ՝ ա՛ւազանե՛լ և միջի ձայնաւորներից մէկի չքացումով, որ շեշտին ամենից մօս է, և միւսի սղումով, որ շեշտից աւելի հիւռու է՝ այդ բառը դարձած է *ա՛ւ-(ա)զընե՛լ, խսկ ը-ի չքացումով՝ ա՛ւզնել, որ է՝ օգնել։

Օգնելու գաղափարն այսպիսով աւգ արմատի մէջ է, որ հին *ա՛ւագ էր. ա՛ւագ-ան → օգն պիտի նշանակէր օգնող, աւագ-ան-ի, նոյնպէս պիտի նշանակէր օգնող, *Աւագ-ան և *աւագ-ան-ի իրար այնպէս հն յարաբերում ինչպէս պատասխան և պատասխանի, որ ուղղական հօլով էր զեռ ևս գասական շրջանին։ անի ածանցը այս բառի մէջ նշանակում է «անող»։ աւագ-ան-ի պիտի նշանակէր ա՛ւագ անող, այսինքն ա՛ւգ անող, օգ անող, օգնող։ Ժամանակի ընթացքին խօսողների գիտակցութեան մէջ այդ անի վախճանը շը-փոթուած է այն անի վախճանի հետ, որով կազմում էին յոգնակի թուեր, հմ. «Նամական-ի, հանդերձ ան-ի», և մեր գաւառական՝ «գլխնի», որ է *զլուխ ան-ի, որով հին «աւագանի» բառը, որ նշանակում էր մի օգնող, ըմբռնուած է իրը շատ օգնող։ Սրա հակառակը պատահած է բարբառների մէջ։ «Երկինք, կամք, հրամանք», որ յոգնակի էին դասական լեզուի մէջ՝ հետագային, և ձայնի արժէքը մոռանալով, ժողովուրդը կարծած է եղակի և կազմած է նոր յոգնակիներ ոկամքեր, երկինքներ և այլն։

Օգն այսպիսով նշանակում էր «օ՛գ-ան», օգնող՝
ու քանի որ օգ վաղեմի *ա՛ւագ էր, իր տարբեր շեշ-
տառութեամբ իր աւա՛գ, պիտի նշանակէր օգնող:
Քոյր լեզուների մէջ միենոյն բառը տարբեր շեշտա-
ռութեամբ տարբեր իմաստ էր ստանում. այսպէս՝

յուն. *σο'ρος* — բերած, հարկ. *σορο's* — բերող
մնակ. *bha'ra* — բերած, բեռն. *bhara'* — բերող¹⁾)

Այս հաշուով մեր *աւագ արմատը իբր ֊*ա՛ւագ
→ օգ պիտի նշանակէր «օգնած», օգնութիւն, իբր
աւա՛գ՝ օգնող:

Հետեւապէս «աւա՛գ որդի» — պիտի նշանակէր
«օգնող որդի», և ուրեմն՝ առջնեկ որդին, որովհետեւ
նա էր, որ ամենից շուտ մեծանալով՝ հասնում էր օգ-
նութեան իր հօրը: Նա, որ աւա՛գ չունէր, այս-
ինքն օգնող չունէր, անաւագ» էր, պիտի մը-
նար անօգնական, խեղճ, թոյլ. և մենք անս-
նում ենք, որ իրօք, «անաւագ» մեր լեզուի մէջ նշա-
նակում է թոյլ, անօգնական, անօգ: Այսպէս՝ Եգեկիէլ
լ. թ. 20. «Ահաւասիկ ևս զատեցայց ի մէջ հարուստ
և անաւագ ոչխարաց»: Թիւք. ժ. գ. 19. Եւ անջնք
երկիրն զինչ իցէ և զժողովուրդն որ նստի ի նմա եթէ
զօրաւորագո՛յն իցեն թէ անաւագ: Երկու զէպքում ևս
այդ բառերը զրուած են յուն. *asthenés*, *asthenous*
բառերի գէմ, որի իմաստն է վախտ, մարմնով հիւանդ,
աղքատ և ուրեմն՝ խեղճ, անօգնական, վատոյժ: Օգ-
իբր ա՛ւագ, և աւա՛գ բառերի հակագրութիւնն իրենց
իմաստի տեսակէտով և Ս. Գրքի բնագիրները հաստա-
տում են մեր վարկածի ճշտութիւնը: Անաւագ» նշա-
նակում է անօգնական, խեղճ. ահա և Եսային (Ծ. 4)

1) A. Carnoy. Gramm. élém. de la langue sonscrite. § 190.

որ ասում է, «Կոփւս պահէք և կոփէք զանաւագն», այսինքն՝ կոփում էք անօգնականին, խեղճին: «Անաւագելք = տկարանալ, մաշուիլ, «անաւագակեր» = կեղեքիչ:

Այս լուծումնվ մենք թեակոխում ենք հայերէն խօսող ցեղերի հնադարեան պատմութեան մէջ: «Աւագանի», որ գասական շրջանին նշանակում էր ազնուական զասին պատկանողներ, աւագներ, հնագոյն շրջանին պիտի նշանակէր օգնողներ: Իշխաննը, որ համարձակն էր մարտիկների մէջ (հմ. զաւառ, «չեմ իշխանայ», այսինքն՝ չեմ համարձակում), ունէր իր աւագները, այսինքն իր օգնականները, որ մասնակից էին աւարին և բաժին էին ստանում այն երկրից, որին տէր էին զառնում: Նրանք հետագային դարձան կալուածատէրներ և հիմք զրին իշխանական տների: Այսպէս նաև ոռւսաց մէջ իշխանի զրուժինան, որ դրուգ (ընկեր) բառից է ծագում և նշանակում է մարտընկեր, մարտակից՝ ժամանակի ընթացքին դարձաւ կալուածատէր գասակարդ: Մեր կալուածատէր գասակարգը, մեր աւագանին, իր անուան մէջ պահած է իր ծագման պատմութիւնը: Նրանք օգնական էին, *չտագ, անցաներն էին հին հայ իշխանների, նրանց մարտընկերը, մարտակիցը, զրուժինան, որ հետագային դարձան աղնուական, հողատէր, կալուածատէր դաս: Ողն, աւագ, անաւագ, աւագանի բառերի հնագոյն իմաստների սերտ կապակցութիւնը, որ պայծառորէն երեսում է մեր լուծումներից, ինքնին վկայում է թէ՛ լուծումների ձշութեան և թէ լուծման եղանակի արժէքի մասին: Այդպիտի մի լուծում տուած եմ այլուր և մեր «զգօն» և «անզգամ» բառերն իրար հակադրելով և մէկը միւսին արմատակից համարելով, իբր *զգամ, ան, *զգա՛ւան → զգա՛ւն → զգօն և անզգամ:

Եղբափակենք .

Օգն ածանցաւոր արմատ է .— *աւագ-ան : Ի՞ր պարզ ձևն է՝ ա՛ւգ → օգ : Այս արմատից են ծագում աւագ, որ է օգնող . աւագ-ան ի = նախապէս՝ օգնող, հետադային՝ օգնողներ . ան-աւագ = անօգնական, ոււտի և խեղճ, թոյլ : Հին օգնողները կազմած են հայ աղնուական գասակարգի հիմնական խաւը :

ՇԱՐԱՅԼ ԵՒ ՇԱՐԱԿԻԴ (Ց = Ւ, Ղ = Լ)

Ժամանակին գրած եմ մեր լ և ւ ձայների մասին, թէ նրանք նախնական ձայներ չեն. նրանք վոխարինում են կամ մի սղած ու չքացած բաղաձայն, կամ մի սլղած ձայնաւոր : Միաժամանակ այն կարծիքն եմ յայտնած թէ երկու տարբեր լեզուական միջավայր երկու տարբեր ձևով գոցած են այն յօրանջքը (*hiatus*), որ ծագած է ձայնաւորի կամ բաղաձայնի սղման ու չքացման հետևանքով և օրինակ մեր հին անց . անկատար ժամանակի Յ-րդ դէմքի երկու տարբեր ձևերը — տեսաներ և տեսանիւր ես մեկնած եմ իբր վաղեմի տեսանիւայր և տեսանիւաւր, ուր իա ձուլումով տուած է ե, որով բառերը դարձած են տեսանիւր և տեսանեւր, իսկ յայտնի է, որ ել մեր լեզուի մէջ տուած է ե, ¹⁾ իսկ եւ լծորդ է իւ-ին . հմ. բեւր, բիւր և ուրեմն՝ տեսանեւր = տեսանիւր :

Արդ՝ տառալի՛ղ բառի շեշտը իւ-ի վրան է, իսկ շառայլ բառի շեշտը ա-ի վրայ : Այն լեզուական մի-

¹⁾) A. Meillet. Esquisse, § 19-20.

ջավայրը, որ ւ.ին տալիս էր չ կշխ, շառաւիլի բառը պիտի արտաքերէր իր շեշտով իրր շառա՛յիլ: Շեշտից յետոյ իւն սղելով և ուղղութեամբ պիտի յովտանար և ձուլուէր նախընթաց յախն, որով բառը պիտի զառնար շառա՛յի, որ նոյն է թէ շառա՛յլ, նկատելով որ մեր հները դին գրում լոի փոխարէն. այսպէս՝ այդ, որ է այլ ևայլն: Այսպիսով «շառաւիլ» և «շառայլ» միենոյն նախաւոր բառն են. նրանց տարրերութիւնը բարբառական է, ուստի զարմանալի չէ, որ նրանք մերձիմաստ են: Շառայլ նշանակում է ճառագայթ, փայլ, իսկ շառաւիլ նշանակում է լոյս, կայծ: Կարող ենք ասել, որ «շառայլ» այն բարբառի բառն է, որ ասում էր «տեսանէր» ← տեսանիալ, իսկ «շառաւիլ» այն բարբառինը, որ ասում էր «տեսանիւր» ← տեսանիալ:

ՄԵԹՈՑԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ. — Արտաքուստ իրար չնման բառերը ծագողապէս կարող են նոյն լինել: Բառաձեերը քննելու ժամանակ պէտք է մտովին կառուցել այն բոլոր հնարաւոր կերպարանքները, որ նրանք կարող էին ստանալ իրենց բաղադրիչ տարրերի լծորդական այլափոխութեան, ձայների ձուլման, ինչպէս նաև տարրեր շեշտառսւթեան հետեանքով:



ԳՈՐԾԻԱԿԱՆ ՄԱԿՐԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ (Յ=Ի)

Մեր մակրայների մի մասը հին գործիական հոլով՝ ներ են. այսպէս՝ արդարեւ, որին զուգահեռ կարող ենք տալ բարեւ ձեւ, որ մի հին բարեաւ է և բարի բառի գործիական հոլովն է: Եաւ վախճանը, որ հետագային ամփոփումով դարձած է եւ, ծագում է մի՛նախառուր իյաւ խմբից: Ինչպէս բարեաւ ձեւ բարի բառի գործիականն է, այնպէս և ռարդարեւ ձեւ պէտք է ծագած համարել մի վաղեմի *արդարի ձեից, որի իշն հետագային չքացած է. հմ. «պատասխանի» հին բառը, որ դարձած է «պատասխան» (լին ընկած): Այդպէս եղած է նախապէս և «չար» բառը, որ նոյնպէս ձգած է իր վախճանի իշն. մեր չչարեաց» յոգ. սեռականը կարող էր ծագել *չարի ձեից, ինչպէս ռարեաց» սեռականը ծագում է «բարի» ձեից: Մեր բարի բառը, ինչպէս և նախաւոր *արդարի, *չարի բառերը կարծում եմ, որ երկար ի ունէին և զուգահեռ էին պարսիկ վերացական բառերի կազմութեան. հմ. «խուբ», որ նշանակում է «լաւ» և «խուբի», որ նշանակում է լաւութիւն և ուր իշն երկար է: Այս երկար իշն է, որ հնչած է ի՞յ և տուած է - իյա խումբը և որ ասոսադարձուած է - եա. բարի՛ → բարիյա՛ → բարեա՛, արդարի՛ → արդարիյա՛ → արդարեա՛ → արդարեւ (եա = ե): Հմ. մրջիյա՛ն → մրջեան և այլն: Այս վարկածով «արդարի» պիտի նշանակեր արդարութիւն և «արդարեւ» — արդարութեամբ: ¹⁾

¹⁾ Այս հին իմաստի նորաձև արտայայտութիւնն է կարծում եմ մեր գասական լիլուի ասութեան կերպը. «զործ չարութեան», այսինքն չար գործ: «Զարի» հին բառը այն ժամանակ արդէն ձգած էր իշն և չեր

Ուրիշ մակրայներ կազմուած են այս տարագով .
գործիական + ին . այսպէս . բնաւ + ին , զլխով + ին
ևայլն ¹⁾ , ուր «բնաւ , զլխով» , գործիական հոլովներ
են : Այս հաջուով գործիական է նաև մեր «ամենեւ . ինչ
մակրայի ամենեւ կտորը , որ ենթազրում է մի հին
*ամենի ձեւ , որ պիտի տար *ամենեաւ և սղէր իրը
*ամենեւ , ինչպէս եղած է «բարեաւ» և զարձած է «բա-
րեւ» : «Բնաւ» բառի մէջ ւ-ը մի հին ք ձայնից է
ծագում , նոյն ծագումն ունի նաև «զլխով» գործիա-
կանի վ-ը , որ նախապէս եղած է ա (ւ) ձայնով և
յետագային անցած է վ հնչման , ինչպէս նոյն հնչման
անցած է և «բնաւ» բառի ւ-ը , որ այսօր արտարե-
րում ենք ս (վ) -եռուա , որով մենք կարող ենք գրել .
բնաւ-ին և զլխու-ին :

Գիտենք թէ տարբեր լեզուական միջավայրերի
մէջ-մէջ և և յ լծորդ են եղած և փոխարինած են ի-
րար : Այս հիման վրայ կարող էին լինել և եղած են
իրօք «ա-ա-ին և և ո-ա-ին» ձեերին զուգահեռ . այ-
-ին և և ո-յ-ին ձեեր , որ և տուած են տարագէմ
մակրայներ : Անաւասիկ մի շարք զուգահեռ ձեեր , ուր
չբացածները աստղանիշ են : Երանց տարբերացումն

նշանակում չարութիւն . եթէ պահած իսկ լինէր՝ հին
իմաստն արդէն չքացած էր . այսպէս «բարի» այլ ևս
բարութիւն չէր նշանակում : Բայց մտածումը չարու-
նակում էր նոյն ձեով կառուցել խօսքը . ուստի հին
«չարի» ձեի տեղ նոյնիմաստչարութիւնն է կիրար-
կած :

1) Այսուեղ ես կատարում եմ ձեաբանական քննու-
թիւն և ոչ թէ պարզում այս ձեերի վաղեմի ծագու-
մը . իսկապէս այդ ձեերը պէտք է տրոհուին իրը զըլ-
խովիւն , կամովիւն : Տես Յուշագիր Ժ :

առաջացած է առարկի շեշտառովեան և յ և ւ ձայլ-
ների լծորդովեան հետեանքով, չը. «Համարից» և
«Համարից բառերի քննութեանը».

Յ — ՈՎ ԶԵՒԵՐ

Շեշտը վերջին
ձայնաւորի վրայ

Իսկո՞յին

→ իսկո՞յն

* իսկովի՞ն
* ողջովի՞ն
* միաւի՞ն
* միանգամաւի՞ն
* առժամաւի՞ն
* գիշերաւի՞ն
* միահաղովի՞ն
* կենդանւովի՞ն
* արդիաւի՞ն
* սակաւի՞ն

ողջո՞յին

→ ողջո՞յն

միա՞յին

→ միա՞յն

միանգամա՞յին

→ միանգամա՞յն

առժամա՞յին

→ առժամա՞յն

գիշերա՞յին

→ գիշերա՞յն

միահաղո՞յին

→ միահաղո՞յն

կենդանւո՞յին

→ կենդանւո՞յն

արդիա՞յին

→ արդի՞յն, արդէ՞յն

սակա՞յին

→ սակա՞յն

Առաջին շարքի ձեւերը, «Դշենին հանդիպում դա-
սերան լիկուի մէջ, իրենց հետքը թողած են բարբա-
ր մէջ, այսպէս երեսներ բարեւառ ասում է խալա-

լօն, որ նշանակում է խաղալին. այստեղ մէկի օ՞ն ծագում է - աւին վախճանից, որի ի՞ն ընկած է, իսկ միացորդ աւն-ը անփոփուած է իբրև օն, իսկ միւսի ե՞ն ծագում է ա'յին վախճանից, որի ի. ն յովտացած ու ձուլուած է նախորդ լ-ին, իսկ այ ձուլումով տուած են է. այսպէս *խաղալա՛յին → խաղալա՛յն → խա-ղալին¹⁾: Քննելով առաջին շարքի բառերի հոլովումը մինք կը տեսնենք, որ նրանք կարող էին ունենալ և համարեա բոլորն ունեցած են ա'յդ ձեի գործիական հոլովներ. այսպէս՝

Իսկ — հոլովում է ի, ից, իւ, բայց և ոց, որպէ- եզ. գործ. ով, որ է՝ ու և ուրե- մըն *իսկով - ի՞ն:

Ողջ — > ոյ, ոց, որով եզ. գործ. ով և ուրեմն *ողջով - ի՞ն:

Ժամ — > ու, բայց կայ և աւ- ով գարծիա- կան, հետեւապէս՝ *ժամաւ-ի՞ն:

Գիշեր — > ի և գործ. աւ- գիշերաւ, ուրեմն նաև գիշերաւ - ի՞ն:

Հաղ — > հոլովումը յայտնի չէ:

Կենդանի — > ւոյ, և ուրեմն կենդան-ւով. հմ. հոգի - հոգւով և ուրեմն *կեն- դանւով - ի՞ն:

Արդի — > արդեւք յոգնակի գործիականը են- թագրում է արդեւ եղակի գործ. և ուրեմն *արդիաւ - ի՞ն:

Սակ — > ի, աւ. և ուրեմն *սակաւ - ի՞ն:

1) Իսկ եթէ այդ ձեւը համարենք ծագած «խա- ղալի» հին ձեից իբր *խաղալիաւին, արդիւնքը նոյնը կը լինէր, միայն այդ գէպքում խաղալօն գաւառական մակրայը պէտք է գրել ո-վ — խաղալն, որովհետեւ - իաւ խումբը (հին իաւի, որի վերջին ի-ն ընկած էր) կարող էր տալ ո (իաւ → ւաւ → ւօ → ո). գալով և ին վախճանին, նա կը մնար նոյնը, քանի որ այ և իաւ խմբերը ձուլումով միապէս տալիս են է: Հաւանական է, որ մակրայական օն և են վախճանները այս վեր- ջին ծագումն ունենան:

Միայն մի և գամ բառերն են այս շարքից, որ չունին և աւ վախճանով գործիական։ բայց անհնարին չէ, որ ունինային, ինչպէս «կամ» բառը, ուրի գործիականն է կամաւ, բայց ունիցած է և կամով գործիական, որ տեսնում ենք ակամովին» մակրայի մէջ։

Կարող ենք ասել նաև, որ միւնոյն նախաւոր ձեւ՝ նայած իր շեշտին՝ եղած է կամ՝ մակրայ կամ ածական։ այսպէս՝

Գիշերային — ածական։

Գիշերա՛յին — մակրայ, որ և դարձած է գիշերա՛յն։

Միւնոյն հոլովական կարգի մէկ հոլովը մնացած է մի ձեռվ, միւս բառի նոյն հոլովը զուգահեռով, իսկ սակաւին ձեփ զուգահեռը, որ պիտի լինէր *սակայ'ն լեզուն չէ պահած։ «Երամ» բառի գործիականն է ժերամով և ունինք աերամովին» մակրայը, հմ։ «Ճագախառն երամովին», բայց չի մնացած «Երամո՛յն» ձեռվ մի մակրայ։ մինչդեռ ունինք «ողջո՞ն», իսկո՞ն» և չքացած են նրաց զուգահեռները՝ *ողջովի՛ն, *իսկովի՛ն։ Արանցից առաջինը սակայ'ն մենք գտնում ենք «ամբողջովի՛ն» մակրայի մէջ, որ նոյն «ողջ» բառից է բարդուած։

Ուշադրութեան արժանի է նաև «արդէն» մակրայը, որ պէտք չէ բացառական հոլով համարել։ Խօսողների գիտակցութեան մէջ սակայն այդ շփոթը կատարուած է և «միանգամայն» ձեւ «արդէն» ձեփ պէս «միանգամէն» դառնալով՝ ըմբռնուած է իրը բացառական։ Այդ մտածումը արտայայտուած է տարակերպ՝ սակայն նոյն հոլովի կիրարկումով նաև արեելահայ միջավայրում, ուր ասում են «միանգամից», որ հին յոդ։ աննախդիր բացառական ձեւ է։ Այդպիսի կազմութիւն է նաև «մէկէն» մակրայը։ «մէկէն» ելաւ,

գնաց», «որ մի հին «մէկա՛յն» պէտք է համարել. հմ. «զիշերա՛յն»: 1) Այսօրուան ասութեան կերպերը «զիշերով զնաց», «արեով տուն գարձաւ», «լուսով ճամբայ լնկաւ» հին մտածութեան հետքեր են:

Այս խնդիրը յատուկ և մանր քննութեան արժանի է: Ես կամեցայ միայն զուգահեռ ձեերի գոյութիւնն ու պատճառը ցուցադրել:

ՅՈՅՆԻ — ES, OS ՎԱԽՑԱՆՆԵՐԸ (Յ=Ի)

«Շառաւիղ» և «շառայլ» բառերի քննութիւնից տեսանք թէ շալիլ և այլի լծորդ են իրար: Այս հաշուով պիտի լծորդ լինեն նաև աւիս և այլս խմբերը: Մենք չատ չունենք այս տեսակ վախճաններ, բայց ունեցած է յոյնը, ուր տռաջին ձեր մէջ ի՞ն ընկած է տալով շաւ, որ ձուլումով գարձած է OS (aws → OS). Իսկ երկրորդ ձեր մէջ ի՞ն յովանալով ու ձուլուելով նախորդ լին՝ տռած է շայս, ուր այ ձուլումով անցած է և հնչման, որով ստեղծուած է շես վախճանը. հմ. հայր և հեր. (aws → es): Կարող ենք առել, թէ յոյնի են և օս վախճանները այլ բան չեն, քան վաղեմի գաւառական աաբբեացումներ: Մի տեղ յօրանջքը զոցուած է առավ (1), միւս աեղը ցոով (2):

1) Արեւելահայերը պահած են զուգահեռ ձեր յոդ. բացառական հոլովով. Սայաթ-Նովան զբում է. «Եփս խոմ էն զլիէն էրած իմ նուր մեկանց քաբար մի անի»՝ այսինքն՝ ես արդէն սկզբից այրուած եմ, նորէն մի՛ խորովիր ինձ: Այստեղ մեկանց նշանակում է մեկեն, իսկ «նուր մէկանց»՝ նորից, կրկին, մէկ անգամ ես:

Եթէ բառի բունը ի վաեճան ունենար, այն ժամանակ պիտի կազմուէին շիալիս և շիալիս խմբեր, որ ձուլումով պիտի տային. առաջինը, իր ի՞ն կորցնելով՝ շիալս, իսկ սա ու (իաւ → ւաւ → ւօ → ո): Անչպէս եղած են յոյնի օՏ վախճանները, որ հնչած են երբեմն ԷՕՏ¹⁾ և հետագային լերկացած են, ինչպէս մեր ո ձայնը բառամիջին. հմ. փոս, քոս ևայլն: Խոկ շիալիս խումբը խաւն ձուլելով և երկրորդ ի՞ն սղելով ու ձուլելով նախորդ յախն պիտի տար ելս, ուր ել անցնելով և հնչման՝ պիտի ստեղծուէր ես վախճանը: Մենք տեսնում ենք այստեղ երկու տեսակ օ, որ սակայն դարձած են նոյնարժէք ինչպէս մեր լեզում. մէկը մեր աււն է, որ բնապէս լերկ օ է. հմ. աւր → օր. միւսը մեր ուն է, որ լերկացած է յոյն լեզուի մէջ և մեր մի քանի բարբառներում. հմ. օՏ, որ է՝ ու, օսկի, որ է՝ ոսկի ևայլն: Ինչպէս նաև մէկը մեր ա՛յն է ձայնն է, որ ծագում է այ խմբի ձուլումով, հմ. մայր → մեր, միւսն այն եւն է, որ ծագում է իայ խմբից. հմ. տեսանիալր → տեսաներ: Մանր քննութիւնը կարող է ցոյց տալ թէ այս կամ այն գէպքում յոյնի և մեր և ո (օ) ձայները ո՞ր մի նախաւոր խմբից են ծագած ալիս, աւի՞ս թէ շիալիս, շիալիս: Արդիւնքի նոյնութիւնը պատճառ չէ, որ ծագումը նոյն լինի. միւսնոյն ւն է, որ տեսնում ենք մեր եւրն (Կօթն) և մրջիւն բռների մէջ. բայց մէկը մի հին ք ձայնից է գալիս. հմ. լատ. septem, միւսը մի հին մ-ից. հմ. մրջիմն: Նոյն է արդիւնքը, բայց տարւեր է ծագումը, ինչպէս նոյն հողն են դառնում և՛ սիրունի երեսը և աղեղի մոռւթը:

¹⁾ Հանուր յունարէնի F ձայնը մեր ւ.ի համար մէքն է:

Մինչդեռ յոյն լեզուի մէջ Հիաւիս խմբի իւն ընկերով տուած է Հիաւս, որ ձուլումով հնչած է ոս (FOS, ապա՝ լերկ օՏ), լատին լեզուի մէջ միենոյն Հիաւիս խումբը ձուլուած է Հիաւթն իբր աօՎ և ուրիշն աս, իսկ ոս լերկացումով տուած է ոՏ (ուս): Եւ այդ է պատճառը, որ յոյն-օՏ և լատին-ԱՍ կշռում են իրար: Նրանք միենոյն նախառոր խմբի առարբեր ձուլման արդիւնք են:

ԼՈՒՐՉ — ԼՈՒՐԹ (Չ — Թ)

Այս երկու բառերը նոյնիմաստ են. նշանակում են «բաց կապոյա»: լուրջ բառի հոլովումն անյայտ է. լուրջ բառի հզակի սեռականն է լրջի, որ ամփոփումն է մի նախաւոր լուրջի ձևի: Լու՛րջ-ի վրաց. նշանակում է «կապոյա»: իր անորոշ հոլովնէ լուրջ: Դժուար է ասել, թէ վրացու լուրջ բառը փոխառութիւնն է թէ բնաբոյս. նոյնը գծուար է ասել և մեր բառի համար: Փոխառութիւն թէ ոչ՝ լուրջ ու լուրց նոյնիմաստ են մեր լեզուի մէջ. եթէ բնաբոյս են՝ ապա նրանք լծորդ ձեեր են բարբառից բարբառ. եթէ փոխառութիւն է մէկը՝ ապա նրանք լծորդ ձեեր են լեզուից լեզու: Ի՞նչ հիման վրայ կարող ենք այս բառերը լծորդ համարելեի՞նչ հիման վրայ թ-ն կարող է կըսի զալ զ-ին:

Մեր Գ Յուշագրի մէջ (էջ 38) ես զրած եմ, թէ զ ձայնը դժ խմբի ձուլման հետեւանք է. իսկ դժ երբեմն եղած է մի լիածայն վանկ: իսկ մեր Բ Զուշագրի մէջ (էջ 31) զրած եմ թէ մեր թ-ն մի հին տի խմբի ձուլման հետեւանք է. իսկ տի երբեմն եղած է մի լիածայն վանկ: Զուգազրելով զ և թ ձայների նախաւոր վիճակը՝ մենք կըստանանք դժ լի տի: Այսեղ դ և թ լծորդ են, ինչպէս և ծ և ն, նկատելով, որ

ծ և ձայնի մի տարբերակն է, իսկ իւն միևնոյն և ձայնի հունչացումը։ Որով մի լեզուական միջավայր տրտարերում էր միևնոյն բառը լուրդ, իսկ մի ուրիշ միջավայր՝ լծորդ ձայներով՝ արտարերում էր լուրեն։ Դժ և տն խմբերի ձուլումով՝ այդ բառերը հնչած են իրը լուրջ և լուրք։ Կարող ենք ասել ուրեմն, որ զ և թ լծորդ են և այդ իսկ պատճառով լուրջ և լուրք, որ միևնոյն բառի հնչական տարբերացումն են՝ նոյնիւ մասս են։ Նկատելով, որ մեր լեզուի մէջ այդ երկու բառերը իմաստի տարբերութիւն չունին՝ կարող ենք ասել, որ նրանք տարբեր բարբառների ծնունդ են, որ փոխադարձաբար դ ձայնին տալիս էին և կշիռ և ծ ձայնին՝ ի կշիռ։

Այս բառերը տարբերացած են նախ քան նրանց վախճանական լիաձայն վանկերի սղումն ու եզերական ձայների ձուլումը, այսինքն այն ժամանակ, երբ լուրջ բառի կազմութիւնն էր լուրդ + զ + ծ և լուրք բառի կազմութիւնը՝ լուրտ + զ + ի։ Կարող ենք ասել նաև, որ ու ձայնը չատ աւելի հին է քան զ և թ ձայները, որոնք պարզ ձայների ձուլման հետեանք են, որ են՝ ս, դ, ի։ Այս բառերի մէջ իմաստի նոյնութեան հիմքը ձայների լծորդութիւնն է։ Բառերը նոյնիմաստ են, որովհետեւ լծորդ ձայներով են ձեացած։ Որոնել պէտք է թէ ի՞նչ հիման վրայ լուրջ բառը նշանակած է նաև «արթուն», խելքը գլուխը, հմ, «լուրջ մարդ», «լուրջ խօսք», «հարբած մարդը լրջացաւ» ևայլն։

Աս իմաստաբանական մի խնդիր է, որ թողնում եմ ուրիշ առիթով քննելու։ Այդ երկու բառերի հընչական կերպարանքը կարծում եմ մեկնուած է և մի անգամ ևս հաստատուած կարող ենք համարել, որ զ և թ լծորդ են։ Պարզուած կարող ենք համարել նաև այդ լծորդութեան բնական և բանական պատճառը։

ԲԱՆԱՍԵՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ



ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԹԼՈՒԱՏՈՒԹԵԱՆ

Մեր Ա. Յուշագրի մէջ պարզած ենք ծ ձայնի ծառալմբ և այդ ձայնը համարած ենք մի վաղեմի քմային ե-ի և ա ձայնի ծուլման հետևանք, իսկ այդ ծուլումը համարած ենք նրանց միջև եղած վաղեմի ձայնաւորի չքացման հետևանք և հոլովայթի ծիրը տարազած ենք իբր. $t+q+u \rightarrow ts \rightarrow d$: Գիտունները սակայն մեր ծ ձայնը համարում են կշռորդ յոյն և սնսկր. ց ձայնի, որով ց և ծ համարում են լծորդ: Այսպէս՝ յուն. *mégas*—հայ. *մեծ*, սնսկ. *bho'gas*—հայ. բոյծ: Ինչպէս տեսնում էք քայլը լեզուների ց ձայնին հայերէնը տալիս է ծ կշիռ¹⁾: Բայց յոյնն ունի *ego'*, իսկ հայն ունի ես և ոչ եծ, որ սպասելի էր, քանի որ յոյն ց-ի դէմ հայը պէտք է տար ծ կշիռ, դրա փոխարէն հայն ունի ու: Բայց միայն հայը չէ, որ այդ տեսակ փորձանք է ստեղծում: Ահաւասիկ սլաւ լեզուն. մեր ես-ի դէմ նա բերում է *yaz*, աշ, որ նոյնպէս չի բռնում յոյն *ego'-ին*, բայց մօտէ մեր ես-ին: Այսպէս եղած է և մեր հայրենիքի սեպագիր լեզում, ուր ի-ը-ս նշանակած է ես²⁾:

Այս անախորժ հակասութիւնը Ա. Մէյէ փորձում է լուծել ասելով թէ. «Ուրիշ բաղաձայնի, և յատ-

¹⁾ A. Meillet. *Esquisse*, § 19 և § 24.

²⁾ Հ.Ց. Տաշեան. Ուսումն դասական Հայ. լեզուի, էջ 380:

կապէս կոկորդային բաղաձայնի կամ կէս-պայթուցիկ
մի ձայնի առջև կէս-պայթուցիկները փոխադարձաբար
դառնում են սոյլ կամ շաշող. կիծ-ի կրկնաւորը կիսկիծ
(որ ծագում է ռկիծկիծն ձեւից), կուկոն (կոնկոն ձեւից)...
Արդ՝ ես, որ կուում է յոյն եցօ-ին, լատ. եցօ-ին եւ
որ պիտի ունենար ծ, ինչպէս մեծ բառն ունի
յուն. *mēgas-ի համեմատութեամբ՝ ա'յն ձեւն է,* որ
նախնաբար կիրարկում էր մի հետեւորդ բառի բաղա-
ձայնի առջև (*Esquisse*, § 14): Ասածի միտքն այն է,
թէ մեր եսը նախապէս եղած է եծ. բայց ինչպէս կիծ
բառի ծ-ն իր կրկնաւոր ձեւի մէջ հետեւորդ կիծ բառի
բաղաձայն կ ձայնի առջև զարձած է և և բառն եղած
է կիսկի՛ծ-կիսկիծ՝ այնպէս և մեր վաղեմի՞ եծ ձեւը,
երբ յետեւից եկած է բաղաձայնով սկսուած մի բառ՝
հնչուած է ես: Այս հանդիպումները յաճախ պատահե-
լով և եծ բառի ծ-ն յաճախ ս-ի անցնելով՝ ես ձեւն է
ընդհարացած, իսկ եծ ձեւը կորած է ընդմիշտ: Մի կողմ
եմ թողնում այն հանդամանքը, որ չի մեկնուած թէ
ինչու ծ-ն պէտք է տար և և ոչ ուրիշ ձայն. փաստա-
կան կացութիւնն այդպէս է ներկայանում մեծանուն
գիտունին: Բայց ինչո՞ւ ես ձեւն ընդհանրացաւ և ոչ
եծ ձեւը. միթէ Հայոց բառերը գերազանցապէս «բա-
ղաձայն և յատկապէս կոկորդային բաղաձայն և կէս
պայթուցիկ» ձայներո՞վ էին սկսուում. միւս ձայներով
և ձայնաւորներով սկսուած բառերը նուա՞զ յաճախ էին
գալիս ենթազրական եծ դիրանունից յետոյ: Եւ ապա՝
մեր լեզուն իր բայական կազմի շնորհիւ պէտք չունէր
յաճախ կիրարկելու իր զերանունը, քանի որ բայաձեն
ինքնին իր ձեւի մէջ մատանանշում է իր գէմքը: Այս-
պէս Դ. սաղմոսի մէջ ես բառից յետոյ երկու անգամ
ձայնաւոր է գալիս, «այլ ես լատ բաղում . . .» և «ես

ըգքեղ կարգացի...¹⁾ Գ. սազմոսի մէջ երկու անդամ ձայնաւոր. «հս առ տէր կարգացի... Ոչ երկեայց ես ի բիւրուց... և մեկ անդամ բաղաձայն. Ես ննջեցի և ի քուն եղէ... Է. սազմոսի մէջ երեք առիթ կայ ես կիրարկելու և չի կիրարկուած, «Ի քեզ յուսացայ... Թէ արարի զայս... Թէ հատուցի երբեք... Եւ յետոյ՝ միշտէ միայն նախաւոր եծ բա՞ռն էր, որ ծ վախճան ոււնէր. ինչու միւս բառերի ծ ձայները նոյնպէս չեն հընչած ս, երբ ընկածնեն բաղաձայնով սկսուած բառերի առջեւ. Սազմոսի պէս մի գրութիւն, որ գերազանցապէս անձնականէ, էջեր ունի, ուր ոչ մէկ ես կայ, օր. Ա. սազմոսը: Ուզում եմ ասել, թէ եծ ձեն այնքան շատ չի կիրարկուած, որ այդ հանգամանքը արտօնէր նրան իր ծ-ն ս-ի փոխելու, իսկ Աստուած բառն օրինակ նրանից պակաս է կիրարկուած բաղաձայնով ըսկուած բառերի առջեւ, ուստի և այդ իսկ պատճառով պահած է իր ծ-ն Անշուշա գասական լեզուն նախադրական հայերէնը չէ, բայց բառերի և ձեւերի կիրարկութիւնը ոչ ոք կառող է ասել թէ նոյն տոկոսական յարաբերութիւնը չունէր նաև ա՛յն ժամանակ, այսինքն՝ չենք կարող ասել, թէ վաղեմի հայը աւելի շատ բաղաձայնով սկսուած բառ էր կցում իր եծ գերանունին և աւելի յաճախ էր եծ կիրարկուած քան գասական շըրջանի հայը: Գալով սլաւ ցա և աշ ձեւերին, որ հետագային «ընդհանրապէս» ամփոփուած են իբր ցա (օր. ուսւ լեզում, ուր ցա նշանակում է ես) Ա. Մէյէն այդ ձեւերը համարում է «առեղծուածային». չի փորձում մեկնել չ-ի ներկայութիւնն այդ ձեւերի մէջ, ինչպէս

1) Իսկ երեք ըստ Ն. Մառի ընդունինք, որ «զենք» արտաբերուած է «զրբեզ» — ապա՝ մեկ անդամ ձայնաւոր եւ մեկ անդամ բաղաձայն:

տեսանք թէ փորձում է հայց ևս բառի ս-ի համար, և դժուարութիւնից ազատում է ասելով թէ յաշ բառն ռուրիշ արմատ ունի քան այդ բառի միւս հոլվերը¹⁾ որ նշանակում է թէ այդ բառն իր երկու ձևերով չի համարում յոյն ու լատին ego ձևերի կշիռ, ինչպէս համարած էր մեր եսը:

Բայց կայ աւելի կնճռուտ մի երեսյթ, որ մերձուստ կապուած է ց-ծ լծորդութեան: Միայն մեր լեզուն չէ, որ հագագային պայթուցիկ ձայնին տալիս է կես պայթուցիկ կշիռ: Այս տեսակէտով քոյր լեզուները երկու խումբ են կազմում—Արևելեան և Արևեմտեան: Շատին զս ձայնին (շրթնաքմային) Հինդ-Իրանեան լեզուները տալիս են մաքուր կ կշիռ, (որ նախաքմայինի առջե հնչում է իբր չ). իսկ նախաքմային կակղացած (touillé): մի ձայնի, որ իր կակղացման հետեւանքով իսկ բնափոխուած է, ինչպէս սնսկ: զ. հայ ց և այլն՝ լատինը զիմարերում է մի մաքուր հագագային գ: Հինդ-Իրանեան տիտարին են պատկանում ոլաւ, բալտիկ, հայ և ալբան լեզուները: իսկ միւս խմբին՝ յոյն, լատին, կելտական և գերման լեզուները²⁾: Այսպէս նախալեզուի արևելեան ճիւղի կ (k) ձայնը նախասոլաւ լեզուի մէջ տալիս է կ կշիռ, որ նախաքմային ի և ե ձայնաւորների առջե հնչում է իբր չ և զ, որով չ-ն և ց-ն ուրիշ բան չեն, քան վաղեմի կ ձայնը, որ բնափոխուած է որու պայմաններում: Հնգերոպ. կա, կօ վանկերը նախասոլաւ լեզուի մէջ հնչած են իբր կա, կօ, իսկ կէ, կի վանկերը հնչած են իբր չէ, չի և ցե, ցի: Ես մի կողմ եմ թողնում միւնոյն հեղինակի յայտնած անմիաբան կարծիքները

¹⁾ A. Meillet. *Le slave commun*; § 514.

²⁾ A. Meillet. *Les dialectes indo-européens*, էջ 49.

միւնոյն ձայների մասին. խօսելով հայոց լեզուի չ և
ց ձայների մասին Ա. Մէջէն ասում է թէ դրանք
ամիշտ ներկայացնում ես բաղաձայների խմբեր»¹⁾,
իսկ նոյն չ և ց ձայները սլաւ լեզուի մէջ նրա կար-
ծիքով ուրիշ բան չեն քան բնափոխուած մի վաղեմի
կ.ն. նախաքմային ձայնաւորների առջև կարեորն
այստեղ գիտուած երեոյթն է։ Այսպէս ուրեմն տե-
սանք թէ գիտունների կարծիքով ց և ծ լծորդ են.
իսկ հիմա տեսանք թէ որու պայմաններում լծորդ
են նաև կ և չ ու ց, (այսինքն՝ ե եւ ի ձայների առ-
ջեւ)։

Իսկապէս զարմանալի է այս երեւոյթը: Գ-ը հագա-
գային կամ կոկորդային ձայն է. նա կազմւում է բե-
րանի խոռոչի խորքում. այդպէս է և կ ձայնը, որ
լծորդ է. գ-ին։ Ծ ն կէտպայթուցիկ է. նա կազմւում
է բերանի խոռոչի առջևի մասում. վերին ատամնա-
շարի և քիմքի միջեւ. նոյն տեղերն են կազմւում նաև
չն և ց-ն: Արդ՝ ի՞նչպէս կարող է մի անցում լինել
կոկորդից մինչեւ ատամնաշարը և ի՞նչպէս կարող է
գ-ը ծ հնչել։ Սլաւ լեզուի համար գոնէ մի պայման
կայ. այդ անցումը կատարւում է երբ ձայնաւորը և
է կամ ի. մեր լեզուի համար այդ պայմանն իսկ չկայ.
այնտեղ ուր օտարն ասում է գ, մենք ասում ենք ծ:
Պէտք է մի լաւ պրատել այս խնդիրը, տեսնելու համար
թէ արդիօք թիւրիմացութիւն չկա՞յ կա՞մ երեոյթի
վերլուծութեան կա՞մ նրա բանաձեռումի մէջ։

Տեսնենք թէ դատողական ո՞ր ճամբով են գիտուն-
ները մշակած այն տեսութիւնը թէ մեր ծ-ն կշխոն
է գ-իւ նրանք քննած են մեր այծ և մեծ բառերը եւ
զուգագրած են նրանց յոյն տέգաս և aigo's բառերին,
որ նոյն իմաստն ունին, միայն թէ aigo's սես. հոլով

1) Esquisse, էջ 17, III:

է ալքս բառի : Զուգագրելով ստացած են այսպիսի պատկեր .

mégas	aigo's
մեծ	այծ

Նրանք գիտեն , որ բառերի վախճանական վանկերը յաձախ անշետ մնալով՝ ընկնում են . միւս կողմից տեսնում են , որ հայոց լեզուի մէջ չկան աս , օս , իս , ս վախճանով բառեր : Ենթադրում են , որ ուրիշ լեզուների պէս հայոց լեզուն ևս ձգած է այդ վախճանները և այդ հիման վրայ մտովին յապատռում են յոյն բառերի աս և օս վախճանները և նորից զուգագրում են իրար մեր ու յոյն բառերը . այսպէս՝

még (as)	aig (o's)
մեծ	այծ

և պարզ տեսնում են , որ յոյնի ց-ին հայը տալիս է ծ կշու : Ստուգում են այս վարկածը ուրիշ բառերի վրայ . անսնում են սնոկ . bho'gas և հայերէն բոյծ . յուն ցéro'N և հայերէն ծեր , յուն génos , լատ . génius և հայերէն ծին . — այլ ևս կասկած չի մնում , որ ց և ծ լծորդ են : Այսպէս է մշակուած այդ տեսութիւնը :

Այդ տեսութեան հիմքերից մէկն այն է ուրիմն , որ աս , օս , իս , և այլ վախճաններն ըկնում են : Գիտունները չեն անդրադարձած , որ այդ վախճանները կարող էին նաև ձուլուիլ : Եւ գժուար էր ենթադրել , քանի որ օրինակ՝ - gos վախճանական վանկը ձայնաւորի սղումով առւած է ks , ուր թէե բնափախուած է g-ը և հնչում է k , բայց ձուլում չկայ :

Aiks - aigo's հոլովումը զուգահեռ է մեր սերմն - սերման հոլովումին : Վաղիմի aigo's սղած ու կոյցըրած է իր վերջին անշետ ձայնաւորը և բառը հընչած է d'igs , ուր այդ առիթով ց-ը բնափոխուած է

կ-ի և բառը դարձած է ա'ikս ինչպէս մեր ք-ն հետեղորդ ձայնաւորի աղման և կորուստի հետեանքով. այսպէս՝ թաղիմ — թաղկել, որ ամփոխումն է թաղիմել ձեի, Բայց անհնարին չէ, որ ա'ikս օրինական ամփոխումը լինի մի վաղեմի *ա'ikos բառի, որի կ-ը ոչ թէ բնափոխուած լինի, այլ բնաբոյս, իբր զուգահեռը մի նախաւոր բայց կորած ա'ikos ուղղական ձեւի, որով յոյնը ունեցուած լինի երկու լծորդական նոյնակազմ հոլովական գոյգեր, որոնցից մէկի ուղղականը չքացած լինի, իսկ միւսի սեռականը. և մնացորդ ձեերը դարձած լինին մէկը միւսի լրացուցիչ հոլովը, ինչպէս մար պատաւն (պաշտօն) և պատաման ձեերը, ուր մէկի օրինական սեռականը չկայ, որ պիտի լինէր *պատաւան. հմ. սերմեն սերման: Վերապրած ձեերը իրար լրացնում են, մէկը կատարելով ուղղականի դեր—պատաւն (պաշտօն), միւսը՝ սեռականի. պատաման: Այսպիսի մի զէպքում մեր ծ-ն ոչ թէ ց-ի, այլ կ-ի կշիռը կը լինէր. *ա'ik(os) — այծ: Այս զէպքում պահուած կը լինէր ձայնական երանգների ներդաշնակութեան սկզբունքը, որով լերկ ծ-ն կռած կը լինէր լերկ կ-ին և ոչ թէ միջակ գ-ին, որի կշիռն ըստ այդ տեսութեան պիտի լինէր ձ (մէջակ)՝ — ա'igos — այծ:

Բայց մենք պէտք չունենք յոյն ձեերի մանրքնութեան մէջ մտնելու: Ես հարց եմ տալիս. քանի որ մեր տեսութեամբ մեր ծ-ն մի հին է, չ-ն մի հին տե և ց-ն մի հին ս, որ անփոխուած են. ու քառի որ սլաւ լեզուի մէջ կ-ն է որի կշիռն են դառնում չ-ն և ց-ն (թէկուզ և ե և ի ձայների առջե), արդեռք մեր բաղադիր ձայների քմային և ատամնային ս-ը և է-ը չե՞ն, որ կշում են կ ին. ուրիշ խօսու-

քով՝ արդեօք սխալ չէ՝ այն բանաձեռումը թէ ց -ծ և
կ -չ, ց լծորդ են։ Պէտք չէ՝ արդեօք այդ երեսյթը
բանաձեւել ասելով թէ լծորդ են կ և ս, և ուրեմն
բառերի as, is, os, us վախճանները ոչ թէ չխացած,
այլ ձուլուած են՝ իրենց միջի ձայնաւորի կորուստի
հետեւանքով։ Այս դէպքում այցօ's (= *aiko's) ձեւի
շեշտը պէտք չէ, որ վերջին վանկին զարկէր, այլա-
պէս ձայնաւորի սղում և չքացում չէր կարող պա-
տահել, հետեւապէս և եղերական ձայնները չէին կարող
ձուլուիլ։ Այդպիսի հոլովական կարգ պահած է թիփ-
լիսի բարբառը, որ շեշտը պահում է անփոփոխ թէ՛
սեռական և թէ՛ ուղղական հոլովների մէջ։ Այդպէս է
և վրացերէնը, օրինակ՝

Ուղղական	Սեռական	(շեշտն անփոփոխ)		
հայերէն՝	բա՛ղամ	բա՛ղիկի	»	»
վրացերէն՝	կա՛ցի (մարդ)	կա՛ցիսա (մարդու)	»	

Մեր ենթագրութեամբ՝ յոյն նախաւոր ուղղակա-
նը երբ կ ունենար՝ պիտի հնչէր *a'ikos, որ պիտի
գառնար ա'iks, ինչպէս որ է իրօք. իսկ հայ նախաւոր
ձեք, կ.ին տալով և (քմային) կշիռ՝ պիտի լինէր
ա'it+9+ս և պիտի գառնար ա'its, որ քմային և-ի և
ս-ի ձուլումով պիտի տար այծ (ts — .δ)։ Իսկ ենթագ-
րական *a'igos ձեք նոյն հիմքերով և բաղաձայների
երանգների ներդաշնակութեամբ՝ պիտի հայերէնի մէջ
զուգահեռ ունենար *a'idz, ուր ձշ ձուլումով պիտի
տային ձ և բառը հնչէր այձ։ Այս տեսակէտով կ=չ,
ց լծորդութիւնը պահում է բաղաձայների երանգների
ներդաշնակութեան սկզբունքը. լերկ է կ.ը, լերկ են
և շ.ն ու ց.ն։ Նոյն հիմքով մեր ծ.ն ոչ թէ գ.ի, այլ
կ.ի լծորդ կարող էր լինել, որովհետեւ նրա բաղադրիչ
և (քմային) ձայնը լերկ է։

Սրանով մենք ճշտած եղանք երևոյթի բանաձեռւմը, բայց չվերացաւ գժուարութիւնը։ Ընդունինք թէ ծ-ն ոչ թէ ց-ի, այլ կ-ի կշխոն է՝ իբր լերկ՝ լերկի։ ընդունինք նաև որ ոչ թէ ծ-ն է կ-ի կշխոը, այլ ծ-ի բաղադրիչ քմային է ձայնը, քանի որ ծ-ն մի հին է, որ ձուլուած է։ Բայց ի՞նչպէս կարող է կ-ը, որ մի կոկորդային ձայն է, կը դառնալ է-ի, որ մի ատամնաքմային ձայն է։

Կարող ենք օգնութեան կանչել մեր բարբառական «կի գամ» և «Տի գամ» ձեերը իբր զուգահեռ երևոյթ¹⁾։ Բայց զրանով խնդրի լուծումը գտած չենք լինի, այլ միայն մի նոր փաստ տուած կը լինենք կ-է լծորդութեան՝ այս անգամ ատամնային և ոչ քմային ս-ի հետ։ Եւ յետոյ՝ Տի բառը մենք կարող ենք համարել պիտի բառի ծայրագոյն անփոփում՝ պայմանագիրի անկումովը պայմանագիրի առջև, այսպէս՝ պիտի գա՛մ — պրտի գա՛մ — (Ա. ն սղած), ժխտական ձև — չըպ-Տի՛ գամ (ը-ը չքացած), — պտի գա՛մ (ը-ն աննշան, աննկատելի), Տի գա՛մ (պ-ն ընկած։ Հմ։ Կտեսիքոն — Տիքոն)։ Պարզ է, որ այստեղ Տի բառի ս-ը ոչ մէկ առնչութիւն ունի կի բառի կ-ի հետ, հետեապէս նաև կ-ը լծորդութեան հետ։

Պէտք է գտնել կ- և Տ լծորդութեան պատճառը։

1) Ժողովրդական պարերգն ասում է (Ախալցխա)։

Դէ զնա՛ կի գամ, դէ՛ զնա՛՝ կի գամ, ուս կի գամ։ Կարմիր սօլերս հազնիմ՝ կի գամ, ուս կի գամ։

Գիտութիւնն ասում է, թէ այսօրուան բանական մարդը հազարաւոր դարեր առաջ եղած է մի անբան անասուն. իր նստատեղի մանր ոսկորները, որ մի մատնաչափ կցուածք են, երբեմն կազմած են մի կանգնաչափ պոչ։ Պոչը չքացած է, բայց հետքը մնացած է։ Հինը չի մեռնում. սքողւում է։ Այդպիսի մի հին մնացորդ եմ համարում ես թլուատութիւնը։

Թլուատ ասում են այն երեխաներին, որ կ-ն արտաքերում են ս։ Դու ասում ես. տակ, նա կրկնում է՝ տաՏ. ասում ես՝ կէս, կրկնում է՝ սէս։ Նրա համար ականջն ատանջ է և Մակարը՝ Մատար։ Բոլոր դիրքերի մէջ — բառասկզբին, միջին թէ վկրցին՝ նրա համար կ-ը ս է։ Այս երեսոյթը հայկական չէ։ Եւրոպացի երեխան նոյնակէս, երբ թլուատ է՝ կ-ն արտաքերում է իբր ս¹⁾։ Ի՞նչն է այս երեսոյթի պատճառը. արդեօք ակա՞նջն է թերի, որ չի տարբերում կ և ձայները, թէ՞ բերանն է թերի, որ անկարող է կ արտաքերել։ Ինչ և լինի պատճառը՝ երեսոյթը համատարած է։ Համատարած է, սակայն զարառված երեսոյթ է, սովորական չէ։

Բայց ի՞նչ է այս անսովոր երեսոյթի բնոյթը, նա

¹⁾ Տես H. Delacroix, *Le langage et la pensée*, էջ 292, ուր հեղինակը Jespersen-ի և Grammont-ի հետազոտութեանց հիման վրայ՝ ասում է. երեխաները «յաճախ ասում են ս փոխանակ կ-ի։ Պատճառն այն է, որ այս երկու ձայները առաջանում են երբ լեզուն լիովին ընդհատում է շունչի ելքը. բայց մի դէպքում իր ծայրով, միւս դէպքում իր սապատով։ Մի երեխայ, որ ս-ն է ասում կ-ի փոխարէն՝ նա դ կ'ասի կ-ի փոխարէն»։ Անշուշտ եւրոպացի երեխաների արտաքերութիւնը քննելով է, որ արած են այս դիտութիւնը և եկած են այս եղբակացութեան։

մի նորակազմութիւն է թէ մի առնաւութիւն:

Երեխաներ կան, որ ծնւում են բաւական նկատելի պոչով։ Գիտութեան համար այդ երեսյթն առնաւական է. երբեմնի համատարած պոչն է, որ բացառաբար երեւում է այդ մանուկի վրայ։ Նրա պոչը ոչ թէ մարգարեական երեսյթ է, որ գուշակում է ապագան, այլ մի առնաւական երեսյթ է, որ յիշեցնում է վաղեմի անցեալը։ Մանուկն իր պոչով ոչ թէ մարդկութիւնը տանում է դէպի մի նոր վիճակ, դէպի պոչաւոր մարդկութիւն, այլ հին պոչաւոր մարդակերպ անասունի յետին շառաւիղն է նա։ Արդ՝ ի՞նչպէս գնահատենք թլուատութիւնը, դա մի արկա՞ծ թէ մի հետք. մարդկի գնում են դէպի համատարած թլուատութի՞ւն և թլուատ երեխան գալիք մարդկութեան մի վաղահաս պտուղն է թէ՞ մի հին թլուատ մարդկութեան վերջին նմուշը։ Ես ասում եմ. թլուատութիւնը արկած չէ. նա օրգանական թերութիւն է, նա զուգահեռն է հին պոչի. նա հին վիճակի վերերեսումն է և ոչ գալիք վիճակի մի գուշակ։ Մի ժամանակ ամենն եղած են թլուատ, ինչպէս ամէնքը՝ պոչաւոր. այսօր մի քանի երեխայ ծնւում են թլուատ ինչպէս մի քանիսն են պոչաւոր ծնւում։ Դա մի «թերութիւն» է մեր աչքին, բայց իրօք հին վիճակի մի ապստամք մնացորդն է, ինչպէս ազգապղծութիւնը կամ ոճիրը, որ առնաւական են։

Թլուատ երեխաներն անարգել արտարերում են և անկարող են կը ճանաչել և արտարերել. սա նշան է, որ իր արտարերական գործարանի մէջ օշն աւելի կայուն յարմարութիւն ունի քան կը։ Ժամանակի ընթացքին թլուատութիւնը սովորաբար վերանում է։ Ի՞նչն է պատճառը այս երեսյթի։ Արդեօք երեխայի բերնի մէջ մի թերի կար, որ լրանում է և բերանը յարմարութիւն է ձեռք բերում կ արտարերելու, թէ լողութեան ջղի մէջն էր թերին, որ ուղեղի վրայ

կ-ի ձայնական դրօշմ չէր ստեղծում, ուստի երբ
կրնդրոնը շարժում էր ձայնածին կամ ձայնարար նե-
արդերը՝ իր արդիւնք ստացում էր և ոչ կ, որով-
հետև կենդրոնը կ-ի դրօշմ չէր ստացած։ Ինչ և լինի
այս երեսյթի պատճառը, մենք մեր առջեւ ունինք
ձայնարար կամ ձայնածին մի կառուցուածք, որ ան-
կարող է կ յօրինել և արտաքերել։ Այդ կառուց-
ուածքը հին է, առհաւական և երեխն եղած է հա-
մատարած։ Թլուատ երեխան աշխարհ է գալիս վա-
ղեմի մարդու արտաքերական այն կառուցուածքով,
որ անկարող էր կ յօրինել, ինչպէս պոչաւոր երեխան
այն մարդկութեան հեռաւոր մէկ նմուշն է, որ պոչ
ունէր։ Եւ ինչպէս երեխայի պոչն արագօրէն անփոփ-
ուում է – կարճ ժամանակի մէջ անցնելով այն հոլո-
վոյթը, որ հազարաւոր գարեր է տեած, այնպէս և
թլուատ երեխան արագօրէն ձեռք է բերում կ արտա-
քերելու յարմարութիւնը։

Այն հանգամանքը, որ թլուատ երեխային կ-ի
արտաքերութիւնն է պակասում և ոչ թէ Տ-ի՝ ինձ
քերում է այն եղրակացութեան, որ և արտաքերե-
լու ունանկութիւնն աւելի հին է, քան կ արտա-
քերելու յարմարութիւնը։ Մարդու բներանը նախ և է
արտաքերած և ապա միայն կ։ Տան աւելի հին ձայն
է, քան կ-ը։ Մարդու մէջ ինչ որ նոր է՝ աւելի շուտ
ենթակայ է կորուստի քան ինչ որ հին է։ Մարդու
են աւելի նոր է քան իր մարմինը, ուստի երբ խա-
թարւում է ես-ը (խենթը, խելազարը) մնում է ան-
բան անասունը, որ շարունակում է խժուել և ապրել,
որովհետև մարդը շատ աւելի երկար գարեր խժուած
ու ապրած է, քան մտածած, զգացած ու կամեցած։
Այդպէս նաև մարդն ատամով է կրծում ու կարում
միսը, երբ գանակ չունի։ և բերանը ջրին ընկած է
խմում՝ երբ բաժակ չկայ, որովհետև մշակոյթն աւե-

լի նոր երեսյթ է քան կրծող ու խմող մարդը։ Մարդու մէջ անասուննա անհամեմատ հին է, քան «մարդն» ու «մարդկայինը» և երբ կորչում է «մարդկայինը», մնում է անասունը։ Այսպէս ուրեմն՝ ես կարծում եմ, որ ան աւելի հին է քան կը և որ նախ քան կ-ի երեսը՝ Տ. Համատարած մի ձայն էր։

Հնագէտները քննելով վաղեմի մարդկութեան բնակարանի ձեզ, նրա թաղման կերպերը, նրա թողած ամանների գծաղարգերը, նրա ուտեստի մնացորդները և այլն՝ գծում են այն ծիրը, որով անցած են թափառական հին ցեղերը քառական շրջանից սկսած՝ երբ սառցային մակերեսը դէպի հիւսիս քաշուելով՝ երկիրը բացուած է և ապրելու յարմարութիւն է տուած։ Այդ ծիրն սկսում է եւրոպական ցամաքի հարաւարեմուտքից և Գերմանիայի մէջ տեղով, Լեհաստանի վերեսով անցնում է հիւսիս-արևելք և Ուրալի շղթան քերելով հարաւից՝ երկարում է Սիրիրի վրայով դէպի Խաղաղական։ Սիրիրի մէջ այդ ծիրը թեքում է դէպի հարաւ և զիմում է դէպի Իրան և Հինդուքուց։ Էսքիմոսները համարում են այդ վաղեմի մարդկութեան վերջին մնացորդները։ Ոչ ոք գիտէ թէ ի՞նչ էր այդ վաղնջական ցեղերի լեզուն։ Բայց այն բնավայրի մէջ, ուր սկսուած է թափառման այդ ծիրը՝ պաօր խօսում են հնդերոպական լեզուներ։ Նոյն լեզուները խօսած են և պատմութեան արշալոյսին, որից մնացած են գրաւոր հետքեր և աւանդութիւններ։ Թափառումի այդ ծիրով նկատում են և վերադարձի հետքեր, որ սակայն կանգ են առնում

Լեհաստանի արևելիան կողմնը¹⁾ Գիտունները նկատած են, որ մշակութային զարգացման տես սկզբով Արևելքը միշտ յիտ է մնացած Արևմուտքից։ բնավայրից առաջին մեկնածները դարեր յետոյ դեռ մշակոյթի ա'յն աստիճանի վրայ էին, որ ունեին մեկնածժամանակ, մինչդեռ բնավայրի մէջ մնացածները շատաւելի բարդ և զարգացած մշակոյթ են թողած մինչոյն դարերից։

Տեսանք թէ մեր տեսութեամբ կը սից յետոյ է երեցած։ Ենթազրում եմ, որ նախնական ցեղերը միմիայն սունէին երբ ճամբայ ընկան գէպի հիւսիս արևելք։ Իրենց բնավայրի մէջ մնացածները յետափային ստեղծեցին կ ձայնը, այսինքն՝ իրենց անորոշ ձայնների միջից մաքրեցին ու զտեցին կ երանդով կոկորդային հնչիւնը։ Երբ այս նոր ցեղերը, որ ունէին ե'ւ կ ե'ւ ս իրենց նախորդների թափառման գծով շարցուեցին զէպի հիւսիս արևելք՝ իրենց ճամբին հանդիպեցին վաղընթաց ցեղերի բնավայրերին։ ցեղեր, որ միմիայն ս ունէին և յետամնաց վիճակում էին նորեկների համեմատութեամբ։ Տիրելով նրանց կամ դառնալով զրկից և տեսական շփումով խառնուելով նրանց հետ կամ ազգելով նրանց վրայ՝ նորեկները հներին փոխանցեցին իրենց կողմէ բառերը, որ սակայն հները «թլոււտաբար» արտաքրել կարող էին սովոր կ ձայնը չունէին։ Այսպիսով պիտի ստեղծուէին միւնոյն բառի արտաքրական կրկնակները կ'ունի ե'ւ սովոր մէկն իրը նոր եկած և յառաջա-

1) Տես. Պ. Միլիւկով. Ուրուագծեր ուսւա մշակոյթի. հատոր Ա., մասն Ա. յօրելեանական հրատարակութիւն, 1937, (ոռուսերէն), ուր մեծանուն գիտունը պայծառորէն ամփոփած է հնագիտութեան վերջին արդիւնքները։

դէմ ցեղի նորաստեղծ արտաքերութիւն, միւսն իբր այդ նորաստեղծ արտաքերութեան թլուատ ընդօրինակում:

Թաղթի ճամբին բնական է, որ թափառականները զրաւեցին առաջին հանդիպած յարմար վայրերը. նրանցից յևոյ եկողները ստիպուած էին աւելի հեռուները գնալ՝ յարմար բնավայր ու նիստ գտնելու համար. որով արևմտեան սահմանների մօտ շատ աւելի հոծ բազմութիւն կար նստած առաջին գաղթից մնացած, որ Տունէր միայն, քան թափառման ծիրի հեռաւոր ծայրերում: Նաև կ ցեղի գաղթի ժամանակ (այդպէս անուանում եմ այն ցեղերը, որ սստեղծած էին կ ձայնը)՝ իբր մշակութապէս աւելի բարձր ցեղեր՝ նրանք աւելի մեծ խմբերով պիտի նստէին առաջին կայանների մէջ, ուր արդէն հին գաղթի հոծ բազմութիւն կար նստած, որի աշխատանքը կարող էին օգտագործել նոր տէրերը, քան թէ հեռաւոր կայանների մէջ: Լեհաստանի հիւսիս արևելքը և աւելի հիւսիս-արևելք՝ Ռուսաստանի մէջ պիտի այդ հանդիպումն ու փոխազգեցութիւնը աւելի զօրաւոր և նկատելի լինէր: Հնագիտութեան պեղումները այդ են ցոյց տալիս. այդ կողմերն է, ուր հին ու նոր հետաքրքր իրար վրայ նստած են չերտ-չերտ, մինչ աւելի հեռաւները համեմատաբար տիրապետում են հին շըրշանի հետքերը: Այդ կողմերն է նաև, ուր կանգ է առնում նախընթաց հին մեկնողների վերադարձի ծիրը: Այս խառնուրդների և փոխազգեցութեանց հետեւանքով նոր սերունդի լեզուական ժառանգութեան մէջ պիտի գանուէին կողմէ և Տ-ով բազմաթիւ նոյնասիր բառեր, որոնց պիտի կառչէին իմաստի տարրերացումներ: Միաժամանակ նոր սերունդը պիտի կարագումներ: Միաժամանակ նոր սերունդը պիտի կարենար եւ Տ արտաքերել, որ հին ձայն էր, եւ կ, որ

համեմատաբար նոր էր, որով կ և ս պիտի լծորդ դառնային :

Այն վայրերը, ուր ենթադրեցի թէ առաջին անգամ խառնուեցան կ և Տ ցեղերը՝ այսօր խօսւում են լիտուայի և սլաւ լեզուները, որոնք եւրոպական լեզուների կին տալիս են չ և ց կշիռ, իսկ ըստ մեր տեսութեան՝ Տ կշիռ, քանի որ ց ն մի հին սւ է և չ ն մի հին Տ է եւ հետաքրքրական է, որ այդ լեզուները հնամենի կերպարանք ունեն, ինչ որ բնական է, քանի որ նրանց վարի խաւը կամ լաւ և՛ հիմնական շերաւ Տ ցեղերի մնացորդներ են եղած, որոնց տիրած են կամ որոնց վրայ հզօրապէս ազգած են կ ցեղի մշակութապէս բարձր և նորեկ տարրերը։ Բալթիկ լեզուները ցուցադրում եմ «բացառիկ հնակերպութիւն» (singulier archaïsme)¹⁾ իսկ «ուրաւ լեզուն ընդհանրապէս պահած է հնամենի կերպարանք» (un aspect générale archaïque)²⁾։ Նոյն վիճակի մէջ պիտի լինէին և առաջին գաղթի հեռագնացները, որ իջան գէպի հարաւ և որ այսօր խօսում են Հինդիրանեան լեզուներ։ և նրանք են իրօք, որ եւրոպական կին տալիս են կէս-պայթուցիկ կշիռներ, որ ըստ մեր տեսութեան ասել է՝ իբր կշիռ տալիս են այդ ձայների Տ բաղադրիչը կամ նրանց քայլայման հետեանքով՝ երկրորդ բաղադրիչները։ և ուրեմն մէկ կողմից սնս. ջ, հայ ց և միւս կողմից գենդ. զ։ Այսպիսով մի բառ, որ կ բարբառի մէջ վերջանում էր կաս վանկով Տ ցեղերը պիտի արտաքրէին տաս, որ ձայնաւորի չքացումով պիտի դառնար սա, իսկ սա ձուլումով՝ ց, որով ց և կ պիտի երեային լծորդ և

¹⁾ A. Meillet. *Introduction*, էջ 49.

²⁾ A. Meillet. *Le Slave commun*, էջ 12.

պիտի կարծել տային, ինչպէս և տուած են, թէ կ-ն
արևելեան լիզուների մէջ հնչում է ց, կամ նրա
լծորդ գ-ը հայերէնում հնչում է ծ։ Հասկնալի է հի-
մա թէ ինչու ինչ-ինչ լիզուների մէջ as, os, us, is
վախճանները պիտի չքանային. նրանք ոչ թէ ընկած,
այլ ձուլուած են իրենց նախորդող պայթուցիկների
հետ, իրենց յաջորդ ձայնաւորի չքացման հետեան-
քով։ Զայնաւորը չքացած է, իսկ բաղաձայները ձու-
լուած են, ինչպէս ասած եմ իմ Գ. Յուշադրի վերջը։
(Էջ 52)։ Ահաւասիկ այդ նորակազմութեանց ցանկը,
որ տեսական արժէք ունի։

Կ լիզու	Տ լիզու	Ս լիզու	Ա լիզում	Զ ուլում
կաս	տաս (s ատամնային)	տս	ց	
կաչ	տաչ (» »)	տչ	չ	
կաս	տաս (t քմային)	տս	ծ	
կաչ	տաչ (» »)	տչ	ճ	

և լծորդ ձայներով և երանգների ներդաշնակումով։

գաժ	գաժ	գժ	ջ
գաղ	գաղ	գղ	ձ

և երանգապէս աններդաշնակ ձայներով, որ չէին
կարող ձուլուիլ և ծնունդ տալ մի նոր ձայնի։

գաս	գաս	գս	—
գաշ	գաշ	գշ	—
կաղ	տաղ	տղ	—
կաժ	տաժ	տժ	—

Այս ցանկն արժէք ունի և այն գէպքերի համար, երբ
չքացող ձայնաւորն ուրիշ է քան ա-ը։ նոյն տրդիւն-
քը պիտի տային և կիս, ու կուս վախճանները, երբ
իրենց միջի ձայնաւորը չքանար։ կիս հնչելով տիս,
պիտի ողէր իրը սև և պիտի ամփոփուէր իրը ց,

որովհետեւ ինչպէս ասած եմ իմ Ա. Յուշագրի մէջ կարևորը ձայնաւորի չքացումն է և ոչ նրա երանզը (էջ 5):

Այսօր միենոյն լեզուի մէջ մենք հանդիպում ենք կ-չ-ց լծորդութեան. այսպէս՝ ոռւսերէն լիկ, լիցօ՛, լի՛չ-իկօ (= դէմք, տեսք, երեսք). բայց հանդիպում ենք և Տ-Հ փոխանցում. ալէտ և ալէչա (= լոյս, մոմ): Լուցանել բայց պէտք է լոյս բառից ծագած համարել. հմ. լուս անել — ճրագը վառել. լուսել — որ նոյն իմաստն ունի: Լուց կշիռն է ոռւս. լուչ բառի, որ նշանակում է ճառագայթ, շղթ. նրանք ծագողապէս նոյն են, իրենց աոյլերն են տարբեր. աս = ց, առ = չ: Լուս տարբերակն է լոյս բառի, ուր նախաւոր յօրաջնքը խցում են երկու տարբեր լծորդ ձայներ — յ և ւ: Այս ու կազմութեանց ի զուգահեռ պիտի լինէին լիս, լից, լիչ, մենք ունինք լիս, ունենք նաև լիչք. որ է լիշ-ք և որ նշանակում է այն ձէթի ճրագը, որ մեծ պատի կէսին, չորեքշաբթի երեկոյեան վառում են տան ննջեցեալների հոգու համար և որ ուրիմն պիտի նշանակէր ճրագներ (Ք համարմէք է երեխը յոգնարար): Հայ լուց և ալաւ լուչ բառերը իրենց ձոյլ ձայների քայքայումով պիտի տային մի կողմից Տ (ատամնային), միւս կողմից Ս և Ե. որով պիտի ունենայինք լուս, որ ունինք արդէն. հմ. լինանամ, որ է՝ *լուսանաանամ և որ նշանակում է «ճերմակում եմ, սպիտակում եմ», և լուսն, որ է *լուսուն, որ նշանակում աչքի ճերմակ փառ կամ հատ. հմ. «աչքը հատ ընկաւ» բացատրութիւնը, այսինքն աչքի բիթ վրայ ճերմակ բիծ երեաց: Իսկ հնարաւոր լուժ ճեք պահած է պարսիկը. հմ. բռաշան, որ է լոյս և ուր Ռ-Ն լծորդն է լի (նաև մեր լեզում, հմ. տեսել եմ — տեսեր եմ) իսկ ա-ը մի ւ է: Պահած է նաև սանսկրիտը — բռաշան, որ նշանակում է փայ-

լուն. հմ. մեր լուս. ան-ալ բայը: Ալաւ երեք ձեւերից
լիկ և լից. օ տարբեր ցեղերի բառեր պէտք է համա-
րուին, այսինքն՝ կ և Տ ցեղերի բառեր են դրանք.
արդէն լիկ հին սլաւերէն է, իսկ լից-օ՝ ոռւսերէն, որ
այս կէտի մէջ սլաւոնի շարունակութիւնը չէ, քանի
որ Տ-ը կ-ի փոխանցում չէ, այլ նրա թլուտու ար-
տարերումը տարբեր ցեղի բերանում, իսկ լիշ-իկօ
բարբառական մէկ տարբերակն է լից-օ բառի, որ
ստեղծուած է միւնոյն Տ ցեղի ծոցում. գրա պատճա-
ռը սոյլերի տարբերութիւնն է (աս=g, առ=ց), իրենց
հիմնական ձայնը նոյն ատամնային Տ-ն է: Մի հին
բառ, որ սւնենար — kas վախճան, օրինակ սնսկ.
րօ-կահ = պայծառութիւն. լիտ. ldn-kas = եղան
կամ կովի ճակատի ճերմակ նիշ՝ Տ ցեղի բերանում
պիտի հնչէր ~ las վախճանով և սղումով պիտի տար
լու, իսկ ծուլումով ց. միւնոյն Տ ցեղի մի ուրիշ բար-
բառում միւնոյն վախճանը սոյլի տարբերացումով
պիտի հնչէր տառ, պիտի սղէր իբր Տ և պիտի ձու-
լուէր իբր չ: Այս երկու բառբառների խառնուրդով
կամ փոխազգեցութեամբ (բառերի փոխառումով)
միւնոյն լեզուի մէջ պիտի ստեղծուէր. կ-ց-չ լը-
ծորգութիւն: Այս փոխանցումների ընթացքը կարող
ենք այսպէս պատկերել.

Կառ	Տառ
տաս	տաշ
↓	↓
տս	տշ
↓	↓
ց	չ

Այստեղ կ և Տ հակադիր են, համամանակ և հա-
մարժէք. մէկը միւսի փոխանցումը չէ, այլ Տ-ը կ-ի

թլուատ արտաբերումն է : Թլուատների ընտանիքում
է , որ տարբերացած են սոյլերը և ծագած են ցան և
շն : Այդ ձևերը հողովոյթի արդիւնք են . կամեա-
մատութեամբ նրանք տարամանակ են . և լծորդ են
իրար , որովհետեւ լծորդ ձայների անփոփումներ են :

Այս լուծումներից հետեւում է , որ չկար և չէր
կարող լինել զ - ծ լծորդութիւն : Նոյներանդ ձայնե-
րըն են , որ կարող են իրար լծորդել . լիրկ ձայնին՝ մի
ուրիշ լիրկ , սոյլ ձայնին՝ մի ուրիշ սոյլ : Հետեւապէս
ծան իրը լերկ՝ կարող է կ-ին զուգազբուել , իսկ ձան
իրը միջակ՝ զ-ին : Կ - ծ և զ - ձ , որ նոյն է թէ՝ կ-
տ (քմային , քանի որ ծան մի ձոյլ և է) և զ - դ (քա-
նի որ ձան մի ձոյլ դզ է) փոխանցումներ չեն , այլ
հակազդութիւններ , իրը թլուատ արտաբերում հագա-
գային ձայների : Այդ հակազդիր արտաբերումները տե-
ղի ունէին ա'յն ժամանակ , երբ դեռ գոյութիւն չու-
նէին ծ , ձ , ց և նման ձոյլ ձայներ : Այդ շրջանից յե-
տոյ միայն տաս , դազ և նման վանկերը ձայնաւորի
սղումով ամփոփուած են և եղերական ձայները ձու-
լելով՝ դարձած են ց , ձ և նման ձոյլեր :

Այստեղից հետեւում է նաև , որ մեր ծ , ն , ձ , զ ,
չ , ց և թ ձոյլ ձայներն ունեցող բառերի և ձևերի
կշիռները որոնելիս մենք կարող ենք և պէտք է զի-
մենք կ և գ ունեցող օտար բառերի և ձևերի , որոնց
կ-ը և գ-ը թլուատաբար կարող էին արտաբերուել
իրը դ և ս (իր երկու տեսակով — քմային և ատամ-
նային) և համապատասխան սոյլերի կամ նրանց բը-
նակից հ-ի հետ ձուլուելով՝ կարող էին տալ ծ , ն , զ ,
ձ , ց , չ , և թ : Պարզ է նաև , որ մեր ձոյլ բաղաձայ-
ների կ և գ կշիռները ամէնից աւելի սպանելի են եւ-
րոպական ցամաքի բնիկ հին լեզուների մէջ — յատ-
կապէս յոյն ու լատին — , իսկ Արեւելեան լեզուների

մէջ, որ առաւելապէս Տ ցեղերի ստեղծագործութիւն են, պարզ է որ մեր ձոյլ ձայներին սպասելի են ձոյլ կշխոներ։ Միաժամանակ անհնարին չէ նաև, որ միեւ նոյն լեզուի մէջ պատահեն կ ~ չ, ց «Լծորդումներ», ինչպէս մեր պագ-ն (*պակ-ն) ու պաշ-ը, բայց դրանք կ ցեղերի ժառանգութիւն են, որ վերապրում են հին դարերից, ինչպէս մամոնտի ոսկորները Հայաստանում և Սիրիում։

Այսպիսի մի վերապրում կարելի է համարել մեր վեցն ու վեցը. հմ. «ի վէգ գալ», որ նշանակում է գէմ կենալ — հակառակիլ և ուրեմն վիճել։ Վեցին կարող էր զուգագրուիլ մի բարբառական *վէկ, ուր կ-ը թլուատաբար արտաքերուած է վէտ (քմային Տ)։ Իր երբեմնի Տ, ՕՏ, ԱՏ կամ ԱՏ վախճանի ձայնաւորի չքաշումով և Տ-ը և հնչումին անցնելով՝ ծագած է Տ խումբը, որ ձուլումով տուած է ն։ Կարող էր տալ նաև ծ և բառը հնչէր վէծ, եթէ ԱՏ, Տ-ն այլ վախճանների Տ-ը անփոփոխ մնար և ծագէր Տ խումբ, որ ձուլումով պիտի տար ծ։ Այն ժամանակ դա կը համարուեր գ ~ ծ փոխանցում, բայց ոչ թէ լեզուից լեզու, այլ միենոյն լեզուի մի բարբառից միւսը։ Հետաքրքրական է, որ վէն բառի ն-ն նոյն քմային Տ-ն ունի իր հիմք, ինչպէս այծ բառի ծ-ն, որ է Տ։

Մեր մի բարբառի և յոյն ու անսկրիտ լեզուների միենոյն գ ձայնին մեր թլուատ բարբառները տուած են քմային Տ կշխ և եթէ երկու գէպքում ևս մենք ծ չունենք, պատճառն այն է, որ Տ ձայնը մի գէպքում մնացած է անվթար, իսկ միւս գէպքում անցած է Շ-ի, որով ստեղծուած են և Տ խմբեր և

ամփոփուած են իբր ծ և ն¹⁾:

Մի կէտ ևս Այն ցեղերը, որ ենթազրեցինք թէ
Տ լեզուն են խօսած, իրենց լեզուի մէջ այսօր ունեն
կ: Ունին, բայց ե՞րբ են սահղծած, եթէ սահղծած են
և եթէ կ ցեղի խառնուրդով չէ, որ կ ձայնը գարձած
է նոր սերունդների սեփականութիւն: Զայներ սահղ-
ծելու կարողութիւնը Եւրոպական ցեղերի սեփակա-
նութիւնը չէր, ինչպէս և թլուատ տարրեր նրանց
մէջ պակաս չեն եղած: Զմոռանանք, որ իմ ենթագ-
րութեամբ այդ վիճակը համատարած էր մի ժամանակ,
նախ քան կ-ի ստեղծումը, որ Արևելքում ենթա-
զրում եմ թէ աւելի ուշ տեղի պիտի ունենար, քան
Արևելքում: Դրանով պէտք է մեկնել, որ եթէ
Արևելքը Արևելուաքի գ-ին տալիս է կէս. պայթուցիկ
և քայքայուն-պայթուցիկ²⁾ կշիռ, փոխադարձաբար

1) Հմ. հանաչեմ և ծանեայ. Բ. Յուշագիր, էջ 29.
Թուում է թէ Տ ցեղի թլուատ անդամը ճգնելով իր
լսած անսովոր կ կոկորդային ձայնն արտաբերել, իր
միակ ս-ը քաշած է գէպի վերնաքիմը, որով տուած
է նրան քմային կերպարանք, առանց յաջողելու սա-
կայն համեմ ա'յն կէտին, ուր կազմուում է կ-ը: Մա-
նաւանդ դժուար էր ս-ը քաշել գէպի յետ այն ժա-
մանակ, երբ հետեւորդը ի էր, որ կազմուում է բերա-
նի մուտքի մօտերը կամ ե էր, որ այլ բան չէր հին
ժամանակ քա մի իա, որ յետոյ ձուլումով գարձաւ
յա - եւ կարծում եմ ա'յս է պատճառը, որ քե, քի
տուած են չի կամ ցի ցի, ձոյլ ձայների բազազրիչ
սոյլի տարբերացման հետեւանքով. տա - ց, տօ - չ:

2) Այսինքն մի սոյլ կամ ն, որ մի վաղեմի կէս-
պայթուցիկի քայքայման հետեւանք է, ինչպէս ա-ն
կակիծ բառի մէջ:

Արեմուտքն Արեկելքի պայթուցիկին կամ կէս-պայ-
թուցիկին տալիս է հազարային կշիռ Այս խնդիրը լի-
ովին սպառելու համար մանրապատում քննութեանց
մէջ պէտք է մտնել, որ մեզ շա՛տ հեռուները կը տա-
նի: Մենք ջանացինք ուրուագծել մի տեսութիւն կ-
ս (կամ որ նոյն է կ- չ, ց) «Ըստորութեան» ծագման
մասին և մեր միտքը պարզել մի քանի օրինակներով:
Առժամապէս այսքանը բաւ է :



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.	<i>Տեսութիւնն ձոյլ բաղաձայների</i>	1—2
	<i>Ց</i>	3—23
	<i>Չ</i>	23—26
	<i>Ճ, Յ</i>	26—30
	<i>Թ</i>	30—32
	<i>Փ</i>	32—34
	<i>Ռ</i>	35—36
	<i>Ջ</i>	37—52
2.	<i>Տեսութիւնն լծորդութեանն</i>	53—103
	<i>Մանրաւք</i>	
	<i>Ոսկերիչ</i>	104—105
	<i>Ջոջոխէթի—գժոխք</i>	105—106
3.	<i>Տեսութիւնն ի և ու կազմութեանց</i>	107—118
	<i>Հաց—մաց</i>	119—125
4.	<i>Տեսութիւնն իաւ և իաւի կազմութեանց</i>	127—144
5.	<i>Տեսութիւնն իչ և չի կազմութեանց</i>	145—154
6.	<i>Տեսութիւնն աւա կազմութեանց</i>	
	<i>Ճանաչել—ճանօթ</i>	155—164
7.	<i>Գործիականն բուներ և նի սեռականն</i>	165—186
8.	<i>Ուղղում և լրացում</i>	187—
9.	<i>Օդին, աւագ, անտաւգ, աւազանի</i>	
	<i>ա'ւա շ'ա'ւ շ'օ</i>	189—194
10.	<i>Շառայլ և շառաւիդ (յ՝ ւ, գ՝ լ)</i>	194—195
11.	<i>Գործիականն մակրայների տարրերակի-</i>	
	<i>ները. (յ՝ ւ)</i>	196—201
12.	<i>Յոյնի էօ օս վախճանները. (յ՝ ւ)</i>	201—203
13.	<i>Լուրջ—լուրթ (ջ՝ թ)</i>	203—204
14.	<i>Տեսութիւնն համատարած թլուասութ-</i>	
	<i>եան</i>	205—227

A II
81075